

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՁՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՃՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



О РЕАЛИЗАЦИИ СТРАТЕГИИ
НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РА

ON IMPLEMENTATION
OF THE NATIONAL SECURITY STRATEGY OF THE RA

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՐ
НАЦИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ
ПОСРЕДСТВОМ ДЕМОКРАТИЧЕСКОГО РАЗВИТИЯ
NATIONAL SECURITY
BY MEANS OF DEMOCRATIC DEVELOPMENT



Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստը վարում է հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար Ս. Սարգսյանը (կենտրոնում)
Երևան, 2006

Заседание межведомственной комиссии по координации разработки проекта стратегии национальной безопасности Республики Армения ведет Председатель комиссии, Секретарь Совета национальной безопасности при Президенте Республики Армения, Министр обороны Республики Армения С. Саргсян (в центре)
Ереван, 2006

The session of Interagency Commission for coordinating activities on development of Draft National Security Strategy of the Republic of Armenia is chaired by S. Sargsyan (in the center), Chairman of the Commission, Secretary of National Security Council at the President of the Republic of Armenia, Minister of Defense of the Republic of Armenia
Yerevan, 2006



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

2—3 (52—53). 2007

ԽՍՔԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Քոթանջյան Հ. Ս.**
(նախագահ)
- Չիլինգարյան Գ. Ս.**
(գլխավոր խմբագիր)
- Աղաբեկյան Ա. Ա.**
- Այդինյան Ռ. Ա.**
- Ապրիամով Է. Ա.**
- Գասպարյան Վ. Ս.**
- Գասպարյան Տ. Շ.**
- Գրիգորյան Մ. Ս.**
- Իսախանյան Մ. Ռ.**
- Իսրայելյան Վ. Ս.**
- Խաչատուրով Յ. Գ.**
- Կարապետյան Մ. Ն.**
- Հարությունյան Ա. Թ.**
- Մարգարյան Վ. Հ.**
(գլխ. խմբ. տեղակալ)
- Մարտիրոսյան Ս. Ս.**
- Մարտիրոսով Լ. Ա.**
- Մելքոնյան Գ. Գ.**
- Մելքոնյան Մ. Գ.**
- Միրզաբեկյան Ա. Ռ.**
- Միրզոյան Ս. Վ.**
- Նազարյան Ա. Ս.**
- Շաղյան Պ. Ա.**
- Սարկիսյան Մ. Ս.**
- Սեդրակյան Ս. Գ.**
- Տեր-Գրիգորյանց Ն. Գ.**
- Փարսադանյան Ա. Մ.**
- Քոչունց Կ. Գ.**
- Օհանյան Ս. Մ.**

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Վարչապետ, Ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Սերժ Սարգսյանի ներածական խոսքը 7

Հ. Ս. Քոթանջյան, Հայ հասարակության անվտանգ և կայուն զարգացման ռազմավարության մշակման միջգերատեսչական գործընթացի մասին . . 10

S. Ս. Սարգսյան, Ֆինանսական անվտանգությունը որպես ՀՀ ազգային անվտանգության բաղկացուցիչ մաս 19

Ա. Ջ. Կիրակոսյան, Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության ապահովման հայեցակարգը ազգային անվտանգության ռազմավարության համատեքստում 30

Պ. Գ. Սաֆարյան, Ս. Հ. Կարսյան, Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման հիմնական ուղղությունները . . 43

Ա. Գ. Մինասյան, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գործունեության հիմնական ուղենիշները ազգային անվտանգության ռազմավարության համատեքստում 52

Հ. Մ. Դարբինյան, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթները առողջապահության ոլորտում 65

Ա. Ռ. Գևորգյան, Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության՝ ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանը միտված գործունեության հիմնական ուղղությունները 76

<i>Ս. Ռ. Պասյան</i> , Հայաստանի Հանրապետության բնապահպանական անվտանգության ռազմավարությունը	82
<i>Ս. Ս. Ավետիսյան</i> , Հայաստանի Հանրապետության ագրարային հատվածի ռազմավարության հիմնական հարցերը Ազգային անվտանգության ռազմավարության տեսանկյունից	90
<i>Ա. Ա. Գալստյան</i> , Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ռազմավարության հիմնադրույթները	111
<i>Ա. Ս. Ավետիսյան</i> , Կրթության և գիտության առաջընթացը՝ անվտանգ և կայուն զարգացման հիմք	119
<i>Գ. Գ. Գյուրջյան</i> , Ազգային անվտանգության մշակութային ռազմավարությունը ապագայի մեծ երաշխիք է	127
<i>Վ. Բ. Տերտերյան</i> , Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության շրջանակներում տարածքային կառավարման նախարարության գործունեության հիմնական ուղղությունները	136
<i>Հ. Գ. Բեգլարյան</i> , Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանը միտված գործունեության հիմնական ուղղությունները	146
<i>Ռ. Ռ. Ալավերդյան</i> , Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական անվտանգությունը՝ որպես ազգային անվտանգության համակարգի կառուցվածքային տարր	162
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության Նախագահի կարգադրությունը Ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին	170
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Հիմնական տերմիններ և հասկացություններ	179

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Ռ. Վ. Աղուզումցյան*, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
- Ն. Հ. Առաքելյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Գ. Ե. Բաղդասարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Հ. Ա. Գևորգյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Ռ. Գ. Գևորգյան*, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Ա. Հ. Թռչունյան*, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Վ. Մ. Հարությունյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Պ. Մ. Հերունի*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Ա. Հ. Մանթաշյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Է. Գ. Մինասյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Մ. Մ. Միրիջանյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Կ. Ա. Մոստյան*, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Յու. Ս. Չիլինգարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Վ. Ս. Սարգսյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Հ. Ա. Սիսակյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 2—3 (52—53). 2007
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котанджян Г. С. (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),
Агабекян А. А., Айдинян Р. А., Априамов Э. А., Арутюнян А. Т., Гаспарян В. С.,
Гаспарян Т. Ш., Григорян М. С., Исаханян М. Р., Израелян В. С., Карапетян М. Н.,
Кочунц К. Г., Маргарян В. Г. (зам. гл. редактора), *Мартиросов Л. А., Мартиросян С. С.,*
Мелконян Г. Г., Мелконян М. Г., Мирзабекян А. Р., Мирзоян С. В., Назарян А. С.,
Оганян С. М., Парсаданян А. М., Саркисян М. С., Седракян С. Г.,
Тер-Григорьянц Н. Г., Хачатуров Ю. Г., Шадян П. А.

СОДЕРЖАНИЕ

Вступительное слово Премьер-министра Республики Армения, Председателя Межведомственной комиссии по координации разработки Проекта стратегии национальной безопасности Сержа Саргсяна	7 (8)*
<i>Г. С. Котанджян.</i> О межведомственном процессе разработки стратегии безопасного и стабильного развития армянского общества	10 (16)
<i>Т. С. Саргсян.</i> Финансовая безопасность как составляющая национальной безопасности Республики Армения	19 (29)
<i>А. Дж. Киракосян.</i> Концепция обеспечения внешней безопасности Республики Армения в контексте Стратегии национальной безопасности	30 (41)
<i>П. Д. Сафарян, С. Г. Караян.</i> Основные направления обеспечения экономической безопасности Республики Армения	43 (50)
<i>А. Г. Минасян.</i> Основные ориентиры деятельности Министерства труда и социальных вопросов Республики Армения в контексте стратегии национальной безопасности	52 (64)
<i>Г. М. Дарбинян.</i> Основоположения стратегии национальной безопасности Республики Армения в сфере здравоохранения	65 (74)
<i>А. Р. Геворкян.</i> Основные направления деятельности Министерства торговли и экономического развития Республики Армения по обеспечению Стратегии национальной безопасности	76 (80)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

<i>С. Р. Папян. Стратегия экологической безопасности Республики Армения</i>	82 (88)
<i>С. С. Аветисян. Основные вопросы стратегии аграрного сектора Республики Армения в аспекте Стратегии национальной безопасности</i>	90 (110)
<i>А. А. Галстян. основоположения стратегии энергетической безопасности Республики Армения</i>	111 (117)
<i>А. С. Аветисян. Прогресс образования и науки—основа безопасного и стабильного развития</i>	119 (125)
<i>Г. Г. Гюрджян. Культурная стратегия национальной безопасности—твердая гарантия будущего</i>	127 (134)
<i>В. Б. Тертерян. Основные направления деятельности Министерства территориального управления Республики Армения в рамках Стратегии национальной безопасности</i>	136 (144)
<i>Г. Г. Бегларян. Основные направления деятельности Министерства транспорта и связи Республики Армения по обеспечению Стратегии национальной безопасности</i>	146 (160)
<i>Р. Р. Алавердян. Градостроительная безопасность Республики Армения как структурный элемент системы национальной безопасности</i>	162 (168)
ПРИЛОЖЕНИЕ 1. Распоряжение Президента Республики Армения о создании межведомственной комиссии по координации разработки Проекта стратегии национальной безопасности	170 (174)
ПРИЛОЖЕНИЕ 2. Основные термины и понятия	179 (186)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

- Р. В. Агузумцян*, кандидат психологических наук, доцент;
Н. У. Аракелян, академик НАН РА;
В. М. Арутюнян, академик НАН РА;
Г. Е. Багдасарян, академик НАН РА;
Г. А. Геворкян, академик НАН РА;
Р. Г. Геворкян, доктор геологических наук, профессор;
П. М. Геруни, академик НАН РА;
А. А. Манташян, академик НАН РА;
Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;
М. М. Мириджанян, доктор медицинских наук, профессор;
К. С. Мосоян, доктор технических наук, профессор;
В. С. Саркисян, академик НАН РА;
А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор;
А. А. Трчунян, доктор биологических наук, профессор;
Ю. С. Чилингарян, академик НАН РА

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC QUARTERLY,
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,
MINISTRY OF DEFENSE,
THE REPUBLIC OF ARMENIA
№ 2—3 (52—53). 2007
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S. (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief),
Aghabekyan A. A., *Apreamov E. A.*, *Gasparyan T. Sh.*, *Gasparyan V. S.*,
Grigoryan M. S., *Haroutyounyan A. T.*, *Idynyan R. A.*, *Isakhanyan M. R.*,
Israelyan V. S., *Karapetyan M. N.*, *Khachatourov Y. G.*, *Kotchunts K. G.*,
Margaryan V. H. (Deputy Editor-in-Chief), *Martirosyan S. S.*, *Martirossov L. A.*,
Melkonyan G. G., *Melkonyan M. G.*, *Mirzabekyan A. R.*, *Mirzoyan S. V.*,
Nazaryan A. S., *Ohanyan S. M.*, *Parsadanyan A. M.*, *Sarkissyan M. S.*,
Sedrakyan S. G., *Shadyan P. A.*, *Ter-Grigoryants N. G.*

CONTENTS

Introduction by Serzh Sargsyan, Prime Minister of the Republic of Armenia, Chairman of the Interagency Commission for coordinating activities on development of Draft National Security Strategy	7 (9)*
<i>H. S. Kotanjian.</i> On the interagency process of the strategy elaboration of a secure and stable development of the Armenian society	10 (17)
<i>T. S. Sargsyan.</i> Financial security as a component of the national security of the Republic of Armenia	19 (29)
<i>A. J. Kirakossian.</i> The concept of ensuring the external security of the Republic of Armenia within the context of the National Security Strategy	30 (42)
<i>P. D. Safaryan, S. H. Karayan.</i> The main directions of ensuring the economic security of the Republic of Armenia	43 (51)
<i>A. G. Minasyan.</i> The main landmarks of the activity of the Ministry of Labor and Social Affairs of the Republic of Armenia in the context of the National Security Strategy	52 (64)
<i>H. M. Darbinyan.</i> The fundamental principles of the National Security Strategy of the Republic of Armenia in the health sphere . .	65 (75)
<i>A. R. Gevorkyan.</i> The main directions of activities of the Ministry of Trade and Economic Development of the Republic of Armenia on ensuring the National Security Strategy	76 (81)
<i>S. R. Papyan.</i> The ecological security strategy of the Republic of Armenia	82 (89)

* Numbers in brackets mean the page of the text in English.

<i>S. S. Avetisyan</i> . The fundamental issues of the agrarian sector's strategy of the Republic of Armenia in the aspect of the National Security Strategy	90 (110)
<i>A. A. Galstyan</i> . The fundamental principles of the energetic security strategy of the Republic of Armenia	111 (118)
<i>A. S. Avetisyan</i> . The progress of education and science as a basis for a secure and stable development	119 (126)
<i>G. G. Gyurjyan</i> . The cultural strategy of the national security—a firm guarantee of the future	127 (135)
<i>V. B. Terteryan</i> . The main directions of the activity of the Ministry of Territorial Administration of the Republic of Armenia in the framework of the National Security Strategy	136 (145)
<i>H. G. Beglaryan</i> . The main directions of the activity of the Ministry of Transport and Communications of the Republic of Armenia on ensuring the National Security Strategy	146 (161)
<i>R. R. Alaverdyan</i> . The urban development security of the Republic of Armenia as a structural component of the national security system	162 (168)
APPENDIX 1. Order of the President of the Republic of Armenia on establishing Interagency Commission for coordinating activities on development of Draft National Security Strategy	170 (176)
APPENDIX 2. Key terms and concepts	179 (193)

SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:

- R. V. Aghouzoumstian*, Candidate of Psychological Sciences, Docent;
- N. H. Arakelian*, Full Member, NAS RA; *G. Y. Baghdassarian*, Full Member, NAS RA;
- Y. S. Chilingarian*, Full Member, NAS RA; *H. A. Gevorkian*, Full Member, NAS RA;
- R. G. Gevorkian*, Doctor of Geological Sciences, Professor;
- V. M. Haroutyunian*, Full Member, NAS RA;
- P. M. Herouni*, Full Member, NAS RA;
- A. H. Mantashian*, Full Member, NAS RA;
- E. G. Minasyan*, Doctor of Historical Sciences, Professor;
- M. M. Miridjanian*, Doctor of Medical Sciences, Professor;
- K. S. Mossoyan*, Doctor of Technical Sciences, Professor;
- V. S. Sargsian*, Full Member, NAS RA;
- H. S. Sissakian*, Doctor of Medical Sciences, Professor;
- A. H. Trchounian*, Doctor of Biological Sciences, Professor

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔԸ

2007 թ. փետրվարի 7-ին ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանի կողմից հաստատվեց «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը»: Այս փաստաթուղթը մեր Միջգերատեսչական հանձնաժողովի անդամների ջանքերի ներդաշնակ միավորման արգասիքն է, որը փորձագիտական ու հասարակական քննարկումներ անցավ հանրապետությունում և բարձր գնահատականի արժանացավ ՌԳ, ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի առաջատար մասնագիտական կենտրոններում:



«Ռազմավարության» մեջ նախանշվում են ոչ միայն ՀՀ-ի համար առկա ու հնարավոր սպառնալիքները և դրանց չեզոքացմանն ուղղված պետական գործունեությունը, այլև ՀՀ կայուն ու անվտանգ զարգացմանն ուղիները: Այս առումով շատ կարևոր է այն փաստը, որ Ազգային անվտանգության ռազմավարությանը զուգահեռաբար մշակվեց նրա իրականացմանն ուղղությամբ գերատեսչական ծրագրերի նախագծերի փաթեթը, որի ստեղծումը Հանձնաժողովի անդամ-փորձագետներից պահանջեց մեթոդաբանական, տեսական ու գործնական համալիր գիտելիքների դրսևորում: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի սույն համարում գետեղված են Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետների հողվածները, որոնք ներկայացնում են այդ միջնաժամկետ երկարաժամկետ ծրագրերի վերլուծական հենքը:

Ժողովածուի նյութերը համահունչ են Ազգային ժողովում վերջերս հավանության արժանացած ՀՀ Կառավարության ծրագրի առանցք հանդիսացող «Հայաստանի անվտանգ ու կայուն զարգացման» հարացույցին: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից առաջարկվող գիտագործնական մշակումների հիման վրա ՀՀ Կառավարությունը նախատեսում է հատուկ քննարկումների արդյունքներով հաստատել ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության իրագործման ծրագրերի ամբողջական համալիրը՝ այս առումով գերատեսչությունների միջև ռեսուրսների օպտիմալ բաշխման ռազմավարական պլանավորմամբ:

ВСТУПИТЕЛЬНОЕ СЛОВО ПРЕМЬЕР-МИНИСТРА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ, ПРЕДСЕДАТЕЛЯ
МЕЖВЕДОМСТВЕННОЙ КОМИССИИ ПО
КООРДИНАЦИИ РАЗРАБОТКИ ПРОЕКТА
СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ **СЕРЖА САРГСЯНА**

7 февраля 2007 г. Президент РА Р. Кочарян утвердил «Стратегию национальной безопасности Республики Армения». Этот документ является продуктом координированных усилий членов нашей Межведомственной комиссии, прошедшим экспертные и общественные обсуждения в республике и удостоившимся высокой оценки ведущих специализированных центров РФ, США и НАТО.

В «Стратегии» предопределены не только существующие и потенциальные угрозы для РА и деятельность государства по их нейтрализации, но и пути стабильного и безопасного развития РА. В этом аспекте важным представляется тот факт, что параллельно со Стратегией национальной безопасности был разработан пакет проектов ведомственных программ по ее реализации, создание которого потребовало от членов-экспертов Комиссии проявления комплексных методологических, теоретических и практических знаний. В данном номере военно-научного журнала «Айкан Банак» публикуются статьи членов-экспертов Межведомственной комиссии, представляющие аналитическую канву этих среднесрочных и долгосрочных программ.

Материалы сборника созвучны с парадигмой «безопасного и стабильного развития Армении», которая является стержнем программы Правительства РА, недавно одобренной в Национальном собрании. Правительство РА на основе предлагаемых Межведомственной комиссией научно-практических разработок предусматривает в результате их специальных обсуждений утверждение комплекса программ по реализации Стратегии национальной безопасности РА путем стратегического планирования оптимального распределения в этом аспекте ресурсов между ведомствами.

INTRODUCTION
BY **SERZH SARGSYAN**, PRIME MINISTER OF THE
REPUBLIC OF ARMENIA, CHAIRMAN OF THE
INTERAGENCY COMMISSION FOR COORDINATING
ACTIVITIES ON DEVELOPMENT OF DRAFT NATIONAL
SECURITY STRATEGY OF THE REPUBLIC OF ARMENIA

On 7 February, 2007, R. Kocharian, the President of the RA approved the «National Security Strategy of the Republic of Armenia». This document is the outcome of coordinated efforts of our Interagency Commission members, which passed the expert and public discussions in the republic and was highly estimated by the leading think-tanks of the RF, USA and NATO.

Not only the existing and potential threats to the RA and the state activity on their neutralization, but the ways of a stable and secure development of the RA are determined in the «National Security Strategy». An important fact in this respect is that parallel to the Strategy a packet of agency programs drafts on its realization was elaborated, the creation of which made the Commission member experts show complex methodological, theoretical and practical knowledge. There are articles of the Interagency Commission member experts, presenting the analytical basis of these middle-term and long-term programs, published in the given issue of the military-scientific quarterly «Haikakan Banak».

The materials of the collection of these papers are sound with the paradigm of «a secure and stable development of Armenia», which is the axis of the RA Government program that has been recently approved in the National Assembly. Based upon the scientific-practical elaborations proposed by the Interagency Commission, as a result of their special discussions, the RA Government envisages the confirmation of the complex of programs on the realization of the National Security Strategy of the RA through the strategic planning in this respect of resources optimal distribution among agencies.

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ԿԱՅՈՒՆ
ՁԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ
ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՄԱՍԻՆ

Հ. Ս. ԲՈԹԱՆՁՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ Դրաստրամատ Կանայանի
անվան ԱՌՀԻ-ի պետ, ՀՀ Պաշտպանության նախարարի խորհրդական,

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության
նախագծի մշակման գիտական ղեկավար,

Ռուսաստանի ռազմագիտական ակադեմիայի իսկական անդամ,
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ),
հակահարեկչության գծով գիտական փորձագետ (ԱՄՆ)



Ազգային անվտանգության հարցերի հայեցակարգայնացման խնդիրը ձևակերպվեց անկախ Հայաստանի կանոնավոր ռազմական կազմակերպվածքի ստեղծման առաջին իսկ օրերին՝ 1992 թ., ԽՍՀՄ ցամաքային զորքերի գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Աֆղանստանում որպես 40-րդ բանակի շտաբի պետ ծառայած, ՀՀ Ձինված ուժերի ստեղծման գործընթացը ղեկավարելու համար Հայաստան հրավիրված գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցի առաջարկով:

Այդ ժամանակ ԽՍՀՄ կենտկոմը դադարել էր գործելուց որպես մի հիմնարկություն, որում գաղտնիության «հատուկ թղթապանակ» արտակարգ ռեժիմով մշակվում էր ազգային անվտանգության հայեցակարգը և դրա իրականացման նկատմամբ կատարվում էր քաղաքական-կուսակցական վերահսկողություն: Հենց այդ՝ ԽՍՀՄ անվտանգության դոկտրինալ-գաղափարախոսական համակարգի փլուզմանը հաջորդեց ՀՀ ՁՈՒ-ի շինարարության բաղադրիչ մաս հանդիսացող ՀՀ ՊՆ ռազմական քաղաքականության բաժնի ստեղծումը: Խոսքը այն բաժնի մասին է, որը նախորդեց «Պայմանագրահրավական և արտաքին հարաբերությունների» վարչությանը, որն էլ իր հերթին հետագայում վերակազմավորվեց երկու՝ «Արտաքին հարաբերությունների և ռազմական համագործակցության» ու «Իրավաբանական», վարչությունների: Մասնագիտական շփումներ ունենալով այն ռուսաստանյան գործընկերների հետ, որոնք 1992 թ.՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, անկախ Ռուսաստանի համար լուծում էին նույն հայեցակարգային խնդիրները, Հայաստանի նորաստեղծ Պաշտպանության նախարարության ղեկավարության հանձնարարությամբ ռազմական քաղաքականության բաժինը մշակեց «Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության հիմունքները, ազգային անվտանգության ռազմաքաղաքական տեսանկ-

յունը»¹: Այդ աշխատության մեթոդաբանական հիմքն ապահովվեց ՌԴ ԱԳՆ-ի Դիվանագիտական ակադեմիայի միջազգային հետազոտությունների մեթոդաբանության կենտրոնի, ինչպես նաև ՌԴ ԶՈՒ-ի Գերագույն շտաբի Ռ-ազմագիտական ակադեմիայի ռազմաքաղաքական գիտությունների ամբիոնի հետ համագործակցությամբ²:

Տվյալ փաստաթուղթը՝ որպես հայկական ազգային բանակի շինարարության հետ կապված ռազմաքաղաքական պրոբլեմների լուծման վերաբերյալ տեսակետների համակարգ, ուղեցույց դարձավ գործող խորհրդային օրենսդրության համաձայն անցկացված օրինական հանրաքվեի միջոցով 1991 թ. դեկտեմբերին ինքնորոշված ԼՂՀ-ի դեմ ադրբեջանական ազրեսիայի հետմղման ժամանակաշրջանում Հայաստանի դաշնակցային ու գործընկերային հարաբերությունների ձևավորման գործում:

1994 թ. պաշտպանական պատերազմի ավարտից հետո, միջազգային անվտանգության համակարգին Հայաստանի ինտեգրման ընթացքում երկու անգամ՝ 1994—1995 և 2000—2001 թթ., ձեռնարկվել է ՀՀ ռազմական դոկտրինի միջգերատեսչական մշակման փորձ:

Թեև այդ քայլերն ընդհանուր առմամբ օգտակար էին, այդուհանդերձ մեթոդաբանական տեսանկյունից զուրկ չէին թերություններից, քանի որ չկար հայկական պետության ռազմական դոկտրինի իմաստավորման քաղաքական հիմքը՝ ազգային անվտանգության հայեցակարգը կամ ռազմավարությունը:

2000 թ. ՀՀ ռազմաքաղաքական դեկավարությունը, հետևելով արտաքին քաղաքականության բազմավեկտորության ուղեգծին, որոշեց ի լրումն անվտանգությանը վերաբերող հայեցակարգային փաստաթղթերի պատրաստման արդեն յուրացված ռուսաստանյան փորձի ուսումնասիրել դրանց մշակման մեթոդաբանական հիմքը մաս Արևմուտքի առաջատար գիտական կենտրոններում: Այդ նպատակով Պաշտպանության նախարար Ս. Սարգսյանն իր խորհրդականին հեռատեստրեն հանձնարարեց յուրացնել պաշտպանական-անվտանգային վերլուծությանը և ազգային անվտանգության ռազմավարության մշակման մեթոդաբանությանը վերաբերող ծրագրերը «ՌԷՆԴ» կորպորացիայի Մագիստրոսական դպրոցում, ԱՄՆ-ի Ազգային պաշտպանական համալսարանի Ազգային անվտանգության դպրոցում, ինչպես նաև այդ համալսարանում՝ ՆԱՏՕ-ի շտաբային սպաների համար նախատեսված դասընթացների ծրագիրը:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության նախագծի միջգերատեսչական մշակման գործընթացը համակարգելու ունակ հիմնարկ ստեղծելու նպատակով Հայաստանի Պաշտպանության նախարարի խորհրդականի ստաժավորման ծրագր-

¹ Տևուր Գ. Կոտանջյան. Основы военной политики Республики Армения: военно-политический аспект национальной безопасности. Отдел военной политики МО РА. Е., 1992:

² Տևուր Գ. Կոտանջյան. Введение в этнополитологию консенсуса—конфликта: теоретико-методологические проблемы цивилизационного анализа. М., 1992, *ևույնի* Этнопология консенсуса—конфликта: цивилизационный аспект национальной безопасности. 2-ое изд., доп. и перераб. М., 1992:

րում ՀՀ և ԱՄՆ-ի ռազմական գերատեսչությունների միջև պայմանավորվածության համաձայն ներառվեց ՀՀ ՊՆ զորավար Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (ԱՌ-ՀԻ) նախագծի մշակումը ԱՄՆ-ի Ազգային պաշտպանական համալսարանի Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում:

Որպես ակադեմիական ստաժավորման արդյունք՝ 2004 թ. ԱՄՆ-ում պատրաստվեցին և պաշտպանվեցին «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մշակումը Հարավային Կովկասում տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում» տեսական-մեթոդաբանական մենագրությունը, ինչպես նաև ՀՀ ՊՆ զորավար Դրաստամատ Կանայանի անվան ԱՌ-ՀԻ-ի ստեղծման նախագիծը³:

Ս. Սարգսյանի ղեկավարությամբ տվյալ նորացված մեթոդաբանական հիմքի վրա մշակվեց Պաշտպանության նախարարի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշները» զեկուցումը, որը նա 2005 թ. փետրվարին ներկայացրեց ՀՀ ՋՌԻ-ի ղեկավար կազմին⁴: Մոսկվայում, Վաշինգտոնում և Բրյուսելում կայացած մեթոդաբանական փորձաքննության արդյունքներով զեկուցումը երաշխավորվեց որպես ազգային անվտանգության ռազմավարության միջգերատեսչական մշակման հիմք:

2005 թ. դեկտեմբերին Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի նախաձեռնությամբ ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանը հրապարակեց «Ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» կարգադրությունը: Հանձնաժողովը գլխավորեց Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Սարգսյանը: Հանձնաժողովում ընդգրկվեցին 19 գերատեսչությունների նախարարների տեղակալներ և կարգավիճակով նրանց համարժեք ղեկավարներ, որոնք զբաղվում էին ՀՀ կենսագործունեության ճյուղերում ռազմավարական պլանավորմամբ, ինչպես նաև ՀՀ ԱԺ-ի պատգամավորներ: Հանձնաժողովի 28 անդամների կեսից ավելին ունեին գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, նրանց թվում երկու՝ ՀՀ ԳԱԱ-ի և ՌԳ ՌԳԱ-ի ակադեմիկոս, հանձնաժողովի կազմում էին չորս գեներալ, արտակարգ և լիազոր դեսպանի, ինչպես նաև լիազոր նախարարի և արտակարգ դեսպանի կարգ ունեցող երկու դիվանագետ: Հանձնաժողովի քարտուղարության դերը կատարում էր ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը:

Առաջին ճիստում Հանձնաժողովի նախագահն իր կողմնորոշիչ զեկուցման մեջ

³ Տես H. S. Kotanjian. Developing Armenian National Security Strategy in the context of regional Security Architecture of the South Caucasus. SNSEE-NDU, Washington, DC, 2005:

⁴ Տես «ՀՀ Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշները» զեկուցումը ՀՀ ՋՌԻ-ի հրամանատարական կազմի համար»: Ե., 2005:

խնդիր առաջադրեց սիներգիկ կարգով համադրելու բոլոր գերատեսչությունների պրոֆեսիոնալ ռեսուրսները՝ միացյալ ջանքերով սպառնալիքների ու ռիսկերի վերագնահատման և ՀՀ անվտանգ ու կայուն զարգացման վերաբերյալ պետության գլխավոր քաղաքական փաստաթղթի, ինչպես նաև վերջինիս իրականացման ուղղությամբ միջնաժամկետ ու երկարաժամկետ ծրագրերի թղթապանակի համատեղ մշակման համար: Կարևոր նորույթ էր նաև Հայաստանում ռազմավարական որոշումների նախապատրաստման գործում առաջադիմական քաղաքական տեխնոլոգիաների կիրառումը, երբ դրանք մշակվում են ոչ թե հետխորհրդային պետությունների համար ավանդական դարձած ապարատային եղանակով, այլ համակարգված համապետական փաստաթղթի միջգերատեսչական նախապատրաստման մեթոդով⁵:

Քանի որ Հայաստանում անվտանգության ոլորտի գիտական դպրոցը գտնվում է ձևավորման փուլում, Հանձնաժողովի նախագահը մեթոդաբանական խորհրդատվություններ տրամադրելու, ինչպես նաև Մոսկվայի, Վաշինգտոնի և Բրյուսելի առաջատար մասնագիտական կենտրոններում փորձարկումներ կազմակերպելու խնդրանքով դիմեց ՌԴ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարին, ԱՄՆ-ի Պաշտպանության քարտուղարին և ՆԱՏՕ-ի ղեկավարությանը⁶: Այդ փորձարկումների արդյունքներով ՌԴ Նախագահին առընթեր Պետական ծառայության ռուսաստանյան ակադեմիայի ազգային անվտանգության և միջազգային հարաբերությունների ամբիոնները, ԱՄՆ-ի Ազգային պաշտպանական համալսարանի Ռազմական քոլեջի ակադեմիական կոմիտեն, Եվրասատլանտյան գործընկերության խորհրդի անդամ երկրների՝ Սիջազգային անվտանգության ոլորտում խորհրդակցական խումբը (նշեցին, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության նախագիծը համապատասխանում է ժամանակակից մեթոդաբանական չափանիշներին: Անվտանգության ոլորտում աշխարհի առավել հեղինակավոր կենտրոնների հետ համագործակցության ձևաչափը, հարստացնելով ռազմավարության մշակման մեթոդաբանական հիմքը, հնարավորություն տվեց Հանձնաժողովին շարադրելու փաստաթղթի բովանդակությունը՝ ելնելով ազգային շահերից:

Գիտական փորձաքննությունների, մեթոդաբանական խորհրդատվությունների, սեմինարների, Հանձնաժողովի նիստերի ժամանակ կայացած քննարկումների, Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Եվրոպայի առաջատար կենտրոններում տեղի ունեցած փորձարկումների, ԵՊՀ գիտխորհրդի և Հայաստանի ԳԱԱ նախագահության ընդլայնված նիստերի, ինչպես նաև ՀՀ ԱԺ-ում կայացած բաց քննարկման արդյունքներով մշակվեց ավելի քան 700 առաջարկություն:

⁵ Տես «Հարցազրույց Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար, ազգային անվտանգության ռազմավարության նախագծի աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Սերժ Սարգսյանի հետ»: «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 5:

⁶ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ»: «ՀԲ», 2006, հմ. 2:

Հատուկ քննարկման առարկա դարձան ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգային փաստաթղթերի մշակման փուլերի ընտրության հարցերը: Ի տարբերություն մի շարք եվրոպական երկրների փորձից, որտեղ ընդունված է առաջին փուլում մշակել Ազգային անվտանգության հայեցակարգ, որում նկարագրվում է սպառնալիքների ու դրանց հաղթահարման ուղիներին վերաբերող հայացքների համակարգը, ապա այդ հիմքի վրա ստեղծվում է անվտանգության ապահովման ուղղությամբ պետության կենսագործունեության ռազմավարություն, Հանձնաժողովը որդեգրեց ամերիկյան դպրոցի ավելի արդյունավետ համակարգային մեթոդաբանությունը:

Որպես արդյունք՝ ՀՀ Միջգերատեսչական հանձնաժողովը, օգտագործելով ԱՄՆ-ի և ՌԴ-ի անվտանգության դպրոցների առաջադիմական մեթոդաբանական նվաճումները, մշակեց Հայաստանի անվտանգ ու կայուն զարգացման ազգային ռազմավարությունը՝ միջնաժամկետ (4—5 տարի) և երկարաժամկետ (8—10 տարի) հեռանկարով տվյալ ռազմավարության իրացման ուղղությամբ ծրագրերի ամբողջական թղթապանակով հանդերձ:

Խորհրդարանական և նախագահական ընտրությունների նախաշեմին Հանձնաժողովի նախագահ Ս. Սարգսյանը, ղեկավարվելով մի շարք փորձաքննությունների արդյունքներով, հանգեց այն եզրակացությանը, որ նպատակահարմար չէ հետևել որոշ արևմտյան գործընկերների այն խորհրդին, թե նախընտրելի է ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատել օրենքի տեսքով: Քանի որ ռազմավարության մասին օրենքը կարող էր հայ հասարակության մեջ իրականացվող ժողովրդավարական բարեփոխումների համար դառնալ «զսպաշապիկ», ապա, Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ, ՌԴ, ԱՄՆ-ի և մի շարք այլ պետությունների փորձի հիման վրա «Ռ-ազմավարությունը» հաստատվեց Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից:

Ազգային անվտանգության առաջին ռազմավարության հաստատումը՝ որպես քաղաքական փաստ և գործընթաց, տրամաբանական է դիտել ինչպես պատմական փորձի, այնպես էլ հայ հասարակության մեջ ժամանակակից քաղաքական մշակույթի, այդ թվում՝ անվտանգային-ռազմավարական մտածողության ավանդույթների ձևավորման տեսանկյունից⁷: Այդ իմաստով երկու փոխկապված փաստաթղթերի՝ ՀՀ անվտանգ ու կայուն զարգացման ռազմավարության, ինչպես նաև այդ ռազմավարության իրականացման ուղղությամբ գերատեսչական ծրագրերի համակարգի գույզահեռ մշակման ընթացքում ծավալված լիարժեք միջգերատեսչական համագործակցությունը հայ հասարակության զարգացման հարացույցի հնարավոր փոփոխման ազդակ է: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է այն բանին, որ հայ հասարակության «կայունության» ու «անվտանգության» վերարտադրության ավանդական հարացույցները, որոնք որոշակի պայմաններում հղի են կանգառման-լճացման վտանգով, սկզբունքորեն փոխարինվեցին «անվտանգ ու կայուն զարգացում» ավելի ճկուն ու պրագմատիկ հարացույցով: Դրա հետ մեկտեղ, «անվտանգ ու կայուն զարգացման»

⁷ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 5—10:

այդ ռազմավարությունը «ՀՀ Կառավարության ծրագրի» համաձայն⁸ ենթադրում է եվրաինտեգրման պայմաններում ՀՀ առաջադիմական բարեփոխման սկզբունքի արգասաբեր համադրում ազգային ինքնության պահպանման և հայ հասարակության անկախության հարցերում պահպանողականության սկզբունքի հետ:

Հարկ է նշել, որ Վարչապետ նշանակվելուց առաջ ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Սարգսյանը, զարգացնելով «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը», ՁՈՒ-ի ղեկավարության առջև հանդես եկավ «ՀՀ ՁՈՒ-ում պաշտպանական բարեփոխումների իրականացման վերաբերյալ» կողմնորոշիչ գեկուցումով⁹: Տվյալ ծրագիրը ենթադրում է հայ հասարակության ժողովրդավարացման պայմաններում ՀՀ անվտանգության համակարգի արդյունավետության մեծացման նպատակով ձեռնարկվելիք քաղաքական, իրավական, տնտեսական և բուն ռազմական միջոցների համակարգի միջգերատեսչական մշակում: Տվյալ բարեփոխումների առանձնահատկությունն այն է, որ անհրաժեշտ է հաշվի առնել Ադրբեյջանի միտվածությունը՝ ՆԱՏՕ-ի ԱԳ-ԳԾ ծրագրի շրջանակներում իրականացվող պաշտպանական բարեփոխումների բողի ներքո իր ՁՈՒ-ն նախապատրաստելու ԼՂՀ-ի դեմ զինված ագրեսիայի սանձազերծմանը:

Ռազմավարության իրականացման ծրագրերի լրամշակման այս փուլում մեր գործընկերների ռազմավարական մտածողությունը հնարավորություն կտա Կառավարության համակարգող ղեկավարությամբ գտնելու գերատեսչությունների գործունեության օպտիմալ զուգակցումը ազգային անվտանգության շահերի ամբողջ տիրություն: Անվտանգության ոլորտում համագործակցության միջգերատեսչական գործընթացի ավարտման այս բավականին կարևոր փուլը ենթադրում է Կառավարության նիստերում այս ծրագրերի պաշտպանությունը հայ հասարակության անվտանգ ու կայուն զարգացման ռեսուրսային ապահովման միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական պլանավորման միասնական համակարգում¹⁰:

Մեր ռազմագիտական հանդեսի ընթերցողին ներկայացվող համարում գետեղված են Միջգերատեսչական հանձնաժողովի անդամների հայեցակարգային հողվածները, որոնք վերաբերում են ազգային անվտանգության ռազմավարության մշակման և իրականացման համադասմանը: Այդ նյութերը իրենց ամբողջության մեջ արտացոլում են ազգային անվտանգության ռազմավարության իրականացման ծրագրերի համադասման ուղղությամբ կատարվող համատեղ աշխատանքի էությունը, մի աշխատանք, որն այժմ ՀՀ Կառավարության ղեկավարությամբ դառնում է անվտանգ և կայուն զարգացման համակարգված համապետական ուղեցույց և ծրագիր:

⁸ http://www.gov.am/armversion/programms_9/pdf/NFK2007.pdf

⁹ Պաշտպանական բարեփոխումների ծրագրում ազգային անվտանգության ռազմավարության իրացման վերաբերյալ նյութը ծավալուն տեսքով հրատարակվել է ՀՀ ՊՆ զորավար Դրաստամատ Կանայանի անվան ԱՌՀԻ-ի ռազմագիտական հանդեսի նախորդ համարում (տես «ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի գեկուցումը ՀՀ Ձինված ուժերում պաշտպանական բարեփոխումների իրականացման վերաբերյալ»: «ՀԲ», 2007, հմ. 1):

¹⁰ Տես «ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանի ելույթը ՀՀ Ազգային ժողովում ՀՀ Կառավարության գործունեության ծրագիրը ներկայացնելիս» (www.gov.am/armversion/premier-2/primer_home.htm?mat=1997):

О МЕЖВЕДОМСТВЕННОМ ПРОЦЕССЕ РАЗРАБОТКИ
СТРАТЕГИИ БЕЗОПАСНОГО И СТАБИЛЬНОГО РАЗВИТИЯ
АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

Г. С. КОТАНДЖЯН, генерал-майор, начальник Института национальных стратегических исследований (ИНСИ) им. Драстамата Канаяна МО РА, советник Министра обороны РА, научный руководитель разработки проекта Стратегии национальной безопасности РА,

Действительный член Российской Академии военных наук, доктор политических наук (РФ), научный эксперт (феллоу) по контртерроризму (США)

РЕЗЮМЕ

Работы по концептуализации проблем национальной безопасности РА начались в недрах Министерства обороны РА еще в 1992 г. по предложению заместителя Министра обороны РА генерал-лейтенанта Нората Тер-Григорьянца. В декабре 2005 г. по инициативе Секретаря Совета национальной безопасности, Министра обороны РА С. Саргсяна Президент РА Р. Кочарян издал Распоряжение о создании Межведомственной комиссии по координации разработки СНБ РА в составе 28 членов, представляющих 19 ведомств в лице замминистров и эквивалентных им руководителей, занимающихся стратегическим планированием в областях жизнедеятельности РА, и депутатов НС РА. Комиссию, в составе которой более половины имели ученые степени (в их числе—2 академика НАН РА и АВН РФ), были 4 генерала и 2 дипломата в ранге Чрезвычайного и Полномочного Посла, а также Полномочного Министра, возглавил С. Саргсян. Роль Секретариата Комиссии была возложена на ИНСИ МО РА.

По результатам экспертных проработок, методологических консультаций, семинаров, обсуждений на заседаниях Комиссии, апробаций на кафедрах национальной безопасности и международных отношений РАГС при Президенте РФ, в Академическом комитете Военного Колледжа Национального Университета Обороны США, Международной советнической группе по международной безопасности стран-членов СЕАП, на расширенных заседаниях Ученого совета ЕГУ и Президиума НАН Армении, а также открытого обсуждения в НС РА было выработано более 700 предложений.

В итоге, Межведомственной комиссией РА с использованием передовых методологических достижений безопасностных школ США и РФ была разработана национальная стратегия безопасного и стабильного развития Армении вместе с целостным портфелем программ по реализации данной стратегии в среднесрочной (4-5 лет) и долгосрочной (8-10 лет) перспективе.

Полноценное межведомственное сотрудничество в процессе параллельной разработки двух взаимосвязанных продуктов, а именно: стратегии безопасного и стабильного развития РА, а также системы ведомственных программ по осуществлению данной стратегии, является свидетельством изменения парадигмы развития армянского общества. Речь идет о принципиальной смене традиционных парадигм воспроизводства «стабильности» и «безопасности» армянского общества, чреватых при определенных условиях стагнацией-застоем, на более гибкую и прагматическую парадигму «безопасное и стабильное развитие». Как это следует из Программы Правительства РА, данная Стратегия «безопасного и стабильного развития» означает продуктивный синтез принципа прогрессивного реформирования РА в условиях

евроинтеграции с принципом консерватизма в вопросах сохранения национальной идентичности и независимости армянского общества.

В предлагаемом читателю номере нашего военно-научного журнала представлены концептуальные статьи членов Межведомственной комиссии по координации разработки и реализации Стратегии национальной безопасности РА. Данные материалы в своей совокупности отражают сущность системной коллективной работы по координации программ реализации Стратегии национальной безопасности ныне завершаемой под руководством Правительства РА.

ON THE INTERAGENCY PROCESS OF THE STRATEGY
ELABORATION OF A SECURE AND STABLE DEVELOPMENT
OF THE ARMENIAN SOCIETY

*H. S. KOTANJIAN, Major General, Commandant, Drastamat Kanayan INSS, RA,
Adviser to the Minister of Defense, RA, Academic Supervisor of the Development
of Draft National Security Strategy of the Republic of Armenia,
Fellow Member, Russian Academy of Military Sciences, Doctor of Political Sciences (RF),
Counterterrorism Fellow (USA)*

SUMMARY

The activities on conceptualization of problems of the national security of the RA began in the entrails of the MoD, RA still in 1992 on the proposal of the Deputy Minister of Defense of the RA Lieutenant General Norat Ter-Grigoryants. The RA President R. Kocharian on the initiative of the Secretary of the National Security Council S. Sargsyan promulgated the Decree on the formation of the Interagency Commission for coordinating activities on the development of the National Security Strategy of the Republic of Armenia in December, 2005, consisting of 28 members, representing 19 agencies in the persons of deputy ministers and top officials of equivalent statuses, who mostly specialized in strategic planning in the spheres of vital activities of the RA, and the deputies of the National Assembly of the RA. The Commission, over a half of members of which had PhDs (among them—two Academicians of the NAS RA and AMS RF), there were four Generals and two diplomats in the ranks of Ambassador and Minister Plenipotentiary, was headed by S. Sargsyan. The role of the Commission Secretariat was charged upon the INSS, MoD, RA.

There were reviewed over 700 proposals according to the results of expert studies, methodological consultations, seminars, discussions at the Commission sessions, approbations in the Chairs of National Security and International Relations of the Russian Academy of Public Service at the President of the RF, in the Academic Committee of the Military College of the National Defense Institute, USA, the International Security Advisory Group of the Euro-Atlantic Partnership Council member countries, at the enlarged meetings of the Academic Council of the Yerevan State University and the Presidium of the NAS of Armenia, as well as an open discussion in the National Assembly of the RA.

Finally, the Interagency Commission of the RA, using leading methodological achievements of security schools of the USA and RF, elaborated the national strategy of a secure and stable development of Armenia with the whole programs portfolio on the realization of the given strategy in the middle-term (4-5 years) and long-term (8-10 years) perspectives.

The interagency cooperation of full value in the process of parallel elaboration of two interrelated products, namely, the strategy of a secure and stable development of the RA, as well as the system of agency programs on the implementation of the given strategy, is the illustration on a change of the paradigm of the Armenian society development. The question is about the principal change of traditional paradigms of the reproduction of «stability» and «security» of the Armenian society, pregnant with stagnation in certain conditions, into more flexible and pragmatic paradigm a «secure and stable development». In accordance with the new Program of the Armenian Government, the alleged Strategy of a «secure and stable development» assumes a productive synthesis of the progressive reformation principle of the RA in conditions of Eurointegration with the principle of conservatism in the issues of the national identity preservation and independence of the Armenian society.

In this issue of our defense-academic quarterly, offered to readers, there are introduced conceptual articles of the Interagency Commission members for coordinating activities on the development and realization of the National Security Strategy of the RA. The given materials reflect in their totality the essence of systemic joint collective work on coordinating programs on the implementation of the National Security Strategy, which is in the process of completion now under the leadership of the RA Government.

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ**

*Տ. Ս. ՄԱՐԳՍՅԱՆ, ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ,
Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ,
տնտեսագիտության թեկնածու*

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը» հայեցակարգային փաստաթուղթ է, որը հիմնվում է անկախ պետության կառուցման սկզբունքների վրա և արտացոլում է հայկական պետության ձգտումը՝ կերտելու հայ ժողովրդի անվտանգության, բարգավաճման և ազատության սկզբունքների վրա հիմնվող ժողովրդավարական հասարակություն: Ազգային անվտանգության ռազմավարությունը մշակված է միջազգային փորձի ընդհանրացմամբ՝ նման փաստաթղթերի ստեղծման լավագույն համաշխարհային օրինակների հաշվառմամբ, և, ըստ մեզ, տալիս է հիմքեր ազգային անվտանգության ապահովմանը միտված ճյուղային, հատվածային քաղաքականությունների ձևավորման համար: Ստորև ներկայացնում ենք ազգային անվտանգության ռազմավարության իրականացման ապահովման նպատակով Կենտրոնական բանկի գործունեության ուղղությունների մշակման նկատմամբ մեթոդաբանական մոտեցումների մեր տեսլականը, ինչպես նաև քննարկում ենք ֆինանսական անվտանգության՝ որպես տնտեսական անվտանգության բաղկացուցիչ մասի վերաբերյալ մեր պատկերացումները՝ շեշտելով այդ ոլորտում ԿԲ գործունեության հիմնական ուղղությունները:



2. ՄԵԹՈԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն» փաստաթղթի էությունն այն է, որ դրանում ընդհանրացված ձևով հռչակված են ազգային անվտանգության համակարգի կառուցման հիմնական սկզբունքները: Բնականաբար, ռազմավարությունն ինքը չի կարող և չպետք է հարցերին պատասխաններ տա գործունեական հարթությունում, այլ ուղեցույց է պետության կենսագործունեության բոլոր ոլորտներում գերատեսչական և հատվածային քաղաքականությունների մշակման համար:

Այդ քաղաքականությունների մշակման համար անհրաժեշտ է հաստատությունների, կառավարման ու փոխգործողության համակարգերի և համապատասխան գործիքների որոշակի լրակազմ:

ՈՒստի առաջին մոտավորությամբ առնվազն անհրաժեշտ է՝

—ազգային անվտանգության շրջանակներում առանձնացնել սուբյեկտներն ու դրանց պատասխանատվության ոլորտները,

—հստակ կերպով սահմանազատել ազգային անվտանգության սուբյեկտների

լիազորություններն ու պատասխանատվության ոլորտները, ինչպես նաև ճգնաժամային իրավիճակներում դրանց փոխգործողության կարգը,

—նշել (առանձնացնել և նկարագրել) ազգային անվտանգության օբյեկտները,

—հաստատութենական հիմքերի վրա դնել վերլուծության, կանխատեսումների, առաջավարական ցուցիչների ապարատը, ստրատեգիապես կարևոր տեղեկույթի փոխանակման կապուղիները և այլն,

—գտնել անհրաժեշտ ռեսուրսներ ռազմավարության շրջանակներում կատարվող գործողությունների ծրագրերի մշակման և իրականացման համար:

Հիմնվելով «Ռ-ազմավարության» տրամաբանության վրա՝ անհրաժեշտ է քաղաքականությունների ու ծրագրերի մշակման համար դիտարկել երեք հարթություն, որոնք հնարավորություն տան յուրաքանչյուր առանձին վերցված ենթահամակարգում վերածածկելու ազգային անվտանգության ամբողջ դաշտը: Դրանք են.

1-ին հարթություն՝ անվտանգությանն ուղղված մարտահրավերներ,

2-րդ հարթություն՝ ռիսկեր (ներքին և արտաքին),

3-րդ հարթություն՝ վտանգներ ու սպառնալիքներ:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը տալիս է հարթություններից յուրաքանչյուրի սահմանումը:

Անվտանգությանն ուղղված մարտահրավերներ՝ այնպիսի ռեալ վտանգի հատկանիշ, որը հնարավոր վնասի նախականիսման և/կամ նվազեցման համար հակազդում է պահանջում, ինչպես նաև անվտանգության սուբյեկտին հրավիրում է մրցակցության: Անհրաժեշտություն է ստեղծում անվտանգության առկա ռեսուրսները համապատասխանեցնելու այդ բնագավառում ծագած մրցակցության պահանջներին:

Ռիսկ՝ որոշակի ծանրությամբ ու բովանդակությամբ վնաս կրելու հնարավոր վտանգի հատկանիշ, անվտանգության ապահովմանն ուղղված գործունեության փաստացի արդյունքների շեղում անվտանգության նախատեսված չափանիշներից:

Վրսակ՝ վիճակ, որի դեպքում կա համակարգին վնաս պատճառելու հնարավորություն:

Սպառնալիք՝ ռեալ կամ հնարավոր երևույթ, գործընթաց, որը կարող է վնաս պատճառել պետության, հասարակության կամ անձի շահերին: Բնութագրվում է և՛ մտադրության, և՛ հնարավորության առկայությամբ: Ըստ իր աղբյուրի կարող է լինել արտաքին և ներքին, ըստ ներագրման ոլորտի՝ համաչափ և անհամաչափ¹:

Ակնհայտ է, որ թվարկված յուրաքանչյուր հարթությունում նպատակների, տեխնոլոգիաների, մասնագիտացման, հաստատությունների և ռեսուրսների լրակազմը փոխվում է:

Այսպես. *մարտահրավերները* պահանջում են զարգացման ծրագրերի ու նախագծերի մշակում և իրագործում, *ռիսկերի* դաշտում շեշտը պետք է դրվի ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգերի առկայության վրա: *Վրսակներն* ու

¹ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ», Հավելված: «ՀԲ», 2006, հմ. 2:

սպառնալիքները պահանջում են ճգնաժամային իրավիճակների համար (ֆորս մաժոր) մշակված միջոցառումների ծրագրերի և գործողության ուղեցույցների առկայություն:

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված մեթոդաբանության հիման վրա դիտարկենք ՀՀ ֆինանսական անվտանգության ռազմավարության մշակման ու իրականացման նկատմամբ ԿԲ հիմնական մոտեցումներն ու պատկերացումները:

Ֆինանսական անվտանգությունը ազգային (տնտեսական²) անվտանգության բաղկացուցիչ մասն է, որով ապահովվում են ՀՀ ֆինանսական սեկտորի մրցունակությունը, կայունությունը և ինքնազարգացման հնարավորությունը, և որը բնորոշվում է ՀՀ ֆինանսական սեկտորի բոլոր մակարդակներում ռիսկերի կառավարման համակարգերի առկայությամբ, ինչպես նաև վտանգավոր ազդեցությունները զսպելու և կրած վնասը արագ համակշռելու ունակությամբ:

Ֆինանսական անվտանգության օբյեկտներն են ֆինանսական հաստատությունները, ֆինանսական շուկաները և ֆինանսական ենթակառուցվածքները:

Համաձայն ԿԲ-ի մասին օրենքում ամրագրված հիմնական նպատակի՝ որպես ֆինանսական անվտանգության սուբյեկտ իր իրավասության շրջանակներում հանդես է գալիս ԿԲ-ն:

Ակնհայտ է, որ ֆինանսական անվտանգությունը հիմնվում է մակրոտնտեսական կայունության վրա, իսկ վերջինս ենթադրում է դրամավարկային (*մոնետար*) և հարկաբյուջետային (*ֆիսկալ*) մարմինների համաձայնեցված գործողություններ՝ ուղղված.

— տնտեսության և ֆինանսական համակարգի զարգացման վերաբերյալ ընդհանուր պատկերացման մշակմանը,

— որոշումների համաձայնեցման ընթացակարգի հաստատութենացմանը (այս տեսանկյունից էլ մենք ֆինանսական անվտանգությունը կդիտարկենք նեղ իմաստով):

Ստորև ՀՀ ֆինանսական անվտանգությունը մենք կհետազոտենք վերը նշված երեք հարթություններում:

3.1. Անվտանգությանն ուղղված մարտահրավերների հարթություն

Հայաստանի ֆինանսական համակարգի համար ներկայումս գոյություն ունեցող գլխավոր մարտահրավերները կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝ *համընդհանուր, փարսժաշրջանային և ներպետական*:

² Տնտեսական անվտանգությունը ազգային անվտանգության բաղադրիչ է, որը համապատասխանում է պետության կողմից տնտեսական անկախության ձեռքբերմանը՝ արտաքին տնտեսական ճնշմանը, արտաքին շրջափակման փորձերին և տնտեսական պատժամիջոցներին դիմակայելու կարողություն, ազգային տնտեսության կայուն զարգացման վրա հենվելով՝ ազգային խնդիրները լուծելու պատրաստություն (տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ», Հավելված: «ՀԲ», 2006, հմ. 2):

3.1.1. Համընդհանուր մարտահրավերներ

ԽՍՀՄ փլուզումից հետո համընդհանուր մասշտաբով տեղի ունեցավ խոշոր խաղացողների միջև ուժերի էական վերադասավորում, ինչի հետևանքով երևան եկան հավանական սպառնալիքների աղբյուր հանդիսացող նոր խաղացողներ՝ ահաբեկչական ուժերի տեսքով: Կարիք եղավ ֆինանսական ոլորտում սահմանելու ավելի խիստ վերահսկողություն, որն ուղղված է ահաբեկչության ֆինանսավորման և փողերի լվացման նպատակով պետությունների ֆինանսական համակարգերի օգտագործմամբ նրանց որևէ հակամարտության մեջ անուղղակի ներքաշման հնարավորության կանխմանը, ընդամին այդ փողերի հիմնական աղբյուրը թմրանյութերի, զենքի ու երեխաների վաճառքից ստացվող եկամուտներն են: Այդ պատճառով աշխատանքի միջազգային բաժանմանը մասնակցող բոլոր երկրներում էապես խստացավ նման ֆինանսական հոսքերի բացահայտմանն ուղղված ֆինանսական հետախուզության ու ֆինանսական վերահսկողության համակարգը: Համընդհանուր մասշտաբով միայն այն երկրներին, որոնք ապահովում են ահաբեկչության ֆինանսավորման և հանցագործ ճանապարհով ստացվող միջոցների օրինականացման կանխմանն ուղղությամբ համապատասխան ձեռնարկումներ, հնարավորություն է տրվում օգտվելու վերջնահաշվարկման միջազգային համակարգերից, մուտք գործելու համընդհանուր ֆինանսական շուկաներ և, որպես հետևանք, իրենց համար ապահովելու էժան ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը:

Ֆինանսական ծառայությունների ստանդարտացումը և բարձր մակարդակի տեխնոլոգիականացումը ևս համընդհանուր միտումներ են: Դրանք մարտահրավեր են դառնում ազգային համակարգերի համար և պահանջում են ֆինանսական ծառայությունների բարձր աստիճանի ստանդարտացում, ֆինանսական հաստատությունների կադրերի մասնագիտական մակարդակի բարձրացում, ինչպես նաև ֆինանսական տեխնոլոգիաների զարգացում: Ստանդարտացվում են նաև ֆինանսական, բանկային հսկողության նկատմամբ մոտեցումները: Այն դեպքում, երբ որևէ երկիր պատեհաժամորեն չի ընդունում միջազգային ստանդարտները, նա ունենում է լուրջ խնդիրներ՝ կապված ազգային ֆինանսական հաստատությունների համար միջազգային ֆինանսական շուկաների մատչելիության սահմանափակման հետ:

Այսպիսով՝ ազգային ֆինանսական համակարգերին ուղղված հիմնական համընդհանուր մարտահրավերներն են.

— ինտեգրումը միջազգային ֆինանսական կառույցներին և դրան համապատասխան քաղաքականության մշակումն ու իրագործումը, բանկային, ապահովագրական, արժեթղթերի շուկայում ծավալվող գործունեության, ինչպես նաև ֆինանսական վերահսկման միջազգային ստանդարտների ներդրումը,

— ահաբեկչության ֆինանսավորման և հանցավոր ճանապարհով ստացվող միջոցների օրինականացման դեմ պայքարի միջազգային համակարգում ՀՀ ներգրավվածության ապահովումը:

3.1.2. Տարածաշրջանային մարտահրավերներ

Հարավկովկասյան տարածաշրջանում Հայաստանի ֆինանսական համակարգն այսօր առաջատար դիրք է գրավում³:

Մակրոտնտեսական կայունության ապահովման (Մասստրիխտյան պայմանավորվածությանը համապատասխան), ֆինանսական օրենսդրության ու ֆինանսական վերահսկողության որակի առումով մենք ընթանում ենք տարածաշրջանում ամենաբարձր տեմպերով: Որոշ չափով հետ ենք մնում Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական միջնորդության մակարդակով: ՀՀ ֆինանսական համակարգի ակտիվների ծավալը դեռ տատանվում է ՀՆԱ-ի մոտ 20 %-ի սահմանում, ինչը հիմնական մարտահրավերն է ինչպես տարածաշրջանային, այնպես էլ ներպետական մակարդակում: Հնարավոր է, որ մոտակա մի քանի տարիների ընթացքում լուրջ խնդիրներ ունենանք՝ կապված ֆինանսական համակարգի կողմից ծառայությունների մատուցման մեծ ծախսարարության հետ, որի պատճառը կլինի հենց նրա մասշտաբը: Իսկ փոքր ֆինանսական հաստատություններն իրենց մրցունակությունը կկորցնեն նույնիսկ ներքին շուկայում:

Տարածաշրջանային աշխատանքի բաժանման գործում (միտումները ցույց են տալիս, որ նման բաժանումն անխուսափելի է) Հայաստանը, որը բնական ռեսուրսներով հարուստ չէ, հնարավորություն ունի տեղ զբաղեցնելու բարձրորակ, այդ թվում նաև ֆինանսական ծառայությունների մատուցման ոլորտում, իսկ դա նշանակում է, որ Հայաստանն ունի տարածաշրջանային ֆինանսական կենտրոն դառնալու բոլոր հնարավորությունները:

Այսպիսով՝ Հայաստանի համար կարելի է առանձնացնել տարածաշրջանային հետևյալ մարտահրավերները.

- տարածաշրջանում զարգացման առաջավարական դիրքերի պահպանում,
- ֆինանսական միջնորդության մակարդակի բարձրացում (տարածաշրջանային ֆինանսական կենտրոն):

3.1.3. Ներպետական մարտահրավերներ

Հայաստանի ֆինանսական սեկտորը տնտեսության բավականին դինամիկորեն զարգացող հատվածներից է, որի առանցքային խնդիրներից է ՀՀ արտաքին և ներքին ակտիվների կառավարման համակարգերի ներդրումը և դրանց արդյունավետության մեծացումը: Ելնելով դրանից՝ մենք կարևորում ենք ՀՀ միջազգային արտաքին պահուստների կառավարման անվտանգության և իրացվելիության ապահովումը: Այն ներառում է ՀՀ արտաքին պարտքի կանոնավոր ապաստարկումը, երեք ամսվա ներմուծման ծավալի նկատմամբ արտարժույթային համապատասխան ծածկույթի առկայությունը, կապիտալի արտահոսքի հնարավորության կամ ներքին շուկայում արտարժույթային միջոցների նկատմամբ պահանջարկի անսպասելի աճի

³ Տես *T. C. Саркисян. Экономическая динамика Южного Кавказа в 2005 году. Электронный сайт ЦБ РА (www.cba.am)*:

պարագայում ՀՀ դրամի փոխարժեքի կտրուկ տատանումների հարթումը: Միևնույն ժամանակ արդյունավետ արժույթային քաղաքականության իրականացման հետ համատեղ արդիական խնդիր է նաև դրամայնացման խթանումը, ազգային արժույթի կիրառման ոլորտների ընդլայնումը և դրամային ակտիվների ավելացմանն ուղղված համալիր միջոցառումների մշակումը և իրականացումը: Այսօրվա դրությամբ տնտեսության ընդհանուր աճի համեմատ նկատելի են ֆինանսական սեկտորը բնութագրող գործնականորեն բոլոր ցուցանիշների աճման ավելի արագ տեմպերը: Այսպես, 2006 թ. 9 ամիսների ընթացքում բանկային համակարգի ակտիվները աճել են 23 %-ով, իսկ կապիտալը՝ 24 %-ով: Այնուամենայնիվ, բանկերի կապիտալացումը դեռևս ցածր է, նրանց կողմից առաջարկվող ապրանքների տեսականին չի բավարարում վարկային պահանջարկը, մասնավորապես՝ սկսնակ գործարարներին հիպոթեկային և այլ նպատակներով տրամադրվող վարկերի պահանջարկը: Բանկերի ռեսուրսային բազան կարճաժամկետ բնույթի է, իսկ արժեթղթերի շուկայի թերզարգացածության հետևանքով տնտեսության իրական սեկտորի երկարաժամկետ ներդրումային ֆինանսավորման ոլորտում առաջանում է լուրջ վակուում:

Ապահովագրական շուկան սաղմնային վիճակում է և չի կարող իր վրա վերցնել ապահովագրական ռիսկի մեծ մասը:

Ֆինանսական սեկտորում տիրող այդ իրավիճակը պայմանավորված է ոչ այնքան ներհամակարգային խնդիրներով, որոնք փուլ առ փուլ լուծվում են, որքան ընդհանրապես տնտեսության մեջ առկա պրոբլեմներով, որոնց շարքը պետք է դասել ամենից առաջ ստվերային տնտեսության բարձր մակարդակը, տնտեսության իրական սեկտորում կատարվող բարեփոխումների անբավարար տեմպերը, բարձր մակարդակի դոլարացումը, շուկաների մրցակցային անկատարությունները:

Ներպետական մակարդակում այսօր հիմնական մարտահրավերներն են.

—կառուցվածքային տնտեսական բարեփոխումների ֆինանսական կայունության ապահովումը,

—ազգային արժույթի նկատմամբ վստահության բարձրացումը,

—տնտեսական աճի ապահովման գործում ֆինանսական համակարգի դերի բարձրացումը,

—արդյունավետ ֆինանսական ենթակառուցվածքի ստեղծումը:

3.1.4. Գործողության ուղեցույցները

ՀՀ ֆինանսական համակարգին ուղղված մարտահրավերներին առավել հիմնավոր արձագանքն է ֆինանսական համակարգի զարգացման նախագծերի մշակումն ու իրագործումը:

ԿԲ-ն եռամյա կտրվածքով մշակում է ՀՀ ֆինանսական սեկտորի զարգացման իր տեսլականը, որը հաստատվել է ՀՀ ԿԲ Խորհրդի կողմից, և որին ներկայումս կարելի է ծանոթանալ ՀՀ ԿԲ էլեկտրոնային կայքում: Այդ փաստաթուղթը մշակվում է եռամսկարգակ (*համընդհանուր, տարածաշրջանային, ներպետական*) վերլուծության հիման վրա և կոչված է դեպքերի հնարավոր զարգացումների (սցենարային վեր-

լուծության) ու բոլոր երեք մակարդակներում հիմնական միտումների բացահայտմամբ առանձնացնելու այն խնդիրների համախումբը, որոնք անհրաժեշտ է լուծել մոտակա երեք տարիների ընթացքում:

Այդ տեսլականի հիման վրա մշակվում և իրագործվում են համապատասխան նախագծեր, որոնք արտացոլված են ԿԲ գործունեության ամենամյա պլաններում*:

ԿԲ-ն ակտիվ կերպով մասնակցում է նաև տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, ծրագրեր, որոնք թեև նրա գործունեության շրջանակներից դուրս են, սակայն նպաստում են ֆինանսական սեկտորի զարգացմանը: Խոսքը կենսաթոշակային բարեփոխման, սովերային և կանխիկ դրամաշրջանառության կրճատման և այլ ծրագրերի մասին է:

3.2. Ռիսկերի հարթություն

3.2.1. Համընդհանուր ռիսկեր

Արդի աշխարհում ֆինանսական ռիսկերը բնորոշվում են կապիտալի բարձր աստիճանի շարժունությամբ: Ներկայումս ֆինանսական տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն է տալիս տիեզերական արագությամբ ֆինանսական հոսքերը տեղափոխելու աշխարհի մեկ ծայրից մյուսը, ինչն ստեղծում է համընդհանուր մասշտաբով էական ռիսկեր:

90-ական թվականներին մենք ականատես եղանք զարգացող երկրներում տեղի ունեցած ֆինանսական ճգնաժամների շղթայի, այդ թվում` Ռուսաստանի 1998 թ. ֆինանսական ճգնաժամին: Նման մեծամասշտաբ ճգնաժամները ռիսկեր են առաջացնում հարևան երկրների և ֆինանսական ճգնաժամի տեղայնացման կենտրոնի հետ տնտեսապես ու ֆինանսապես կապված երկրների համար: Համընդհանուր շուկաներն իրենց մեջ կրում են նաև ռիսկեր, որոնք պայմանավորված են մեր հանրապետության կողմից ներկրվող և արտահանվող առաջնային (կառուցվածքաստեղծ) ապրանքների (էներգակիրներ, հումք ու նյութեր, հացահատիկ, շաքար և այլն) գների բարձր մակարդակի տատանումներով: Դրա հետևանքով զգալի ռիսկի է ենթարկվում հանրապետության մակրոտնտեսական կայունությունը: Համաշխարհային ֆինանսական շուկաներում արտարժույթի կտրուկ տատանումները և ավելցուկային դոլարային իրացվելիությունը, արագ տեղաշարժվելով, բարենպաստ պայմաններ են ստեղծում բաց տնտեսություն ունեցող երկրների ազգային արժույթների տատանումների համար:

3.2.2. Տարածաշրջանային ռիսկեր

Տարածաշրջանային ռիսկերն ունեն այն նույն բնույթը, որն ունեն համընդհանուր ռիսկերը, բայց փոքր-ինչ տարբերվում են տեղայնացման աստիճանով, ինչպես նաև կարող են ֆինանսական շուկայի վրա տարածվել տնտեսության մյուս ոլորտ-

* Տես ՀՀ ԿԲ հաշվետվությունները և այլ հրապարակվող նյութեր:

ներից: Այսպես. Հայաստան մուտք են գործում մեծ ծավալով տրանսֆերտներ* Ռուսաստանից, և մենք դիտում ենք դրանց անընդհատ աճում՝ Ռուսաստանի տնտեսության աճմանը զուգընթաց: Ռուսաստանի տնտեսության մեջ տիրող իրավիճակի վատթարացման դեպքում անհրաժեշտ կլինի որպես ռիսկ դիտել ֆինանսական հոսքերի կրճատման հավանականությունը, ինչը էապես կազդի ՀՀ ֆինանսական համակարգի վրա:

3.2.3. Ներպետական ռիսկեր

Ներպետական ռիսկերը հիմնականում կապված են ներքին շուկայում առկա իրավիճակի զարգացման հետ: Դրանց էությունը պայմանավորված է ճգնաժամային իրավիճակի զարգացումը խթանող ներպետական գործոններով: Համաշխարհային պրակտիկայում մենք տեսել ենք նման ճգնաժամներ՝ կապված դեֆոլտի (պետության անկարողությունն սպասարկելու ներքին և արտաքին պարտքերը), սղաճի, համակարգաստեղծ բանկերի սնանկացման (ավանդների մեծամասշտաբ արտահոսք, որն ընդունված է անվանել «դոմինոյի էֆեկտ») հետ, ճգնաժամ՝ կապված անշարժ գույքի շուկայի փլուզման հետ (նման ճգնաժամ դիտվել է 90-ական թվականներին Ճապոնիայում, երբ գազաթնակետային արժեքների հասած գները «փլուզվեցին» անշարժ գույքի՝ բարձր մակարդակի հարկման համակարգի ներդրման հետևանքով, ինչը իր հերթին հանգեցրեց հիպոթեկային շուկայի փլուզմանը և, որպես արդյունք, ֆինանսական ճգնաժամի, որի հետևանքներից Ճապոնիան մինչ օրս էլ չի կարողանում ձերբազատվել):

3.2.4. Գործողության ուղեցույցներ

Համաշխարհային պրակտիկայում ֆինանսական ռիսկերն ըստ ծագման աղբյուրների ընդունված է դասակարգել որպես արտաքին և ներքին:

Արտաքին ռիսկերը ենթաբաժանվում են մակրոտնտեսական և ֆորսմաժորային ռիսկերի: Արտաքին ռիսկերը հիմնականում կապված են մակրոտնտեսական տատանումների հետ:

Ներքին ռիսկերն իրենց հերթին ենթաբաժանվում են՝

— ֆինանսական հաստատություններից բխող ռիսկերի, այն է՝ *ֆինանսական* (վարկային, շուկայական, իրացվելիության և այլն), օպերացիոն, իրավաբանական, խտացումային և այլ ռիսկերի,

— ֆինանսական շուկաներից բխող ռիսկերի, այն է՝ *գործընկերային*, ակտիվների գների անհամապատասխանության, կապիտալի մեծածավալ ներհոսքի կամ արտահոսքի և այլ ռիսկերի,

— ֆինանսական ենթակառույցներից բխող ռիսկերի, այն է՝ *վճարահաշվարկա-*

* *Տրանսֆերտ*. 1. *Ֆին.* Բանկային օպերացիա՝ օտարերկրյա արժույթի կամ ոսկու փոխադրում մեկ երկրից մյուսը: 2. *Ֆին.* Անվանական արժեթղթերի սեփականատեր լինելու իրավունքի փոխանցում մեկ անձից մյուսին (տես *Ա. Ս. Կրյսին. Толковый словарь иноязычных слов. М., 2000, с. 709*):

յիև, տեղեկատվական, ենթակառուցվածքների փխրունության հետ կապված և այլ ռիսկերի:

Ռիսկերի առկայությունը մեզինց պահանջում է մշակել բոլոր մակարդակներում ռիսկերի կառավարման համակարգ, որը ներառեր ռիսկերի ճանաչման և նույնակա-նացման համակարգ, ռիսկի թույլատրելի մակարդակը պարզորոշող առաջավարա-կան ցուցիչների և կրիտիկական պարամետրների համակարգ, ստրես-թեստավոր-ման համակարգ, որը հնարավորություն է տալիս մոդելավորելու իրավիճակը և ի հայտ բերելու ռիսկի մակարդակի բարձրացման ֆինանսական հետևանքները, ինչ-պես նաև այնպիսի միջոցների համակարգ, որոնք որոշակի դեպքերում հնարավորու-թյուն են տալիս նվազագույնի հասցնելու ռիսկերը:

Բոլոր մակարդակներում ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգերի ստեղծման նպատակով Կենտրոնական բանկը բոլոր ուղղություններով աշխատանք է տանում ինչպես հենց ԿԲ-ում, այնպես էլ ՀՀ տարածքում գործող այլ ֆինանսական կազմակերպություններում:

Անընդհատ կատարելագործվում է ֆինանսական վերահսկման համակարգը, որը 2003 թվականին անցել է ռիսկերի վրա հիմնվող հսկողության: Իրագործվում է «Բազել-2» նախագիծը (համաձայն կապիտալի համապատասխանության մասին բազելյան նոր համաձայնագրի), որի տրամաբանությունն անվտանգության տե-սանկյունից այն է, որ բանկերը պետք է ունենան հստակ մեթոդաբանական հիմքերի վրա կառուցված ռիսկերի կառավարման լիարժեք համակարգեր: Ռիսկերը նվազա-գույնի հասցնելու մյուս գործոնը բանկային համակարգում կորպորատիվ կառավար-ման և հիմնական տարրերից մեկի՝ տեղեկատվության թափանցիկության ներդրումն է:

Մակրոտնտեսական ռիսկերի կառավարումը պահանջում է մակրոտնտեսական ռիսկերի ճանաչման համակարգի առկայություն, դրամավարկային քաղաքականու-թյան գրագետ վարում, ինչպես նաև մակրոտնտեսական ու հարկային քաղաքականու-թյան իրականացման գործում Կենտրոնական բանկի ու Կառավարության գործո-ղությունների փոխհամաձայնեցվածություն:

3.3. Վտանգների և սպառնալիքների հարթություն

Այս հարթությունում մենք դիտարկում ենք այն վտանգներն ու սպառնալիքները, որոնք բխում են հնարավոր ֆորսմաժորային իրավիճակներից՝ հիմնականում կապ-ված ընդհանուր առմամբ ազգային անվտանգությանն ուղղված անմիջական սպառ-նալիքների հետ. դրանք են՝ ռազմական գործողություններն ու մեծամասշտաբ աղետ-ները, որոնք կաթվածահար են անում ֆինանսական համակարգի բնականոն գործու-նեությունն ու նրա կողմից վճարահաշվարկային հիմնական գործառույթի կատա-րումը, ինչպես նաև ԿԲ և այլ բանկերի արտաքին ակտիվների՝ որպես վճարման միջոցի օգտագործման անհնարիմության հետ կապված վտանգները: Օրինակ՝ տա-րածաշրջանային հակամարտությունների և դրանց սրման հետ կապված վտանգ-ներն ու սպառնալիքները կարող են կաթվածահար անել ազգային ֆինանսական հա-մակարգը, ֆիզիկապես սահմանափակել միջազգային ֆինանսական ռեսուրսների

մատչելիությունը (լրիվ տրանսպորտային շրջափակում) և հանգեցնել այլ բացասական երևույթների:

3.3.1. Գործողության ուղեցույցներ

Այս հարթությունում անհրաժեշտ է մշակել այն միջոցառումների պլանները, որոնք ԿԲ-ն պետք է իրագործի նման իրավիճակներում:

Միջոցառումներն իրականացվում են երեք հիմնական ուղղություններով:

Առաջին ուղղությունը, որը պայմանականորեն կոչվում է «Պահուստային բանկ», նախատեսում է դրամներով կանխիկ միջոցների պահուստային կուտակում՝ պատերազմական իրավիճակում գերադաճային երևույթների առաջացման, ինչպես նաև ազգային արժույթի ֆիզիկական ոչնչացման դեպքերի համար, ենթադրում է նաև կրկնօրինակող վճարային տեխնոլոգիական համակարգերի ու տեղեկության բազաների առկայություն և այլն:

Երկրորդ ուղղությունը կապված է տարբեր ֆորսմաժորային իրավիճակներում ֆիզիկական պաշտպանության՝ տարահանման, ԿԲ գործունեության անընդհատության ապահովման և այլ օպերատիվ պլանների մշակման հետ:

Երրորդ ուղղությունը կապված է Կենտրոնական բանկի արտաքին պահուստային և ընդհանուր առմամբ պետության արժույթային պահուստային միջոցների մշտական կուտակման հետ:

4. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ մենք քննարկեցինք երեք նշված հարթություններում ֆինանսական անվտանգության նկատմամբ ընդհանուր մոտեցումների հարցը:

Ֆինանսական անվտանգության բոլոր երեք հարթությունների հավաքակետ պետք է լինի ԿԲ կառավարման արդյունավետ համակարգը, քանի որ ԿԲ-ն, հանդես գալով որպես ֆինանսական շուկայի գլխավոր կարգավորողը, կառավարման հարկաբյուջետային մարմինների հետ մեկտեղ, ՀՀ ֆինանսական անվտանգության հիմնական երաշխավորն է:

ФИНАНСОВАЯ БЕЗОПАСНОСТЬ КАК СОСТАВЛЯЮЩАЯ
НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

*T. S. SARGSYAN, Председатель ЦБ РА, член-эксперт Межведомственной комиссии,
кандидат экономических наук*

РЕЗЮМЕ

Представлены основные подходы ЦБ к разработке и реализации стратегии финансовой безопасности РА в соответствии со «Стратегией национальной безопасности РА». Рассмотрены три плоскости, позволяющие покрыть все пространство финансовой безопасности страны: плоскости вызовов безопасности, рисков, опасностей и угроз. Разработан и предложен ряд руководств к действию в направлении обеспечения безопасности в каждой из плоскостей.

Эффективная система управления ЦБ и фискальных властей является основным гарантом финансовой безопасности РА.

FINANCIAL SECURITY AS A COMPONENT
OF THE NATIONAL SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA

*T. S. SARGSYAN, Chairman of the CB of the RA,
Member Expert of the Interagency Commission,
Candidate of Economic Sciences*

SUMMARY

Here the main approaches by the CBA to the development and realization of the financial security strategy of the RA in accordance with the «National Security Strategy of the RA» are presented. Three planes, covering the entire area of the financial security of the country, have been considered: the planes of security challenges, risks, dangers and threats. A number of guidelines designed to ensure the security in each of the planes have been developed and proposed.

The efficient management system of the CBA and fiscal authorities is the main guarantee for the financial security of the RA.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*Ա. Զ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ,
Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ,
պատմական գիտությունների դոկտոր*

Նախքան Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» հաստատումը 2007 թ. փետրվարի 7-ին¹, փաստաթուղթն անցել է միջգերատեսչական մշակման և թափանցիկ քննարկումների ինտենսիվ փուլ, որին մասնակցել են հանրապետության գրեթե բոլոր գերատեսչությունները: Հանրապետության Նախագահի 2005 թ. դեկտեմբերի 15-ի կարգադրությամբ ստեղծվել էր Միջգերատեսչական հանձնաժողով, որը նախագահում էր Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: Հանձնաժողովի նիստերը եղել են բաց, աշխատանքներին մասնակցելու հնարավորություն են ունեցել ԱԺ պատգամավորներ, գիտնականներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Փաստաթուղթը քննարկվել է ՀՀ Ազգային ժողովում, Գիտությունների ազգային ակադեմիայում, Երևանի պետական համալսարանում, փորձաքննություն անցել Մոսկվայի, Վաշինգտոնի և Բրյուսելի վերլուծական և քաղաքագիտական հաստատություններում²: Միջգերատեսչական հանձնաժողովի քարտուղարության, նրա գործունեությունը կազմակերպողի և համակարգողի դերը հաջողությամբ իրականացրեց ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը՝ քաղաքական գիտությունների դոկտոր գեներալ-մայոր Հայկ Քոթանջյանի ղեկավարությամբ:



Իրենց հերթին, մասնակից գերատեսչությունները ձևավորել էին աշխատանքային խմբեր, որոնք, բացի հիմնական փաստաթղթի վրա աշխատանքից, զուգահեռաբար մշակել և Հանձնաժողովի քարտուղարությանն էին ներկայացրել փաստաթղթի իրականացումն ապահովող գերատեսչական ծրագրերի նախագծեր, որոնք վերաբերում են պաշտպանության, տնտեսության, էներգետիկայի, առողջապահության, բնապահպանության, արտաքին քաղաքականության և այլ առանցքային

¹ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 11:

² Տես նույն տեղում, էջ 9:

ուղորտների: Մասնավորապես, արտաքին գործերի նախարարության կողմից մշակվել էր «Արտաքին անվտանգության ապահովման հայեցակարգ» փաստաթուղթը, որում ներկայացված են արտաքին անվտանգության ռազմավարության նպատակներն ու հիմնախնդիրները, հիմնական քաղաքիչները, իրագործման ուղղություններն ու հարթությունները: Փաստաթղթի հիմնական դրույթներն ընդգրկվել են «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» արտաքին անվտանգությանը վերաբերող բաժիններում:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության կարևորագույն քաղաքիչն է «Արտաքին անվտանգության ապահովման հայեցակարգը», որն արտահայտում է ներկայիս արտաքին քաղաքական ուղեգիծը և հանդիսանում արտաքին գործերի նախարարության գործունեության ծրագիրը: Այն ենթակա է վերանայման և ճշգրտումների, ինչը «պայմանավորված է երկրում, տարածաշրջանում և աշխարհում ընթացող դինամիկ գործընթացներով, իրավիճակի և քաղաքական գերակայությունների փոփոխություններով»³:

ՀՀ արտաքին անվտանգության ապահովման ռազմավարությունն իրականացվում է երեք հիմնական հարթություններում՝ միջազգային, տարածաշրջանային և համահայկական:

Խոսելով միջազգային ոլորտի մասին՝ հարկ է նշել, որ երկրի արտաքին անվտանգությունը մեծապես կախված է միջազգային ռազմաքաղաքական և աշխարհաքաղաքական զարգացումներից: Արդի իրականության մարտահրավերներին համարժեքորեն արձագանքելու նպատակով Հայաստանը որդեգրել է միջազգային ինտեգրման և ակտիվ ներգրավման միջոցով ազգային շահերը պաշտպանելու ռազմավարություն, ինչը ենթադրում է արդյունավետ մասնակցություն միջազգային գործընթացներին, ինչպես նաև բազմակողմ և բազմաշերտ քաղաքականության իրականացում: Հայաստանն ակտիվորեն մասնակցում է համաշխարհային նշանակության ծրագրերին, մասնավորապես՝ միջազգային ահաբեկչության դեմ պայքարին, ներգրավված է միջազգային կարևորագույն կազմակերպություններում: Հայաստանը մասնակցում է եվրաինտեգրման գործընթացներին, եվրատլանտյան և հետխորհրդային տարածքի համագործակցության կառույցներին, զարգացնում է իր հարաբերությունները համաշխարհային ուժային կենտրոնների և տարածաշրջանային գործընթացներում ներգրավված երկրների հետ, ջանքեր գործադրում համաշխարհային տնտեսությանն ինտեգրման ուղղությամբ:

Բնական է, որ Հայաստանը, ինչպես ցանկացած այլ պետություն, չի կարող ապահովել անվտանգության կայուն երաշխիքներ առանց հարևան երկրների հետ բնականոն հարաբերությունների հաստատման: Այս ոլորտում Հայաստանի անվտանգությունը գլխավորապես պայմանավորված է հարևան երկրների հետ հարաբերություններով, ինչպես նաև այդ երկրներում և նրանց շուրջ ընթացող իրադարձություններով: Մեր երկիրը հանդես է գալիս տարածաշրջանային համագործակցության միջավայրի ձևավորման, անվտանգության համակարգի ստեղծման, հարևան պե-

³ Նույն տեղում, էջ 45:

տությունների միջև կառուցողական հարաբերությունների հաստատման օգտին: Տարածաշրջանում առկա են ներքին և արտաքին հակամարտություններ, տարածայնություններ հարևանների հետ, դեռ չեն ձևավորվել կայունության, անվտանգության, հաղորդակցության ուղիների և տնտեսական համագործակցության ընդգրկում ու միասնական հայեցակարգեր և մեխանիզմներ: Այս ամենը հնարավոր կլինի լուծել երկխոսության և համագործակցության միջոցով:

Հայաստանի անվտանգության ապահովման տարածաշրջանային ռազմավարությունը մասնավորապես նպատակաուղղված է տարածաշրջանային կայունության ամրապնդմանը, Վրաստանի և Իրանի հետ բարիդրացիական հարաբերությունների հետագա զարգացմանը, Ղարաբաղյան հակամարտության հանգուցալուծմանը, Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը, ինչպես նաև տարածաշրջանում իրականացվող միջազգային տնտեսական ծրագրերին Հայաստանի մասնակցության ապահովմանը:

Պատմական իրադարձությունների բերումով և Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի գերակշիռ մասը բնակվում է Հայաստանի սահմաններից դուրս: Հայկական սփյուռքը բնորոշվում է տարբեր պետություններում իր ինտեգրվածությամբ, ինչպես նաև պետական, հասարակական ու տնտեսական կյանքում զգալի դերակատարությամբ: Մեր երկրի անկախացումից ի վեր սփյուռքահայերն ու համահայկական կազմակերպություններն իրենց նպաստն են բերում Հայաստանի միջազգային ինտեգրմանն ու տնտեսական զարգացմանը՝ սատարելով նաև Հայաստանի և իրենց բնակության երկրների միջև հարաբերությունների զարգացմանը: Իր հերթին, Հայաստանն աջակցում է սփյուռքահայերի հայապահպանման ծրագրերին, քայլեր է ձեռնարկում Հայաստան—Սփյուռք կապերի խորացման ու ծավալման ուղղությամբ: Միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում Հայաստանը ձգտում է համախմբելու Հայաստանում և Սփյուռքում բնակվող հայ ժողովրդին, պահպանելու արտերկրում հայկական պատմամշակութային և հոգևոր արժեքները, ապահովելու Հայկական սփյուռքի գոյությունը և ազգային արժեքների պահպանումը:

Սփյուռքի ներգրավումը Հայաստանի համար ունի նաև տնտեսական ու մշակութային մեծ նշանակություն, քանի որ խթանում է առևտուրը, զբոսաշրջությունը, ազգային մշակութային արժեքների պահպանումը, զարգացումն ու տարածումը:

Սփյուռքի հետ կապերն առանձնահատուկ դեր ունեն Հայաստանի զարգացման համար, քանի որ Սփյուռքը մի յուրօրինակ կամուրջ է Հայաստանի և միջազգային հանրության միջև:

Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության ռազմավարության գլխավոր նպատակն է ստեղծել երաշխիքներ երկրի ու բնակչության անվտանգության ու տնտեսական բարգավաճման համար, տարածաշրջանում ապահովել կայունությունն ու տևական խաղաղությունը: Այն իրականացվում է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան և միտված է բոլոր պետությունների հետ բարեկամական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը:

Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական խնդիրն է երկրի ինքն-իշխանության և տարածքային ամբողջականության պահպանման, երկրի կայունության և անվտանգության ամրապնդման համար երաշխիքների ապահովումը: Հարկավոր է ձևավորել բարենպաստ պայմաններ երկրի շարունակական զարգացման, տնտեսական առաջընթացի, ժողովրդավարական բարեփոխումների իրականացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման, Ղարաբաղյան հակամարտության խաղաղ և արդարացի կարգավորման, եվրախնտեզրման գործընթացի զարգացման համար: Անհրաժեշտ է կարգավորել հարաբերությունները հարևան բոլոր երկրների հետ, ստեղծել բարենպաստ պայմաններ փոխգործության և տարածաշրջանային համագործակցության համար: Պետք է աջակցել տարածաշրջանում մարդու իրավունքների և ժողովրդավարության տարածմանն ու տարածաշրջանային հակամարտությունների խաղաղ կարգավորմանը:

Արտաքին գործերի նախարարության պատրաստած փաստաթղթում Հայաստանի անվտանգության ապահովման հիմնական բաղադրիչների շարքում առանձնացվում են՝ 1. համագործակցությունը Ռուսաստանի հետ պաշտպանության և ռազմատեխնիկական ոլորտներում, 2. անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ), 3. երկկողմ ռազմական համագործակցությունը, մասնավորապես՝ ԱՄՆ-ի և Հունաստանի հետ, Հայաստանի լիարժեք մասնակցությունը ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին, այդ թվում՝ «Պլանավորման և վերանայման գործընթացին» (PARP), «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրին» (IPAP) և այլ նախաձեռնությունների, որոնք առավել արդյունավետ են դարձնում գործակցությունը Հյուսիսատլանտյան դաշինքի հետ, ինչպես նաև անվտանգության միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության անվտանգության այն մարմինների գործունեությունը, որոնցով ապահովվում է սպառազինությունների վերահսկման բաց և թափանցիկ լինելու հանգամանքը:

Հայաստանը քաղաքական իրատեսությամբ է գնահատում իր տեղն ու դերը ինչպես տարածաշրջանում, այնպես էլ այստեղ իրենց շահերը հետապնդող պետությունների հետ հարաբերությունների համակարգում: Հայաստանի ղեկավարությունը գիտակցում է երկրի առկա քաղաքական, տնտեսական և ռազմական ներուժով պայմանավորված հնարավորությունների շրջանակները, ինչպես նաև այն սահմանափակումները, որոնք բխում են այսօր տարածաշրջանում գործող ուժերի հակադիր շահերից ու նպատակներից:

Այդ շրջանակներն ու սահմանափակումները, սակայն, չպետք է խոչընդոտ հանդիսանան տարածաշրջանում ակտիվ քաղաքականություն վարելու համար: Հայաստանն իր արտաքին անվտանգության ռազմավարությունն իրականացնում է՝ առաջնորդվելով փոխլրացման և ներգրավվածության գլխավոր սկզբունքներով:

Փոխլրացման սկզբունքը ենթադրում է, որ Հայաստանը միջազգային ասպարեզում իր հարաբերությունները կառուցում է ոչ թե գերտերությունների հետ մրցակցության կամ հակադրման, այլ դրանց հետ գործընկերության հաստատման ու միմյանց

լրացման հիման վրա: Մեր երկիրը միաժամանակ գործուն հարաբերություններ է հաստատում և պահպանում մեր կենսական միջավայրում գործող ու հետաքրքրություն ներկայացնող բոլոր ուժերի հետ: Փոխլրացման սկզբունքը նպատակ ունի պահպանել տարածաշրջանում հավասարակշռությունը և հնարավորինս դիմակայել Կովկասում աշխարհաքաղաքական շահերի բևեռացմանն ու այս տարածաշրջանը հակադրման դաշտ դարձնելու փորձերին:

Ահաբեկչության դեմ պայքարում, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի չտարածման խնդիրների շուրջ միջազգային հանրության համախմբումը և միջազգային կայունության արդի մարտահրավերների շուրջ պետությունների միջև ծավալված երկխոսության դրական ընթացքը ներկայումս նպաստում են Հայաստանի կողմից փոխլրացման արտաքին քաղաքականության իրականացմանը:

Հայաստանը տարածաշրջանային ու համաշխարհային ինտեգրման գործընթացներում ներգրավված երկիր է և իրեն դիտում է որպես տարածաշրջանում և միջազգային ասպարեզում տեղի ունեցող գործընթացների լիիրավ մասնակից ու ձևավորվող միջազգային համակարգի բաղկացուցիչ մաս: Ներգրավվածությունը ենթադրում է մասնակցություն միջազգային ասպարեզում ընթացող այն զարգացումներին, որոնց հետ Հայաստանի որդեգրած նպատակները և արտաքին ու ներքին քաղաքականությունը համահունչ են:

Զարգացման եվրոպական ուղու որդեգրումը, Ռուսաստանի հետ ռազմավարական հարաբերությունները, ԱՄՆ-ի և Իրանի հետ փոխշահավետ համագործակցությունը, ՆԱՏՕ-ի նախաձեռնություններին մասնակցությունը և ԱՊՀ-ին ու ՀԱՊԿ-ին անդամակցությունը ընդլայնում են Հայաստանի հնարավորությունները՝ փոխլրացման և ներգրավվածության քաղաքականություն վարելու, երկրի առջև ծառայած խնդիրների լուծման համար տարածաշրջանում և համաշխարհային ուժային կենտրոնների հետ փոխհարաբերություններում նպաստավոր դիրքեր նվաճելու, իր շահերը շոշափող հարցերի շուրջ բևեռացումներից խուսափելու առումով:

Հայաստանը հռչակել է բազմակողմ դիվանագիտությունը՝ որպես երկրի արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը, և այդ համատեքստում ակտիվ միջոցառումներ է ձեռնարկում միջազգային կազմակերպություններում իր ներգրավվածությունն ընդլայնելու ուղղությամբ:

Հայաստանն ակտիվորեն մասնակցում է ՄԱԿ-ի շրջանակներում ծավալվող աշխատանքներին և համագործակցում կազմակերպության բազմաթիվ կառույցների ու օժանդակ մարմինների հետ: Հայաստանը շարունակելու է իր մասնակցությունը և գործնական աջակցությունը ահաբեկչության դեմ միջազգային պայքարին և ՄԱԿ-ի խաղաղապահ գործունեությանը:

Արտաքին անվտանգության ապահովման ռազմավարության մեջ մեծ տեղ է հատկացված եվրոպական կառույցների, առաջին հերթին՝ Եվրոպական Միության (ԵՄ) և նրա անդամ երկրների հետ հարաբերությունների զարգացմանն ու ամրապնդմանը:

ԵՄ-ի հետ բազմակողմ համագործակցության հետագա խորացումը դրական

անդրադարձ կունենա Հայաստանում ժողովրդավարության ամրապնդման, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության և այլ առանցքային հիմնախնդիրների վրա: ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացումը կարևորվում է նաև առևտրատնտեսական կապերի մասով, ինչն էական նախապայման է Հայաստանի հետագա տնտեսական զարգացման համար: ԵՄ-ի կողմից իրականացվող տարածաշրջանային ծրագրերը (ՏՐԱՍՍԵԿԱ, ԻՆՕԳԵՅԹ, ԻՆՏԱՍ և այլն) նպաստավոր պայմաններ են ստեղծում Հարավային Կովկասում երկարատև կայունության և համագործակցության մթնոլորտի հաստատման համար:

ԵՄ-ի հետ սերտ հարաբերությունների հաստատումը բխում է Հայաստանի երկարաժամկետ շահերից, քանի որ ԵՄ-ն պետականաշինության, հասարակական հարաբերությունների, տնտեսության զարգացման, բնակչության բարձր կենսամակարդակ ապահովող և ընդհանուր արժեքների վրա հիմնված անվտանգության համակարգի հաջողված մոդել է:

Եվրոպական ինտեգրման ուղղությամբ կատարված կարևորագույն քայլերից է Եվրոպայի խորհրդին անդամակցումը: Այն հաստատեց Հայաստանի վճռակալությունը քաղաքական, իրավական, մարդու իրավունքների պաշտպանության և այլ բնագավառներում եվրոպական չափանիշներին հետևելու հարցում: Եվրոպայի խորհրդին անդամակցությունը և դրանից բխող պարտավորությունների կատարումը Հայաստանում ժողովրդավարության զարգացման, մարդու իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմների ստեղծման և կայունության ապահովման գրավականներից մեկն է:

Հայաստանը կարևորում է Եվրոպայի խորհրդի պատրաստակամությունը՝ խթանելու Հարավային Կովկասում միջպետական մակարդակով և քաղաքացիական հասարակության դերակատարների միջև շփումները, ինչը կարևոր գործոն է տարածաշրջանային համագործակցության խթանման, հակամարտությունների կարգավորման և տարածաշրջանային կայունության ապահովման համար:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) համաեվրոպական անվտանգության միակ կառույցն է, որում Հայաստանն ունի լիարժեք անդամի կարգավիճակ: Այն Հայաստանի համար առանձնակի կարևորվում է նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման տեսանկյունից, և այդ նպատակով ձևավորվել է ԵԱՀԿ Սինսկի խումբը: Հայաստանի ակտիվ ներգրավվածությունը ԵԱՀԿ գործունեության երեք հիմնական ուղղություններում, այն է՝ ռազմաքաղաքական, մարդկային և տնտեսական-բնապահպանական, լրացուցիչ կարևոր գործոն է երկրի անվտանգության և կայունության ապահովման համար:

Հայաստանը ԱՊՀ կառույցի հիմնադիրներից է և դրա շրջանակներում համագործակցության ծրագրերի մշակման ու իրականացման ակտիվ մասնակիցը: ԱՊՀ-ի շրջանակներում ջանքեր են գործադրվում մի շարք ոլորտներում համագործակցության արդյունավետ մեխանիզմներ ստեղծելու ուղղությամբ (օրինակ՝ ռազմաքաղաքական, արտաքին սահմանների պաշտպանության ու վերահսկման, ինչպես նաև մի-

ջազգային ահաբեկչության, կազմակերպված հանցավորության, ազգայնամոլության և ծայրահեղականության այլ դրսևորումների դեմ պայքարի ոլորտներում):

Հայաստանը մեծապես շահագրգռված է տնտեսական համագործակցության միջազգային կառույցներին երկրի ինտեգրման ու այդ շրջանակներում ծավալվող գործունեության մեջ: Այս ուղղությամբ նշանակալի ձեռքբերում էր Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ՝ WTO) Հայաստանի անդամակցությունը: Կարևորվում են աշխատանքները ինչպես ԱՀԿ-ի, այնպես էլ Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀԿ) շրջանակներում:

Նախարարության ծրագրում զգալի տեղ է հատկացված Հայաստանի ներգրավվածությանը միջազգային ռազմաքաղաքական կառույցներում: Հայաստանը ՀԱՊԿ-ի անդամ է: ՀԱՊԿ-ի ռազմական բաղադրյալի զարգացումը հիմնականում նպատակաուղղված է անդամ պետությունների միջև ռազմական համագործակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծմանն ու կայացմանը: Պայմանագրի նպատակն է միասնական ուժերով կանխել, իսկ անհրաժեշտության դեպքում՝ վերացնել մասնակից պետությունների ինքնիշխանության և տարածքային ամբողջականության դեմ ուղղված ռազմական սպառնալիքները: ՀԱՊԿ-ին անդամակցությունը Հայաստանի անվտանգության ապահովման բաղադրիչներից է: Պայմանագրի ռազմական բաղադրյալը անդամ պետություններին արտոնյալ պայմաններ է ընձեռում ռազմատեխնիկական մատակարարումների հարցում, ինչն առաջնային կարևորություն ունի Հայաստանի համար:

Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը (ՆԱՏՕ) կարևոր դերակատարություն ունի Հարավային Կովկասում փոխվստահության հաստատման ու ամրապնդման, կառուցողական երկխոսության զարգացման և տարածաշրջանային համագործակցության ընդլայնման տեսանկյունից: ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի համագործակցությունն ընթանում է «Գործընկերություն հանուն խաղաղության» (ԳՀԽ) ծրագրի և Եվրասատլանտյան գործընկերության խորհրդի (ԵԱԳԽ) շրջանակներում:

Հայաստանն ընդլայնում է քաղաքական երկխոսությունը ՆԱՏՕ-ի հետ, խաղաղապահական գործողություններին մասնակցելու նպատակով կառուցում է դաշնակիցների հետ զինված ուժերի համատեղելի ստորաբաժանումներ: Հայաստանն իր խաղաղապահ գումարտակով և մի շարք այլ ուժերով մասնակցում է «Պլանավորման և վերանայման գործընթացին» (PARP), ինչպես նաև «KFOR» օպերացիային:

Հայաստան—ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» (ԱԳԳԾ) հաստատումը նոր էջ է բացում կառույցի հետ Հայաստանի համագործակցության զարգացման ու խորացման համար: Ծրագիրը Հայաստանին հնարավորություն կտա կատարելագործելու և արդիականացնելու իր պաշտպանության համակարգը, մեծացնելու վերջինիս արդյունավետությունը և ապահովելու համատեղելիությունը զարգացած պետությունների պաշտպանական համակարգերի, ներառյալ՝ զինված ուժերի հետ: Այն նաև դիտվում է որպես ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության և համագործակցության զարգացման կարևորագույն մեխանիզմ:

«Արտաքին անվտանգության ապահովման երկկողմ դիվանագիտական ձևաչափ» բաժնում լուսաբանվում են Հայաստանի հարաբերությունները հիմնական գործընկեր և հարևան պետությունների հետ:

Ռուսաստանի Դաշնության հետ Հայաստանի հարաբերությունները կրում են ռազմավարական բնույթ, ինչը պայմանավորված է Հայաստանի անվտանգության ապահովման գործում Ռուսաստանի կարևոր դերակատարությամբ, հայ-ռուսական ավանդական բարեկամական կապերով, առևտրատնտեսական լայնածավալ համագործակցությամբ, Լեռնային Դարաբաղի հակամարտության կարգավորման հարցում Ռուսաստանի ունեցած դերակատարմամբ, ինչպես նաև Ռուսաստանում հայկական սովոր համայնքի առկայությամբ:

Երկու երկրների միջև կնքված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագիրը, «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 21-րդ դար ուղղված դաշնակցային փոխգործակցության մասին» հռչակագիրը, ինչպես նաև պաշտպանության ոլորտում երկու երկրների սերտ համագործակցությունը, այդ թվում՝ ՀԱՊԿ-ի շրջանակներում, Հայաստանի անվտանգության համակարգի հիմնասյուներից են: Ռուսաստանի ռազմական ներկայությունը Կովկասում կարևորվում է որպես Հայաստանի անվտանգության և տարածաշրջանում ռազմաքաղաքական հավասարակշռության ապահովման գործոն:

Հայաստանը մեծապես կարևորում է Ռուսաստանի հետ համագործակցությունը պաշտպանության, ռազմատեխնիկական և էներգետիկայի բնագավառներում, տրանսպորտային երթուղիների գործարկման, տարածաշրջանային կայունության և անվտանգության խնդիրներում:

Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների հարաբերությունների դինամիկ զարգացումը պայմանավորված է ոչ միայն համաշխարհային, տարածաշրջանային ռազմաքաղաքական ու տնտեսական գործընթացներում և միջազգային հարաբերություններում ԱՄՆ-ի կարևոր դերակատարությամբ, այլև Հայաստանին ԱՄՆ-ի կողմից ցուցաբերվող բազմաբնույթ աջակցությամբ:

Հայաստանը սերտորեն համագործակցում է ԱՄՆ-ի հետ՝ մեր երկրի ժողովրդավարական զարգացմանը միտված բարեփոխումների իրականացման ուղղությամբ, ընդարձակ և բազմաբնույթ է տնտեսական համագործակցությունը:

Որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ՝ ԱՄՆ-ը ներգրավված է Լեռնային Դարաբաղի հակամարտության կարգավորման խնդրում և իր նպաստն է բերում այդ ուղղությամբ տարվող միջնորդական ջանքերին: Հայաստանը կարևորում է նաև տարածաշրջանում կայունության և անվտանգության հաստատմանը, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցության կայացմանն ուղղված ԱՄՆ-ի կողմից գործադրվող ջանքերը:

Հայաստանը համագործակցում է ԱՄՆ-ի հետ միջազգային ահաբեկչության դեմ պայքարում, խաղաղապահական գործողություններում, միջուկային զենքի չտարածման և համընդհանուր անվտանգության հետ կապված այլ հարցերում:

Հայ-ամերիկյան հարաբերություններում կարևոր դերակատարություն ունի հայկական համայնքը, որը Միացյալ Նահանգներում ներկայացված է բազմաթիվ կազմակերպություններով և կենտրոններով:

Եվրոպայի երկրների հետ երկկողմ հարաբերությունները Հայաստանի եվրոպական ներգրավման ընդհանուր գործընթացի մի մասն են: Երկկողմ հարաբերությունների օրակարգում Հայաստանը կարևորում է մեր երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման, եվրոպական ներգրավման, դարաբաղյան հակամարտության կարգավորման և տարածաշրջանում կայունության հաստատման ու տարածաշրջանային համագործակցության զարգացման գործընթացները:

Հայաստանը շահագրգռված է զարգացնելու իր հարաբերությունները եվրոպական երկրների հետ՝ առաջնային համարելով քաղաքական և տնտեսական ոլորտներում երկկողմ կապերի ամրապնդումն ու բազմազանեցումը: Միջազգային կազմակերպություններում համագործակցության հնարավորությունների կենսագործումը, ինչպես նաև մի շարք երկրներում մեծաթիվ հայ համայնքների առկայությունը և նրանց դրական ներուժը լրացուցիչ խթան են այդ երկրների հետ փոխշահավետ համագործակցության զարգացման համար:

Հայաստանի համար Մերձավոր Արևելքի հետ հարաբերությունների կարևորությունը պայմանավորված է մերձավորարևելյան տարածաշրջանին հարևան լինելու հանգամանքով և միջազգային քաղաքականության վրա այնտեղ ծավալվող գործընթացների ազդեցությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ հայ ժողովուրդը դարեր շարունակ բազմաբնույթ կապերով կապված է եղել Մերձավոր Արևելքի երկրների հետ, հիմնել է սովոր համայնքներ, իր գործուն մասնակցությունն է ունեցել տարածաշրջանի հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում: Հայաստանը շարունակելու է ջանքեր գործադրել Մերձավոր Արևելքի իր ավանդական գործընկերների հետ համագործակցության զարգացման ուղղությամբ, նոր լիցք է հաղորդելու Պարսից ծոցի և Միջերկրականի արաբական երկրների հետ հարաբերություններին, առևտրատնտեսական համագործակցությանը:

Հայաստանը շարունակում է զարգացնել հարաբերությունները Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ: Այս տարածաշրջանի հետ Հայաստանի հարաբերությունների զարգացումը կարևորվում է խոշոր պետությունների, առաջին հերթին՝ Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի միջազգային դերակատարման բարձրացմամբ, տարածաշրջանի երկրների տնտեսական ներուժով և առաջընթացով, ինչպես նաև միջազգային կազմակերպություններում նրանց հետ համագործակցելու հնարավորություններով:

Հայաստանի համար Իրանի հետ ավանդական բարիդրացիական հարաբերությունների զարգացումը պայմանավորված է էական նշանակություն ունեցող մի շարք օբյեկտիվ գործոններով՝ հարևանության հանգամանքով, պատմամշակութային կապերով, փոխադարձ տնտեսական շահերով:

Իրանի տարածքով են անցնում Հայաստանն արտաքին աշխարհին կապող տրանսպորտային երթուղիները: Հարևան երկու երկրների կողմից տնտեսական և

տրանսպորտային շրջափակման պայմաններում կարևորվում է Իրանի՝ որպես դեպի Ասիա և Միջին Արևելք ռազմավարական նշանակության ճանապարհի ապահովող երկրի դերը: Իրանի հետ իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնց նպատակն է Հայաստանի էներգետիկ անվտանգության այլընտրանքային ռեսուրսների ապահովումը:

Հայաստանի համար Իրանի հետ հարաբերություններն արժեքավորվում են նաև այն հանգամանքով, որ վերջինս, լինելով տարածաշրջանի և իսլամական աշխարհի ծանրակշիռ ներկայացուցիչ, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում հիմնականում հանդես է բերում հավասարակշռված մոտեցում:

Իրանի հետ տնտեսական համագործակցությունը Հայաստանը շարունակելու է զարգացնել էներգետիկայի, առևտրի ծավալների մեծացման, հաղորդակցության նոր ուղիների ձևավորման և արդեն առկա ներուժի արդյունավետ օգտագործման ուղղություններով:

Հայաստանը կարևորում է Իրանի ներգրավվածությունը Հարավային Կովկասում ընթացող տարաբնույթ գործընթացներում և այն դիտում է որպես կայունության և հավասարակշռության պահպանման գործոններից մեկը:

Հայաստանի և Վրաստանի փոխհարաբերությունները ավանդաբար բարեկամական են և իրենց նշանակալի նպաստն են բերում տարածաշրջանում կայունության պահպանման գործին: Վրաստանը կարևորվում է որպես տարածաշրջանում Հայաստանի հետ բարձր մակարդակի հարաբերություններ ունեցող պետություն, և տարբեր ոլորտներում փոխշահավետ համագործակցության զարգացումն ու խորացումը բխում են երկու երկրների երկարաժամկետ ռազմավարական շահերից:

Վրաստանը Հայաստանի համար կարևորվում է նաև այդ երկրում բնակվող մեծաքանակ հայ համայնքի առկայության հանգամանքով: Հայաստանի Հանրապետությունը համագործակցում է Վրաստանի կառավարության հետ վիրահայության, այդ թվում՝ Ջավախքի հայ համայնքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:

Հայաստանը և Թուրքիան չունեն դիվանագիտական հարաբերություններ, ինչը պայմանավորված է Թուրքիայի կողմից Հայաստանին մի շարք նախապայմանների ներկայացմամբ:

Հայաստանը հանդես է գալիս Թուրքիայի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերությունների հաստատման օգտին և շարունակելու է ձեռնարկել համապատասխան քայլեր՝ երկկողմ հարաբերությունների բարելավման և խոչընդոտների հաղթահարման ուղղությամբ: Հետամուտ լինելով Հայոց ցեղասպանության համընդհանուր, մասնավորապես՝ Թուրքիայի կողմից ճանաչմանը և դատապարտմանը՝ Հայաստանն այն դիտում է ոչ միայն պատմական արդարության վերականգնման, այլև տարածաշրջանում փոխադարձ վստահության մթնոլորտի բարելավման և ապագայում նման ոճիների կանխարգելման համատեքստում:

Հայ-թուրքական հարաբերությունների չկարգավորված բնույթը, մասնավորա-

պես՝ փակ սահմանը, Հայաստանի ազգային անվտանգության համար ստեղծում է սպառնալիքներ և խոչընդոտում Հայաստանի կայուն զարգացման գործընթացին: Այդ հարաբերությունների չկարգավորվածությունն իր անմիջական բացասական ազդեցությունն է ունենում նաև տարածաշրջանում կայունության ամրապնդման, տարածաշրջանային համագործակցության զարգացման վրա:

Փոխհարաբերությունների կարգավորման շնորհիվ կնվազեն տարածաշրջանում բաժանարար գծերի ձևավորման վտանգները, բարենպաստ մթնոլորտ կստեղծվի նաև Ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորման շուրջ:

Հայաստանի և Ադրբեջանի միջև դիվանագիտական հարաբերություններ չեն հաստատվել, ինչը պայմանավորված է Ղարաբաղյան հակամարտությամբ: Ադրբեջանն իրականացնում է տարածաշրջանային համագործակցության ծրագրերից Հայաստանին մեկուսացնելու քաղաքականություն:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում Հայաստանի դիրքորոշման վրա ներազդելու նպատակով Ադրբեջանը հրաժարվում է ինչպես միմյանց կապող տրանսպորտային երթուղիների շահագործումից, այնպես էլ երկու երկրների միջև տարածաշրջանային ծրագրերի շրջանակներում համագործակցության եզրեր փնտրելու Հայաստանի և միջազգային հանրության առաջարկություններից:

Հայաստանը համարում է, որ տարածաշրջանային և սահմանային համագործակցությունը՝ որպես փոխվստահության մթնոլորտի ստեղծման և ամրապնդման միջոց, կարող է ունենալ նշանակալի դրական ազդեցություն: Հայաստանը շարունակելու է ջանքեր գործադրել հակամարտության կողմերի միջև փոխվստահության մթնոլորտի ձևավորման ուղղությամբ և այդ նպատակով խրախուսելու է տարբեր մակարդակներով համագործակցությունը, շփումներն ու փոխայցելությունները:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցը առանցքային տեղ է զբաղեցնում Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ:

Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն ունի բոլոր իրավական հիմքերն իր պատմական հայրենիքում ինքնորոշվելու համար, և Հայաստանը համոզված է, որ խնդիրը կարող է կարգավորվել միայն ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ամրագրմամբ և միջազգային ճանաչմամբ:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն աջակցելու առաքելությունը կողմերի համաձայնությամբ վստահվել է ԵԱՀԿ Մինսկի խմբին՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի համանախագահությամբ: Հայաստանը կարևորում է խնդրի կարգավորման շուրջ ծավալվող քննարկումների մասնակիցների փորձագիտական բարձր մակարդակը և նպատակահարմար չի համարում խնդրի կարգավորման վերաբերյալ այլ կառույցների կողմից հայտարարությունների քննարկումն ու ընդունումը, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների ներգրավումը կարգավորման գործընթացում:

Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է հակամարտության կարգավորմանը միայն խաղաղ և փոխզիջումային ճանապարհով: Մշտապես ելնելով այն սկզբունքից, որ ցանկացած վերջնական համաձայնություն կամ վերջնական փաս-

տաքուղթ պետք է ստանա նաև դարաբաղյան կողմի հավանությունը, Հայաստանն ընդունելի է համարում կարգավորման միայն այն տարբերակները, որոնք ուղղված կլինեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստացի գոյության անշրջելի իրողությունն ամրագրելուն: Լեռնային Ղարաբաղը պետք է աշխարհագրական կապ ունենա Հայաստանի հետ, նրա անվտանգությունը պետք է երաշխավորված լինի:

Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված անմիջական ռազմական սպառնալիք է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի նկատմամբ Ադրբեջանի վարած ռազմատենչ քաղաքականությունը, այն է՝ այդ խնդիրը լուծել Հայաստանի նկատմամբ ռազմական գերազանցության հասնելու միջոցով: ՌԻստի Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերից պահանջում է մշտական բարձր մարտական պատրաստություն: Այս գործում Հայաստանի Ձինված ուժերի գլխավոր խնդիրն է Հայաստանի սահմանների անձեռնմխելիության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության ֆիզիկական անվտանգության ապահովումը:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հիմնական ուղեցույցն է պետության ներքին և արտաքին անվտանգության ռազմավարության ուղղությունները, մարտահրավերներին արձագանքելու ու խնդիրները ներկայացնելու և իրականացնելու համար: Ինչպես նշել է Ս. Սարգսյանը, «ՀՀ Նախագահի կողմից Հայաստանի պետականության պատմության ընթացքում առաջին «Ազգային անվտանգության ռազմավարությունը» գործողության մեջ դնելու բուն փաստը մի քաղաքական իրադարձություն է, որն ունի ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային նշանակություն»⁴:

⁴ Նույն տեղում, էջ 5—6:

КОНЦЕПЦИЯ ОБЕСПЕЧЕНИЯ ВНЕШНЕЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

*А. Дж. КИРАКОСЯН, заместитель Министра иностранных дел РА,
член-эксперт Межведомственной комиссии,
доктор исторических наук*

РЕЗЮМЕ

Стратегия обеспечения внешней безопасности РА реализуется в трех плоскостях: международной, региональной и общеармянской. Основная задача внешней политики Армении—сохранение суверенитета и территориальной целостности, обеспечение гарантий безопасности и стабильности путем урегулирования отношений с соседними государствами, создание благоприятных условий для взаимодействия и сотрудничества в регионе. В основу внешней политики РА заложен принцип комплемент-

ризма: Армения развивает сотрудничество как с РФ и СНГ, так и с США, Евросоюзом, НАТО, ОБСЕ. Активное сотрудничество с международными безопасностными структурами и организациями служит цели получения Арменией гарантий международной безопасности, поскольку Республика Армения рассматривает себя не только в качестве потребителя, но и активного участника построения и обеспечения системы международной безопасности.

THE CONCEPT OF ENSURING THE EXTERNAL SECURITY
OF THE REPUBLIC OF ARMENIA WITHIN THE CONTEXT
OF THE NATIONAL SECURITY STRATEGY

*A. J. KIRAKOSSIAN, Deputy Minister of Foreign Affairs of the RA,
Member Expert of the Interagency Commission,
Doctor of Historical Sciences*

SUMMARY

The strategy of ensuring the external security of the RA is implemented in three planes: international, regional and pan-Armenian. The main goal of Armenia's external policy is to preserve sovereignty and territorial integrity; to ensure guarantees of security and stability by means of regulation of relations with neighbouring states; to create favorable conditions for interaction and cooperation in the region. The external policy of the RA is based on the principle of complementarity: Armenia is developing cooperation with both the RF and CIS, as well as the USA, European Union, NATO, OSCE. Active cooperation with international security structures and organizations serves to the aim to get guarantees of the international security by Armenia, as the Republic of Armenia regards itself not only as a consumer, but an active participant of the building and ensuring of the international security system.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ. Դ. ՄԱՖԱՐՅԱՆ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ, Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ, տնտեսագիտության թեկնածու,

Ս. Հ. ԿԱՐԱՅԱՆ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ



Ժամանակակից աշխարհում հասարակությունն ապրում է տարատեսակ արտաքին և ներքին մշտական և փոփոխվող սպառնալիքների պայմաններում, որոնց առկայության փաստն ստիպում է հասարակական կյանքի կենսագործունեության կառավարման հիմքում դնել այդ սպառնալիքների բացահայտման, կանխման և այդ ընթացքում առաջացող հնարավոր բացասական ազդեցությունների ու հետևանքների վերացման խնդիրները¹:



Տնտեսական անվտանգությունը դասվում է ազգային անվտանգության ապահովման կարևոր առաջնությունների թվին՝ դառնալով յուրաքանչյուր պետության ազգային անվտանգության համակարգի նյութական հիմքը: Ցանկացած երկրի տնտեսական անվտանգությունը սերտորեն փոխկապված է ազգային անվտանգության համակարգի մյուս բաղադրիչների հետ, որոնք լրացնում են միմյանց: Մասնավորապես, չի կարող ապահովված լինել երկրի ռազմական անվտանգությունը ոչ արդյունավետ տնտեսության, սոցիալական բախումներով լի հասարակության պայմաններում: Միևնույն ժամանակ ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակով գործնականում անհնար է լուծել երկրի առջև ծառայած որևէ խնդիր՝ առանց տնտեսական անվտանգության ապահովման:

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգությունը Հայաստանի տնտեսության այն վիճակն է, որի դեպքում ամբողջությամբ ապահովվում են Հայաստանի ազգային շահերի երաշխավորված պաշտպանությունը, Հայաստանի տնտեսական անկախությունը, ազգային տնտեսության հավասարակշռված և կայուն զարգացումը և, ի վերջո, հասարակության մեջ ժամանակակից կենսաձևի հաստատումը:

Այդ տեսանկյունից Հայաստանի Հանրապետության նպատակը պետք է լինի տնտեսության այնպիսի զարգացման նախադրյալների ապահովումը, որի դեպքում

տնտեսության այնպիսի զարգացման նախադրյալների ապահովումը, որի դեպքում

¹ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:

կատեղծվեն նպաստավոր պայմաններ Հայաստանի տնտեսական անկախության ձեռքբերման, անհատի կյանքի ու զարգացման, հասարակության սոցիալ-տնտեսական ու ռազմաքաղաքական կայունության, պետության ամբողջականության պահպանման, ներքին և արտաքին, ինչպես նաև արտակարգ իրավիճակների պայմաններում ի հայտ եկող վտանգներին հաջողությամբ դիմակայելու համար:

Իր տնտեսական անվտանգության ապահովման առաջնություններում Հայաստանը պետք է կարևորի տնտեսական անվտանգության թուլացմանը հանգեցնող վտանգների գնահատման և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Տնտեսական անվտանգության հիմքերը խարխուղ վտանգներից կարելի է առանձնացնել տնտեսության մեկուսացումը, տնտեսությունում մենաշնորհների ձևավորումը, տնտեսական անկախության, տեղական արտադրության մրցունակության թուլացումը, բյուջետային պակասորդի թույլատրելի չափերի գերազանցումը, սղաճի բարձր տեմպերը, ներքին և արտաքին պարտքի թույլատրելի մակարդակի ավելացումը, բնակչության աղքատությունը և գործազրկությունը, տնտեսության տարածքային անհամաչափ զարգացումը:

Տնտեսական-ֆինանսական ոլորտում ազգային անվտանգության ռազմավարության իրականացման տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունը իր տնտեսական համակարգի հիմքում պետք է դնի հավասարակշռվածության և կայունության հիմնարար սկզբունքները, ինչն առաջին հերթին նշանակում է հավասարակշռված և կայուն տնտեսական զարգացում ինչպես ներտնտեսական, այնպես էլ արտաքին տնտեսական հարաբերություններում: Հայաստանի տնտեսական հավասարակշռվածությունը պետք է բնութագրվի արտաքին և ներքին հակասությունների, տնտեսական հարաբերություններում ինքնազարգացող համակարգի շահերի ցանկացած տեսակի անհավասարակշռվածության բացառմամբ:

Տնտեսական անվտանգության այս երկու՝ արտաքին և ներքին, բաղադրիչները, լրացնելով մեկը մյուսին, ապահովելով ազգային տնտեսության հավասարակշռված վիճակն ու ինքնազարգացումը, պետք է հանգուցալուծվեն մեկ միասնական տնտեսական քաղաքականության միջոցով, որը նպատակաուղղված լինի Հայաստանի տնտեսական համակարգի ներուժի և մրցունակության բարձրացմանը:

Հայաստանի տնտեսական կայունությունը բնութագրվում է ներտնտեսական կապերի ամրությամբ և հուսալիությամբ, արտաքին և ներքին սպառնալիքներին դիմակայելու ունակությամբ:

Տնտեսական համակարգի առանձին ճյուղերի միջև կապերի և համամասնությունների խախտումը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության ապակայունացմանը և դառնալ տնտեսական վտանգավոր իրավիճակին անցնելու ազդակ: Ընդհակառակը՝ որքան կայուն լինի Հայաստանի տնտեսական համակարգը, մասնավորապես՝ տնտեսության միջճյուղային կառուցվածքը, արտադրական և ֆինանսաբանկային կապիտալի հարաբերակցությունը, այնքան կենսունակ կլինի տնտեսությունը, և հետևաբար՝ առավել երաշխավորված տնտեսական անվտանգությունը:

Տնտեսական անվտանգության ապահովման առնչությամբ կարևորվում են՝

—տնտեսության կատարելագործումը՝ ուղղված նրա արդյունավետության մեծացմանը, արտադրության ծավալների աճի բարելավմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը,

—պետական կարգավորման և տնտեսական հարաբերությունների ազատության մակարդակների միջև հաստատուն հաշվեկշռի պահպանումը՝ տնտեսավարող սուբյեկտների համար սեփականության բոլոր ձևերի ազատությունների ընդլայնումը, ներքին շուկայում մրցակցության զարգացումը, հայրենական ապրանքարտադրողների խրախուսումը,

—ազգային մտավոր ներուժի և մրցունակ արտադրանքի արտադրության համար սեփական գիտատեխնիկական ապահովման համակարգերի պահպանումն ու զարգացումը,

—ներդրումային և նորամուծական ակտիվության մեծացումը,

—ներքին ու արտաքին պարտքի թույլատրելի չափերի ապահովումը,

—ներքին շուկայի և հայրենական արտադրության պաշտպանությունը խիստ մրցակցությունից, զուտ արտահանման խրախուսումը, այն ապրանքների և հումքի աղբյուրների մատչելիության ապահովումը, որոնց արտադրությունը հանրապետությունում անհնար է կամ անարդյունավետ,

—ֆինանսավարկային համակարգի կայունացումը՝ բանկային համակարգի հաստատուն գործունեության ապահովումը, տնտեսական զարգացման մեջ բանկերի կարգավորիչ դերի մեծացումը,

—բյուջետային պակասորդի թույլատրելի մակարդակի պահպանումը,

—գյուղատնտեսական արտադրության զարգացման գործում պետական աջակցման և տնտեսական ինքնուրույնության արդյունավետ համադրության ապահովումը, հողօգտագործման արդյունավետ համակարգերի ստեղծումը,

—այլ պետությունների հետ փոխշահավետ հարաբերությունների ներդաշնակ զարգացումը՝ ուղղված շուկայական մեխանիզմների կատարելագործմանը, տեղեկույթի և տեխնոլոգիաների փոխանակմանը, ինչը կնպաստի տնտեսական զարգացմանը:

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության նպատակների իրագործումը ենթադրում է այնպիսի տնտեսական վերափոխումների իրականացում, որոնք, ընդհանուր առմամբ, ուղղված լինեն Հայաստանի տնտեսական անկախության ձեռքբերմանը ու տնտեսության կայունության ապահովմանը, ինչպես նաև տրնտեսության ինքնուրույն զարգացման կարողությունների մեծացմանը:

Տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից Հայաստանը պետք է կարևորի վերափոխումների իրականացումը ստորև ներկայացվող երեք հիմնական ուղղություններով:

1. **Կառուցվածքային վերափոխումներ:** Հայաստանի տնտեսական ոլորտի կառուցվածքային վերափոխումները հիմնականում հանգում են պետական կառույցների գործառույթների վերանայմանը, բոլոր տեսակի սեփականության

ձևերով տնտեսավարող սուբյեկտների համար համահավասար պայմանների ապահովմանը, նպատակաուղղված գիտատեխնիկական զարգացման ուղղությունների և ձևերի հեռանկարային աճման խթանմանը: Ընդ որում, Հայաստանի Հանրապետությունը նման կառուցվածքային վերափոխումների հիմքում պետք է դնի ոչ թե ազատական տնտեսությունից հեռանալու, այլ ստեղծագործ, զարգացող տնտեսական միջավայր ձևավորելու գաղափարը:

Կառուցվածքային վերափոխումներում կարևորվում են՝

—Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական զարգացման անհամամասնությունների վերացումը և համաչափ տնտեսական զարգացման համար նախապայմանների ապահովումը: Այս առումով կարևորվում են տարածքային առանձնահատկությունների բացահայտումը և անհամաչափ զարգացող տարածաշրջանների նկատմամբ տարբերակված պետական քաղաքականության մշակումը: Հատկապես կարևորվում են սահմանամերձ, լեռնային ու բարձր լեռնային, ինչպես նաև աղքատ համայնքների խնդիրները,

—ազգային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ հիմնված ռեսուրսատնտեսող տեխնոլոգիաների ներդրման վրա: Այս առումով Հայաստանը կարևորում է նաև ազգային անվտանգության տեսանկյունից ռազմավարական նշանակություն ունեցող ռեսուրսների գնահատումը և անհրաժեշտ չափով դրանց ապահովումը,

—էներգետիկայի և հաղորդակցման այլընտրանքային հնարավորությունների ստեղծումը,

—տնտեսական հանցագործությունների և ստվերային շրջանառությունների կրճատմանն ուղղված միջոցառումների հետևողական իրականացումը: Այս ոլորտում կարևոր ուղղություն պետք է համարվի անօրինական տնտեսական գործունեությանը ստացվող եկամուտների նկատմամբ վերահսկողության ուժեղացումը, հետևողական պայքարը փողերի լվացման դեմ, հարկային և մաքսային վերահսկողության մեխանիզմների շարունակական բարելավումը:

2. Տնտեսական հավասարակշռություն և կայունություն: Հայաստանի տնտեսական հավասարակշռության և կայունության ապահովման հիմքում պետք է դրված լինի պետության տնտեսական դերի պահպանումը ինչպես ֆինանսական կարգավորման, այնպես էլ վերարտադրության պայմանների ու գործընթացների վրա ազդեցություն գործելու, ներդրումային գործունեության բազմակողմանի խթանման և այդ գործունեությանն ուղղակի մասնակցության միջոցով: Տնտեսական անվտանգության այս բաղադրիչը ենթադրում է տնտեսական, սոցիալական և հանրային կառավարման ոլորտներում առկա հիմնախնդիրների հաղթահարում: Այն պետք է ուղղված լինի.

ա) կայուն մակրոտնտեսական միջավայրի ձևավորմանը, ինչը գրավիչ կդարձնի Հայաստանի տնտեսությունը և կնպաստի գործարարության զարգացմանն ու օտարերկրյա ներդրումների ներհոսքին, ինչն էլ իր հերթին կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը՝ ապահովելով նոր տեխնոլոգիաների և գիտելիքի մուտքը Հայաստանի Հանրապետություն:

Այդ նպատակով առաջնահերթ է հավասարակշռված հարկաբյուջետային քա-

ղաքականության իրականացումը: Վերջինս պետք է բնորոշվի պետական եկամուտների հավաքագրման գործընթացի բարելավմամբ՝ պայմանավորված տնտեսական աճին համահունչ բյուջեի եկամուտների կայուն աճով, պետության վերաբաշխման գործառնության ամրապնդմամբ ու ընդլայնմամբ, պետական ծախսերի արդյունավետության բարձրացմամբ: Այս ամենի հետ մեկտեղ պետք է միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի բյուջեի պակասորդի մեծությունը պահպանվի թույլատրելի չափերի սահմաններում:

Գրամավարկային քաղաքականության իրականացման հիմնական նպատակները պետք է լինեն գների կառավարելիությունը և կանխատեսելի միջավայրի ստեղծումը, ինչը կնպաստի ձեռներեցության երկարաժամկետ պլանավորման համար հիմքերի ստեղծմանը:

Մեծ դեր է վերապահվում պետական ներդրումային ծրագրերին, ըստ որոնց ներդրումները պետք է ուղղվեն դեպի այն ոլորտներ, որոնք տնտեսության զարգացման վրա կունենան համընդհանուր ազդեցություն:

Պետական պարտքը պետք է բնորոշվի ցածր և կառավարելի մակարդակով, որի կառուցվածքում կլինեն արտոնյալ պայմաններով ներգրավված վարկերը: Նման մոտեցումը մեզ հնարավորություն կտա նվազագույն մակարդակի վրա պահելու արտաքին պարտքի սպասարկման հետ կապված ծախսերը՝ ազատվող միջոցներն ուղղելով պետական նշանակություն ունեցող ծրագրերին,

բ) բարենպաստ ձեռնարկատիրական միջավայրի ձևավորմանը: Այստեղ կարևորվում է մանր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ նախապայմանների ապահովումը, ինչը հնարավորություն կտա ձեռնարկատիրական գործունեության բոլոր սուբյեկտների համար ստեղծելու տնտեսական մրցակցության համահավասար պայմաններ և բացառելու առանձին տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ որևէ բնույթի խտրական մոտեցումները,

գ) աղքատության և անհավասարության նվազեցմանը: Աղքատությունը և անհավասարությունը համարվում են երկրում սոցիալական լարվածության և հակամարտությունների ձևավորման հիմնական դրոշմապատճառներից մեկը և, հետևաբար, կարող են բացասական ազդեցություն գործել տնտեսության կայունության և հավասարակշռության վրա: Հայաստանում աղքատությունը և անհավասարությունը բնութագրվում են առանձնահատուկ տարածքային ուղղվածությամբ, ինչը ենթադրում է պետության կողմից առանձնահատուկ տարածքային քաղաքականության իրականացում: Վերջինս կարող է ներառել ինչպես պետության կողմից շրջանների տնտեսական զարգացումը խթանող ներդրումային դաշտի ձևավորում, այնպես էլ առանձնահատուկ ապակենտրոնացման քաղաքականության իրականացում,

դ) ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը: 90-ականներին ժողովրդագրական զարգացումները բնութագրվում էին արտագաղթի բարձր մակարդակով և ծնելիության անկմամբ: Հայաստանում ստեղծվել էր մի իրավիճակ, որը իրապես կարող էր վտանգել երկրի հետագա զարգացումը և խարխուլել ազգային անվտանգության հիմքերը:

Աննախաղեպ մեծ չափերով միգրացիան իր բացասական ազդեցությունն է թողել երկրի ժողովրդագրական վիճակի վրա՝ դառնալով նրա ապակայունացման, մասնավորապես՝ ամուսնությունների և բնական աճի կրճատման պատճառներից մեկը: Այն խարխուլում էր նաև ամուսնաընտանեկան հարաբերությունների հիմքերը՝ ամուսնական գույգերի և ընտանեկան կառույցների տևական տարանջատման, զավակների լիարժեք դաստիարակության գործընթացի խափանման, սեռերի և սերունդների փոխհարաբերությունների վատթարացման առումով:

Հաշվի առնելով այս իրողությունը և նկատի ունենալով, որ առաջիկա տարիներին դեռ պահպանվելու է աշխատանքային միգրացիայի անհրաժեշտությունը՝ մենք պետք է քայլեր ձեռնարկենք կարգավորվող աշխատանքային միգրացիա կազմակերպելու ուղղությամբ:

Ժողովրդագրական իրավիճակի բարելավման համար անհրաժեշտ է նաև իրականացնել պետական նպատակային ծրագրեր ծնելիության խթանման և հատկապես բազմազավակ ընտանիքների երեխաների լրացուցիչ սոցիալական պաշտպանվածության ապահովման ուղղությամբ,

ե) տեղական ինքնակառավարման կենսունակ համակարգի ձևավորմանը: Բարեփոխումների անցած ժամանակահատվածում տարածքային զարգացման ոլորտում իրականացված քայլերը հիմնականում հետապնդում էին տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման համակարգերի բնականոն գործունեության ապահովման համար երաշխիքների ստեղծման և տարածքային զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման նպատակ: Սակայն տվյալ բնագավառի զարգացման քաղաքականությամբ նախատեսված միջոցառումների իրականացման գործում տեղ գտած բացթողումները, տարածքային զարգացման ռազմավարություն, ինչպես նաև մշակված հիմնավոր սկզբունքներ և մոտեցումներ չլինելը հանգեցրին հանրապետության տարածքային զարգացման խիստ բևեռացմանը և սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացմանը: Այս հանգամանքը ուղղակիորեն ու մեծապես նպաստեց հանրապետության տարածքներում, հատկապես՝ փոքր ու միջին քաղաքներում, բնակչության կենսամակարդակի անկմանը:

Այս տեսանկյունից տարածքային զարգացման հստակ ռազմավարության մշակումը և ըստ այդմ համայնքների վարչատարածքային առանձնահատկությունների վերհանումը կարևոր նշանակություն ունեն համայնքների նկատմամբ տարբերակված պետական քաղաքականության մշակման համար: Աղետի գոտու, սահմանամերձ, լեռնային ու բարձր լեռնային շրջանների, փոքր համայնքների համար պետությունը պետք է օրենսդրորեն սահմանի և կիրառի զեղչերի ու հավելումների նպատակային և հասցեական համակարգ:

Տեղական ինքնակառավարման կենսունակ համակարգի ձևավորման տեսանկյունից պետք է կարևորել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև լիազորությունների ու պատասխանատվության հստակ տարանջատումը: Պետք է ապահովել նաև տեղական ինքնակառավարման մարմինների լիակատար ինքնուրույնությունն ու պաշտպանվածությունը:

3. **Տնտեսության ինքնագարգացում:** Հայաստանի տնտեսության ինքնագարգացումը տնտեսական անվտանգության գլխավոր բաղադրիչն է, որովհետև, եթե Հայաստանի տնտեսությունը ինքնագարգացում չապրի, ապա կտրուկ կնվազի տնտեսության գոյատևման հնարավորությունը: Հայաստանի տնտեսական ինքնագարգացումը նախ և առաջ ենթադրում է սերտորեն ինտեգրված տնտեսության կառուցում, որն ունակ լինի դիմակայելու արտաքին և ներքին սպառնալիքներին:

Հայաստանի տնտեսության ինքնուրույն զարգացման կարողությունների մեծացմանն ուղղված միջոցառումների շրջանակներում պետք է ներառված լինեն՝

— ներդրումների և կապիտալի ներհոսքի համար բարենպաստ միջավայրի ձևավորումը: Այս ուղղությանը հատկանշական պետք է լինեն պետական ներդրումային ծրագրերի աստիճանական ընդլայնումը, կազմակերպությունների ներդրումային հնարավորությունների մեծացումը, կազմակերպությունների համար ներդրումների գծով բարենպաստ վարկային միջավայրի ձևավորումը,

— ներքին արտադրության խրախուսումը և պաշտպանվածության ապահովումը: Մինչդեռ ժամանակ չպետք է խախտվի Հայաստանի ստանձնած այն պարտավորությունների կատարումը, որոնք կապված են այդ ուղղությամբ միջազգային կազմակերպություններին անդամակցության հետ: Այս մոտեցումը հնարավորություն կտա նվազեցնելու տնտեսության կախումը ներմուծումներից, ուստի և ամրապնդելու տնտեսական անկախության հիմքերը: Կարևոր է նաև ճկուն մաքսային քաղաքականության և վարչարարության իրականացումը. այն, մի կողմից՝ ուղղված կլինի Հայաստանի ներքին ռեսուրսների օգտագործմամբ տեղական արտադրության խթանմանը, իսկ մյուս կողմից՝ արդյունավետ վարչարարական լծակների կիրառման շնորհիվ կկանխի Հայաստանի Հանրապետության բնակչության համար վտանգավոր ապրանքատեսակների ներթափանցումը,

— արտահանման ներուժի խթանումը: Արտաքին շուկաների ձեռքբերումը և արտահանման աճը տնտեսական զարգացման հետագա ապահովման կարևոր գործոններ են, և արտահանման խրախուսումը Հայաստանի համար ունի ռազմավարական նշանակություն: Հետևաբար, Հայաստանի տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի արտահանման գործընթացում առաջացող հնարավոր բոլոր խոչընդոտների վերացմանը և այդ նպատակով տարբեր երկրների հետ տնտեսական համագործակցության ու կապերի ընդլայնմանն ու ամրապնդմանը՝ միջազգային համապատասխան համաձայնագրերով (տնտեսական համագործակցության, կրկնակի հարկումը բացառելու և այլն) ամրագրմամբ,

— ներքին արտադրության շարունակական արդիականացման, աշխատուժի մասնագիտական կրթական մակարդակի բարձրացման խրախուսումը, ինչը կարևորվում է ժամանակակից գիտության և տեխնոլոգիաների առաջընթացին համապատասխան աշխատանքային ռեսուրսներ ձևավորելու և դրանց վերարտադրության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու տեսանկյունից,

— եվրոպական տնտեսական համակարգին Հայաստանի տնտեսության ինտեգրմանը միտված տնտեսական քաղաքականության վարումը:

Ամփոփելով Հայաստանի տնտեսական անվտանգության ոլորտում ամրագրված սկզբունքների և դրված նպատակների, ինչպես նաև դրանց իրականացմանն ուղղված վերափոխումների քննարկումը՝ հարկ ենք համարում ևս մեկ անգամ շեշտել, որ մեր որդեգրած քաղաքականության իրագործումը կապահովի կայուն տնտեսական աճ, տնտեսական պահանջմունքների արդյունավետ բավարարում, ազգային ռեսուրսների շարժի նկատմամբ պետական արդյունավետ հսկողություն, Հայաստանի տնտեսական շահերի պաշտպանվածություն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում, ինչն էլ կերաշխավորի Հայաստանի տնտեսական անվտանգությունն ու տնտեսության կենսունակությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Н. Патрушев*. Экономическая безопасность начинается с борьбы против коррупции. <http://www.concourt.am>.
2. *Г. М. Дерцян*. Экономическая безопасность в системе национальной безопасности Республики Армения. <http://www.concourt.am>.
3. *Е. Б. Завьялова*. Национальная экономическая безопасность России. <http://www.concourt.am>.
4. *А. П. Градов, И. В. Ильин*. Экономическая безопасность страны: принципы анализа состояния и противодействия угрозам. <http://www.concourt.am>.
5. *А. В. Возжеников*. Национальная безопасность: теория, политика, стратегия. М., НПО «МОДУЛЬ», 2000.
6. «Экономическая безопасность России». <http://www.taobao.ru/bezopasnost-6>.
7. *Г. С. Вечканов*. Экономическая безопасность. СПб, 2007.
8. «Economic Security Project». <http://www.policyalternative.ca>.

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ
ОБЕСПЕЧЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

*Ս. Դ. ՏԱՓԱՐՅԱՆ, первый заместитель Министра финансов и экономики РА,
член-эксперт Межведомственной комиссии,
кандидат экономических наук,
Ս. Գ. ԿԱՐԱՅԱՆ, заместитель Министра финансов и экономики РА*

РЕЗЮМЕ

Экономическая безопасность является одной из приоритетных сфер обеспечения национальной безопасности, служа экономической основой для системы национальной безопасности. В основу политики обеспечения безопасного и стабильного экономического развития РА заложены основополагающие принципы экономической сбалансированности и стабильности. Это предполагает: укрепление связей между отдельными отраслями экономической системы; усовершенствование экономики в целях повышения ее производительности, увеличения роста объемов производства, повышения уровня жизни населения; обеспечение баланса между государственным регулированием и либерализацией экономических отношений; развитие системы науч-

но-технического обеспечения экономики с использованием собственного интеллектуального потенциала для производства конкурентоспособной продукции; повышение инвестиционной и инновационной активности; обеспечение допустимого уровня внутреннего и внешнего долга; стабилизация финансово-кредитной системы; обеспечение эффективного сочетания государственной поддержки и экономической самостоятельности в сфере производства сельскохозяйственной продукции; гармоничное развитие взаимовыгодных отношений с иностранными государствами в целях усовершенствования рыночных механизмов, более полного обмена информацией и технологиями; стимулирование нацеленного на экспорт производства; снижение уровня теневой экономики. Экономической политикой по обеспечению безопасного и стабильного развития государства предусматривается ряд реформ в области экономики РА, направленных на достижение указанных целей.

THE MAIN DIRECTIONS
OF ENSURING THE ECONOMIC SECURITY
OF THE REPUBLIC OF ARMENIA

*P. D. SAFARYAN, First Deputy Minister of Finances and Economy of the RA,
Member Expert of the Interagency Commission,
Candidate of Economic Sciences,*

S. H. KARAYAN, Deputy Minister of Finances and Economy of the RA

SUMMARY

The economic security is one of the priority spheres of ensuring the national security, serving as the economic basis for the system of the national security. Basic principles of economic balance and stability are laid in the basis of policy of ensuring a secure and stable economic development of the RA. That assumes: strengthening relations among separate branches of economic system; improving economy for its productivity rise, and the growth of production scale, the improvement of the life quality for the population; ensuring balance between state regulation and liberalization of economic relations; developing the system of scientific-technical ensuring of economy using its own intellectual potential for the production of competitive products; increasing investment and innovation activity; ensuring the allowed level of domestic and external debts; stabilizing financial and credit system; ensuring the efficient combination of state support and economical independence in the sphere of production of agricultural products; harmonious development of reciprocal relations with foreign states for improving market mechanisms, for a fuller exchange of information and technologies; stimulating export-oriented production; decreasing the level of shade economy. The economic policy on ensuring a secure and stable development of the state assumes a number of reforms in the sphere of economy of the RA, aimed at the achievement of the mentioned goals.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ա. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարի տեղակալ*,
Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ,
տնտեսագիտության թեկնածու



ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության (այսուհետև՝ սոցիալական պաշտպանության) համակարգը գործիքների և մեխանիզմների մի ամբողջություն է, որը միտված է անձի, ընտանիքի և հասարակության բնականոն կենսագործունեության ու նյութական պահանջմունքների բավարարման ապահովմանը: Սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետ գործունեության ապահովումը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության համատեքստում ունի առաջնային նշանակություն, քանի որ ժողովրդավարական արժեքներ կրող քաղաքացիական հասարակության և ժողովրդագրական կայուն իրավիճակի ձևավորումն ու պահպանումը արտաքին և ներքին սպառնալիքներին դիմագրավելու առիավատչյա էն:

Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող սոցիալական պաշտպանության քաղաքականությունը, ունենալով համակարգային և հավասարակշռված բնույթ, խարսխված է սոցիալական արդարության հիմնարար սկզբունքների վրա** , համահունչ է տնտեսական զարգացման ընդհանրություններին, նպատակ է հետապնդում նվազեցնել, կանխել, իսկ առանձին դեպքերում՝ չեզոքացնել կամ վերացնել սոցիալական ռիսկեր առաջացնող պատճառները կամ դրանց բացասական հետևանքները***:

* Ա. Գ. Մինասյանը ներկայումս ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր է:

** Սոցիալական արդարությունը այնպիսի իրավիճակ է, երբ բոլորի համար հնարավորությունները հավասար են: Այլ կերպ ասած, մարդու՝ հասարակության անդամի տնտեսական ձեռքբերումները ձևավորում են ոչ թե նրա ծնունդը, ռասայական կամ սեռային պատկանելությունը և այլն, այլ նրա անձնական ձգտումները, նախապատվությունները, նախընտրություններն ու նախաձեռնությունները:

*** Ազգային անվտանգության շահերի համատեքստում Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության համակարգը պետք է լինի արդյունավետ, հասարակության ու անհատի փոխադարձ պատասխանատվության ամրագրման (հասարակության (պետության) և անհատի միջև սոցիալական ռիսկի տարաբաշխման) միջոցով նպաստի հասարակության համախմբմանը, հիմնված լինի սոցիալական արդարության վրա, օժտված լինի տարբեր (ոչ ստանդարտ) իրավիճակ-

Սոցիալական պաշտպանության ընդհանուր համակարգի գործունեության (նե-րառյալ՝ պետական քաղաքականությունը) հիմնական ուղղություններն են՝ աշխա-տանքի և զբաղվածության կանոնակարգումը, կենսաթոշակային ապահովության և ապահովագրության, ընտանիքի, կանանց և երեխաների, հաշմանդամների ու տա-րեցների հիմնահարցերի լուծումը, բնակչությանը ցույց տրվող սոցիալական աջակ-ցության ու ժողովրդագրական իրավիճակի բարելավումը:

Ազգային անվտանգության տեսանկյունից հանրապետությունում սոցիալական ռիսկերի դրսևորման առավել տարածված տեսակ է վաստակի պակասը կամ դրա սպառնալիքը, որն իր բացասական ազդեցությունն է թողնում ծերության կամ անաշ-խատունակության պատճառով չաշխատող անձանց վրա, ինչպես նաև երեխաների խնամքի, բուժօգնության, անհրաժեշտ կրթության, պատշաճ գոյության համար ան-հրաժեշտ միջոցների ձևավորման վրա:

Այս տեսանկյունից սոցիալական ռիսկերի դրսևորման հավանականությունը առավել մեծանում է հանրապետությունում առկա բարձր մակարդակի աղքատութ-յան և անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակի պարագայում (վերջինիս շար-քը պետք է դասել ծնելիության մակարդակի շեշտակի նվազումը, ակտիվ վերարտա-դրողական տարիքի բնակչության զանգվածային արտահոսքը ու դրա շարունակումն ավելի մեղմ սահմանանիշներով, բնական աճը բնական նվազման վերածվելու միան-գամայն առարկայական վտանգը, բնակչության սեռատարիքային համամասնութ-յունների զգալի ձևախեղումը և այլն): Դա թելադրում է մեզ, որ իրավիճակի բարելավ-ման հետ կապված առկա բազմաբնույթ հիմնախնդիրները համարվեն սոցիալ-տնտեսական ու սոցիալ-ժողովրդագրական մարտահրավեր, և դրանց լուծումը ներառվի ազգային անվտանգության ապահովման բաղադրիչներում:

Նշված մարտահրավերների հաղթահարման նպատակով նախարարության կողմից իրականացվում է սոցիալական ռիսկերի կառավարման ոլորտային քաղա-քականություն, որը կառուցվում է աշխատանքի, աշխատանքային իրավահարաբե-րությունների, աշխատավարձի, սոցիալական աջակցության, զբաղվածության, ընտանիքի, կանանց ու երեխաների, հաշմանդամների հիմնահարցերի, պարտադիր կենսաթոշակային ապահովության և սոցիալական ապահովագրության, ինչպես նաև ազգաբնակչության բնական դրական շարժի ապահովման ուղղությամբ կազ-մակերպվող համալիր միջոցառումների վրա:

Համառոտ ներկայացնենք այն գործողությունները, որոնք պետք է իրականաց-վեն բնակչության սոցիալական պաշտպանության տարբեր բնագավառներում:

ներին (ֆորս մաժոր) արագ արձագանքելու հնարավորությամբ (ճկունությամբ), արդյունավետ կեր-պով համադրի միջազգայնորեն կիրառվող և ազգային ավանդույթներից բխող միջոցներն ու մե-խանիզմները, ապահովի ազգային կացութաձևի պաշտպանությունը: Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետությունը բնութագրող հիմնական չափորոշիչներն են սոցիալական պաշտպանության համակարգի հնարավոր շահառուների շրջանը, սոցիալական պաշտպանության համակարգի շրջանակներում մատուցվող ծառայությունների որակը (այդ թվում՝ վճարվող գումարների չափը) և հասանելիության ու հասցեակալության մակարդակները, սո-ցիալական պաշտպանության ոլորտում քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների հրապարակայնությունը և այլն:

Աշխատանքի և զբաղվածության հիմնահարցերի լուծումներ

Հայաստանի Հանրապետությունում զբաղվածության քաղաքականությունը նպատակաուղղված է լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովմանը՝ աշխատանքի խթանմամբ, զբաղվածության խրախուսմամբ, բնակչության եկամուտների ավելացմամբ և հավաքվող միջոցների արդար բաշխման մեխանիզմների ներդրմամբ:

Ինչպես նշվեց, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից է բնակչության կենսամակարդակի հետևողական բարձրացումը՝ արժանապատիվ աշխատանք և զբաղվածություն ապահովելու միջոցով: Գործազրկության բարձր մակարդակը, թերի և թաքցվող զբաղվածությունը, աշխատանքի ոչ բնական պայմանները, ցածր աշխատավարձը, աշխատաշուկայում հավասար մրցակցությունից զուրկ սոցիալական ռիսկային ու մարզինալ խմբերի բազմաշերտությունը և նրանց սոցիալական պաշտպանության ցածր մակարդակը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ներքին անհամաչափ սպառնալիքներ են և համապատասխան միջոցներ չձեռնարկելու դեպքում կարող են լուրջ կերպով սպառնալ ազգային անվտանգությանը:

Այդ համատեքստում աշխատանքի և զբաղվածության քաղաքականության ռազմավարական նպատակն է բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովումը հասարակական համաձայնության, սոցիալական գործընկերության, ինչպես նաև քաղաքացիական հաստատության տարբեր մակարդակների սուբյեկտների համագործակցության ձևավորման ճանապարհով, իսկ գործազրկության դեպքում՝ բնակչությանը սոցիալական պաշտպանության կայուն երաշխիքների տրամադրումը:

Բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության քաղաքականությունը միտված է զբաղվածության ոլորտում բոլոր ձևերի խտրականության կանխարգելմանը և վերացմանը, սոցիալական խմբերի համար հավասար հնարավորությունների ստեղծմանը, մասնագիտական գիտելիքների հետևողական խորացմանն ու աշխատանքային ունակությունների անընդհատ ձևավորմանը, ինքնազբաղվածության և ձեռնարկատիրական գործունեության խրախուսմանը, աշխատուժի արտաքին ու ներքին տեղաշարժի կարգավորմանը, ինչպես նաև արժանապատիվ աշխատանքի համար (նորմալ և անվնասակար պայմաններ, բարձր աշխատավարձ և այլն) անհրաժեշտ պայմանների ստեղծմանը և այլն:

Զբաղվածության ոլորտում ռազմավարական նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել խնդիրներ, որոնցից են՝

- ա) նոր աշխատատեղերի ստեղծումը,
- բ) թափուր աշխատատեղերի համալրումը,
- գ) առկա աշխատատեղերում զբաղված անձանց պաշտպանությունը*:

* Այս առումով կարևոր է նաև կորպորատիվ (մասնավոր) հարաբերություններում սոցիալական պատասխանատվության մեխանիզմի ներդրումը, որը հատկապես կորպորատիվ կառավարման գործընթացում աշխատողների ակտիվ ներգրավման իրական հիմքն է և կհամալրի պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականությունը:

Նշված խնդիրներից որևէ մեկի անտեսումը կամ կատարման ոչ լիարժեքությունը անմիջականորեն կհանգեցնեն բացասական սոցիալական հետևանքների՝ հատկապես գործազրկության:

Գործազրկությունը համարվում է աղքատության, պետության նկատմամբ անվտանգության, հասարակությունից մեկուսացման և այլ անցանկալի սոցիալական երևույթների հիմնական աղբյուրը: Հետևաբար՝ գործազրկության դեպքում բնակչության սոցիալապես պաշտպանված լինելն ուղղակիորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հետ:

Գործազրկության դեպքում բնակչության սոցիալական պաշտպանության ռազմավարությունը հիմնվում է միմյանց շաղկապված երկու կարևոր հիմնադրույթների կենսագործման վրա: Դրանցից առաջինն այն է, որ ներդրվեն այնպիսի սոցիալական մեխանիզմներ, որոնք գործազուրկին հնարավորություն տան պահպանելու մինչև իր աշխատանքը կորցնելն ունեցած կենսամակարդակը, իսկ երկրորդն այն է, որ ներդրված մեխանիզմները ոչ թե վերածվեն սոցիալական խնամառության մպաստների, որոնք կխոչընդոտեն աշխատելու ձգտմանը, այլ ընդհակառակը՝ խթանեն գործազուրկի վերադարձը զբաղվածության ոլորտ:

Նշված հիմնադրույթների իրականացման ամենաարդյունավետ միջոցներից է սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության թեև տարանջատված, բայց զուգահեռաբար գործող սկզբունքների վրա հիմնված սոցիալական պաշտպանությունը: Այն կանխորոշում է սոցիալական քաղաքականության արդարացիությունը, հասցեականությունը և հստակությունը՝ սոցիալական համերաշխության կարգախոսով:

Աշխատաշուկայի ուսումնասիրության արդյունքներով նախատեսվում է առաջիկա երեք տարիներին ստեղծել աշխատանք փնտրող քաղաքացիների աշխատանքային ունակությունների վերականգնման, այդ թվում՝ երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և հաշմանդամների մասնագիտական ուսուցման կենտրոններ: Աշխատանք փնտրող քաղաքացիների մի ստվար զանգված, այդ թվում՝ հաշմանդամները, երիտասարդները, աշխատաշուկայում հայտնվել են ոչ հավասար պայմաններում և բախվում են որոշակի դժվարությունների: Աշխատանք փնտրող քաղաքացիների այս խումբը «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով համարվում է աշխատաշուկայում անմրցունակ, ուստի և նախատեսվում են նրանց մրցունակության բարձրացման և աշխատանքի տեղավորման հատուկ ծրագրեր:

Հանրապետության տնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունի աշխատանքի պետական կարգավորումը: Մակրոտնտեսական ցուցանիշների բարելավումը մեծապես պայմանավորված է նաև տնտեսությունում աշխատանքի շարժառիթավորման խթանմամբ և խրախուսմամբ:

Մասնավորապես, աշխատանքի պետական կարգավորման քաղաքականությունը կնպաստի աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և որակի

բարելավմանը: Աշխատանքի խթանման համար առանձնահատուկ նշանակություն ունեն վարձատրության համակարգի կատարելագործումը, կազմակերպություններում աշխատանքի անվտանգության և հիգիենայի պայմանների բարելավումը, սոցիալական գործընկերության զարգացումը, աշխատավորների ներկայացուցչական մարմինների ստեղծումը և դրանց գործունեության ակտիվության ապահովումը, աշխատանքի բնագավառում օրենսդրության կատարելագործումը և ամենակարևորը՝ աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ հսկողությունը: Աշխատանքի ոլորտում նշված բարեփոխումների իրականացումը կնպաստի պետության դերի բարձրացմանը, գործարարության կազմակերպմանը և ծավալմանը, ինչպես նաև կբարելավի ներդրումային իրավիճակն ու մակրոտնտեսական ցուցանիշները:

Զբաղվածության խնդիրների լուծումն անմիջականորեն կախված է երկրի հարկային, մաքսային, ֆինանսավարկային և ներդրումային քաղաքականությունից, մասնագիտական կրթության համակարգի՝ դեպի աշխատաշուկա ունեցած կողմնորոշման մակարդակից: Դրանց վրա էական ազդեցություն ունի նաև աշխատանքի վարձատրության ոլորտում իրականացվող քաղաքականությունը:

Աշխատավարձի քաղաքականությունը, որը պետության կողմից վարվում է ազգային անվտանգության տեսանկյունից, կիրականացվի հետևյալ ուղղություններով.

—աշխատանքի վարձատրության բնագավառում պետական երաշխիքների ապահովում, աշխատողների իրավունքների օրենսդրական պաշտպանվածության ուժեղացում,

—անվանական աշխատավարձի փոփոխման հետևանքով իրական աշխատավարձի բարձրացում,

—կենսապահովման նվազագույն բյուջեի սահմանում,

—նվազագույն աշխատավարձի չափերի սահմանում՝ ըստ կենսապահովման նվազագույն բյուջեի,

—աշխատավարձերի փուլային բարձրացման պլանավորում՝ ըստ տնտեսության առանձին ճյուղերի,

—բարձրորակ հանրային ծառայության զարգացում և կատարելագործում,

—աշխատավարձի դրույքաչափային համակարգի ներդրում:

Աշխատավարձի կազմակերպման եղանակները և չափի խնդիրները ներկա պայմաններում բավականին կարևոր են ինչպես արդյունավետ տնտեսավարման, այնպես էլ սոցիալական զարգացման տեսանկյուններից: Վարձատրության միասնական ռազմավարության մշակումը կհանգեցնի վարձատրման միասնական չափանիշների ներդրմանը, կնպաստի ծառայությունների մատուցման որակի բարձրացմանը և կապահովի աշխատանքի արդյունավետության մեծացմանը միտված շարժառիթավորում:

Կենսաթոշակային ապահովության համակարգի զարգացում

Կենսաթոշակային ապահովության բնագավառում առկա ու սպասվելիք հիմնա-

խնդիրների լուծումները և համակարգի զարգացման միտումները պայմանավորված են կենսաթոշակային ապահովության նոր ռազմավարության իրականացմամբ: Ըստ վերջինիս նախատեսվում է սկսած 2009 թվականից ներդրել կենսաթոշակային ապահովության խառը համակարգ, որը կունենա հետևյալ բաղկացուցիչները.

1. պետական կենսաթոշակային ապահովություն (սերունդների համերաշխության սկզբունքով գործող բարեփոխված բաղադրիչ)՝ կենսաթոշակի չափը պայմանավորելով անձի նախկինում ունեցած եկամտով՝ պայմանական կուտակային հաշիվների հիման վրա,

2. պարտադիր կուտակային կենսաթոշակային ապահովագրություն՝ աշխատավարձից կատարվող վճարումների հաշվին,

3. կամավոր կենսաթոշակային ապահովագրություն ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամների և ապահովագրական ընկերությունների միջոցով:

Պետական կենսաթոշակային համակարգի բաղկացուցիչների ամբողջական ներդրումը կնպաստի ժողովրդագրական, աշխատանքային, ֆինանսական, ինչպես նաև քաղաքական ռիսկերի բազմազանացման նվազեցմանը՝ պայմաններ ստեղծելով նաև հանրային կենսաթոշակային համակարգի երկարաժամկետ հեռանկարում առավել հուսալի գործունեության համար:

Հանրապետության կենսաթոշակային ապահովության համակարգում կարմատավորվի ոլորտային միջնաժամկետ և երկարաժամկետ քաղաքականությունների մշակման ու իրականացման համար ակտուարային գնահատումների մեթոդաբանությունը, որը մեծ արդյունավետությամբ կիրառվում է զարգացած կենսաթոշակային համակարգ ունեցող երկրներում:

Կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է նաև կենսաթոշակի փոխհատուցման գործակցի աստիճանական մեծացում («Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի» նորմերին այդ ցուցանիշի համապատասխանության ապահովմամբ): 30 տարվա ապահովագրական ստաժ ունեցող անձանց համար այդ գործակիցը կկազմի առնվազն 40 %, այսինքն՝ կենսաթոշակը կկազմի նախկին աշխատավարձի 40 %-ը:

Համալիր միջոցառումներ են ձեռնարկվելու աշխատանքային կենսաթոշակների միջին չափի մեծացման ուղղությամբ. «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով» (ԱՀՌԾ) նախատեսվող ապահովագրական (աշխատանքային) կենսաթոշակի միջին չափը մինչև 2008 թ. մեկ շնչի հաշվով պետք է գերազանցի ընդհանուր աղքատության գիծը:

Ելնելով ԱՀՌԾ-ի համապատասխան դրույթներից՝ մենք հատկապես կարևորում ենք պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման բազայի մեծացմանն ուղղված միջոցառումները: Դրա համար առաջին հերթին կշարունակվեն անհատական հաշվառման համակարգի լիարժեք ներդրումն ապահովող աշխատանքները, առանց ինչի հնարավոր չի լինի իրականացնել պայմանական կամ իրական կուտակային կենսաթոշակային ապահովագրություն:

Ընդհանրի, երեխաների և կանանց հիմնահարցերի լուծումներ

Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է մանկության պաշտպանության համակարգի բարեփոխումների ռազմավարություն, որը նախատեսում է ռիսկի ենթակա երեխաների խնամքի և սոցիալական հոգածության ենթահամակարգի ապակենտրոնացում, այդ համակարգին ընտանիքահեն և համայնքահեն բնույթի հաղորդում, ինչը կնպաստի երեխաների լիարժեք սոցիալական ինտեգրմանը:

Նախարարությունը իրագործում է ՀՀ Կառավարության 2003 թ. դեկտեմբերի 18-ի հմ. 1745-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004—2015 թվականների ազգային ծրագիրը»: Ըստ այդ ծրագրի՝ հանրապետությունում մինչև 2015 թվականը պետք է ստեղծվեն երեխաների հոգածության 25 ցերեկային կենտրոններ, որոնց նպատակն է լինելու սոցիալական միջնորդության, տարբեր ձևերի աջակցության և սոցիալ-մանկավարժական, հոգեբանական, իրավաբանական խորհրդատվությունների մատուցման միջոցով նպաստել ծնողական խնամքից զուրկ, նման վտանգի տակ գտնվող, ինչպես նաև աճման ու զարգացման համար անբարենպաստ կամ վտանգավոր կենսապայմաններում գտնվող երեխաների հիմնախնդիրների լուծմանը:

Նախարարությունը շարունակում է քաղաքացիական հասարակության կառույցների միջոցով իրականացնել «Պետական աջակցություն մանկական խնամակալական հաստատությունների շրջանավարտներին» ծրագիրը, որի նպատակներն են Հայաստանի Հանրապետությունում մանկատների շրջանավարտների սոցիալական պաշտպանության ապահովումը և այդ սոցիալապես անապահով խավի ընդլայնման կանխումը, մանկատների շրջանավարտների համար բավարար պայմանների ստեղծումը՝ հետագա կյանքի ինքնուրույն կազմակերպման և հասարակությանը նրանց ինտեգրման նպատակով:

Մտահոգության առիթ է հանրապետությունում սոցիալական որբության երևույթի տարածումն ընդհանուր անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակի պայմաններում: Վերջին տարիներին միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների հետ մեկտեղ մանկատներում հայտնվում են նաև ծնող ունեցող (հաճախ՝ նույնիսկ երկու ծնող), բայց տարբեր պատճառներով առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ: Այս խնդրի լուծման նպատակով նախարարությունը գործունե միջոցառումներ է ծրագրում մանկատան երեխաներին կենսաբանական ընտանիք վերադարձնելու կամ խնամակալական ընտանիք տեղափոխելու ուղղությամբ: Նախարարության ուշադրության կենտրոնում է կանանց հիմնահարցերի լուծման հետ կապված համալիր միջոցառումների իրականացումը, միջոցառումներ, որոնք հավասար հնարավորություններ և պայմաններ կապահովեն նրանց գործունեության տարբեր ասպարեզներում:

Սոցիալական աջակցության բնագավառում

Սոցիալական աջակցությունը ծանր իրավիճակում հայտնված անձանց համար կյանքի դժվարությունների հաղթահարմանը կամ մեղմմանը, նրանց հիմնական պահանջներին բավարարմանը և հասարակության մեջ ինտեգրմանը նպատակա-

ուղղված ծառայությունների ամբողջությունն է: Նշված ծառայությունների տեսակա-
նու և շահառուների հասցեականության մեծացումը, գյուղական և սահմանամերձ
շրջաններում նրանց ընդգրկման շրջանակների ընդլայնումը, մատուցվող ծառայու-
թյունների որակի բարձրացումը և մատչելիության ապահովումը նախարարության
գործունեության հիմնական ուղղություններից են: Նախարարությունը հետամուտ է
հաշմանդամներին, տարեցներին և երեխաներին աջակցության տրամադրման
մատչելիության ու հասցեականության ապահովման, այդ գծով առաջնահերթու-
թյունների սահմանման, դրա համարժեքության ու շարունակականության, համալի-
րության, թափանցիկության, մարդու արժանապատվության չնսեմացման, սոցիալա-
կան խնամատրության բացառման սկզբունքների պահպանմանը:

Կարևորվում են սոցիալական գործընկերության ապահովումը և համագործակ-
ցության շրջանակների ընդլայնումը: Սոցիալական աջակցության առավել կիրառելի
մեխանիզմներ պետք է լինեն վերականգնողական (ներառյալ՝ բժշկական, հոգեբա-
նական և այլ բնույթի), իրավաբանական խորհրդատվական օգնությունները, բնա-
իրային և դրամական օժանդակությունները, խնամքի կազմակերպումը և այլն: Սո-
ցիալական աջակցությունը պետք է տրամադրվի ըստ հասարակության անդամների
սոցիալական հատկորոշման (խմբավորման) հստակ սահմանված սկզբունքների:

Որպես աղքատության զանգվածային հաղթահարման կարևորագույն գործիք
առանձնահատուկ դեր և նշանակություն ունի աղքատության ընտանեկան նպաստը,
որի չափերը սահմանվում են ՀՀ Կառավարության կողմից: Ընտանեկան նպաստի
համակարգը երկրում գործում է արդեն 7 տարի, և այդ տարիների ընթացքում տեղի
ունեցած փոփոխությունները, հաշվառված նպաստառու ընտանիքների թվի շարժը
խոսում են ծրագրի հասցեականության մեծացման, ինչպես նաև անուղղակիորեն
աղքատության կրճատման մասին: Նախատեսվում է հետագա տարիներին ևս
շարունակել այս ձևի աջակցության տրամադրումը՝ այն բարեփոխելով և ուղղելով
բարձր ռիսկայնությամբ սոցիալական խմբերին և մեծացնելով դրա թափանցիկու-
թյունը, հասցեականությունն ու տրամադրվող օգնության չափերը:

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի լուծումներ

Նախարարության կողմից տարվում են հաշմանդամների և տարեցների հիմ-
նահարցերի լուծումների հետ կապված աշխատանքներ, որոնք ուղղված են հասա-
րակությանը հաշմանդամների ինտեգրմանը, վերականգնողական և պրոթեզաօր-
թոպեղիկ օգնության ծառայությունների որակի բարելավմանը, միայնակ տարեց-
ների սոցիալական սպասարկման կազմակերպմանը, Հայրենական մեծ պատե-
րազմի վետերանների, հաշմանդամ զինծառայողների և զոհված զինծառայողների
ընտանիքների սոցիալական պաշտպանության ապահովմանը, բռնադատվածների
բնակարանային պայմանների բարելավման նպատակով արտոնյալ պայմաններով
երկարաժամկետ վարկերի տրամադրման գործընթացի կազմակերպմանը և այլն:

Ժողովրդագրական իրավիճակի բարելավման ուղղությամբ միջոցառումներ

Նախարարության գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է

հանրապետությունում ժողովրդագրական իրավիճակի և նրա զարգացման միտումների իրատեսական գնահատումներից: Այդ իսկ պատճառով բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավումը դիտվում է որպես գործունեության գերակա ուղղություն, իսկ առկա հիմնախնդիրների լուծումները դիտվում են որպես վարվող սոցիալական քաղաքականության հիմնական թիրախներ:

Ժողովրդագրական փոփոխությունների բնույթը ցույց է տալիս, որ սոցիալտնտեսական իրողությունների պարտադրանքով հայ հասարակությունն իր կողմից գերապատվելի 2-3 երեխայով ընտանիքի մոդելից անցում է կատարել անգամ պարզ վերարտադրության համար ոչ բավարար 1-2 երեխայով ընտանիքի մոդելին: Ըստ բացարձակ ցուցանիշների՝ եթե առաջին և երկրորդ կարգի ծնունդները նվազել են, համապատասխանաբար, 34 և 47 %-ով, ապա երրորդ և բարձր կարգի ծնունդները՝ արդեն 3 և ավելի անգամ:

Ծնելիության առումով երկրում տիրող անբարենպաստ իրադրության ինքնակարգավորման հնարավորությունը իրատեսական չէ: Դրան հասնելու միակ ուղին ակտիվ, նպատակային ու հետևողական պետական միջամտությունն է: Ընդ որում, ծնելիության աճն անմիջականորեն խրախուսելու նպատակով ձեռնարկվող քայլերն արդյունավետ կլինեն միայն այն դեպքում, երբ դրանք ուղեկցվեն երկրի սոցիալտնտեսական իրավիճակի բարելավման տեմպերի արագացմամբ, հասարակության մեջ առկա բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացման միտումների խորացմամբ: Ծնելիության վրա զգալի դրական ազդեցություն կարող են ունենալ հատկապես արտագաղթի սահմանափակման և հայրենադարձության ու ներգաղթի ակտիվիզացիայի ձևավորման ուղղությամբ ձեռնարկվող ջանքերը:

Այդ պայմաններում նպատակային ու ակտիվ պետական ժողովրդագրական քաղաքականության մշակումն ու հետևողական կենսագործումը և դրա միջոցով ժողովրդագրական իրավիճակի հնարավոր չափով օպերատիվ կարգավորումը, ժողովրդագրական մարտահրավերներին համարժեք արձագանքումը, կորցված բարենպաստ դիրքերի եթե ոչ լիարժեք, ապա գոնե մասնակի վերականգնումը ձեռք են բերում այլընտրանք չունեցող կենսական անհրաժեշտության բնույթ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ տվյալ խնդրին առանձնահատուկ բարդություն է հարորդում այն հանգամանքը, որ օբյեկտիվ պայմանների և սուբյեկտիվ գործոնների բերումով այս ուղղությամբ երկրում ըստ էության որևէ լուրջ քայլ դեռ չի ձեռնարկվել: Անհրաժեշտություն է առաջացել ստեղծելու կարևորագույն պետական որոշումների ժողովրդագրական փորձաքննության ինստիտուտ, որի կողմից տրվող գնահատականները որոշիչ դեր պետք է ունենան իրավական ակտերի ընդունման հարցում: Չպետք է ընդունվեն այն իրավական ակտերը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ժողովրդագրական իրավիճակի վրա: Նպատակահարմար է, որ այդ ինստիտուտի աշխատանքներում ներգրավված լինեն օրենսդիր ու գործադիր մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք պատասխանատու լինեն ժողովրդագրական զարգացման ընթացքի մշտազննման և ժո-

դավրդագրական հիմնահարցերի պատեհաժամ վերհանման, դրանց լուծման վերաբերյալ պետական մոտեցումների մշակման, համապատասխան միջոցառումների կենսագործման ընթացքի համակարգման ու վերահսկման համար: Այս ներկայացուցչական ինստիտուտի ստեղծումով համակարգային մոտեցում կցուցաբերվի քաղաքացու, ընտանիքի և հասարակության հավասարակշռված ու կայուն զարգացման ապահովման, հիմնավորված ժողովրդագրական քաղաքականության մշակման ու վարման համար:

Ինչ վերաբերում է ծերացման հետ կապված առկա խնդիրներին, ապա երկրի նյութական հնարավորությունների, աշխատանքի շուկայում տիրող իրավիճակի բերումով դրանք առավել քան սուր ու հրատապ են: Խախտված է աշխատաշուկա մուտքի և ելքի հավասարակշռությունը, ինչի պատճառով առկա բազմազործոն բացասական ազդեցություններին մոտակա տարիներին կգումարվի մաս հանրապետության կենսաթոշակային համակարգի ֆինանսական անկայունության երևույթն իր սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական լուրջ հետևանքներով հանդերձ:

Ժողովրդագրական առումով որպես անբարենպաստ են գնահատվում նաև ՀՀ-ում առկա զենդերային իրողությունները, որոնք հիմնականում կապված են հասարակության մեջ տղամարդկանց և կանանց հավասար հնարավորությունների ապահովման հետ:

Այսպիսով՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավման համար անհրաժեշտ է շահագրգիռ նախարարությունների, գերատեսչությունների, համայնքների, հասարակական կազմակերպությունների, միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների մասնակցային գործընթացների համակարգմամբ իրականացնել համալիր միջոցառումներ, որոնք մասնավորապես պետք է ներառեն՝

— ծնելիության մակարդակի նվազման միտումի հաղթահարում և աճման միտումի ձևավորման ու ամրապնդման ապահովում, դրանով իսկ հեռանկարում բնակչության պարզ վերարտադրության համար անհրաժեշտ ծնելիության գումարային գործակիցը 2,2-ի հասցնելու համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում,

— աղքատության նվազեցման, բնակչության կյանքի որակի բարելավման, առողջապահության համակարգի ծառայությունների որակի բարձրացման, ֆիզիկական ու նյութական մատչելիության մակարդակի բարձրացման հիման վրա ընդհանուր մահացության մակարդակի հնարավոր աճի կանխարգելման, նորածինների ու մանկական մահացության մակարդակների նվազեցման միջոցով կյանքի միջին տևողության ցուցանիշի ավելացում, զարգացած երկրների մակարդակներից այդ ցուցանիշի շեղվածության նվազման ապահովում,

— երիտասարդ ընտանիքների ձևավորման գործընթացների վրա նպատակային ներազդման միջոցով բնակչության ամուսնական կառուցվածքի բարելավմանը, ամուսնաընտանեկան արժեքների համակարգի պահպանմանն ու զարգացմանը նպատակաուղղված քաղաքականության իրականացում,

— բնակչության սեռատարիքային կազմի, այդ թվում՝ առավել ակտիվ վերարտադրողական ու աշխատանքային տարիքային խմբերի տեսակարար կշիռների ու

դրանցում սեռերի համամասնական ներկայացվածության ցուցանիշների բարելավմանը, բնակչության ծերացման երևույթի սպասվող խորացման սոցիալ-տնտեսական հետևանքների հաղթահարմանն ուղղված երկարաժամկետ ազգային ծրագրերի մշակում և կենսագործում,

— հղիության և ծննդաբերման գծով անվճար բժշկական ծառայությունների ամբողջ համակարգի լիակատար և իրական ապահովման մեխանիզմների (հղիության և ծննդի սերտիֆիկատներ և այլն), դրանց լիարժեք ֆինանսական մատչելիության հիմնախնդրի լուծմանն ուղղված ծրագրի մշակում և իրագործում, ծնունդների խթանմանն ուղղված՝ ծննդի հերթականությունից կախված, հստակ և տարբերակված, ազդեցիկ ու արդյունավետ սոցիալ-տնտեսական միջոցառումների ու մեխանիզմների (միանվագ դրամական վճարումներ, ծննդի վարկեր՝ յուրաքանչյուր հերթական ծննդաբերության դեպքում համապատասխանաբար մասնակիորեն զեղչվող, և այլն) մշակում և իրագործում,

— խոցելի և անապահով ընտանիքների զավակների կենսական կարիքների (բնակարանային, սոցիալ-կենցաղային, առողջապահական ու կրթական) բավարարմանն ուղղված պետական նպատակային ծրագրի մշակում և իրագործում՝ ի լրումն հանրապետությունում առկա ծրագրերի,

— վերարտադրողական տարիքի աշխատող կանանց լիարժեք մասնակցության ապահովման համար նրանց հղիության և հետծննդյան ժամանակաշրջանում տրամադրվող արտոնությունների համակարգի մշակում, օրենսդրական ամրագրում և ներդրում,

— նախադպրոցական հաստատությունների համակարգի արդիականացման ու զարգացման ծրագրի մշակում և կենսագործում, բազմազավակ ընտանիքներին աջակցության հատուկ համալիր ծրագրի մշակում և ներդրում, մինչև մեկ տարեկան երեխաների մահացության մակարդակի հետևողական նվազեցմանն ուղղված միջոցառումների միջնաժամկետ համալիր ծրագրի մշակում և կենսագործում, դեռահասների (երիտասարդների) վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարության մշակում և իրագործում, առաջին անգամ ամուսնացող երիտասարդներին տրամադրվող և երեխաների ծնունդներին զուգահեռ մասնակի զեղչերի մեխանիզմներ առողջ ամուսնական վարկերի համակարգի մշակում և ներդրում, անապահով խավերի երիտասարդ նորապսակների համար բնակարանների ձեռքբերման արտոնյալ, այդ թվում՝ երեխաների ծնունդներին զուգահեռ մասնակի զեղչերի մեխանիզմներ առողջ վարկերի տրամադրման համակարգի մշակում ու ներդրում,

— առավել ակտիվ վերարտադրողական ու աշխատանքային տարիքային խմբերի ներկայացուցիչների մշտական արտազաղթի ծավալների սահմանափակմանն ու հայրենադարձության և ներգաղթի ծավալների մեծացման խրախուսմանն ուղղված սոցիալ-տնտեսական միջոցառումների համալիրի մշակում և ներդրում,

— ժողովրդագրական քաղաքականության նպատակների, խնդիրների ու կոնկրետ միջոցառումների լուսաբանման, հանրությանը ներկայացման ու քարոզչության գծով աշխատանքների ծրագրերի մշակում և հետևողական իրականացում, բավա-

րար մակարդակի ժողովրդագրական գրագիտության ասպահովման համակարգերի ստեղծում,

—առավել հիմնարար պետաիրավական ակտերի (օրենքներ, կառավարական որոշումներ) անկախ ժողովրդագրական փորձաքննության ինստիտուտի ձևավորում և ներդրում,

—ժողովրդագրական քաղաքականության իրականացման, ժողովրդագրական իրադրության փոփոխման ընթացքի մշտազննման ու վերահսկման մշտապես գործող համակարգի ստեղծում ու գործարկում,

—ընտանիքի պետական քաղաքականության հայեցակարգի մշակում և իրագործում:

Այսպիսով՝ Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգում վարվող քաղաքականությունը չի կարող առանձնացված լինել երկրում իրականացվող այլ ոլորտային քաղաքականություններից, այլ պետք է համահունչ լինի դրանց, ուղեկցվի տարածքային համաչափ զարգացմամբ և հիմնվի ներպետական օրենսդրության մեջ միջազգայնորեն ընդունված ու ՀՀ-ի կողմից վավերացված պայմանագրերի դրույթների արտացոլման և հետևողականորեն իրացման վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:

2. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. «Հայաստանի վիճակագրական տեղեկագիր 2000—2006 թթ.»։ «Բնակչություն բաժին»։ Ե., 2006:

3. «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր»։ Ե., 2003:

4. «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի մախարարության 2003—2006 թթ. գործունեության տարեկան հաշվետվություններ»:

5. «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա»։ Ստրասբուրգ, 1996 մայիսի 3:

6. «Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից 2002—2005 թթ. հետազոտության հաշվետվություն», ԵԱՀԿ երևանյան գրասենյակ: Ե., 2005:

7. «Demographic-Health Survey of the Republic of Armenia, 2000». National Statistical Service of the Republic of Armenia, RA Ministry of Health, ORC Macro.

8. «Демографическое положение в Армении в реальном измерении». Сборник материалов Международного семинара «Демография Армении на стыке тысячелетий» (Дилижанские чтения—2000). UNFPA. E., 2001.

9. P. Eganян, H. Шахназарян. Трудовая миграция из Армении: литературный обзор. Ереванский офис ОБСЕ. E., 2005.

10. Վ. Ե. Խոջարեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX—XX դարերում, XXI դարի շեմին: Ե., 2001:

11. «Ծրագիր. Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերից ներքին տեղահանված անձանց իրենց ծագման բնակավայրեր վերադարձի կազմակերպման»։ Ե., 2005:

12. «Кавказ—Россия: Миграция легальная и нелегальная». Редактор А. Искандарян, Кавказский институт СМИ. E., 2004.

13. «Ներքին տեղահանված անձանց քարտեզագրման հետազոտություն (2002—2004)», Փախստականների նորվեգական խորհուրդ, ՀՀ Կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն, Հայաստան, 2004:

14. «Հայաստանի Հանրապետության արտաքին միգրացիոն իրավիճակի ուսումնասիրություն», ՀՀ ԿԳՀ պետպատվերով իրականացված գիտահետազոտական թեմայի հաշվետվություն, գիտական ղեկավար՝ տնտեսական գիտությունների թեկնածու Ռ. Եզակյան, ՀՀ ՖԷՆ ՏՀԻ: Ե., 2005:

15. «Հայաստանի Հանրապետություն այցելած առաքելության զեկույցը արտագնա աշխատանքային գործունեության վերաբերյալ»: ՄՄԿ: Ե., 2001:

16. Ռ. Եզակյան, Կ. Կոյունջյան, Ետխորհրդային Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերները: Ե., 2004:

ОСНОВНЫЕ ОРИЕНТИРЫ ДЕЯТЕЛЬНОСТИ
МИНИСТЕРСТВА ТРУДА И СОЦИАЛЬНЫХ ВОПРОСОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
В КОНТЕКСТЕ СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

*А. Г. МИНАСЯН, заместитель Министра труда и социальных вопросов РА,
член-эксперт Межведомственной комиссии,
кандидат экономических наук*

РЕЗЮМЕ

Основными направлениями деятельности Министерства труда и социальных вопросов по обеспечению реализации «Стратегии национальной безопасности РА» в сфере социальной защиты являются: обеспечение занятости, пенсионное обеспечение и страхование, защита семьи, женщин, детей и инвалидов, помощь населению и улучшение демографического состояния страны.

Представлены основы программ и методов решения задач по указанным направлениям.

THE MAIN LANDMARKS OF THE ACTIVITY
OF THE MINISTRY OF LABOR AND SOCIAL AFFAIRS
OF THE REPUBLIC OF ARMENIA
IN THE CONTEXT OF THE NATIONAL SECURITY STRATEGY

*A. G. MINASYAN, Deputy Minister of Labor and Social Affairs of the RA,
Member Expert of the Interagency Commission,
Candidate of Economic Sciences*

SUMMARY

The main directions of the Ministry of Labor and Social Affairs on ensuring the realization of the «National Security Strategy of the RA» in the sphere of social protection are: engagement guaranteeing; pension provision and insurance; family, women, children and invalids protection; population help and improvement of demographic state of the country.

The principles of programs and methods for the solution of tasks on the mentioned directions are presented.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԳՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Հ. Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ, ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ, Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ



1. ԸՆԳՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

Բնակչության առողջության պահպանումն ազգային անվտանգության առաջնային կարևորության խնդիրներից մեկն է:

Հայաստանը որդեգրել է աշխարհում ընդունված հիմնարար առողջապահական արժեքները, այդ թվում նաև առողջության պահպանումը՝ որպես մարդու հիմնական իրավունք և երկարաժամկետ տնտեսական ռազմավարության բաղկացուցիչ մաս:

Առողջապահության համակարգի առջև խնդիր է դրվում առկա միջոցներով ու ներուժով առավելագույնս ապահովել առողջության պահպանման քաղաքացու սահմանադրական իրավունքը, բարձրացնել պետության կողմից երաշխավորվող, բնակչության անվճար բժշկական օգնության մատչելիության աստիճանը՝ սկիզբ դնելով ոլորտում սոցիալական և շուկայական արժեքների նպաստակառուցված հավասարակշռմանը:

Բնակչության առողջապահական անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվում է ուժեղացնել հիգիենիկ և հակահամաճարակային հսկողությունը, բնակչության առողջության պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացումը, վարակիչ ու զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը, հանրային առողջապահական համակարգի հետագա զարգացումը:

Առողջապահության արդյունավետ համակարգի սրելով մասն ու զարգացման ռազմավարության հիմնարար բաղադրիչներն են.

—բնակչության առողջության՝ որպես հասարակության զարգացման և ազգային անվտանգության ապահովման գործոնի ճանաչում,

—հիվանդությունների կանխարգելման, մոր ու մանկան առողջության, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում, բնակչության խոցելի խմբերի առողջական խնդիրների գերապատվություն, նպաստում ծնելիության աճին և կյանքի միջին տևողության ավելացմանը,

—առողջապահության բնագավառում սոցիալական արդարության ու համերաշխության ապահովում,

—բժշկական օգնության և սպասարկման մատչելիության, հասանելիության ու որակի ապահովում,

—առողջության կորստի հետ կապված ֆինանսական ռիսկերի նվազեցում,

—առողջապահության բնագավառում պետական քաղաքականության իրականացմանը բնակչության և քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովում, միջազգային համագործակցություն,

—պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և քաղաքացիների պատասխանատվությունը հիվանդությունների կանխարգելման ու բնակչության առողջության պահպանման համար:

Քանի որ «առողջություն» հասկացությունն ունի ինտեգրալ բնույթ, և այն վերաբերում է ամբողջ բնակչությանը, ապա բոլոր գերատեսչությունները պետք է իրենց ներդրումն ունենան առողջության ապահովման գործում: Բնակչության առողջության հիմնական ցուցանիշներով, մասնավորապես՝ մահացությամբ և ընդհանուր հիվանդացությամբ, դրանց կառուցվածքով է պայմանավորված հատուկ նպատակային ազգային միջգերատեսչական ծրագրերի մշակումը և իրականացումը:

Քանի որ առողջության որոշիչները բազմաթիվ են, ապա ազգային միջգերատեսչական ծրագրերն առանցքային կարևորություն են ստանում ու պետք է լինեն առողջության անվտանգության ապահովման բազային հենակետեր:

Այդ որոշիչների թվում են շրջակա միջավայրի գործոնները (ջրի, օդի, հողի, սննդի, քիմիական, ֆիզիկական և կենսաբանական գործոններ), վարքագծային գործոնները (ծխելը, ակոհոլիզմ, թմրամոլություն), ցածր ֆիզիկական ակտիվությունը (հիպոդինամիա) և այլն:

Այս ուղղությամբ լավագույն ռազմավարությունն է մասնագիտական բուժօգնությունից անցումը դեպի առաջնային բուժօգնություն, կանխարգելում և առողջ ապրելակերպի արմատավորում և ընդհանրապես՝ բուժումից կանխարգելում:

Հասարակության ֆիզիկական վիճակի և առողջության բարելավումը, մարդու առողջության համար անվտանգ միջավայրի ստեղծումն ու ապահովումը, դրական ժողովրդագրական միտումների խթանումը, առողջ ապրելակերպի արմատավորումը սոցիալ-տնտեսական բարեփոխումների կարևոր նշանակետերից են, և դրանց ուղղված միջոցառումների ընդլայնումն ու զարգացումը կարևոր նախադրյալներ են բնակչության առողջապահական անվտանգության ապահովման համար:

Համակարգային իմաստով պետք է ունենալ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման, ախտորոշման ու բուժման հնարավորություններով օժտված առողջ ապրելակերպ սերմանող առողջապահության գործուն համակարգ ու հանրային առողջությունն ապահովող միջավայր: Բավարար մակարդակի վրա պետք է լինեն ծնելիությունը և կյանքի միջին տևողությունը:

Երկիրը պետք է կարողանա կանխարգելել և չեզոքացնել հանրային առողջությանն սպառնացող վտանգները՝ ճառագայթաբանական, կենսաբանական ահաբեկչություն, թմրամոլություն, վարակիչ հիվանդությունների բռնկումներ և համաճարակներ, զանգվածային թունավորումներ և այլն: Առողջապահության համակարգի գործունեությունը պետք է լինի արդյունավետ և կենսագործունեության ու ֆունկցիոնալ իմաստով անխաթար: Այդ նպատակով առողջապահության

համակարգի տարբեր ոլորտների համար մշակվել և մշակվում են առանձին ռազմավարություններ:

Առողջապահական ռազմավարությունների իրականացման ուղիներն են.

— համապատասխան իրավական դաշտի հետագա լրամշակում և կիրարկման մեխանիզմների ներդրում,

— պետական կառավարման համակարգի համապատասխան կառույցների և ստորաբաժանումների, այդ թվում՝ առողջապահության նախարարության հետագա հզորացում (կադրային, կազմակերպական, նյութական ու տնտեսական ռեսուրսներ, առկա լաբորատոր և տեխնոլոգիական բազայի արդիականացում, ուսուցում),

— միջգերատեսչական (պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, շահագրգիռ կազմակերպություններ) և միջազգային համագործակցության սերտացում, ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների ներուժի օգտագործում՝ առաջացող վտանգների և հիվանդությունների մասին արագ տեղեկանալու և դրանց տարածումը կանխելու, անվտանգությունն ապահովելու ուղղությամբ համակարգված միասնական միջոցառումներ կազմակերպելու նպատակով:

**2. ԲԺՇԿԱԺՈՂՈՎՐԳԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ.
ՇՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱԿԱՆ ՀԱՎԵԼԱՃ**

Բնակչության առողջական վիճակը ազգային անվտանգության ապահովման կարևոր ցուցանիշներից մեկն է: Վերլուծությունները ցույց են տալիս, որ մեծահասակ բնակչության ընդհանուր հիվանդացությունը 100 000 բնակչի հաշվով կազմում է 30526,7 և վերջին երեք տարվա ընթացքում գրեթե անփոփոխ է: Մանկական հիվանդացության միջին ցուցանիշը 100 000 երեխայի հաշվով կազմում է 35643,7 և նույնպես նույնն է վերջին երեք տարվա համար:

Ընդհանուր մահացությունը 100 000 բնակչի հաշվով ունի կայունացման միտում և վերջին երեք տարվա ընթացքում կազմում է համապատասխանաբար՝ 795,68, 810,08, 796,97:

1990—2000 թթ. ընթացքում բնակչության ծնելիության և բնական աճի նվազումը խիստ անհանգստացնող էին: Այս ժամանակահատվածում բնակչության 1000 շնչին ընկնող բնական հավելաճը կրճատվեց ավելի քան 5 անգամ, իսկ ծնելիության ցուցանիշը և պտղաբերության գործակիցը՝ պտղաբեր տարիքի մեկ կնոջն ընկնող երեխաների միջին թվաքանակը, նվազեցին գրեթե 2 անգամ:

Բարեբախտաբար, 2002 թ. արձանագրվեց ծնելիության ցուցանիշի անկման դադար՝ հետագա աճման ակնհայտ միտումով: Այնուամենայնիվ, վերջին 15 տարվա ծնունդների բացարձակ թիվը կիսով չափ կրճատվել է:

Ժողովրդագրական իրավիճակի այսպիսի կտրուկ վատթարացումը փոքրաթիվ բնակչությամբ Հայաստանի համար կարևոր ռազմավարական նշանակություն ունի թե՛ ազգային անվտանգության, թե՛ հետագա ժողովրդագրական քաղաքականության անհրաժեշտ զարգացումների տեսանկյունից: Խնդրի հնարավոր լուծումը ծնելիությ-

յան խրախուսման և բազմազավակ ընտանիքներին սոցիալական աջակցության ցուցաբերման հատակ քաղաքականության մշակումն ու իրագործումն է:

Հայաստանում բժշկաժողովրդագրական ցուցանիշների ակնհայտ բացասական միտումների ֆոնի վրա առավել կարևորվում են երեխաների և մայրերի առողջության պահպանման խնդիրները:

2.1. Մանկական մահացություն

Մանկական մահացության (ՄՄ) ցուցանիշը բնութագրում է բնակչության ամենախոցելի տարիքային խմբի՝ մինչև մեկ տարեկան երեխաների մահացությունը 1000 կենդանի ծնունդից:

Պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստանը բնորոշվում է մանկական մահացության միջին մակարդակով (ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) դասակարգման), ընդ որում, վերջին 15 տարվա ընթացքում այն ունի բարելավման ակնհայտ միտում: 2005 թ. ցուցանիշը շատ ավելի ցածր էր ԱՊՀ երկրների համեմատությամբ, թեև զգալիորեն գերազանցում էր միջին եվրոպական մակարդակը:

Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հաշվարկային ցուցանիշի՝ տարածաշրջանում ՄՄ միտումների վերլուծությունը փաստում է, որ Հայաստանին հաջողվել է 1990—2005 թթ. ընթացքում ՄՄ ցուցանիշը կրճատել 44 %-ով (լավագույն ցուցանիշն է ԱՊՀ երկրներում): Ըստ միջազգային փորձագիտական գնահատականների՝ Հայաստանը ԱՊՀ այն երկրներից է, որին կհաջողվի շարունակաբար իջեցնել մանկական մահացությունը և 2015 թ. հասնել Հազարամյակի նպատակին, ուստի հետագայում ազգային առողջապահական ռազմավարությունը պետք է ուղղվի այդ ոլորտում ձեռք բերված հաջողությունների պահպանմանն ու հետագա զարգացումների ապահովմանը՝ որպես երեխաների առողջության բարելավման գրավականի:

2.2. Մայրական մահացություն

Մայրական մահացության ցուցանիշը մայրական առողջության վիճակի ինտեգրալ ցուցանիշն է և արտացոլում է մայրական մահացության դեպքերի թիվը 100 000 կենդանի ծնունդի նկատմամբ: Դրա միջին եռամյա ցուցանիշների համեմատությունը վկայում է, որ Հայաստանում վերջին 15 տարվա ընթացքում մայրական մահացության մակարդակը թեև դանդաղ, բայց շարունակաբար իջել է: Չնայած Հայաստանում մայրական մահացության ցուցանիշը էապես ցածր է ԱՊՀ երկրների միջին մակարդակից, սակայն 3-4 անգամ գերազանցում է եվրոպական երկրների միջին ցուցանիշը:

Մայրական մահացության դեպքերը հիմնականում պայմանավորված են կանխարգելելի պատճառներով՝ արյունահոսություններ, հղիության հիպերթենզիաներ, վարակներ, հղիության արհեստական ընդհատումներ, իսկ վերջին տարիներին մայրական մահացության կառուցվածքում աճել է մարմնական (սոմատիկ) հիվանդությունների տեսակարար կշիռը:

**3. ԱՌՈՂՋԱՊԱՀՎՈՒՅԹՆԵՐԸ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3.1. Բժշկական օգնություն և սպասարկում

Վերը բերված տվյալները վկայում են, որ բնակչության առողջության անվտանգության ապահովման ուղղությամբ անհրաժեշտ են համապատասխան աշխատանքներ և նպատակային ծրագրեր: Մասնավորապես, ակնհայտ է մահացության ու հիվանդացության մակարդակների անհամաչափությունը, ինչը բժշկական օգնության ուղիղ դիմելու հետևանք է: Առկա վիճակը շտկելու համար վճռորոշ է առողջության առաջնային պահպանման համակարգի զարգացումը, դրա մատչելիության և հասանելիության հետագա բարձրացումը հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման, ախտորոշման և բուժման նպատակով:

Բժշկական օգնության կազմակերպման գործում նախատեսվում է առաջնային օղակի դերի իրական մեծացում: Առաջնային բուժօգնության կարևորագույն օղակը ներկայացնող ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգի զարգացման հիմնական ուղղություններն են՝ ընտանեկան բժշկության համակարգի ձևավորումը, անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության բավարար ծավալի ու որակի ապահովումը, ինչպես նաև բնակչության համար բժշկական օգնությունն առավել մատչելի դարձնելու, սոցիալական արդարության սկզբունքները սերմանելու և ռեսուրսների նպատակային օգտագործման ու բժշկական ծառայությունների արդյունավետության մակարդակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:

Վերարտադրողական ներուժի հզորացման և ազգի գենոֆոնդի պահպանման համար որոշիչ նշանակություն ունի մայրերի ու դեռահասների առողջության բարելավումը: Ազգային ռազմավարությունն ուղղվում է մոր և մանկան առողջության պահպանման կանխարգելիչ ծրագրերի ընդլայնմանն ու խորացմանը, պատշաճ առողջապահական ծառայությունների և որակյալ բուժօգնության ապահովմանը:

**3.2. Հանրային առողջության (սանիտարահամաճարակային) բնագավառում
անվտանգության և ահաբեկչության հետ կապված հիմնախնդիրներն
ու հակազդեցությունը**

Հանրային առողջության համար ազգային անվտանգության տեսակետից կարևոր խնդիրների հիմնական չափորոշիչը բնակչության առողջության վրա հնարավոր վնասակար ու վտանգավոր ազդեցությունն է, որը բնորոշվում է *հետևյալ չափանիշներով*.

—ազդեցության չափերը՝ հիվանդության կամ թունավորման խմբային դեպքերի, բռնկումների կամ համաճարակ (պանդեմիա) առաջացնելու և արագ տարածվելու հնարավորությունը,

—ազդեցության ընթացքը՝ ծանր ընթացքով, մահացության և հաշմանդամության բարձր ռիսկով բնորոշվող, բնակչության շրջանում արագ տարածվող հիվանդությունները կամ բնակչության զանգվածային թունավորումները,

—ազդեցության բնույթը՝ անհայտ, դեռ չուսումնասիրված գործոններ, շրջակա միջավայրում ազդեցության գործոնի տարածման ուղիները և կայունությունը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն ընդլայնում է իր դիվանագիտական, միջազգային տրանսպորտային, տնտեսական, մշակութային, զբոսաշրջային կապերը ինչպես տարածաշրջանի, այնպես էլ աշխարհի մի շարք պետությունների հետ: Համընդհանրացման ընդհանուր գործընթացների հետ մեկտեղ տեղի է ունենում նաև վարակիչ հիվանդությունների համընդհանրացում. խնդիրն ինքնին նոր չէ, սակայն 21-րդ դարում որևէ երկրում առաջացած վարակը կարող է վտանգ ներկայացնել ամբողջ աշխարհի համար, հատկապես, եթե դրանց համար առաջնային քիրախ է մանկական բնակչությունը: Այս վտանգին դիմակայելու և Հայաստանի Հանրապետության տարածք վարակիչ հիվանդությունների (օրինակ՝ թռչնի գրիպ, խոլերա, ժանտախտ, դեղին տենդ, սիբիրախտ) ներթերումն ու դրանց տարածումը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է կազմակերպել սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ: Դրանցից են իմունականխարգելումը, պետական սահմաններում կանխարգելիչ, բժշկական ու սահմանափակող միջոցառումների կազմակերպումը և իրականացումը, «Հազարամյակի մարտահրավերների» ցանկում ընդգրկված տուբերկուլոզի, մալարիայի ու ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի դեմ պայքարի նպատակային ծրագրերի իրականացումը և այլն՝ ըստ համաճարակաբանական իրավիճակի:

Բնակչության զանգվածային ախտահարման նպատակով կենսաբանական միջոցների օգտագործման առավելությունները (ցածր արժեք, մեծ արդյունավետություն, գաղտնի օգտագործման հնարավորություն և այլն) մեծացնում են դրանց կիրառմամբ իրականացվող կենսաբանական ահաբեկչության հնարավորությունը: Կենսաբանական ահաբեկչությունը կարող է իրականացվել ոչ միայն վարակիչ հիվանդությունների հարուցիչների անմիջական օգտագործման միջոցով, այլև կենսաբանական լաբորատորիաներում, կենսատեխնոլոգիական արդյունաբերության օբյեկտներում կատարվող ահաբեկչությունների ձևով:

Տարերային աղետները, այդ թվում՝ տեխնաժիկ վթարները, շատ արագ խախտում են շրջակա միջավայրի և բնակչության կենսագործունեության բնականոն ընթացքը, առաջացնում են զանգվածային ախտահարումներ, շարքից հանում են բնակչության կենսապահովման ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, կոյուղու, սննդային, կենցաղային օբյեկտները: Տարերային աղետներին բնորոշ են ներգործվելու հատկություններ: Առաջանում են բնապահպանական, սոցիալ-հիգիենիկ և համաճարակային խնդիրներ, որոնք իրենց հերթին կարող են նոր արտակարգ իրավիճակների զարգացման պատճառ դառնալ, ստեղծվում են առավել բարենպաստ պայմաններ, մասնավորապես՝ վարակիչ հիվանդությունների և համաճարակների բռնկման համար, հատկապես, որ Հայաստանի տարածքը մի շարք վտանգավոր վարակիչ հիվանդությունների՝ ժանտախտի, տուլարեմիայի, սիբիրախտի, մալարիայի էնդեմիկ օջախ է:

Ջրամատակարարման համակարգերի անվտանգությունը նույնպես հանրային

առողջության բնագավառում ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներից մեկն է: Տարբեր վարակիչ հիվանդությունների հարուցիչներով կամ տարբեր ծագմամբ թունավոր նյութերով ջրի աղտոտումը կարող է հանգեցնել հիվանդությունների կամ թունավորումների բռնկումների: Այդ աղտոտումը բնորոշվում է հիվանդության կամ թունավորման արագ տարածմամբ, միաժամանակ մեծ տարածքներում մեծաթիվ բնակչության ախտահարմամբ: Այսպիսի դեպքերը կանխելու հիմնական ուղին խմելու-տնտեսական ջրամատակարարման համակարգերի գլխամասային կառույցների՝ ջրաղբյուրների, կարգավորիչ ջրավազանների, մայր ջրատարների պահպանությունն է արտաքին աղտոտումից, ինչն ապահովվում է սանիտարական պահպանման գոտիների կազմակերպմամբ և դրանցում հատուկ սահմանափակումների ռեժիմի (ներառյալ՝ ֆիզիկական պահպանությունը), ինչպես նաև այդ համակարգերի պատշաճ տեխնիկական վիճակի, ջրի վնասագերծման ու շահագործման պայմանների ապահովմամբ և պետական վերահսկողության ուժեղացմամբ:

Պակաս կարևոր չէ բնակչության լայն խավերի համար առողջ և հաշվեկշռված սնուցման մատչելիության և սննդի անվտանգության ապահովումը:

Չի կարելի թերագնահատել բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր ազդեցության բացառումը, այն է՝ մարդու և նրա ապագա սերունդների կենսագործունեության համար անվտանգ ու բարենպաստ պայմանների ստեղծումը:

3.3. Առողջապահական անվտանգության ռազմավարությունը դեղերի շրջանառության ոլորտում

Երկակի նպատակով դեղերի կիրառման հնարավորությունը հայտնի է վաղուց: Այն լուրջ վտանգ է ներկայացնում կենսաբանական ախաբեկչության իրականացման առումով: 21-րդ դարի ախաբեկչություններն ավելի սթափեցրին միջազգային հանրությանը: 2002 թ. հունիսի 17—18-ին Մալթայում կայացած միջազգային խորհրդակցությունից հետո ԱՀԿ-ն դիմեց ԱՊՀ երկրների կառավարություններին հետևյալ հանձնարարականներով.

1. դեղը դիտել որպես միջազգային ախաբեկչության հնարավոր միջոց, որը բնութագրելու համար շրջանառության մեջ դնել հատուկ տերմին՝ դեղախաբեկչություն (ֆարմակոտեռոր),

2. այդ տեսանկյունից դեղերի շրջանառությունը կարգավորող կազմակերպությունը համարել ազգային անվտանգության և բնակչության առողջության պահպանման կարևոր օղակ՝ օրենսդրորեն ամրագրելով դրա կարգավիճակը, ամրապնդելով ինքնուրույնությունն ու ֆինանսական անկախությունը, զարգացնելով նյութատեխնիկական և կադրային ներուժը,

3. ախաբեկչության կանխարգելման կարևորագույն գործոն համարել հանրության իրազեկությունը՝ միջպետական միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման միջոցով,

4. կենսաբանորեն ակտիվ հավելումները դիտել որպես կենսաբանական ահաբեկչության մուտքի դարպասներ և հատուկ ուշադրություն դարձնել դրանց շրջանառության կարգավորմանն ու որակի ապահովման խնդիրներին,

5. բարեգործական օգնությունը դիտել որպես կենսաբանական ահաբեկչության հնարավոր միջոց և ուժեղացնել դրա նկատմամբ հսկողությունը՝ կիրառելով այլ նպատակներով ներկրվող դեղերին ներկայացվող նույն կարգավորիչ պահանջները:

Ակնհայտ է, որ թույլ կարգավորման պայմաններում դեղերը և կենսաբանորեն ակտիվ հավելումները կարող են սպառնալ բնակչության առողջությանը: Հետևաբար, պահանջվում է հզոր և օրենքով ամրագրված կարգավորող համակարգի առկայություն, մի համակարգ, որը կապահովի խստագույն հսկողություն դրանց գոյության ամբողջ փուլաշրջանի բոլոր օղակներում՝ ստեղծումից մինչև կիրառում: Այսպիսով՝ դեղերի շրջանառության ոլորտում առաջարկվում են առողջապահական անվտանգության ռազմավարության *հեղուկալ միջոցառումները*.

—դեղերի շրջանառության ոլորտում ՀՀ-ում գործող օրենսդրական և նորմատիվային բազայի կատարելագործում,

—աջակցություն դեղերի շրջանառության ոլորտը կարգավորող կազմակերպության գործունեությանը՝ մեկ հզոր կառույցի շրջանակներում կարգավորման գործառույթների կենտրոնացմամբ,

—դեղերի որակի ապահովման և հսկման համակարգի կատարելագործում, դեղերի փորձաքննություն իրականացնող լաբորատորիայի տեխնոլոգիական զինվածության և տեխնիկական հագեցվածության մեծացում, տեսչական հսկողության իրականացում դեղերի շրջանառության, արտադրության և իրացման բոլոր փուլերում,

—ԱՀԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ լայնածավալ միջոցառումների ձեռնարկում կեղծված դեղերի բացահայտման ուղղությամբ,

—դեղերի կողմնակի ազդեցությունների ուսումնասիրությունների և համապատասխան միջազգային կենտրոնների հետ համագործակցության ընդլայնում,

—թմրամիջոցների և հոգեմետ նյութերի կիրառման չարաշահումից հասարակությանը պաշտպանելու համար համապատասխան միջոցառումների իրականացում,

—ըստ ԱՀԿ-ի հանձնարարականների՝ մարդասիրական օգնության գործընթացի կարգավորում՝ բոլոր բարեգործական ծրագրերի ու նվիրատվությունների համակարգմամբ,

—դեղերի ոչնչացման խնդրի կարգավորում,

—դեղերի մասին տեղեկատվական համակարգի զարգացում, դեղերի պիտակավորման, ներդիր-թերթիկի միջոցով կատարվող տեղեկատվության պահանջների սահմանում և գովազդի նկատմամբ խիստ հսկողության իրականացում,

—ոչ պրոֆեսիոնալ լրագրողների կողմից չճշտված ու կողմնակալ տեղեկությունների տարածման դեմ միջոցների ձեռնարկում, քանի որ այն բնակչությանն ապակողմնորոշելու և դեղահաբեկչության համար լայն դաշտ ստեղծելու մեծ վտանգ է պարունակում,

—նպաստում բնակչության դեղակրթության մակարդակի բարձրացմանը կրթական տարբեր ծրագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու ճանապարհով,

—դեղագետների կրթական նվազագույն, պարտադիր հետդիպլոմային և շարունակական կրթության պահանջների սահմանում, միջազգային ստանդարտներին և գործնական առողջապահության պահանջներին դեղագործական կրթական համակարգի համապատասխանության ապահովում,

—միջազգային համագործակցության ակտիվացում:

3.4. Բուժօգնությունն արտակարգ իրավիճակներում

Արտակարգ իրավիճակները՝ որպես տարաբնույթ աղետների հետևանք, սպառնալիք են մարդու կյանքի ու առողջության համար: Այդ դեպքերում պետք է իրականացվեն բուժօգնության հրատապ և համալիր միջոցառումներ՝ մարդկանց անխուսափելի մահացության և հաշմանդամության նվազեցման նպատակով:

Աղետների ժամանակ ցուցաբերվող բուժօգնությունը տարբերվում է սովորական պայմաններում ցուցաբերվող շտապ բուժօգնությունից, ինչը հիմնականում պայմանավորված է տուժածների մեծ թվաքանակով:

Շեշտենք, որ աղետների ժամանակ բուժօգնության ցուցաբերման պատրաստակամությունն իր կարևորության առումով գտնվում է սովորական և պատերազմական պայմաններում բուժօգնության կազմակերպման միջև:

Արտակարգ իրավիճակներում ցուցաբերվող բժշկական օգնության *հիմնական քննութագրերն* են.

—առաջին բուժօգնության ավելի մեծ մասշտաբները, քան սովորական պայմաններում,

— հատուկ բուժօգնություն սուր ճառագայթային հիվանդությունների, արտադրական օբյեկտներում ու հարակից բնակավայրերում քիմիական նյութերով զանգվածային թունավորումների և այրվածքների դեպքում,

—տեղական առողջապահական ծառայությունների հնարավորությունները գերազանցող ծավալներով բուժօգնության ապահովում,

—համարժեք բժշկական օգնության ցուցաբերում այն բժշկական հիմնարկներում, որտեղ պետք է տեղափոխվեն հիվանդները՝ համաձայն տարահանման ծրագրի:

Աղետների ժամանակ բուժօգնության ցուցաբերման *հիմնական սկզբունքներն* են՝

—հաստատված իրավական հիմքերի, կառավարման և հսկողության մեխանիզմների առկայություն,

—արտակարգ իրավիճակներում իրականացվելիք միջոցառումների կազմակերպում՝ ըստ նախապես մշակված ծրագրերի,

—բժշկական անձնակազմի համապատասխան ուսուցում,

—աղետների դեպքում աշխատելու համար բժշկական օգնության պաշարի

(դեղեր, այլ անհրաժեշտ նյութեր և պատրաստուկներ) ձևավորում, հատկապես՝ արյան, դրա բաղադրիչների ու պատրաստուկների պաշարի ապահովում,

—առողջապահության համակարգի և այլ մասնագիտացված ծառայությունների գործողությունների հստակ համադասում,

—բնակչության իրազեկության ապահովում և ուսուցում՝ արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ վարքի ու առողջության պահպանման նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:
2. «ՀՀ Կառավարության գործունեության ծրագիր», 20.06.2003:
3. «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», 8.08.2003:
4. «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիր», 6.11.2003:
5. «Մոր և մանկան առողջության պահպանման 2003—2015 թթ. ռազմավարությունը», 8.08.2003:
6. «ՀՀ բնակչության առողջության առաջնային պահպանման ռազմավարությունը 2003—2008», 13.11.2003:
7. «ՀՀ առողջապահության նախարարության գործունեության ամենամյա հաշվետվություններ»:
8. «Գեղեր և բժշկություն» տեղեկագրի հրատարակումներ:
9. «ՀՀ առողջապահության տեղեկատվական-վերլուծական հաշվետվություններ»:
10. «Progress for children». «Child Survival Report», 2004, № 1. UNICEF, New York, September, 2004 (www.UNICEF.org).

ОСНОВОПОЛОЖЕНИЯ
СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В СФЕРЕ ЗДРАВООХРАНЕНИЯ

*Г. М. ДАРБИНЯН, первый заместитель Министра здравоохранения РА,
член-эксперт Межведомственной комиссии,
кандидат медицинских наук, доцент*

РЕЗЮМЕ

Одной из основных задач жизнедеятельности государства по обеспечению национальной безопасности являются: охрана здоровья населения; приоритетность профилактики заболеваемости, охраны здоровья матери и ребенка, обеспечения санитарно-гигиенической безопасности, задач, связанных со здоровьем уязвимых групп населения, повышения рождаемости и средней продолжительности жизни; создание эффективной системы предотвращения возникновения и распространения эпидемий; обеспечение социальной справедливости и солидарности в области здравоохранения, доступности медицинской помощи и обслуживания и их качества; предотвращение распространения контрафактных лекарств. Оптимальной стратегией в области здравоохранения является переход от лечения болезней к профилак-

тике заболеваний, первой помощи, укоренению здорового образа жизни. В целях решения поставленных задач в соответствии с основоположениями «Стратегии национальной безопасности Республики Армения» разработан проект ведомственной программы, представленный на утверждение Правительства РА и предусматривающий координированную деятельность заинтересованных ведомств при участии всего населения и гражданского общества.

THE FUNDAMENTAL PRINCIPLES
OF THE NATIONAL SECURITY STRATEGY
OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE HEALTH SPHERE

*H. M. DARBINYAN, First Deputy Minister of Health of the RA,
Member Expert of the Interagency Commission,
Candidate of Medical Sciences, Docent*

SUMMARY

One of the basic tasks of a state's vital activity on ensuring the national security are: protection of population health; priority of preventive measures of sick rate, protection of mother and child health, ensuring of sanitary-hygienic security and tasks, connected with the health of a vulnerable group of population, increasing of birth rate and average life expectancy; creation of an efficient prevention system of epidemics rise and spread; ensuring of social justice and solidarity in the sphere of health care, of access to medical aid and service, and their quality; prevention of counterfeit drugs spread. An optimal strategy in the sphere of health care is the transition from the diseases treatment to their prophylactic measures, first aid, and to the rooting of a healthy mode of life. An agency program draft introduced to the confirmation by the RA Government and envisaging the coordinated activity of the interested agencies in participation with the whole population and civil society is elaborated for the solution of tasks put forward in accordance with the fundamental principles of the «National Security Strategy of the Republic of Armenia».

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Ա. Ռ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՀՀ առևտրի և փոխառական զարգացման նախարարի
փոխակալ, Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ*



Ազգային անվտանգության ապահովման ռազմավարական նպատակների հասանելիությունը մեծապես պայմանավորված է տնտեսական անվտանգության համապատասխան ռազմավարության իրականացման մակարդակով: Թե որքանով կհաջողվի ապահովել տնտեսական զարգացումները և դրանք ուղղորդել տնտեսական անվտանգության խնդիրների լուծմանը, կախված է մեր ներուժային հնարավորությունները իրատեսքերն զնահատելու և արդյունավետ կերպով իրացնելու կարողությունից: Ընդ որում, արտաքին միջավայրում տեղի ունեցող գործընթացները թելադրում են իրենց շտկումները: Համընդհանուր զարգացում ապահովելու անհրաժեշտության բերումով համաշխարհային հանրությունն առաջ է քաշում միասնական ջանքերով մի շարք հիմնախնդիրներ լուծելու մոտեցումը, հիմնախնդիրներ, որոնց թվում, 20-րդ դարի վերջից սկսած, հատկապես կարևորվում է աղքատության հաղթահարումը: Աղքատությունը իրական սպառնալիք է համամարդկային հեռանկարային նպատակների հասնելու համար: Միևնույն ժամանակ, արդի քաղաքակրթության առաջընթացը պայմանավորվում է կայուն զարգացման ապահովմամբ, որի պարագայում առավել երաշխավորված կլինեն ներկա և ապագա սերունդների պահանջմունքների բավարարման հնարավորությունները: Այս համատեքստում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ օրակարգում առանցքային տեղ ունի տնտեսության զարգացման կայուն հիմքերի ապահովման հարցը: Այն կրկնակի կարևորություն է ստանում, երբ կա, մի կողմից, աճի տեմպերի պահպանման, իսկ մյուս կողմից՝ դրա որակական բաղադրիչի տեսակարար կշռի ավելացման խնդիր: Այսինքն՝ տնտեսական առաջընթացը պահանջում է առաջանցիկ որակական տնտեսական զարգացման ապահովում:

Ներկայումս հնարավոր կարճ ժամկետում դրան հասնելու համար համապատասխան ուղղորդված քաղաքականության իրականացումը մեր ռազմավարական խնդիրներից մեկն է: ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության հիմնական գործունեությունն ուղղված է այս քաղաքականության մշակմանն ու դրա հետևողական իրագործման նպաստմանն ու մասնակցությանը: Քաղաքականության հիմնադրույթները, իրականացման մեխանիզմներն ու միջոցները ամրագրվում են «ՀՀ կայուն տնտեսական զարգացման ռազմավարությունը» փաստաթղթում, որը

մշակված է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությանը համապատասխան: Այն ներկայացվելու է հասարակությանը և դրվելու է գործադիր իշխանության հաստատմանը:

Մինչ տնտեսական անվտանգության ապահովմանն ուղղված զարգացման քաղաքականության էությանն ու դրա իրականացման նախադրյալներին անցնելը անդրադառնանք նրան, թե ինչ հատկանիշներով է բնութագրվում «տնտեսական անվտանգություն» հասկացությունը:

Որպես երևույթ՝ տնտեսական անվտանգությունը տնտեսական և քաղաքական հաստատությունների այն վիճակն է, որով ապահովվում են ազգային տնտեսության ազատ ու առավել ճկուն գործելակերպը և, ինչը պակաս կարևոր չէ, ներքին և/կամ արտաքին անբարենպաստ պայմաններում հնարավոր վտանգներից երաշխավորված պաշտպանվածությունը: Հաստատութենական հարթությունում «տնտեսական անվտանգությունը» ներկայանում է արդեն համակարգի տեսքով՝ ներառելով համապատասխան համակարգային տարրերի համակողմանի փոխհարաբերությունները: Տնտեսական անվտանգությանն ուղղված համակարգը երկրի տնտեսական այնպիսի համակարգ է, որի գոյության պայմաններում տնտեսական անվտանգությանն ուղղված սպառնալիքների առաջացման հավանականությունը և ազդեցության չափը հասցվում են նվազագույնի՝ հասարակություն—պետություն—բնություն ներդաշնակ փոխհարաբերությունների հաստատման, կայուն տնտեսական զարգացման արդյունավետ մեխանիզմների կիրառման հենքի վրա:

Հայաստանի համար տնտեսական համակարգին ուղղված առկա և հնարավոր սպառնալիքներն անմիջականորեն կապված են աշխարհաքաղաքական իրադրության, հաղորդակցության այլընտրանքային միջոցներով և ռազմավարական նշանակության շեղումներով ապահովվածության աստիճանի հետ: Ընդ որում, Հայաստանը, չունենալով անմիջական ելք դեպի ծով, որոշակի կախվածության մեջ է իր հարևաններից, ինչը տնտեսական զարգացման համար ստեղծում է լրացուցիչ խոչընդոտներ:

Տնտեսությունը որակապես նոր մակարդակ փոխադրելու, նրա արդյունավետությունը կտրուկ բարձրացնելու, այն է՝ գիտելիքի վրա հիմնված տնտեսությանն անցնելու հենքը, նոր ստեղծված արժեքում գիտատար ապրանքների, տեխնոլոգիաների, ծառայությունների տեսակարար կշռի զգալի ավելացումն է: Բացի համաշխարհային զարգացման միտումներից, այդ անցումը Հայաստանի համար պայմանավորված է նաև տարածաշրջանային առանձնահատկություններով և մի շարք ներքին գործոններով:

Հայաստանի տնտեսական վիճակի համակողմանի վերլուծության միջոցով վերհանված գործոնները խմբավորվում են ըստ տնտեսական կայուն զարգացման վրա գործած ազդեցության բնույթի և տարբերակված ուշադրություն են պահանջում հասցեական քաղաքականության վարման տեսանկյունից: Մասնավորապես, զարգացման քաղաքականության համար ելակետային հիմք են ծառայում մի շարք ուղղություններով արտահայտված որոշակի ձեռքբերումները, որոնք դրսևորվում են

ձևավորված շուկայական հարաբերությունների, կայացած մասնավոր հատվածի, տնտեսական քաղաքականության կայունության, տնտեսության բազմազանեցվածության, արտաքին առևտրի ռեժիմի ազատականության, ճյուղային համեմատական առավելությունների տեսքով: Միևնույն ժամանակ, նպատակային քաղաքականության իրականացման պարագայում մեծ են ակնկալիքները համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման խորացման, գործարար միջավայրի բարելավմամբ ներդրումային ակտիվության աճման, մտավոր ներուժի օգտագործմամբ գիտահենք տնտեսության ձևավորման, էներգետիկ կարողությունների ընդլայնված օգտագործման, ճյուղային մրցակցային առավելությունների ձևավորման ուղղություններով առկա հնարավորությունների օգտագործումից: Այնուամենայնիվ, մեզանում դեռևս շատ են այն խնդիրները (թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ), որոնք որոշակիորեն զսպում են զարգացման գործընթացը՝ պահանջելով առավել ճկուն և վճռական մոտեցումներ: Դրանց շարքը կարող են դասվել որոշակի շուկայական հաստատությունների կայացման անբավարար մակարդակը, հեռահաղորդակցության մատչելիության և որակի պակասը, գիտություն—արտադրություն համագործակցության անբավարար մակարդակը, եկամուտների բևեռացվածության առայժմ բարձր մակարդակը, տարածքային զարգացման անհամաչափությունը և այլն: Հայաստանի տնտեսությունը, իր ուժեղ կողմերն ամրապնդելով և օգտագործելով իր բոլոր հնարավորությունները, ունի սպառնալիքները հնարավորինս չեզոքացնելու, երկիրը զարգացման ուղի դուրս բերելու և համաշխարհային տնտեսության մեջ իր ուրույն տեղը զբաղեցնելու գերխնդիր:

Համաշխարհային տնտեսությանն ինտեգրման կարևորագույն նախապայմանը, թերևս, միջազգային չափանիշներին համապատասխանող գործարար միջավայրի ապահովումն է: *Գործարար միջավայրի շարունակական բարելավման* հիմնական երաշխիքը նպաստավոր իրավական դաշտի առկայությունն է: Այս դեպքում տնտեսավարողը, կրելով միայն գործարար ռիսկեր, ջանքերը կուղղի դեպի կառավարման և շուկայավարման հմտությունների կատարելագործում՝ այդպիսով երկրում ապահովելով առողջ մրցակցային միջավայր: Գործարար մշակույթի կայացման համատեքստում և տնտեսական մրցակցության պաշտպանության նպատակով հետևողական քայլերը հատկապես ուղղվելու են համապատասխան հաստատութենական կառույցների դերի մեծացմանն ու ամրապնդմանը՝ օրենսդրության շարունակական կատարելագործման, հասարակության մեջ, գործարար շրջաններում դրանց նկատմամբ վստահության մթնոլորտ ձևավորելու միջոցով: Չեռնարկատիրության (հատկապես՝ փոքր և միջին) զարգացումը հնարավորություն է ընձեռում մեղմելու տնտեսական և սոցիալական դժվարությունները՝ կայուն պայմաններ ստեղծելով հետագա տնտեսական զարգացման համար:

Հայաստանում ճյուղային որոշակի համեմատական առավելությունները, որոնք կարիք ունեն հետագա կատարելագործման, տնտեսության *մրցունակության մեծացման* համալիր ռազմավարության մի բաղկացուցիչ մասն են: Տնտեսության մրցունակությունը դրսևորվում է արտահանման շուկայի ընդլայնմամբ և իրականում

հիմնված է բարձր արտադրողականության, արտադրանքի և սպասարկման որակի, ինչպես նաև նորամուծության միջոցով ավելացված մեծ արժեքի ստեղծման վրա: Հայաստանը կարող է հաջողության հասնել՝ որոշակի ոլորտներում ներքին պայմանների բարենպաստություն, դինամիկություն և հեռանկարայնություն ապահովելով, քանզի ակնհայտ է, որ միջազգային մրցակցությունն առավելապես կենտրոնանում և կոնկրետանում է տնտեսության միայն որոշակի բնագավառների և ոլորտների մակարդակում: Անհրաժեշտ է ապահովել այն ճյուղերի գերակշռությունը, որտեղ արտադրության գործոններ են բարձր որակավորում ունեցող կադրերն ու արտադրության հզոր գիտատեխնիկական հենքը, և որոնք ունեն խոշոր ներդրումներ ներգրավելու և անընդհատ արդիականանալու հատկություն:

Տնտեսության մրցունակության մեծացմանը նպաստող և սպասարկող այնպիսի կատեգորիան, ինչպիսին արտահանումն է, նույնպես պահանջում է հատուկ մոտեցումներ, որոնք պետք է առարկայանան *արտահանման խթանմանն* ուղղված հետևողական միջոցառումներում: Արտահանման առաջանցիկ տեմպեր ապահովելու համար անհրաժեշտ է վարել արտահանման ուղղակի խրախուսման քաղաքականություն՝ չբավարարվելով միայն խոչընդոտների արտաքուստ վերացմամբ: Վարչարարության շարունակական պարզեցում կատարելուց բացի, արտահանողների համար պետք է առաջացնել իրական շահագրգռվածություն: Արտահանման խթանման քաղաքականությունը վարվելու է հիմնականում հաղորդակցային դաշտի մատչելիության, ֆինանսավարկային ռեսուրսների հասանելիության, մարկետինգային համակարգի ձևավորման, որակի կառավարման համակարգի կայացման ապահովման և անդրազգային կորպորացիաների ներգրավման ուղղություններով: Նշված բոլոր ուղղություններով միջոցառումների իրականացման ընթացքում շեշտադրման առանցք պետք է լինի գիտատար և տեխնոլոգիատար արտադրության արդյունքների արտահանման խրախուսումը:

Գիտության զարգացումը, կրթության մակարդակի բարձրացումը և, որպես արդյունք, նորամուծությունների լայնամասշտաբ տարածումն ու կիրառությունը տնտեսական զարգացման լրջագույն խթաններ են: Տնտեսության *նորամուծական զարգացումը* պահանջում է ազգային նորամուծական համակարգի ձևավորում: Նախնական փուլի հիմնախնդիրը ենթակառուցվածքային և հաստատութենական հիմքերի ստեղծումն է, ինչը մեր հանրապետությունում աստիճանաբար ձևավորվում է: Հաջորդ փուլում հիմնական խնդիրը այն արտադրությունների կազմակերպումն է, որոնք ընդունակ են յուրացնելու նորագույն նորամուծությունները և արտադրելու միջազգային չափանիշներով գիտատար արտադրանք՝ դուրս գալով արտաքին շուկաներ: Այս փուլի իրականացման արդյունքը պետք է լինի համաշխարհային շուկայի հեռանկարային հատվածներում մրցակցային դիրքերի ապահովումը: Մեծ կարևորություն է ստանում գիտահետազոտական ինստիտուտների և արտադրական հատվածի միջև գիտատեխնիկական կոոպերացման գործընթացների խորացումը:

Անշուշտ, ոչ մի պետական տնտեսական քաղաքականություն լիարժեք չի լինի, եթե անտեսվի կամ նվազ ուշադրություն դարձվի *փարածքային համաչափ զար-*

զարգացման խնդրի ապահովմանը, քանի որ հանրապետության կայուն տնտեսական զարգացման, տնտեսական անվտանգության ապահովման կարևորագույն բաղադրատարրն է աշխարհագրական առումով տնտեսության հավասարակշռված բաշխվածությունը, ինչը պայմանավորված է տարածքներում գործարար միջավայրի որակի բարձրացմամբ և տարածքների համաչափ սոցիալ-մշակութային զարգացմամբ: Կարևորագույն տեղ են զբաղեցնում տնտեսության կառավարման համակարգի կատարելագործման, տեղական ինքնակառավարման համակարգի լիարժեք կայացման, ենթակառուցվածքների գործունեության բարելավման խնդիրները: Հայաստանի տարածքները պետք է զարգացման ներքին խթաններ ունենան հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և, մասնավորապես, սոցիալ-մշակութային, գիտակրթական և տնտեսական ուղղություններով: Ուսումնառության, գիտահետազոտական, գործարար, գեղագիտական և անձի լիարժեք ինքնադրսևորման համար անհրաժեշտ այլ պահանջարկների բավարարումը չպետք է վտանգվի պարզապես կենտրոնից աշխարհագրական առումով հեռու լինելու հանգամանքով:

Հայաստանի տնտեսական զարգացման համար որակապես նոր հիմքեր դնելու անհրաժեշտությունն այսօրվա հրամայականն է: Տնտեսական մեխանիզմների միջոցով զարգացման ապահովմանը զուգրեթե առանցքային խնդիր է դրանք բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ուղղելու և ծառայեցնելու հրամայականը:

Այսպիսով՝ որպես ամփոփում մեկ անգամ ևս ամրագրենք այն իրողությունը, որ կայուն տնտեսական զարգացումը ազգային անվտանգության կարևորագույն երաշխիքներից մեկն է: Միայն այդ խնդրի հստակ գիտակցման հիման վրա կառուցված տնտեսական քաղաքականության անշեղ և հետևողական իրագործման պարագայում Հայաստանը կարող է ունենալ համաշխարհային զարգացումների համահունչ տնտեսություն, ինչն արդեն գործնական հենք է ազգային անվտանգության ապահովման և ազգային շահերի պաշտպանության համար:

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ
МИНИСТЕРСТВА ТОРГОВЛИ И ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ПО ОБЕСПЕЧЕНИЮ
СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

*А. Р. ГЕВОРКЯН, заместитель Министра торговли и экономического развития РА,
член-эксперт Межведомственной комиссии*

РЕЗЮМЕ

Рассмотрены основные направления деятельности Министерства торговли и экономического развития РА по обеспечению стабильного экономического развития республики в соответствии с основными положениями «Стратегии национальной безопасности РА».

В качестве приоритетных выделены следующие направления: стабильное улучшение деловой среды путем поощрения малого и среднего бизнеса и формирования соответствующего правового пространства; повышение

конкурентоспособности экономики посредством создания большой прибавочной стоимости путем повышения производительности труда и качества продукции и услуг; стимулирование производства, нацеленного на экспорт и развивающегося на основе внедрения новейших научных достижений; инновационное развитие; обеспечение равномерного и сбалансированного территориального развития.

Для достижения этих целей разработан проект программы экономического развития, основанный на положениях «Стратегии национальной безопасности РА», предполагающий координированную деятельность.

THE MAIN DIRECTIONS OF ACTIVITIES OF THE MINISTRY
OF TRADE AND ECONOMIC DEVELOPMENT
OF THE REPUBLIC OF ARMENIA ON ENSURING
THE NATIONAL SECURITY STRATEGY

*A. R. GEVORKYAN, Deputy Minister of Trade and Economic Development of the RA,
Member Expert of the Interagency Commission*

SUMMARY

The main directions of activities of the Ministry of Trade and Economic Development of the RA on ensuring sustainable economic development of the country in accordance with the main provisions of the «National Security Strategy of the RA» have been considered. Stable improvement of the business sphere by means of promoting small and medium businesses and formation of a corresponding legal area; rise in the competitiveness of the economy by means of the creation of high added value increasing the labor productivity and quality of productions and services; promotion of the export-oriented production, developing upon the introduction of newest scientific achievements; innovative development; provision of even and balanced territorial development are distinguished as the priority directions.

To achieve the implementation of these objectives a draft program of economic development is elaborated based upon the provisions of the «National Security Strategy of the RA», assuming the coordinated activity.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Ռ. ՊԱՊՅԱՆ, ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ,
Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ,
տնտեսագիտության թեկնածու



Բնապահպանական անվտանգությունն ազգային անվտանգության այն բաղադրիչն է, որը բնութագրում է անձի և հասարակության բնակության ու կենսագործունեության միջավայրի պաշտպանվածության վիճակը¹:

Բնապահպանական անվտանգության հիմնական նպատակն է շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների հետ կապված վտանգների գնահատումը, կանխարգելումը կամ նվազեցումը՝ երկրի կայուն զարգացումն ապահովելու համար:

Հայաստանի Հանրապետության բնապահպանական անվտանգությանն սպառնացող վտանգները կարող են առաջանալ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնների բերումով:

Կարևոր *արտաքին սպառնալիքների* թվին են դասվում՝ անդրսահմանային ռեսուրսների համատեղ օգտագործման խոչընդոտումը, արդյունաբերական, միջուկային վթարների անդրսահմանային հետևանքները, անդրսահմանային զարկային արտանետումները և արտահոսքերը, շրջակա միջավայրի վրա ներգործության միջոցների օգտագործումը ռազմական նպատակներով, վտանգավոր թափոնների և ռադիոակտիվ նյութերի անդրսահմանային տեղափոխումը, օդի անդրսահմանային աղտոտումը, կլիմայի համընդհանուր փոփոխությունները, օզոնային շերտի քայքայումը, գենետիկորեն վերափոխված օրգանիզմների ներմուծումը:

Հիմնական *ներքին սպառնալիքների* թվին են դասվում՝ բնական պաշարների աղքատացումը, բնական ռեսուրսների հասանելիության անհամաչափությունը, անտառների վերացումը, կենսաբազմազանության կորուստը, շրջակա միջավայր արտանետումների և արտահոսքերի սահմանային թույլատրելի չափաքանակների գերազանցումը, բնական և տեխնածին աղետները, հասարակության բնապահպանական թերի կրթվածությունը և անբավարար իրազեկվածությունը:

Նշված սպառնալիքների կամ դրանց հետևանքների չեզոքացումը ռազմավարական խնդիր է, որը ենթադրում է համապատասխան գերակայությունների կանխորոշում, փոխկապված ու համահունչ ներքին և արտաքին անվտանգության ապահովմանը նպատակաուղղված քայլերի համադրում:

¹ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ», Հավելված: «ՀԲ», 2006, հմ. 2:

Կլիմայի համընդհանուր փոփոխությունները, օզոնային շերտի քայքայումը, մեծ հեռավորությունների վրա օդի, ջրի անդրասահմանային աղտոտումը, արդյունաբերական վթարների անդրասահմանային ներգործությունները, հողերի աստիճանական կազմալուծումը, կենսաբազմազանության առանձին տեսակների անհետացման վտանգը հիմնականում տնտեսական գործունեության արդյունք են: Ամբողջ աշխարհը, միավորելով ուժերը, փորձում է գտնել այս բարդ խնդիրների լուծումը: Հետևաբար, միջազգային ինտեգրման գործընթացներին Հայաստանի Հանրապետության ակտիվ մասնակցությունը բնապահպանական անվտանգության ապահովման կարևորագույն երաշխիքն է:

Անկախության տարիներին մեր երկրում իրականացվել են բարեփոխումներ գրեթե բոլոր բնագավառներում: Սակայն քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերի կտրուկ փոփոխությունները ձեռքբերումների հետ մեկտեղ (օրենսդրության, ժողովրդավարական հաստատությունների, շուկայական տնտեսության հիմնական տարրերի ձևավորում) հանգեցրին բնական պաշարների գերշահագործմանը:

Մարդու ոչ հեռատես գործունեության ցայտուն օրինակ է Սևանա լճի բնապահպանական հավասարակշռության խախտումը: Հազարամյակների պատմություն ունեցող այս լիճը մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակներն ուներ հավասարակշռված բնահամակարգ՝ մակարդակի բնական տատանումներով: Սակայն հանրապետության էներգետիկ պահանջմունքների բավարարման, մասնավորապես՝ Սևան—Հրազդան հիդրոէներգետիկ կասկադի ստեղծման, ոռոգվող հողատարածքների ընդլայնման, ջրապահովման հետ կապված հիմնախնդիրների լուծման նպատակով 30-ական թվականներին սկսվեց Սևանա լճի ջրային պաշարների այնպիսի օգտագործում, որը մի քանի անգամ գերազանցում էր Հրազդան գետով կատարվող հաստատված ելքերը: Յոթանասուն տարիների ընթացքում լճից բաց թողնվեց շուրջ 50 մլրդ մ³ ջուր: Ջրի անխնայ օգտագործման պատճառով լճի մակարդակը 1915,9 մ-ից իջավ 19,6 մ-ով՝ կազմելով 1896,35 մ, ծավալը 58,5 մլրդ մ³-ից նվազեց մինչև 33,0 մլրդ մ³, մակերեսը 1416,2 կմ²-ից դարձավ 1238,1 կմ²:

Հայաստանի անտառները վերջին 70 տարվա ընթացքում 2 անգամ ենթարկվեցին գերհատումների: Առաջինը տեղի ունեցավ 1930—1950-ական թվականներին, երբ հատումները կատարվում էին արդյունաբերական նպատակներով: Երկրորդը՝ 1991 թվականից սկսած. այն կապված էր հանրապետության տնտեսական և էներգետիկ ճգնաժամի հետ, որի պատճառով ոչնչացվեցին անտառածածկ տարածքներ, ինչի հետևանքով խախտվեց շրջակա միջավայրի բնական հավասարակշռությունը: Ձանգվածային հատումների հետևանքով տարբեր ինտենսիվությամբ ծառազրկվեցին մոտ 40000 հա անտառ և կանաչ գոտիներ, դրանցից մոտ 7000 հա-ն՝ համատարած:

Անտառների անկանոն շահագործման, ապօրինի հատումների պատճառով նվազեց դրանց արտադրողականությունը, ակտիվացան հողմահարային երևույթները, խախտվեց անտառի ջրաբանական ռեժիմը: Անտառազրկված լեռնալանջերում ինտենսիվ հողմահարային պրոցեսների հետևանքով մեծացավ հեղեղների և սո-

ղանքների հավանականությունը: Անտառային մեծ զանգվածներ ոչնչացվեցին հատկապես Լոռու, Տավուշի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում, ինչի հետևանքով ակտիվ հողմահարային-հեղեղային պրոցեսներ տեղի ունեցան Վանաձոր, Գորիս, Իջևան քաղաքներում, Նոյեմբերյանի, Մարտունու մի շարք գյուղերում, որտեղ մեծ վնաս հասցվեց բնակելի տներին, բազմաթիվ այլ կառույցների, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակություն ունեցող զգալի մակերեսով հողատարածքների:

Գյուղատնտեսական, արդյունաբերական, շինարարական և այլ նպատակների համար տարածքներ յուրացվեցին գրեթե բոլոր լանդշաֆտային գոտիներում: Չորացվեցին ու գյուղատնտեսության համար օգտագործելի դարձվեցին 20 հազար հա ճահիճ և գերխոնավ տարածքներ, հատվեցին անտառներ, խիստ ընդարձակվեցին կառուցապատված տարածքների մակերեսները (շինություններ, ճանապարհներ և այլն), ինչի հետևանքով տեղի ունեցավ առանձին բուսա- և կենդանատեսակների բնակմիջավայրի կորուստ, և առաջ եկավ տնտեսական արժեք ներկայացնող բազմաթիվ տեսակների անհետացման վտանգ: Ներկայումս Հայաստանում հանդիպող 17000 տեսակի անողնաշարավոր և 493 տեսակի ողնաշարավոր կենդանիներից մոտ 300-ը համարվում են անհետացող կամ հազվադեպ հանդիպող տեսակներ, ընդամենը 99 տեսակի ողնաշարավոր կենդանիներ գրանցված են ՀՀ «Կարմիր գրքում», իսկ 48 տեսակի անողնաշարավորներ՝ նախկին ԽՍՀՄ «Կարմիր գրքում»: Հայաստանի բարձրակարգ 387 տեսակի բույսեր գրանցված են ՀՀ «Կարմիր գրքում»:

Ըստ «Անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի»՝ հանրապետության տարածքի շուրջ 24,353 կմ²-ը, կամ 81,9 %-ը (առանց Սևանա լճի և ջրամբարների մակերեսի) ենթարկված է տարբեր աստիճանի անապատացման: Խիստ անապատացված տարածքները կազմում են Հայաստանի տարածքի 26,8 %-ը, ուժեղ՝ 26,4 %-ը, միջին՝ 19,8 %-ը, թույլ՝ 8,8 %-ը:

Անապատացման գլխավոր պատճառներից են՝ ջրային ռեսուրսների սղությունը, դրանց աղտոտումը, ոռոգման համակարգի անկատարությունը և այլն: Հայաստանում դեռ ձևավորված չէ ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգը, իսկ ջրային ռեսուրսների օգտագործման համար կիրառվող մեթոդները, տեխնոլոգիաները, ենթակառուցվածքները արդիականացման կարիք ունեն: Այդ ամենը հանգեցրեց ջրային պաշարների մեծ կորուստների: Այսպես. 2006 թ. տվյալներով հանրապետությունում խմելու ջրի ջրառի և ջրօգտագործման ծավալները կազմեցին, համապատասխանաբար՝ 168281,6 հազ. մ³ և 27833,3 հազ. մ³, այսինքն՝ խմելու ջրի կորուստը կազմեց մոտ 83 %, ոռոգման ջրի կորուստը գերազանցեց 30-40 %-ը:

Արդյունաբերության, էներգետիկայի և տրանսպորտի ոլորտների գործունեությունն առաջացրեց օդի, հողի և ջրի աղտոտում: Այսպես. ըստ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալների՝ 2006 թ. Երևանում փոշու միջին տարեկան կոնցենտրացիան թույլատրելի նորման գերազանցեց 2,3 անգամ, ծծմբի երկօքսիդինը՝ 1,8, ազոտի երկօքսիդինը՝ 2,7, գետնամերձ օզոնինը՝ 1,9 անգամ: Վիճակն առավել տագնապալի է արդյունաբերական քաղաքներում: 2006 թ.

Ալավերդի քաղաքում ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան բարձր աղտոտվածության սահմաններում էր՝ թույլատրելի նորման գերազանցելով 11,4 անգամ, իսկ ազոտի երկօքսիդինը՝ 1,3 անգամ: Արարատ քաղաքում փոշու միջին տարեկան կոնցենտրացիան սահմանային թույլատրելի նորման գերազանցեց 3,4 անգամ:

Հայաստանի մակերևութային ջրերի աղտոտվածությունը ևս սպառնում է երկրի բնապահպանական անվտանգությանը: Քուռի և Արաքսի ավազանների գետերում դիտվում է ամոնիումի և նիտրիտի իոնների, մի շարք մետաղների (երկաթ, վանադիում, մանգան, պղինձ, ցինկ, կոբալտ, կապար և այլն) սահմանային թույլատրելի նորմերի գերազանցում, ինչպես նաև գետերի թթվածնային ռեժիմի անբավարարություն: Նման մակարդակի աղտոտումն ուղղակիորեն ազդում է բնահամակարգերի կայունության և բնակչության առողջության վրա:

Այսօր Հայաստանի Հանրապետությունը, առաջնորդվելով իր անվտանգության և կայուն զարգացման շահերով, միջազգային ինտեգրման ու ներքին բարեփոխումների ռազմավարությամբ, գերակա է համարում երկրում տիրող բնապահպանական իրավիճակի արմատական բարելավումը: Մեր խնդիրն է, ապահովելով հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումը, հնարավորինս նվազեցնել շրջակա միջավայրի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները:

Այդ նպատակով առաջնային լուծում պահանջող խնդիրներից է բնական պաշարների խելամիտ օգտագործումը: Այդ ուղղությամբ կառավարությունը լուրջ քայլեր է ձեռնարկում՝ հիմնովին բարելավելով բնական ռեսուրսների ինչպես հաշվառման, այնպես էլ մշտադիտման համակարգերը:

Կատարելագործվեցին օրենսդրական դաշտը և հաստատութենական համակարգը: 2003 թ. Կիևում կայացած նախարարների գագաթնաժողովից հետո՝ մինչև 2006 թ. վերջը, Հայաստանի Հանրապետությունն ընդունեց բնապահպանության ոլորտը կանոնակարգող մի շարք օրենքներ. «Թափոնների մասին», «Բնապահպանական վերահսկողության մասին», «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական ու բուսական աշխարհին պատճառած վնասի հատուցման սակագների մասին», «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Ջրի ազգային ծրագիրը» ՀՀ օրենքները և «Անտառային օրենսգիրքը»:

Անտառային ռեսուրսների պահպանումը և կայուն օգտագործումը համարվում են պետության գերակայություններից մեկը: Նշված ոլորտը կարգավորելու համար 2003–2005 թթ. մշակվեցին և ՀՀ Կառավարության հավանությանն արժանացան մի շարք օրենսդրական փաստաթղթեր, մասնավորապես՝ «ՀՀ անտառի ազգային քաղաքականությունը և ռազմավարությունը», «Հայաստանի անտառների ազգային ծրագիրը», «Ապօրինի անտառահատումների հետ կապված խնդիրների լուծմանն աջակցող միջոցառումների գործողությունների ծրագիրը»: Նշված փաստաթղթերով նախատեսվում են մի շարք համալիր միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են անտառահատումների կրճատմանը, անտառահատված տարածքների վերականգնմանը, նոր անտառների հիմնմանը: Այդ միջոցառումների իրականացման

ազդեցությունն ակնառու է արդեն այսօր. միայն 2006 թ. ընթացքում 9400 հա ընդհանուր մակերեսով հողատարածքների վրա կատարվեցին անտառավերականգնման աշխատանքներ: Նվազեցին ապօրինի անտառահատումները:

2003—2006 թթ. ձեռնարկված գործնական քայլերից հիշատակման են արժանի՝ Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացումը մոտ 1,9 մ-ով, ջրօգտագործման ծավալի ավելի քան 90 %-ի ներառումը իրավական դաշտում, վնասակար արտանետումների չեզոքացուցիչներ չունեցող ավտոմեքենաների ներմուծման արգելումը, «Մաքուր զարգացման մեխանիզմի» գործընթացների գործարկումը, բնապահպանական ֆոնդերի համակարգի ձևավորումը, արգելված վտանգավոր թափոնների, քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկերի հաստատումը և այլն:

Չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ մեր երկրի առաջ այսօր էլ ծառացած են մեծ բնապահպանական խնդիրներ, որոնց հրատապ լուծումից կախված է նաև երկրի անվտանգությունը:

Բնապահպանական անվտանգության ապահովման նպատակով մասնավորապես անհրաժեշտ է.

1. ընդերքի և հողային ռեսուրսների մասով՝

— օգտակար հանածոների հանքավայրերի համալիր շահագործում՝ առաջավոր լեռնային տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառմամբ,

— հանքային հումքի վերամշակում՝ համալիր բաղադրիչների առավելագույն կորզմամբ,

— հողերի պաշտպանություն հողմահարումից, աղտոտումից, աղակալումից և ճահճացումից,

— լքված հողերի յուրացում և վերականգնում,

2. ջրային ռեսուրսների մասով՝

— բնակչությանը խմելու ջրի մատակարարման բարելավման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, այդ թվում նաև՝ ի հաշիվ ստորերկրյա աղբյուրների արդյունավետ օգտագործման,

— կենցաղային և արդյունաբերական կեղտաջրերի մաքրման կայանների գործարկում և լրիվ ծավալով ջրի մաքրման համար դրանց աշխատունակության ապահովում,

— ջրի կորուստների նվազեցում, ջրային համակարգերի փուլային վերականգնում ու պահպանում, հիմնական գետավազաններում կայուն և բարենպաստ բնապահպանական իրավիճակի ապահովում,

— տեղումների, ջրհեղեղների և ջրային ողողամաշման վտանգավոր հետևանքների կանխատեսում, կանխարգելում և մեղմացում,

3. անլուրտային ռեսուրսների մասով՝

— անտառների կառավարման բարելավում անտառակառավարման պլանների, տնտեսական մեխանիզմների, ազգային վկայագրման և սեփականության տարբեր ձևերի կիրառման միջոցով,

— ապօրինի հատումների կանխում,

—անտառավերականգնման և անտառապատման միջոցառումների իրականացում,

—հատված և դեզրադացված անտառների վերականգնում,

4. Մեանա լճի բնահամակարգի վերականգնման և պահպանման մասով՝

—Մեանա լճի ջրային բացասական հաշվեկշռի բացառում,

—լճի մակարդակի բարձրացում առնվազն 6 մ-ով,

—ջրահավաք ավազանի կեղտաջրերի մաքրում,

—կենսաբազմազանության պահպանության ապահովում,

5. վրանգավոր քիմիական նյութերի և թափոնների կառավարման մասով՝

—վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների ապօրինի շրջանառության կանխարգելման ուղղված համալիր միջոցառումների մշակում և իրականացում,

—վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների անվտանգ օգտագործման կանոնների մշակում և ներդրում,

6. աղումային էներգիայի անվտանգ օգտագործման մասով՝

—ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում,

—ատոմային էներգիայի օգտագործման անվտանգությունն ապահովող նպատակային ազգային ծրագրերի մշակում և ներդրում,

—ատոմային կայանի այն համակարգերի ու սարքավորումների արդիականացում, որոնք անվտանգության տեսակետից կարևոր են,

—անվտանգության ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր ատոմային էլեկտրակայանի կառուցման հնարավորությունների ու պայմանների համակողմանի ուսումնասիրություն,

7. բնակչության բնապահպանական ինստիտուտի կրթության մասով՝

—բնապահպանական անընդհատ կրթության և դաստիարակության ամբողջական միասնական ազգային համակարգի ստեղծում,

—բնապահպանական իրազեկության մեթոդների ու մոտեցումների կատարելագործում,

—ՄԱԿ-ի ԵՏՀ «Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարության իրականացման փուլային ժամանակացույցի մշակում:

Բնապահպանական անվտանգության բոլոր բնագավառներում անհրաժեշտ է կատարելագործել օրենսդրական հենքը ու զարգացնել հաստատութենական հզորությունները, ներառյալ՝ կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը, ապահովել համակարգի վերազինումը ժամանակակից սարքերով և սարքավորումներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:
2. «2003—2005 թթ. նախարարական զեկույց»: Ե., 2006:
3. «Տեղեկանք մակերևութային ջրերի և բնակավայրերի օդային ավազանի վիճակի մասին,

2006 թ.»: ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն: Ե., 2007:

4. «Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր»: Ե., 2002:

5. «Հայաստանի կենսաբազմազանություն. երրորդ ազգային զեկուլոյցի նյութերից»: Ե., 2006:

6. «ՀՀ բնապահպանության նախարարություն. վարչական վիճակագրական հաշվետվություն», ձև հմ. 2SU (չրտնոտ) տարեկան:

СТРАТЕГИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

*С. Р. ПАПЯН, заместитель Министра экологии РА,
член-эксперт Межведомственной комиссии,
кандидат экономических наук*

РЕЗЮМЕ

Экологическая безопасность является одной из важнейших составляющих национальной безопасности. Ее основная задача—обеспечение благоприятных природных условий для жизнедеятельности настоящего и будущего поколений. Для Армении приоритетными задачами обеспечения стратегии национальной безопасности в природоохранной сфере являются: обеспечение оптимального использования природных ресурсов; восстановление и охрана водных ресурсов и систем, в частности, экосистемы озера Севан, модернизация систем водоснабжения с целью снижения потерь питьевой и технической воды; восстановление лесных массивов; обеспечение безопасности биоразнообразия от генетически видоизмененных растительных и животных организмов; безопасное использование атомной энергии; профилактика радиационного загрязнения; обеспечение безопасного хранения опасных химических и радиоактивных веществ, существенное уменьшение их выбросов; прогнозирование и мониторинг природных и техногенных катастроф, снижение их отрицательных последствий, в том числе путем обеспечения экологических знаний населения.

С учетом того обстоятельства, что многие экологические явления носят глобальный характер, Армения активно участвует в международных инициативах по обеспечению экологической безопасности.

THE ECOLOGICAL SECURITY STRATEGY
OF THE REPUBLIC OF ARMENIA

*S. R. PAPYAN, Deputy Minister of Nature Protection of the RA,
Member Expert of the Interagency Commission,
Candidate of Economic Sciences*

SUMMARY

The ecological security is one of the most important components of the national security. Its main task is to ensure favorable natural conditions for the vital activities of present and future generations. The priority tasks on ensuring the National Security Strategy in the nature protection sphere for Armenia are: ensuring optimal use of natural resources; rehabilitation and preservation of water resources and systems, and, in particular, of the natural ecosystem of Lake Sevan, modernization of the water supply system for reducing the losses of drinking and technical water; re-afforestation; maintaining the security of Armenia's biodiversity from genetically modified plants and animals; secure usage of atomic energy; preventing radioactive contamination; ensuring secure storage of dangerous chemical and radioactive substances; essential decrease of their wastes; forecasting and monitoring of natural and man-caused disasters, lowering their negative consequences including ensuring of ecological awareness of the population.

Taking into account the fact that many ecological phenomena are of a global character, Armenia participates actively in international initiatives on ensuring the ecological security.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

*Ս. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՀՀ գյուղատնտեսության նախարարի
առաջին տեղակալ,
Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*



**1. ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐ**

Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը՝ ագրոպարենային համակարգը, 2000—2006 թթ. ապահովել է երկրի համախառն ներքին արդյունքի 29 %-ը, այդ թվում գյուղատնտեսությունը՝ 21,7 %-ը: Պետության կենսագործունեության և տնտեսության կայունացման գործում գյուղատնտեսության կարևորության հաշվառմամբ անկախության հռչակումից անմիջապես հետո ընտրվեց հողի և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերք իրացնող ու վերամշակող կազմակերպությունների մասնավորեցման քաղաքականություն: Որպես արդյունք, ներկայումս ագրոպարենային ոլորտում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատ տնտեսական համակարգ, որը ներառում է շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսության սպասարկման, գյուղմթերքի իրացման ու վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

Հանրապետության գյուղատնտեսական արտադրությունում հիմնական հողօգտագործողները գյուղացիական տնտեսություններն են, որոնք տնօրինում են վարելահողերի 75,9 %-ը, բազմամյա տնկարկների 74,7 %-ը, խոտհարքների 44,9 %-ը:

Ներկայումս գյուղատնտեսության համախառն արտադրանքի բացարձակ գերակշռող մասը (ավելի քան 98 %-ը) արտադրվում է մասնավոր հատվածի կողմից:

Տնտեսավարման նոր պայմաններում, երբ արմատապես փոխվել է հողօգտագործման համակարգը, և մշակովի հողատարածությունները մասնատվել են ավելի քան 1,2 մլն հողակտորների, առանձնահատուկ կարևորություն է ստանում գյուղատնտեսության արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների արդիականացումը: Միջազգային փորձը վկայում է, որ տնտեսության մյուս ճյուղերի զարգացումը և գյուղատնտեսության ոլորտում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառումը բնականոն ձևով հանգեցնում են տնտեսավարող սուբյեկտների թվաքանակի կրճատման, մեկ տնտեսության հաշվով հողատարածության մեծացման և ի հաշիվ աշխատանքի

արտադրողականության բարձրացման՝ զբաղվածների թվի նվազեցման: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում այս օրինաչափությունները դեռ ցայտուն դրսևորումներ չունեն: Ուստի փոքր հողակտորների վրա արդյունավետ տնտեսավարմանը պետք է նպաստեն ճյուղի սպասարկող ծառայությունների և շուկայական ենթակառուցվածքների ընդլայնումն ու մրցունակության մեծացումը: Դա, կոռպերացիայի զարգացման հետ մեկտեղ, փոքր հողակտորներով պայմանավորված դժվարությունների հաղթահարման ամենաարդյունավետ ուղին է: Ուստի Հայաստանի Հանրապետության Կառավարությունը հետևողականորեն իրականացնում է ոռոգման համակարգերի զարգացման, հողաբարելավման, արտավայրերի ջրարբիացման, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ կենտրոնացված պայքարի, գյուղական ենթակառուցվածքների զարգացման և այլ կարևոր ծրագրեր: Որպես արդյունք, կան դրական միտումներ հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի արտադրության, ինչպես նաև այգեգործության բնագավառում: Գյուղատնտեսական հումք արտադրող և վերամշակող ընկերությունների և փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների միջև աստիճանաբար ձևավորվում են պայմանագրային հարաբերություններ, որոնք հուսալի նախապայմաններ են ստեղծում լոյկի, պտղի, խաղողի, կաթի արտադրության և արտադրողների եկամտի ավելացման համար:

Վերջին տարիներին խաղողի հումք վերամշակող կազմակերպությունների կարողությունների մեծացման, նոր տեխնոլոգիաների կիրառման և շուկայահանման գործընթացների ակտիվացման շնորհիվ նկատելիորեն աճել է հումքի պահանջարկը, և ակտիվացել են այգետնկումները: Արդյունավետ կառավարման և արտաքին շուկաների պահանջներին համապատասխանեցման շնորհիվ գինու արտահանման ծավալները 1997—1998 թթ. համեմատությամբ 2005 թ. ավելացել են գրեթե 3 անգամ, իսկ ներմուծման ծավալներն զգալիորեն կրճատվել են:

Ագրարային բարեփոխումների առաջին տարիներին խիստ կրճատվեցին անասնապահության ճյուղի արտադրական կարողությունները: Այս ճյուղում արտադրական ներուժի վերականգնումը բուսաբուծության համեմատությամբ ավելի ծախսատար և երկարատև գործընթաց է: Այդուհանդերձ, կաթի, մսի, բրդի և ձվի մեծ շուկայական պահանջարկը, վարկավորման հնարավորությունների ընդլայնումը, պետական աջակցությամբ հակահամաճարակային միջոցառումների իրականացումը և անասնաբուժական ծառայության բարելավումը նպաստել են անասնապահության ճյուղի կայունացմանը: Ավելին. թռչնաբուծության և խոզաբուծության զարգացման տեմպերը բավականին բարձր են:

Գյուղատնտեսական հումքի վերամշակման համակարգում ևս 1991—1997 թթ. շեշտակիորեն նվազեցին արտադրական հզորությունների օգտագործման աստիճանը և արտադրության ծավալները: Սակայն 1998 թվականից հետո, լրացուցիչ ներդրումների, արտադրանքի մրցունակության մեծացման և արտահանման ընդլայնման շնորհիվ զգալիորեն բարելավվել է այս համակարգի վիճակը: Հայաստանի Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքում 2006 թ. սննդի

արդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 31,7 %, իսկ ընդհանուր մշակող արդյունաբերության մեջ՝ 48,9 %, ներառյալ՝ ծխախոտի վերամշակումը:

Գյուղատնտեսական մթերքի վերամշակման համակարգի գործունեության ակտիվացումը և արտահանման ծավալների ավելացումը որոշակիորեն նպաստել են գյուղատնտեսական արտադրանքների իրացման հիմնախնդրի մեղմացմանը և տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը:

Այս ուղղությամբ դրական տեղաշարժերը ավելի զգալի կլինեին, եթե իրենց ամբողջական լուծումն ստանային գյուղատնտեսության վարկավորման և ռիսկերի ապահովագրման հիմնախնդիրները: Թեև առևտրային բանկերի, միկրոֆինանսավորող կազմակերպությունների և մասամբ վարկային ակումբների շնորհիվ տարեցտարի ավելանում են գյուղատնտեսությանը հատկացվող վարկային միջոցները, բայց դրանք դեռ բավարարում են պահանջարկի մոտ 10-15 %-ը: Կարևորագույն ձեռքբերում է համարվում նաև տնտեսավարող սուբյեկտների գործելաոճի և մտածողության փոփոխությունը, երբ արտադրողն այլևս իր արտադրական խնդիրների լուծումն ամբողջականորեն չի կապում պետական հովանավորչության հետ և հանդես է գալիս որպես ազդարային ոլորտի տարբեր գործառույթ ունեցող սուբյեկտների հետ հավասար գործընկեր:

Ելնելով երկրի կենսագործունեության համար գյուղատնտեսության առաջնային նշանակությունից, ինչպես նաև ճյուղի առանձնահատկություններից և պարենային անվտանգության խնդիրներից՝ մենք անցումային ժամանակահատվածում կարևորում ենք պետական աջակցության քաղաքականությունը՝ նպատակաուղղված գյուղատնտեսությունում տնտեսավարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, ենթակառուցվածքների զարգացմանը: Նշված քաղաքականությունն ապահովվում է գյուղատնտեսության ոլորտում մի շարք առաջնահերթ պետական ծրագրերի իրականացմամբ, որոնք իրենց դերն են ունեցել վերջին տարիներին գյուղատնտեսության տնտեսական աճի ապահովման գործում: Նշված ծրագրերն ունեն շարունակական բնույթ և հիմնականում նպատակաուղղված են այն առաջնային խնդիրների լուծմանը, որոնք գյուղացիական տնտեսությունները վճարունակության ներկայիս պայմաններում հնարավորություն չունեն լուծելու իրենց սեփական միջոցներով: Պետական ծրագրերն ունեն հետևյալ ուղղվածությունը՝

- առաջնային սերմնաբուծություն, տոհմային գործի կազմակերպում,
- կենտրոնացված պայքար բույսերի առավել վտանգավոր և կարանտինային հիվանդությունների դեմ,
- անասնաբուժական և հսկահամաճարակային միջոցառումներ,
- բնական կերահանդակների և հողերի բարելավում,
- գիտակրթական, տեղեկատվական, խորհրդատվական ոլորտների ամրապնդում ու զարգացում,
- աջակցություն գյուղական համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանը:

Այս ուղղությունների շրջանակներում իրականացվել են հետևյալ **հիմնական ծրագրերը**:

Բնական կերահանդակների (արոտների) բարելավման և ջրարբիացման ծրագիր:

Սկսած 2005 թվականից յուրաքանչյուր տարի միջոցներ են ուղղվում արոտների բարելավման ու ջրարբիացման միջոցառումների իրականացմանը (2007 թ. նախատեսված է 300 մլն դրամ):

Որպես այս ծրագրի իրականացման արդյունք հանրապետության տարբեր մարզերում կբարձրանա բնական կերահանդակների բերքատվությունը, կաճեն գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտները: 2006 թ. ընթացքում Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում ջրարբիացվել են 15800 հեկտար արոտավայրեր:

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագիր:

Ծրագրի իրականացման գլխավոր նպատակը հողերի բերրիության պահպանումն է, պարարտանյութերի խնայողաբար, արդյունավետ և բնապահպանական տեսակետից անվտանգ օգտագործումը: Ակնկալվում է ծրագրի շնորհիվ յուրաքանչյուր տարի ստանալ 174 համայնքների հողերի՝ սննդատարրերով ապահովվածությունն արտացոլող և պարարտանյութերի պահանջարկի որոշման համար անհրաժեշտ ագրոքիմիական քարտեզներ, մշակվում են պարարտացման համար գիտականորեն հիմնավորված երաշխավորագրեր:

Ծրագրով նախատեսվող աշխատանքները կրում են շարունակական բնույթ և յուրաքանչյուր համայնքի համար կատարվելու են 5 տարին մեկ անգամ: Պատեհաժամորեն կատարված հետազոտությունը հնարավորություն կտա կանխելու հողերի բերրիության անկումը (նախատեսված է ծրագրի իրականացմանը 2007 թ. նպատակաուղղել 42,3 մլն դրամ):

Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմերի ու ռեժիմների ճշգրտման ծրագիր:

Իրականացվել է 2005—2006 թթ.: Այս ծրագրի շնորհիվ ջերմային հաշվեկշռի հաշվարկային մեթոդի կիրառմամբ հաշվարկվել են գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմերն ու ռեժիմները՝ մթնոլորտային տեղումների 50 % և 75 % ապահովվածության դեպքում: Ավելի քան 30 տարի առաջ որոշված ոռոգման նորմերի ու ռեժիմների փոխարեն առաջարկվում են նոր՝ ոռոգման ժամանակակից պայմաններին բավարարող, նորմեր ու ռեժիմներ, որոնց կիրառմամբ մշակաբույսերը վեգետացիայի շրջանում կապահովվեն անհրաժեշտ քանակով ջրով, ինչի հետևանքով 10-15 %-ով կխնայվեն ջրային ռեսուրսները (ծրագրի իրականացմանը նպատակաուղղվել է 86 մլն դրամ):

Հակահեղեղային միջոցառումների (գյուղատնտեսական հողաբերքերի պահպանման) ծրագրեր:

Այս ծրագրերը նպատակաուղղված են գյուղատնտեսական հողերի պահպանմանը, մասնավորապես՝ 2006 թ. հակահեղեղային (ափապաշտպան, տարբեր հատ-

վածների մաքրման) միջոցառումներ են իրականացվել Հրագրան, Գավառագետ, Գեբետ, Աղստև գետերի ափերին: Շնորհիվ դրա՝ ափամերձ գյուղատնտեսական հողատեսքերը, ճարտարագիտական կառույցները, բնակավայրերը գերծ են մնացել ջրատարումից, ողողումից և այլ անցանկալի հետևանքներից: Ծրագրերն ունեն շարունակական բնույթ և իրականացվելու են նաև ընթացիկ տարում (2007 թ. նախատեսված է 268,6 մլն դրամ):

Գյուղատնտեսական մշակաբույսերի բուսասանիտարական (ֆիտոսանիտարական) վիճակի լաբորատոր փորձարկումների հիման վրա կանխարգելիչ ու ախտորոշիչ ծառայությունների իրականացման և բույսերի կարանտինային ծառայությունների ծրագրեր:

Առաջին ծրագրի նպատակներն են՝ հետազոտությունների և դիտարկումների հիման վրա կանխատեսել ու ախտորոշել բույսերի համար վնասակար օրգանիզմների բազմացումն ու զարգացումը, բույսերի պաշտպանության բնագավառում պետական ծրագրերի մշակումը և դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև հանրապետություն ներկրվող և հանրապետությունում օգտագործվող բունանյութերի որակի նկատմամբ հսկողության ապահովումը:

Բույսերի կարանտինային ծառայությունների ծրագրի նպատակներն են՝ կարանտինային անվտանգության ապահովումը, կարանտին օրգանիզմների ներթափանցման կանխարգելումը և դրանց կենսատարածքի (արեալի) ճշտումը, կարանտինային հիվանդությունների ու վնասատուների օջախների տեղայնացումը (այս երկու ծրագրերի համար 2007 թ. նախատեսված է 89 մլն դրամ):

Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագիր:

Ծրագրի նպատակն է հանրապետությունում իրականացնել բույսերի պաշտպանություն զանգվածայնորեն առավել տարածված ու վտանգավոր օրգանիզմներից: Ծրագիրը ներառում է երկու հիմնական բաղադրիչ՝ «պայքար մկնանման կրծողների դեմ» և «պայքար մորեխների և ծղրիղների դեմ»:

Ըստ «պայքար մկնանման կրծողների դեմ» բաղադրիչի կատարվում են բունանյութերի ձեռքբերում կենտրոնացված կարգով ու տրամադրում գյուղական համայնքներին, իսկ բույսերի պաշտպանության աշխատանքներն իրականացվում են գյուղացիական տնտեսությունների միջոցով, ինչի համար նրանց տրամադրվում է համապատասխան խորհրդատվություն (այս բաղադրիչի շրջանակներում իրականացվող միջոցառումներն ընդգրկում են շուրջ 200 հազար հեկտար հողատարածք):

«Պայքար մորեխների և ծղրիղների դեմ» բաղադրիչը իրականացվում է կենտրոնացված կարգով ինչպես գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններում, այնպես էլ խոտհարքներում, արոտներում և այլ հողատեսքերում: Նշված միջոցառումներով ընդգրկվում է տարեկան մինչև 10 հազար հեկտար:

Ծրագրի իրականացումն ապահովում է լրացուցիչ բերքի ստացում, ինչի հետևանքով կաճեն հողօգտագործողների իրական եկամուտները (նախատեսված է 2007, 2008 և 2009 թթ. ներդրել համապատասխանաբար՝ 300, 353,7 և 383,2 մլն դրամ):

Կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի ու նյութի փորձաքննության միջոցառումների ծրագիր:

Նպատակն է՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային վիճակի բարելավումը, բնակչության պաշտպանությունը մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից:

Ծրագրով նախատեսված է հակահամաճարակային միջոցառումների իրականացումից հետո դրանց արդյունքների համակողմանի գնահատում, որը հիմք կծառայի հակահամաճարակային միջոցառումների հետագա ծրագրերի մշակման համար (նախատեսված է ծրագրի իրականացմանը 2007 թ. նպատակառոտողել 154,3 մլն դրամ):

Պարվաստուկների և այլ հակահամաճարակային միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերման, գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների ախտորոշման և հակահամաճարակային միջոցառումների ծրագիր:

Հանրապետությունում անասնաբուժական հակահամաճարակային կայուն իրավիճակ ապահովելու, ինչպես նաև մարդկանց և կենդանիների վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվում են ամենամյա հակահամաճարակային պարտադիր միջոցառումներ:

Հակահամաճարակային միջոցառումներում ընդգրկված են կենդանիների և մարդկանց համար առավել վտանգավոր 11 անուն հիվանդություններ:

Ծրագիրը ներառում է հետևյալ համալիր միջոցառումների միաժամանակյա և հաջորդական իրականացումը՝

— պատվաստումների և այլ հակահամաճարակային միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում,

— հակահամաճարակային պատվաստումներ և ախտորոշիչ հետազոտություններ:

Ծրագրի իրականացումը նպաստում է հանրապետության տարածքում կենդանիների վարակիչ հիվանդությունների առումով կայուն հակահամաճարակային վիճակի ստեղծմանը, անասնաբուժասանիտարական տեսակետից բարորակ անասնապահական մթերքի և հումքի արտադրության ապահովմանը, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանությանը և այլն (նախատեսված է 2007, 2008 և 2009 թթ. ներդրել համապատասխանաբար՝ 843, 986,6 և 1195,5 մլն դրամ):

Պետությունը նախատեսվող համաճարակային հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման և այլ անասնաբուժական ծառայությունների իրականացումը հանձնարարել է համայնքների ղեկավարներին, համայնքների և անասնաբույժների հետ կնքվել է 710 պայմանագիր (նախատեսված է 2007, 2008 և 2009 թթ. ներդրել համապատասխանաբար՝ 384, 510 և 612 մլն դրամ):

Սերմերի որակի սրուզման և պեղակային սերմնափորձարկման միջոցառումների իրականացման ծրագիր:

Ծրագիրն ուղղված է գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային ցածրորակ

սերմերի և տնկանյութի օգտագործման կանխմանը և սերմերի վերարտադրության ապահովմանը: Նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

- տեսակային նույնականացման աշխատանքների իրականացում,
- սերմերի խմբաքանակներից նմուշների ընտրություն,
- սերմնանմուշների լաբորատոր փորձարկումների կազմակերպում,
- տեսակային սերմնադաշտերի ապրոքացիա (փորձարկում):

Ծրագրի իրականացմանը նպատակաուղղվում է տարեկան 25—30 մլն դրամ:

Արհեստական սերմնավորման միջոցառումների ծրագիր:

Ծրագիրն ընդգրկում է երկու բաղադրիչ: Առաջին բաղադրիչը անհրաժեշտ բազայի ապահովումն է, երկրորդը՝ տարբեր մարզերում գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման միջոցառումների իրականացումը: 2006 թ. սերմնավորվել է 19 հազար գլուխ գյուղատնտեսական կենդանի (ծրագրի իրականացմանը տարեկան նպատակաուղղվել է 41,5 մլն դրամ, ծավալներն ընդլայնվելու են):

Վարկային ծրագրեր

Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր (Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ):

Ծրագիրը, որի ընդհանուր արժեքը կազմում է 28,7 մլն ԱՄՆ-ի դոլար, իրագործվելու է հանրապետության 7 լեռնային մարզերում՝ Տավուշում, Գեղարքունիքում, Լոռիում, Շիրակում, Վայոց ձորում, Արագածոտնում և Սյունիքում: Ծրագիրն սկսվել է 2005 թ., և նախատեսվում է այն իրականացնել չորս տարվա ընթացքում:

Նպատակն է՝ ապահովել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող առավել աղքատ 7 լեռնային մարզերի գյուղական բնակչության եկամուտների կայուն աճը և այդ տարածքներում աջակցություն ցուցաբերել գյուղատնտեսության հետ առնչվող տնտեսական գործունեությանը:

Ծրագրի հիմնական բաղադրիչներն են.

—գյուղական ձեռնարկատիրության ֆինանսավորում (14,4 մլն ԱՄՆ-ի դոլար), որի նպատակն է աջակցել գյուղական տնտեսական գործունեության ակտիվացմանը՝ ծրագրով ընդգրկված տարածքներում գյուղական միջին և փոքր արտադրողների ու ձեռնարկատերերի համար համապատասխան ֆինանսական միջոցների մատչելիացմամբ,

—գյուղական միջնորդային բիզնես-ծառայություններ (0,21 մլն ԱՄՆ-ի դոլար), որոնց նպատակն է բիզնես-ծրագրով ընդգրկված տարածքներում զարգացնել ծառայություններ մատուցող հավատարմագրված կազմակերպությունների ցանց՝ բիզնես-ծրագրերի նախապատրաստման գործում վարկառուներին աջակցելու համար,

—տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքներ (12,4 մլն ԱՄՆ-ի դոլար), որոնց գլխավոր նպատակն է հիմնական ենթակառուցվածքների թերությունների վերացմամբ բարելավել մատակարար—սպառող շղթայի գործունեության արդյունավետությունը:

Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր (Համաշխարհային բանկի աջակցությամբ):

Նպատակն է՝ ֆերմերների ու գյուղական ձեռնարկատերերի համար շուկաներն առավել մատչելի դարձնելու և գյուղական շրջաններում շուկայամետ մասնավոր ու պետական ներդրումները խթանելու միջոցով աջակցել Հայաստանի փոքր և միջին գյուղական ձեռնարկությունների զարգացմանը:

Ծրագրի հիմնական թիրախային խմբում ընդգրկված են փոքր և միջին ֆերմերներն ու գյուղական ձեռնարկատերերը, որոնք կօգտվեն բարելավված տեղեկատվական ու ֆինանսական ծառայություններից, որակյալ ապրանքների (հումքի) առավել մատչելի առաջարկից ու կատարելագործված տեխնոլոգիաներից, ինչպես նաև շուկայավարմանը նպատակաուղղված աջակցությունից: Ծրագիրը իրականացվելու է չորս տարվա ընթացքում: Ծրագրի հիմնական բաղադրիչներն են.

— աջակցություն փոքր գյուղական բիզնեսին (12,3 մլն ԱՄՆ-ի դոլար), որի նպատակն է աջակցել գյուղական գործարարներին իրենց արտադրությունը շուկային առավել սերտորեն շաղկապելու գործում առավել արդյունավետ դարձնելու իրենց առաջարկի շղթան և ընդլայնելու իրացման հնարավորությունները՝ համապատասխան ֆինանսական ծառայությունների մատուցման և նպատակաուղղված բիզնես-աջակցության միջոցով,

— աջակցություն ֆերմերային տնտեսությունների զարգացմանը (6,9 մլն ԱՄՆ-ի դոլար), որի նպատակն է հնարավորություն ընձեռել ֆերմերներին մեծացնելու արտադրողականությունը, բարելավելու արտադրանքի որակը և ապահովելու շուկաների մատչելիությունը՝ կայուն խորհրդատվական համակարգի զարգացման և որակյալ սերմերի և տնկանյութի ապահովման միջոցով,

— համայնքային տնտեսական զարգացում (9,8 մլն ԱՄՆ-ի դոլար), որի նպատակն է առանձին գյուղական շրջաններում խթանել համայնքների տնտեսական զարգացումը՝ պլանավորման, ռեսուրսների կառավարման, ենթակառուցվածքի ներդրումային առաջնահերթությունների սահմանման, համապատասխան ֆինանսների հայթայթման և շուկայի հետ կապակցող օղակների ստեղծման ուղղությամբ համայնքային կարողությունների զարգացման միջոցով:

Գյուղատնտեսական արտադրության գործընթացում կիրառվելու են բնահամակարգերի վրա բացասական ազդեցության մեղմացմանն ուղղված տեխնոլոգիաներ, ինչպես նաև իրականացվելու են միջոցառումներ, որոնք բխում են «Կենսաբանական բազմազանության մասին», «Կենսաբանական անվտանգության մասին», «Կարթագենյան արձանագրության», «Անապատացման դեմ պայքարի մասին», «Կլիմայի փոփոխության մասին» համաձայնագրերի դրույթներից: Այդ միջոցառումներն իրականացվելու են բոլոր շահագրգիռ կողմերի հետ համատեղ:

Տնտեսության շուկայական կողմնորոշման հետևողական խորացման և ագրարային հատվածի առանձնահատկություններով պայմանավորված պետական աջակցության քաղաքականության շնորհիվ գյուղատնտեսության զարգացման՝ որպես ռազմավարության իրականացման վերջնական արդյունքի տեսլականը հետևյալն է.

—շուկայական կողմնորոշում և բարձր մրցունակություն ունեցող, տնտեսության մյուս հատվածների հետ հորիզոնական կապերով կոոպերացված արտադրություն՝ ընտանեկան ֆերմերային տնտեսությունների և առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների հիմքի վրա,

—բնակչության կայուն պարենային ապահովում և ագրովերամշակող հատվածի գյուղատնտեսական հումքի պահանջարկի բավարարում՝ երկրի պարենային անվտանգության շահերի և ագրոպարենային արտադրանքը արտաքին առևտրի ապրանք դարձնելու հարաբերական առավելության սկզբունքների իրատեսական համադրմամբ,

—գյուղատնտեսությունում համախառն արտադրանքի աճի ապահովում աշխատանքի արտադրողականության մեծացման հաշվին, գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի կրճատում, գյուղական բնակավայրերում զգալի զբաղվածության ապահովում գյուղատնտեսության սպասարկման և ոչ գյուղատնտեսական գործունեության բնագավառներում,

—արտադրված գյուղատնտեսական հումքի մի զգալի մասի վերամշակում գյուղական համայնքներում ձևավորված և գործունեություն ծավալող փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների միջոցով,

—դրական տեղաշարժեր բուսաբուծության և անասնապահության ներճյուղային կառուցվածքներում, բարձր ավելացված արժեք ապահովող գյուղատնտեսական մթերքների արտադրության բազայի և արտադրության ծավալների ընդլայնում,

—գյուղատնտեսության ներուժի էական մեծացում, հատկապես՝ հողային ռեսուրսների օգտագործման վիճակի զգալի բարելավում,

—հանրապետության բնակչության պարենային անվտանգության մակարդակի բարձրացում, կարևորագույն պարենամթերքի տեղական արտադրության հաշվին ապահովվածության աստիճանի զգալի բարձրացում, գյուղական բնակչության աղքատության կրճատում:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության հիմնական խնդիրներն են՝

—ագրարային բարեփոխումների խորացում, շուկայական ենթակառուցվածքների զարգացում և տնտեսավարման ձևերի կատարելագործում,

—պարենային ապահովության մակարդակի բարձրացում, սննդի անվտանգության և հիմնական պարենամթերքի ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովում,

—տեղական արտադրության գյուղատնտեսական արտադրանքների մրցունակության բարձրացում և ըստ նպատակահարմարության՝ պարենամթերքի ներմուծման փոխարինում տեղական արտադրությամբ,

—սննդի անվտանգության համակարգի զարգացում,

— գոտիական մասնագիտացում և արտադրության ռացիոնալ տեղաբաշխում,
— հողաբարելավման համալիր միջոցառումների իրականացում,
— օրգանական գյուղատնտեսության զարգացման համար նախապայմանների ստեղծում և իրավական հիմքերի ձևավորում,

— բուսաբուծության զարգացում առաջադիմական ագրոտեխնիկական տեխնոլոգիաների ներդրման, բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակության ընդլայնման, սելեկցիայի ու սերմնաբուծության համակարգի զարգացման, սերմերի որակի նկատմամբ հսկողության գործուն մեխանիզմների կիրառման, բույսերի պաշտպանության և կարանտինային միջոցառումների իրականացման, մշակաբույսերի զենետիկ բազմազանության, ներառյալ՝ մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանության ապահովման միջոցով,

— անասնաբուծության զարգացում անասնաբուծության ճյուղերի արդյունավետ զուգակցման և ռացիոնալ տեղաբաշխմանն աջակցության, տոհմային գործի զարգացման համալիր միջոցառումների իրականացման, անասնաբուծության համակարգի բարելավման և անասնաբուծական միջոցառումների արդյունավետության մեծացման, կերի բազայի զարգացման, անասնաբուծական առևտրային կազմակերպությունների զարգացմանն աջակցության, գյուղատնտեսական կենդանիների ցեղերի զենետիկ բազմազանության պահպանման միջոցով,

— գյուղատնտեսական հումքի վերամշակման զարգացում վերամշակող կազմակերպությունների ռացիոնալ տեղաբաշխման, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման և արտադրանքի մրցունակության մեծացման, մարկետինգային աջակցության և հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունների զարգացման խթանման միջոցով,

— գյուղատնտեսության սպասարկող և սոցիալական ենթակառուցվածքների զարգացում,

— ագրարային ոլորտի հարկային և վարկային համակարգի բարելավում հարկային արտոնության համակարգից սուբսիդավորման համակարգի անցման մեխանիզմների մշակման, գյուղատնտեսության վարկավորման մեխանիզմների կատարելագործման և մատչելիության մակարդակի բարձրացման միջոցով,

— ագրարային ոլորտի գիտակրթական, խորհրդատվական համակարգի բարելավում,

— գյուղատնտեսության հաշվառման համակարգի կատարելագործում համատարած հաշվառման ծրագրի իրականացմամբ:

Բուսաբուծության ճյուղի զարգացման գերակայություններն են՝

— գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացում և միավոր արտադրանքի հաշվով արտադրական ծախսերի կրճատում առաջադիմական ագրոտեխնիկայի համակարգերի ներդրման միջոցով,

— ցանքատարածությունների կառուցվածքի բարելավում և միավոր տարածությունից ստացվող եկամտի աճում,

—բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի ներդրում, մշակութային ազդեցություն ունեցող յուրացում,

—դաշտային կերարտադրության արդյունավետության մեծացում և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների եռապատիկ ավելացում,

—490 հազար հեկտար վարելահողերի լիարժեք օգտագործում, այդ թվում՝ առնվազն 446,1 հազար հեկտարի ինտենսիվ մշակություն և 280 հազար հեկտարի ռոտացիոն ապահովում,

—բազմամյա տնկարկների տարածության ավելացում մինչև 72 հազար հեկտարի, որից պտղատու այգիներինը՝ 45,6 և խաղողինը՝ 26,4 հազար հեկտարի:

Անհրաժեշտություն է դարձել հանրապետության գոտիական առանձնահատկություններին համապատասխանող մշակութային և բերքահավաքի առաջադիմական տեխնոլոգիաների արմատավորումը: Այդ նպատակով իրականացվելու է նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագիր՝ գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսությունում զբաղված տնտեսավարողներին կտրամադրվի խորհրդատվական ու տեղեկատվական աջակցություն:

Բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի արտադրության ընդլայնման նպատակով անհրաժեշտություն է դարձել գյուղատնտեսական մշակաբույսերի կառուցվածքի բարելավումը, ինչը կատարվելու է ցածր ինտենսիվությամբ մշակաբույսերն առավել արժեքավոր տեսակներով փոխարինման, հանրապետության պայմաններին համապատասխանող հատիկալնդեղեն մշակաբույսերի (հնդկաձավար, ոլոռ, հաճար և այլն) մշակության տեխնոլոգիաների յուրացման, գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության, պարարտացման, պաշտպանության առաջավոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրերի իրականացման միջոցով: Բուսաբուծության ճյուղում բարձր ավելացված արժեքով արտադրությանն անցման ուղղությամբ առանձին ծրագրեր կիրականացվեն «Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման» ծրագրի շրջանակներում հանրապետության տարբեր մարզերում կիրառվող տեխնոլոգիաների գնահատման ծրագրերի միջոցով:

Բարձր ավելացված արժեքով գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության խթանմանը կուղղվի «Հազարամյակի մարտահրավերներ» հայաստանյան ծրագրի «Գյուղատնտեսության կայունություն» ենթաբաղադրիչը, որով նախատեսվում է այդ բնագավառում գյուղացիական տնտեսություններին տեխնիկական օժանդակության ցուցաբերում, ինչպես նաև հանրապետության բոլոր մարզերում բարձր ավելացված արժեքի մշակաբույսերի արտադրության ներդրման փորձացուցադրական տնտեսությունների ձևավորում և այս բնագավառում նպատակային վարկերի տրամադրում:

Կարևոր ուղղություններից են սերմերի արտադրության ու օգտագործման բնագավառում «Սերմերի մասին» ՀՀ օրենքի և դրա կիրարկումն ապահովող իրավական ակտերի պահանջների կատարումը, սելեկցիայի և առաջնային սերմնաբուծության գիտական ապահովումը, երկրորդային սերմնաբուծության ոլորտում մասնավոր ձեռներեցության խթանումը և սերմնարտադրության հավաստագրումը:

Կարևոր են համարվում սերմնափորձարկման համակարգի կատարելագործումը և ընդլայնումը: Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել գարնանացան հացաբույսերի (գարնանացան ցորեն, գարնանացան գարի, վիկ և վարսակ), ինչպես նաև բազմամյա կերային մշակաբույսերի սերմնաբուծությանը:

Խաղողի սելեկցիայի աշխատանքները պետք է նպատակաուղղվեն ցրտադիմացկուն, բարձրորակ, փոխադրունակ, սեղանի, համապիտանի և տեխնիկական նոր տեսակների ստեղծմանն ու ներդրմանը: Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել վիթուսագերծ տնկանյութի արտադրության և հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը:

Բույսերի գենոֆոնդի պահպանության, սելեկցիոն նվաճումների լիարժեք օգտագործման և այս ոլորտում միջազգային համագործակցության զարգացման նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության անդամակցությունը «Բույսերի նոր տորտերի պահպանության միջազգային միությանը» և «Սերմերի որակի ստուգման միջազգային ասոցիացիային»: Նախատեսվում է նաև ՀՀ Կառավարության և դրոնոր համայնքի աջակցությամբ Հայաստանի գյուղատնտեսական մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների գենետիկական բանկի ստեղծում: Աջակցություն է ցուցաբերվելու սերմերի պահուստային (փոխանցիկ) ֆոնդերի ձևավորման, հանրապետությունում հացահատիկային և կերային մշակաբույսերի, կարտոֆիլի ու բանջարեղենի բարձր վերարտադրությամբ սերմացուների կայուն թարմացման, տեսականու ընդլայնման և սերմերի որակի ստուգման ուղղությամբ: Իրականացվելու են հացահատիկային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացման ծրագրեր:

Կարևոր է համարվում Միավորված ազգերի կազմակերպության, Գյուղատնտեսության և պարենի կազմակերպության (FAO), Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD), ինչպես նաև Գյուղատնտեսության հետազոտական միջազգային կենտրոնների (ICARDA, CIMIT, IGBRI և այլն) աջակցությամբ գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիայի ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, մասնավորապես՝ կենսատեխնոլոգիական (*in vitro*՝ «սրվակային») եղանակով սերմնաբուծության արդյունավետության մեծացումը:

Անհրաժեշտ է ՀՀ պետբյուջեից և այլ աղբյուրներից կատարվող հատկացումների օգտագործման արդյունավետ մեխանիզմների կիրառմամբ մեծացնել բույսերի առավել վտանգավոր և զանգվածային վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի ծավալները, մասնավորապես՝ բույսերի պաշտպանության միջոցառումների 2007—2009 թթ. վերը հիշատակված ծրագրի իրականացումը: Բուսասանիտարական առավել կայուն վիճակ ստեղծելու համար անհրաժեշտ է բույսերի պաշտպանության միջոցառումների կազմակերպում նաև ընդհանուր օգտագործման տարածքներում (անտառներ, զբոսայգիներ, արոտավայրեր): Կարևոր են բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի ներկրման, պահպանության ու վաճառքի իրավական կարգավորումը և տեսչական հսկողության ուժեղացումը: Նախատեսվում է բույսերի պաշտպանության համակարգված պայքարի ծավալում, կենսաբանական և բնապահպանական տեսակետից անվտանգ միջոցների կիրառման ընդլայնում: Կան-

խատեսվում է, որ մորթիսների դեմ արդյունավետ պայքարի միջոցով մինչև 2007 թ. վերջը, 2006 թ. համեմատությամբ, 100 %-ով իսպառ կվերացվի գյուղատնտեսական մշակաբույսերին հասցվող վնասը, իսկ այն տարածքներում, որտեղ պայքար է մղվում կրծողների դեմ, դրանց տարածվածությունը կկրճատվի առնվազն 80 %-ով: Նախատեսվում է խթանել բույսերի պաշտպանության` տարբեր կազմակերպական ձևերով գործող ծառայությունների ձևավորումը, ինչպես նաև մասնագիտական ու խորհրդատվական աջակցությունը դրանց կայացմանը:

Հանրապետությունում ներդրումային իրավիճակը բարելավելու և գյուղատնտեսական մթերքի արտահանումը խթանելու նպատակով հրատապ ենք համարում Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամակցության շրջանակներում բուսասանիտարական (ֆիտոսանիտարական) պահանջների կատարման ապահովումը, բուսասանիտարական վիճակի մշտազննման և տեսչական գործունեության բարելավման ուղղությամբ աշխատանքների կատարումը, կարանտինային փորձաքննության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի արդիականացումը և նորմատիվային հիմքերի ներդաշնակեցումը` ԱՀԿ-ի պահանջներին համապատասխան: ԱՀԿ-ին անդամակցության շրջանակներում ստանձնած պարտավորությունների և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան ընդունվել է «Բույսերի կարանտինի և պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Հայաստանի Հանրապետության ագրարային հատվածում մշակվող և իրականացվող քաղաքականությունն աջակցելու է կենսաբազմազանության պահպանությանը, ինչպես նաև լանդշաֆտների արդյունավետ կառավարմանն ու բարելավմանը: Այդ քաղաքականությունը հիմնվում է «Կենսաբազմազանության մասին», «Համաշխարհային մշակույթի և բնության ժառանգության ապահովման մասին», «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին», «Լանդշաֆտների մասին» համաձայնագրերի հիմնադրույթների վրա:

Բուսաբուծության զարգացման համատեքստում կարևոր է համարվում աջակցությունը գյուղատնտեսական մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանությանը: Դրա իրականացումը նախատեսում է մշակաբույսերի և դրանց վայրի նախնիների գենետիկ բանկի ստեղծում, բնական կերահանդակների բարելավում, արտավայրերի ջրարբիացում, տնտեսական արժեք ներկայացնող տեսակների պլանտացիաների և բուծարանների ստեղծում, անտառների վերականգնում, անտառաշինարարական այլ միջոցառումների իրականացում, բնական աղետների (երաշտ, խորշակներ, հեղեղներ, ողողումներ, հողերի աղակալում և այլն) առաջացման կանխատեսում, կանխարգելում և հետևանքների մեղմմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում, բնական ռեսուրսների հավասարակշռված օգտագործում:

Անասնաբուծության ճյուղի զարգացման գերակայություններն են.

— քարմ կաթի և կաթնամթերքի, թռչնի ու ոչխարի մսի և ձվի նկատմամբ հանրապետության ներքին շուկայի պահանջարկի ամբողջական, իսկ տավարի ու խոզի մսի

նկատմամբ՝ շուրջ 80 %-ով բավարարում, պանիրների և վերամշակված մսամթերքի արտահանման ծավալների ավելացում,

—անասնակերերի սեփական արտադրության հնարավորությունների լիարժեք օգտագործում՝ կերային մշակաբույսերի տարածքների ընդլայնման, արոտների արդյունավետ օգտագործման մեխանիզմների կիրառման միջոցով,

—անասնապահական առևտրային կազմակերպությունների ձևավորման խթանում խորհրդատվության ապահովման և նպատակային վարկավորման միջոցով,

—մթերատվության բարձրացում անասունների կերակրման և խնամքի բարելավման, տոհմային գործի զարգացման և անասնաբուժասանիտարական աշխատանքների կազմակերպման մեխանիզմների կատարելագործման միջոցով,

—թեթև արդյունաբերության ավանդական ճյուղերի (գորգագործություն, մահուղագործություն, կոշիկի և հագուստի արտադրություն) զարգացում և դրա հիմքի վրա բրդի ու կաշվի պահանջարկի ավելացում,

—շվեյցարական պանիրների արտադրության և արտահանման ծավալների ավելացում ալպյան արոտների բարելավման և նպատակային օգտագործման համակարգի ներդրման միջոցով,

—տոհմային գործի ու անասնաբուժական համակարգի բարելավում անասնագլխաքանակի հաշվառման բարելավման և համարակալման ու տեղեկատվական համակարգի ձևավորման հիմքի վրա, ինչպես նաև պետական ուղղակի աջակցության ծրագրերի իրականացում:

Անասնագլխաքանակի կայունացման տնտեսական հիմքը սեփական կերարտադրության իրական հնարավորությունների, ներկրվող կերերի սահմանային արդյունավետության և անասնապահական մթերքի տեղական արտադրության հարաբերական առավելությունների գնահատումն է: Ելնելով դրանից՝ համարում ենք, որ մոտակա ժամանակահատվածում անասնագլխաքանակի ավելացման միտումը կպահպանվի, թեև այն մինչև այժմ կատարվում է համեմատաբար ցածր մթերատվության պայմաններում, որի պատճառներն են կենդանիների ոչ լիարժեք պահումը և նրանց կենսաքանակային հնարավորությունները:

Գյուղացիական տնտեսությունները կավելացնեն խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների, այծերի և խոզերի գլխաքանակը, քանի որ, անգամ ցածր եկամտաբերության պարագայում, դրանք ապահովում են կայուն զբաղվածություն, դրամական հոսքերի սեզոնայնության մեղմացում, թարմ և վերամշակված անասնապահական մթերքի ներտնտեսային կարիքների բավարարում և բարձր իրացվելիություն ունեցող ակտիվների առկայություն: Գյուղացիական տնտեսություններում գլխաքանակի ավելացմանը կնպաստեն նաև կաթի հավաքման և իրացման կառույցները, որոնք ձևավորվում են գյուղական համայնքներում, սպանդանոցները, արոտավայրերի բարելավման ծրագրերը և դաշտային կերարտադրության զարգացումը:

Անասնապահական մթերքի արտադրության ուղղվածություն ունեցող առևտրային կազմակերպությունները և սկավելացնեն թռչունների, խոզերի և խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, քանի որ համեմատաբար խոշոր տնտեսություն-

ներն ունեն տոհմային ուղղվածություն՝ թարմ մթերքի իրացումից բացի, նաև վերա-
մշակման հնարավորություններ:

Հանրապետության պարենային ապահովության մակարդակի բարձրացմանը և
գյուղական աղքատության հաղթահարմանը կնպաստի մեղվաբուծության և ձկնա-
բուծության զարգացումը: Այդ նպատակով առավել կընդլայնվի խորհրդատվական և
տեխնիկական աջակցությունը մեղվաբույծներին, նրանց հասարակական կազմա-
կերպությունների մասնակցությամբ ոլորտի օրենսդրական կարգավորման, հիվան-
դությունների և վնասատուների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպման,
ինչպես նաև մեղրի և գուգակցող արտադրանքների (մեղրամոմ, մեղվի թույն և այլն)
արտահանման ակտիվացումը:

Կարևոր է համարվում նաև ձկնաբուծության ոլորտի ընդլայնումը. այս ուղղու-
թյամբ անհրաժեշտ է միջազգային կազմակերպությունների հետ աշխատանք տանել
ձկնաբուծական արտադրանքի վերամշակման կարողություններն ընդլայնելու և
արտաքին շուկայի չափորոշիչներով արտադրանքի արտահանմանն աջակցելու
համար:

Կարևոր է համարվում աջակցությունը անասնապահական ճյուղի նախընտրելի
մասնագիտացմանը համապատասխանող առևտրային կազմակերպությունների
ձևավորմանը՝ խորհրդատվության և նպատակային վարկավորման միջոցով:

Կանխատեսվող մակարդակի ապահովման ռազմավարությունը պետք է իրա-
կանացվի ստորև ներկայացվող ուղղություններով:

Ագրարային ոլորտում իրականացված տնտեսական վերափոխումներին հաջոր-
դող ժամանակահատվածում տոհմային գործի անտեսման և արհեստական սերմնա-
վորման ծավալների խիստ կրճատման հետևանքով հանրապետության պայմաննե-
րին հարմարեցված անասունների ցեղերի գենոֆոնդի պահպանությունը վտանգվել է,
տեղի է ունեցել հետադարձ տրամախաչում, և հատկապես խոշոր եղջերավոր անա-
սունների տոհմային հատկանիշները վատացել են 25—30 %-ով: Տոհմային գործի
զարգացման նպատակով նախատեսվում է երկարաժամկետ նպատակային ծրագրի
մշակում և իրականացում: Մասնավորապես՝ նախատեսվում են հանրապետության
պայմաններին հարմարեցված անասունների ցեղերի գենոֆոնդի, գյուղատնտեսա-
կան կենդանիների ցեղերի գենետիկական բազմազանության պահպանում և սելեկ-
ցիոն նպատակներով օգտագործում, արհեստական սերմնավորման ենթարկվող
անասնագլխաքանակի ավելացում և որպես հետևանք՝ սերնդատվության ցուցանիշի
և մատղաշի տոհմային հատկանիշների բարելավում, ինչպես նաև գյուղատնտեսա-
կան կենդանիների համարակալման և հաշվառման համար նախադրյալների ստեղ-
ծում և համապատասխան ծրագրի իրականացում: Կարևոր է համարվում գյուղա-
տնտեսական կենդանիների գենոֆոնդի պահպանման և կատարելագործման, ինչ-
պես նաև նոր ցեղերի ստեղծման աշխատանքների իրականացման համար բազմա-
կողմանի աջակցությունը գիտահետազոտական համակարգի ու լիցենզավորված
տոհմային անասնաբուծությամբ զբաղվող տնտեսություններին, ինչպես նաև գո-
տիական առանձնահատկությունների հաշվառմամբ անասնապահական տնտեսու-

յունների օպտիմալ չափերի սահմանումը և աջակցությունը այդպիսի տնտեսությունների ձևավորմանը՝ խորհրդատվության ու նպատակային վարկավորման միջոցով:

Դաշտային կերարտադրության ցանքատարածությունները 1990 թ. համեմատությամբ 4,4 անգամ կրճատվել են, անասունների կերակրումը նկատելիորեն շեղված է սահմանված նորմերից, հատկապես կրճատվել են հյութալի և համակցված կերերի օգտագործման ծավալները, չափազանց սահմանափակ է արոտավայրերի հնարավորությունների և կերախոհանոցների օգտագործումը, այս ամենի հետևանքով խիստ վատացել են անասունների կերակրման և պահման պայմանները: Դրա պատճառով տնտեսական վերափոխումներին նախորդող ժամանակահատվածի համեմատ նվազել են անասնազիլաքանակը և անասունների մթերատվությունը: Կերարտադրության հնարավորությունների օգտագործման և զարգացման, անասունների կերակրման և պահման պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է՝ դաշտային կերարտադրության զարգացման և կառուցվածքի բարելավման հաշվին սեփական արտադրության կերերով ապահովվածության մակարդակի բարձրացում, արոտավայրերի երկարաժամկետ վարձակալության և մասնավորեցման խրախուսում, հեռագնա արտոնների արդյունավետ օգտագործմանը նպաստող մեխանիզմների ներդրում, արոտավայրերի վարձակալների և սեփականատերերի կողմից արտոնների բարելավմանն ուղղված միջոցառումներին տեխնիկական աջակցության և խորհրդատվության ապահովում, ալպյան արտոնների արդյունավետ օգտագործման մեխանիզմների կիրառում, բազմամյա կերային մշակաբույսերի ցանքատարածքների ընդլայնման միջոցով դաշտային կերարտադրության կառուցվածքի բարելավում, աջակցում հատիկային և համակցված կերերի, ինչպես նաև սպիտակուցային և վիտամինային հավելումների արտադրության գծով փոքր և միջին ձեռնարկատիրությանը, լեռնային արոտավայրերի աստիճանական կազմալուծման աստիճանի գնահատում և դրանց բարելավման ուղղությամբ միջոցառումների մշակում:

Հրատապ խնդիրներ են անասնաբուժական համակարգի կատարելագործումը և անասնաբուժական միջոցառումների արդյունավետության մեծացումը: Մասնավորապես՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելումը, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից ազգաբնակչության պաշտպանությունը և հանրապետությունում հակահամաճարակային կայուն իրավիճակի ստեղծումը կատարվելու են հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ 2007—2009 թթ. ծրագրերի իրականացման շրջանակներում: Այդ ծրագրերով կապահովվի առավել վտանգավոր հետևյալ հիվանդությունների՝ սիբիրախտի, բրուցելլոզի, տուբերկուլոզի, դաբադի, խշխշան պալարի և խոզերի ժանտախտի դեմ համատարած պատվաստում: Անհրաժեշտ է այդ ցանկում ներառել նաև կատաղություն և թռչունների ժանտախտ հիվանդությունները:

Անասնաբուժության բնագավառի օրենսդրական հիմքերի հետևողական կարգավորումը, սննդի անվտանգության պահանջների խորացումը, անասնաբուժական մթերքի սանիտարական փորձաքննության համակարգի բարելավումը պահանջում

են այդ գործառնություն իրականացնող սուբյեկտների հավատարմագրում, լաբորատորիաների տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացում և կադրային ապահովում, անասնաբուժության զարգացման և հակահամաճարակային միջոցառումների նպատակային ծրագրի իրականացում:

Կարևոր են նաև նպատակային վարկավորման և դրամաշնորհային ծրագրերի միջոցով անասնաբուժական դեղամիջոցների տեղական արտադրության խթանումը, դրանց փորձաքննության, ստանդարտների և իրացման համակարգի կանոնակարգումը, ինչպես նաև ԱՀԿ-ին և Միջազգային անասնաճարակային բյուրոյին անդամակցության շրջանակներում նորմատիվ փաստաթղթերի նույնականացումը, տեսչական հսկողության ուժեղացումը:

Հրատապ խնդիր է շրջաններում պետական անասնաբուժական ծառայությունների վերակազմավորման, դրանց գույքի ապապետականացման և միջազգային կազմակերպությունների տեխնիկական աջակցության միջոցով մասնավոր անասնաբուժական ծառայության ձևավորման խթանումը, գյուղական համայնքներում անասնաբույժների հաստատության ամրապնդումը նյութատեխնիկական բազայի համալրման, ՀՀ պետական բյուջեից հատկացումների ավելացման և վճարովի անասնաբուժական ծառայությունների ընդլայնման միջոցով:

3. ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՁԱՐԳԱՅՄԱՆ ՆԵՐՂԱՇՆԱԿԵՑՈՒՄ

Գյուղական աղքատության աստիճանական հաղթահարումը, գյուղական բնակչության եկամուտների ավելացումը, գյուղական բնակավայրերի ամրապնդումը, հատկապես՝ արևելյան սահմանի երկայնքով, ունի ռազմավարական կարևոր նշանակություն:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և անկախ ուսումնասիրությունների տվյալներով՝ գյուղական աղքատությունը հաղթահարվում է ավելի դանդաղ տեմպերով, քան քաղաքայինը: Գյուղական շրջաններում գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվածների թվի ավելացումը չի գուգորդվել համախառն արտադրանքի համաչափ աճմամբ: Համեմատության կարգով նշենք, որ վերջին երկու տասնամյակներում այս ոլորտում զբաղվածների թիվը եռապատկվել է, իսկ համախառն արտադրանքը՝ նվազել: Այս փաստը, առաջին հերթին, բացատրվում է հողի, անասնազախաքանակի, գյուղտեխնիկայի և այլ արտադրական միջոցների մասնավորեցումից հետո տեղի ունեցած արտադրողականության անկմամբ, գյուղատնտեսական գոտիների մասնագիտացման էական փոփոխմամբ, գնողական պահանջարկի նվազմամբ և արտաքին ավանդական շուկաների կորստի հետևանքով գյուղմթերքի իրացման հիմնախնդրի առկայությամբ, փոքր չափերի բնամթերային տնտեսությունների ձևավորմամբ և մի շարք այլ գործոններով:

Համաձայն ՀՀ ազգային անվտանգության հիմնադրույթների՝ գյուղատնտեսության ենթակառուցվածքների գործունեության բարելավումը պետք է առաջին հերթին իրականացվի սահմանամերձ գոտում, հատկապես՝ կապի, տրանսպորտի, ճանա-

պարհաշինության բնագավառներում, ինչն անհրաժեշտ է կառավարման, գորամիավորումների, սպառազինության, զինամթերքի տեղափոխման, զինտեխնիկայի ազատ տեղաշարժի և Զինված ուժերի մարտունակությունը պայմանավորող այլ նպատակների, ինչպես նաև բնակչության տարահանման, մատակարարումների, նյութական արժեքների փոխադրման համար և այլն:

Գյուղական աղքատության հաղթահարման և գյուղական բնակավայրերի ամրապնդման քաղաքականության ուղղությունների *հիմնական քաղաքիչներն են՝*

— գյուղական աղքատության հաղթահարման նպատակով վարչատարածքային միավորների (մարզեր, համայնքներ) համար սոցիալ-տնտեսական նպատակային ծրագրերի մշակում և իրականացում,

— սոցիալական և արտադրական համապետական նշանակության ենթակառուցվածքների գործունեության բարելավում, դրանցից օգտվելու մատչելիության աստիճանի բարձրացում, ինչպես նաև շուկայական տնտեսությանը բնորոշ նոր ենթակառուցվածքների ձևավորում և զարգացում,

— պետական աջակցության ընդլայնում դոտացիաների, սուբսիդիաների, սուբվենցիաների տրամադրման միջոցով, սահմանամերձ և վերաբնակեցված տարածաշրջանների նկատմամբ տարբերակված մոտեցմամբ՝ առավել վատթար վիճակում գտնվող համայնքների բնակչության կարիքներն ապահովելու առաջնահերթության սկզբունքով,

— պետական անհրաժեշտ աջակցության ցուցաբերում միջհամայնքային միավորումների ձևավորման խթանման նպատակով, այդ միավորումների խորհուրդների գործունեության բարելավում,

— նոր աշխատատեղերի ստեղծում ոչ գյուղատնտեսական արտադրության կազմակերպման միջոցով, ներդրումային գրավիչ միջավայրի ձևավորում,

— ֆինանսավորման բոլոր աղբյուրներից միջոցների ներգրավում ՀՀ ագրարյունաբերական համալիրի բոլոր ճյուղերի (բուսաբուծություն, անասնաբուծություն, նյութատեխնիկական մատակարարումներ ու սպասարկումներ և ագրովերամշակում) համաչափ զարգացումն ապահովելու նպատակով,

— միջհամայնքային և միջմարզային տնտեսական ինտեգրման գործընթացի խթանում,

— փոքր և միջին ձեռնարկատիրության ընդլայնում՝ ծայրամասային (հեռավոր), բարձրադիր և սահմանամերձ բնակավայրերի առաջանցիկ զարգացման սկզբունքի կիրառմամբ,

— գյուղատնտեսության ոլորտի վարկավորման մատչելիության աստիճանի բարձրացում արդյունավետ մեխանիզմների ներդրման միջոցով,

— նպաստում գյուղատնտեսական մթերքի ինքնարժեքի նվազմանը՝ համապատասխան տնտեսական լծակների կիրառմամբ, այն հանգամանքի հաշվառմամբ, որ վերամշակված արտադրատեսակների վրա կատարված ծախսերի կառուցվածքում հումքի արժեքը կազմում է 60—70 %,

— աջակցություն գյուղմթերք արտադրողների ու վերամշակողների և վարկավորող կառույցների միջև պայմանագրային հարաբերությունների կատարելագործ-

մանը՝ ռիսկերի բազմազանեցման նկատառումով, ինչպես նաև երկարաժամկետ ու մատչելի վարկերի տրամադրում,

— օրենսդրության կատարելագործման միջոցով նպաստում կոուպերատիվներում և կամավորության հիմունքներով ստեղծվող այլ միավորումներում գյուղմթերք արտադրողների, վերամշակողների, իրացնողների միավորմանը:

4. ԵՐԿՐԻ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Յուրաքանչյուր երկիր ձգտում է բնակչության պարենամթերքի պահանջարկը հնարավորինս բավարարել տեղական արտադրության հաշվին, քանի որ պետության պարենային անվտանգությունը տվյալ երկրի տնտեսության այնպիսի վիճակ է, որը երաշխավորում է պարենային անկախությունը և սպառողների համար ապահովում առողջապահական նորմերին համապատասխանող պարենամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը:

Պարենային անվտանգության անքակտելի մաս է կազմում երկրի պարենային անկախությունը, այսինքն՝ կենսապես կարևորագույն պարենամթերքի ներմուծման անհնարինության կամ անբավարարության դեպքում և պարենային ճգնաժամի կանխարգելման նպատակով պարենամթերքի տեղական արտադրության անհրաժեշտ մակարդակի ապահովումը:

Պարենային ապահովության հիմնախնդիրները միջգերատեսչական բնույթի են և պահանջում են բոլոր շահագրգիռ կողմերի համատեղ աշխատանք: Այդ աշխատանքները, ներառյալ՝ սննդամթերքի անվտանգության բնագավառի խնդիրների լուծումը, պետք է իրականացվեն ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կատարվող համակարգմամբ:

ՀՀ ագրոարդյունաբերական համակարգի զարգացման իրատեսական գնահատումը վկայում է, որ գյուղատնտեսության ոլորտում առկա է ինտենսիվ և էքստենսիվ զարգացման զգալի չօգտագործված ներուժ: Ներկայումս տեղական արտադրության հաշվին բավարարվում է պարենային ազգային հաշվեկշիռներում ներառված պարենամթերքի շուրջ 60 %-ը՝ հաշվարկված էներգետիկ արժեքով: Երկրի բնատնտեսական ներուժը միջնաժամկետ հեռանկարում հնարավորություն է ընձեռում ավելացնելու պարենամթերքով ինքնաբավարարության մակարդակը ևս 10-15 %-ով: Ընդ որում, պարենային զամբյուղում ներառված մի շարք պարենամթերքի գծով (չաքար, հացամթերք, բուսական յուղ) կախվածությունը ներմուծումից կշարունակվի նաև ապագայում, քանի որ միայն տեղական արտադրության հաշվին ներքին շուկայում պահանջարկի բավարարումը ոչ միայն չափազանց դժվար է, այլև՝ տնտեսապես անարդյունավետ:

Հայաստանի ագրոարդյունաբերությունը կարող է մասնագիտանալ թարմ մրգի, խաղողի, բանջարեղենի, կարտոֆիլի ու դրանց վերամշակումից ստացվող բազմաթիվ արտադրատեսակների (կոնյակ, գինիներ, պահածոյացված արտադրանք, հյութեր, խյուսեր, ծխախոտ, հանքային ջրեր և այլն), ինչպես նաև մսամթերքի և կաթնամթերքի:

քի լայն տեսականու արտահանման ուղղությամբ (ապխտած միս, երշիկեղեն, դեղին պանիրներ, պաղպաղակ և այլն): Հեռանկարային է նաև օրգանական (բնապահպանական առումով մաքուր) գյուղմթերքի արտադրության կազմակերպումը, հատկապես՝ ալյսյան և ենթաալյսյան գոտիներում:

Պարենային անվտանգության հիմնախնդրի լուծման համար առաջին հերթին անհրաժեշտ է ապահովել երկրի մակրոտնտեսական կայունությունը և պետական աջակցության ընդլայնումը, մասնավորապես՝ սուբսիդավորման, պետության երաշխիքով կամ վարկի տոկոսադրույքի մասնակի փոխհատուցման կամ հովանավորության այլ եղանակներով խթանել գյուղատնտեսական արտադրանքի ծավալների աճն ու դրանով բարելավել պարենամթերքի արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշիռը և երկրի պարենային անկախությունը հասցնել պատշաճ մակարդակի:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ առաջիկա տասնամյակի կտրվածքով Հայաստանի ագրոպարենային ոլորտի զարգացման ռազմավարությունը միանգամայն իրատեսական է: Ավելին. ըստ ենթաճյուղերի և գերակայությունների մշակված են միջնաժամկետ ծրագրեր, որոնք կնպաստեն ռազմավարության հաջորդական իրականացմանը: Այդուհանդերձ, խիստ կարևորվում է ոլորտի օպերատիվ կառավարման կատարելագործումը՝ տարածաշրջանային ու միջազգային զարգացումներին համահունչ և ազգային անվտանգության շահերին համապատասխան: Այդ գործընթացը դրսևորվում է համակարգի իրավական դաշտի բարելավմանը, ծրագրային ապահովմանը, գյուղական տարածքների զարգացմանը և գյուղատնտեսության մրցունակության մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված միջոցառումների ձևով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:
2. «ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության վերանայված տարբերակը հաստատելու մասին» (ՀՀ Կառավարության հմ. 1826-Ն որոշումը, 30.11.06):
3. «Գյուղատնտեսական արտադրանքների իրացումից ավելացված արժեքի հարկի վճարման կանոնակարգման հայեցակարգի մասին» (ՀՀ Կառավարության հմ. 32 արձանագրային որոշումը, 18.08.06):
4. «Գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների և մեխանիզմների հայեցակարգի մասին» (ՀՀ Կառավարության հմ. 2310-Ն որոշումը, 27.10.2005):
5. «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-193-Ն, 15.12.06):
6. «ՀՀ պարենային ապահովության քաղաքականության մասին» (ՀՀ Կառավարության հմ. 3 արձանագրային որոշումը, 25.01.2005):
7. *Ս. Ս. Ալեքիսյան*, Հայաստանի Հանրապետության ագրարային շուկայի ձևավորման հիմնախնդիրները անցումային տնտեսության պայմաններում: Ե., 2002:
8. «ՀՀ ագրոպարենային համակարգի հիմնախնդիրները և զարգացման ռազմավարությունը», ՀՀ գյուղատնտեսության նախարարություն: Ե., 2003:

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ СТРАТЕГИИ
АГРАРНОГО СЕКТОРА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
В АСПЕКТЕ СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

*С. С. АВETИСЯН, первый заместитель Министра сельского хозяйства РА,
член-эксперт Межведомственной комиссии,
доктор экономических наук, профессор*

РЕЗЮМЕ

Важной сферой экономики РА является аграрная система. В этой сфере уже осуществляется ряд программ, нацеленных на обеспечение стабильного экономического роста и продовольственной безопасности, таких как «Программа мелиорации и ирригации природных пастбищ», «Программа мероприятий по защите растений», «Программа мероприятий по лабораторному диагностированию заболеваний животных и экспертизе сырья и продуктов животного происхождения» и т. д. «Стратегия национальной безопасности РА» дает возможность переосмыслить эти программы, систематизировать и координировать их осуществление, разработать новые, целенаправленные программы. В этом аспекте приоритетными направлениями в аграрной сфере являются: экономическое развитие сельских территорий, в особенности в горных и приграничных зонах, стимулирование малого и среднего бизнеса на селе и создание здоровой конкурентной атмосферы, развитие обслуживающей и социальной инфраструктур в сельском хозяйстве, дальнейшее стимулирование развития растениеводства, животноводства, осуществление соответствующих законодательных реформ.

THE FUNDAMENTAL ISSUES OF THE AGRARIAN SECTOR'S
STRATEGY OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE ASPECT
OF THE NATIONAL SECURITY STRATEGY

*S. S. AVETISYAN, First Deputy Minister of Agriculture of the RA,
Member Expert of the Interagency Commission,
Doctor of Economic Sciences, Professor*

SUMMARY

The agrarian system is an important sphere in the economy of the RA. In this very sphere a number of programs, oriented towards the provision of sustainable economic growth and food security, such as the «Natural Pastures Melioration and Irrigation Program», «Plant Preservation Actions Program», «Animal Disease Laboratory Diagnosis and Raw Material and Animal Products Examination Program» and etc., are already put into practice. The «National Security Strategy of the RA» gives an opportunity to re-grasp the meaning of these programs in the national scale, to systematize and coordinate their implementation, to elaborate new purposeful programs. Economic development in rural territories, particularly in mountainous and border areas, promotion of small and medium entrepreneurship in the village and creation of a healthy competitive atmosphere; development of service and social infrastructures in the agriculture; further stimulation of crop and livestock sectors; implementation of corresponding legislative reforms are the priority directions in the agricultural sphere in this aspect.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԳՐՈՒՅԹՆԵՐԸ

*Ա. Ա. ԳԱԼՍՅԱՆ, ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ,
Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ,
տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ*



Անցած տարիների ընթացքում Հայաստանի էներգետիկական անցավ բարեփոխումների դժվարին ճանապարհ: Ձեռք բերված փորձի հիման վրա ձևավորվեց երկրի էներգետիկական քաղաքականությունը՝ ապահովելով բավարար մակարդակի էներգետիկ անվտանգություն: Այսօր կարող ենք հստակորեն ասել, որ մեզ հաջողվեց պահպանել մի էներգահամակարգ, որն ամբողջովին բավարարում է էլեկտրաէներգետիկայի ներքին շուկայի պահանջարկը, պահպանում է էլեկտրաէներգիայի արտահանման որոշակի ներուժ, իսկ շուկայական բարեփոխումների իրականացված միջոցառում-

ներով ԱՊՀ երկրներում դասվում է լավագույնների շարքը:

Այսօրվա դրությամբ էլեկտրաէներգիայի բաշխումն ու վաճառքն իրականացվում են մասնավոր ընկերության կողմից, իսկ արտադրությունն իրականացվում է 5 ինքնուրույն խոշոր արտադրողների, մեկ հողմաէլեկտրակայանի և բազմաթիվ մասնավոր փոքր ՀԷԿ-երի կողմից:

2006 թ. էլեկտրաէներգիայի արտադրությունը կազմել է 5,94 մլրդ կՎտ·ժ, որի 30,7 %-ը արտադրել են ՀԷԿ-երը, 24,8 %-ը՝ ՋԷԿ-երը, 44,4 %-ը՝ ՀԱԷԿ-ը¹:

Իրանի Իսլամական Հանրապետության հետ Հայաստանի էներգահամակարգը աշխատում է զուգահեռ բանելակարգով՝ իրականացնելով էլեկտրաէներգիայի փոխշահավետ փոխհոսք:

Գազամատակարարման համակարգով 2006 թ. Ռուսաստանի Գազնությունից Հայաստան ներկրվեց 1715,6 մլն մ³ բնական գազ: Տարվա վերջում բաժանորդների թիվը կազմեց 442 688, որից բնակչությունը՝ 438 858: Կարող ենք փաստել, որ արդեն մոտեցել ենք անցած դարի ութսունական թվականների վերջերին ունեցած ցուցանիշներին²:

Էլեկտրակայանների հիմնական միջոցների վերագնահատման ընթացքում պարզվեց, որ.

—տեղակայված հզորությունների 38 %-ը շահագործվում է ավելի քան 30 տարի,

—ՋԷԿ-երի հիմնական սարքավորումների աշխատաժամերը հասել են սահմանային 200 հազար ժամի, իսկ դրանց տեխնիկատնտեսական և բնապահպա-

¹ Տես «Ազգային վիճակագրական ծառայության հաշվետվություն»: Ե., 2007:

² Տես «Էներգետիկայի նախարարության տարեկան հաշվետվություն», 2006:

նական ցուցանիշները չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին,
—ՀԷԿ-երում տեղակայված սարքավորումների 70 %-ը շահագործվում է ավելի քան 30 տարի, իսկ 50 % -ը՝ ավելի քան 40 տարի:

Հետևաբար, հրատապ են դարձել արտադրող հզորությունների սերնդափոխության և արդիականացման խնդիրները:

Սարքավորումների սերնդափոխության և արդիականացման անհրաժեշտություն կա էլեկտրաէներգիայի ու բնական գազի հաղորդման և բաշխման ցանցերում, ինչպես նաև բնական գազի ստորգետնյա պահեստարանում: Այս ոլորտներում կատարվող ներդրումներն առավելագույնս կնպաստեն տեխնիկական կորուստների շեշտակի նվազմանը: Ներկայումս փլուզված է հանրապետության ջերմամատակարարման համակարգի գերակշռող մասը: Իրենց աշխատունակությունը պահպանել են միայն Երևանի և Հրազդանի ՋԷԿ-երի և Գյումրիի կաթսայատան ջերմամատակարարման համակարգերը, այն էլ՝ ոչ լրիվ ծավալով:

ՀՀ էներգետիկայի բնագավառում առկա բարդություններից կարելի է նշել նաև այն հանգամանքները, որ մեր երկրում չկան արդյունաբերական նշանակություն ունեցող տեղական հանածո վառելիքային պաշարներ, և որ Հայաստանում էներգետիկ հզորության մի զգալի մասը կախված է մեկ երկրից կատարվող մատակարարումներից ու տրանսպորտային ներկա համակարգի սահմանափակ հնարավորություններից:

Կառավարությունն արդեն իսկ որոշակի քայլեր է ձեռնարկել այս իրավիճակը բարելավելու ուղղությամբ.

—վերակազմավորման են ենթարկվել էլեկտրաէներգիայի և գազի սեկտորները՝ մասնավորեցվել են գազամատակարարման համակարգը և բաշխիչ էլեկտրացանցը, ՀԷԿ-երի Սևան-Հրազդանյան կասկադը, բոլոր փոքր ՀԷԿ-երը, Հրազդանի ՋԷԿ-ը (գույք՝ պարտքի դիմաց եղանակով հանձնվել է Ռուսաստանի Դաշնությանը),

—արտադրող կայանների ռեժիմների օպտիմալացման շնորհիվ հաջողվեց ապահովել համակարգի առավելագույնս արդյունավետ աշխատանքը և պահպանել էլեկտրաէներգիայի արտադրության հնարավոր նվազագույն միջինացված սակագինը,

—Հայաստանի Հանրապետության էներգահամակարգի պետական ընկերությունների ֆինանսական հոսքերի ընթացիկ հաշվեկշիռն սկսած 2003 թվականից եղել է դրական,

—առավելագույնի է հասել բաժանորդներից վարձավճարների գանձման մակարդակը՝ սպառողներն սպառած էլեկտրաէներգիայի և բնական գազի դիմաց վճարումները կատարում են ամբողջությամբ,

—ստեղծվել են էլեկտրաէներգետիկական շուկայի սպասարկման կառույցներ՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Հաշվարկային կենտրոն» ընկերությունները, ներդրվել է էլեկտրաէներգիայի մեծածախ առուվաճառքի արտադրող-բաշխող ուղիղ պայմանագրերի համակարգը, ինչը նպաստում է շուկայի հետագա ազատականացմանը,

—ավարտվել են Քանաքեռ ՀԷԿ-ի ագրեգատների արդիականացման աշխատանքները, որոնք կատարվում էին գերմանական ԿՖՎ բանկի տրամադրած վարկային միջոցներով,

—ավարտվել են 220 կՎ լարման հաղորդող ցանցի ենթակայանների մեծ մասի արդիականացման աշխատանքները՝ ԿՖՎ և Համաշխարհային բանկի տրամադրած վարկային միջոցներով,

—կառուցվել է Իրան—Հայաստան էլեկտրահաղորդման 220 կՎ լարման երկրորդ զիծը,

—ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության տեխնիկական աջակցությամբ ներդրվել է էլեկտրատեղակայանի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգ,

—Եվրամիության «ԻՆՕԳԵՅԹ» ծրագրի շրջանակներում տրամադրված միջոցներով կառուցվել է Կողբի գազաչափիչ հանգույցը, և որոշ սարքավորումների արդիականացման աշխատանքներ են կատարվել Աբովյանի ստորգետնյա գազապահեստարանում,

—Եվրամիության «ՏԱՍԻՍ» ծրագրով տրամադրված միջոցներով 2005 թ. փոխարինվել են Որոտանի ՀԷԿ-երի համակարգի, Տաթևի ՀԷԿ-ի հիդրոագրեգատների արագության կարգավորիչները,

—դոնորների տեխնիկական և ֆինանսական աջակցությամբ իրականացվել են ՀԱԷԿ-ի անվտանգության աստիճանի բարձրացմանն ուղղված շուրջ 90 մլն ԱՄՆ-ի դոլար արժողությամբ միջոցառումներ և հետագայում շարունակվելու է նման միջոցառումների իրականացումը,

—Հայաստանի և Ճապոնիայի կառավարությունների միջև 2005 թ. կնքված վարկային պայմանագրի համաձայն Երևանի ՋԷԿ-ի տարածքում սկսվել են համակցված փուլաշրջանով 208 ՄՎտ հզորությամբ էներգաբլոկի կառուցման աշխատանքները,

—ավարտվել է Իրան—Հայաստան գազամուղի առաջին փուլի Մեղրի—Քաջարան հատվածի շինարարությունը,

—Իրանի Իսլամական Հանրապետության տրամադրած դրամաշնորհի հաշվին Պուշկինի լեռնանցքում կառուցվել է 2,6 ՄՎտ հզորությամբ առաջին հողմաէլեկտրակայանը,

—վերջին հինգ տարիների ընթացքում կրկնապատկվել է մասնավոր փոքր ՀԷԿ-երի արտադրանքը, որոնց գումարային հզորությունը ներկայումս կազմում է շուրջ 58 ՄՎտ,

—մեկնարկել են «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» և գերմանական ԿՖՎ բանկի դրամաշնորհի հաշվին փոքր ՀԷԿ-երի վերականգնման նպատակով իրականացվող ծրագրով նախատեսված աշխատանքները,

—որոշակի զարգացում են ստացել հանրապետության ջերմամատակարարման համակարգերի վերականգնմանն ուղղված օրենսդրական և նորմատիվ-իրավական դաշտի մշակման աշխատանքները,

—Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ Ռուսաստանի Գաշնության ԳԱԶՊԲՈՄ ընկերությանն է վաճառվել Հրազդանի 5-րդ անավարտ էներգաբլոկի գույքը՝ այն գազատուրբինային հավելումով լրակազմավորելու և շինարարական ու հավաքակցման աշխատանքներն ավարտելու պարտավորությամբ:

1990-ական թվականների կեսից ի վեր այս բարեփոխումներից յուրաքանչյուրը նպաստել է Հայաստանում նշանակալի տնտեսական զարգացմանը:

2005 թ. հունիսի 23-ին ՀՀ Կառավարությունը հավանություն տվեց «Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարությունը» փաստաթղթին, որն ուղղված է հետևյալ հիմնարար խնդիրների լուծմանը.

—ապահովել ցածր գներով հուսալի էներգամատակարարում՝ բոլոր սպառողների կենսական կարիքները բավարարելու համար, միևնույն ժամանակ խթանելով երկրում էներգախնայողությունը,

—խուսափել էներգիայի ներկրման այնպիսի եղանակներից, որոնց պարագայում Հայաստանի անվտանգությունն ու տնտեսությունը կարող են ենթարկվել Հայաստանի Հանրապետության կողմից անվերահսկելի իրադարձությունների ու քաղաքականության բացասական ազդեցությանը,

—ապահովել ՀԱԷԿ-ի անվտանգ շահագործումը մինչև 2016 թ. ներառյալ կամ մինչև այն պահը, երբ հնարավոր կլինի այն փոխարինել էներգիայի այլ աղբյուրներով և շահագործումից հանել առանց տնտեսական, սոցիալական, բնապահպանական և էներգետիկ անվտանգության տեսանկյունից անընդունելի բնույթի ազդեցությունների,

—ապահովել բնապահպանորեն կենսունակ էներգամատակարարում՝ հիմնված կայուն զարգացման սկզբունքների վրա և համահունչ Հայաստանի Հանրապետության միջազգային բնապահպանական պարտավորություններին,

—կառուցել ֆինանսապես կենսակայուն մի էներգահամակարգ, որը կնպաստի էներգիա մատակարարող բոլոր կառույցների տնտեսապես արդյունավետ գործունեության խրախուսմանը և կարող է հետաքրքրություն առաջացնել մասնավոր կապիտալի ու ներդրողների շրջանում,

—կառուցել արտահանման կողմնորոշում ունեցող և ավելացված արժեք ստեղծող էլեկտրաէներգետիկական համակարգ:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն» և «Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարություն» փաստաթղթերով՝ մենք Հայաստանի էներգետիկ անվտանգության և անկախության անհրաժեշտ մակարդակի ապահովման խնդրում կարևորում ենք էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարության հետևյալ ուղղությունները.

—վերականգնվող էներգառեսուրսների օգտագործում և էներգախնայողություն,

—ատոմային էներգետիկա,

—Էներգառեսուրսների մատակարարման բազմազանացում (տարատեսականացում) և տարածաշրջանային ինտեգրում,

—սոցիալական քաղաքականության, ֆինանսական կայունության և տնտեսական արդյունավետության ապահովում:

Ղեկավարվելով էներգետիկ անվտանգության ապահովման միջազգայնորեն ընդունված սկզբունքներով՝ մենք համարում ենք, որ էլեկտրաէներգիայի արտադրության հնարավոր կառուցվածքը Հայաստանի համար պետք է լինի հետևյալը.

—առաջնահերթություն տալ և մոտակա 20 տարիների ընթացքում առավելագույնս յուրացնել էլեկտրաէներգիայի արտադրության սեփական վերականգնվող էներգետիկ՝ հիդրո-, հողմային, երկրաջերմային և արևային, աղբյուրների ներուժը, միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ էներգիայի նշված աղբյուրների հզորությունները հիմնականում կրում են սեզոնային բնույթ,

—Էլեկտրաէներգիայի մնացած մասի արտադրությունն իրականացնել ԱԷԿ-ի նոր էներգաբլոկի և ջերմային, այդ թվում՝ համակցված փուլաշրջանով աշխատող բլոկներով, էլեկտրակայանների միջոցով:

Հայաստանի համար էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքի նշված համամասնությունը միակն է:

«ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունից» բխող³ և 2006 թ. մշակված «Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի նվազագույն ծախսերով զարգացման ծրագիրը» պատասխանում է անհրաժեշտ արտադրող հզորությունների և դրանց թողարկման ժամկետների որոշման հետ կապված հարցերին՝ որպես ելակետ ընդունելով տնտեսության կողմից էլեկտրաէներգիայի աճող պահանջարկը, երկրի էներգետիկ անկախության և անվտանգության մակարդակը, տարածաշրջանային համագործակցության խնդրում էներգահամակարգի դերը և սոցիալական բնույթի մի շարք խնդիրներ:

Գաղափարեցնելով ՀԱԷԿ-ի շահագործումը՝ Հայաստանը կկորցնի իր էներգամատակարարման բազմազանության կարևորագույն տարրերից մեկը և որպես հետևանք՝ էներգետիկ անվտանգության անհրաժեշտ մակարդակը:

Նոր ատոմային էներգաբլոկի կառուցման օգտին են խոսում միջուկային վառելիքի և բնական գազի գների աճման միտումների կանխատեսումները՝ արված մինչև 2050 թ. կտրվածքով. բնական գազի գնի անկասելի աճման պարագայում, որը պայմանավորված կլինի բնական գազի պաշարների նվազմամբ և արդյունաբերող երկրների թվի կրճատմամբ, միջուկային վառելիքի գինը կարող է դիտվել որպես համեմատաբար կայուն⁴:

Հիմնվելով գազի և միջուկային վառելիքի գների կատարված վերլուծության, «Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի նվազագույն ծախսերով զարգացման 2006 թ. ծրագրի» եզրակացությունների, ինչպես նաև ռազմավարա-

³ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:

⁴ Տես «ԱԷՄԳ—ՏԷԿԴՕԿ—1404», 2004 թ. սեպտեմբեր:

կան ու տնտեսական քննարկումների արդյունքների վրա՝ մենք առաջարկում ենք.

—ՀԱԷԿ-ը շահագործումից հանել նոր ատոմային էներգաբլոկի կառուցումից անմիջապես հետո,

—կատարել ՀԱԷԿ-ի տարածքի համապարփակ անվտանգության և շրջակա միջավայրի գնահատում՝ շահագործումից դուրսբերմանն ու նոր ատոմակայանի կառուցման պահանջներին տարածքի համապատասխանությունը որոշելու համար,

—մշակել շահագործումից դուրսբերման համակողմանի պլան, որը պետք է պատրաստ լինի ՀԱԷԿ-ի շահագործումից դուրսբերման գործընթացի մեկնարկումից 5 տարի առաջ,

—որոշել շահագործումից ՀԱԷԿ-ի դուրսբերման գործընթացի ֆինանսավորման աղբյուրները, գործարկել շահագործումից դուրսբերման հիմնադրամ, ընտրել հիմնադրամի կառավարիչ,

—լիովին ֆինանսավորել ՀԱԷԿ-ի անվտանգության աստիճանի բարձրացմանը միտված բարեփոխումները և ապահովել անհրաժեշտ ներդրումները՝ մինչև շահագործման մեջ գտնվելու վերջին օրը ներառյալ՝ այն անվտանգ շահագործելու համար,

—մշակել գործողությունների պլան՝ ուղղված մինչև 1000 ՄՎտ միավոր հզորությամբ նոր ատոմային էներգաբլոկների ֆինանսավորման սխեմայի և կառուցման հետ կապված խնդիրների լուծմանը՝ ներառյալ կայանի չափերի և հետագայում շահագործումից դուրսբերման հետ կապված հարցերի լուծումը:

Նշված եզրահանգումներն առավել հստակորեն են ձևակերպում Հայաստանում ատոմային էներգետիկայի զարգացման ռազմավարական հիմնախնդիրները:

Հայաստանի էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարության կարևորագույն մասն են էներգառեսուրսների մատակարարման բազմազանեցման, տարածաշրջանային ինտեգրման և էլեկտրաէներգիայի արտահանման հնարավորությունների վերլուծությունը և գնահատումը:

Էներգառեսուրսների մատակարարման բազմազանեցման և տարածաշրջանային համագործակցության ուղղությամբ առաջարկվում է.

1. Իրան—Հայաստան գազատարի երկրորդ հերթի կառուցում, ինչով Հայաստանի համար կապահովվի անհրաժեշտ ծրագրված քանակություններով բնական գազի ներմուծում,

2. ստորգետնյա գազապահեստարանների ընդլայնում և արդիականացում,

3. սահմանային Արաքս գետի հիդրոներուժի յուրացման նպատակով հիդրո-էլեկտրակայանի կառուցում,

4. Հայաստան—Իրան էլեկտրահաղորդման միջհամակարգային կապերի սերտացում՝ 400 կՎ լարման երրորդ օղային գծի կառուցմամբ, միջհամակարգային կապեր հանդիսացող Հայաստան—Վրաստան 400 կՎ լարման նոր օղային գծի կառուցում և դեպի Կարս 220 կՎ լարման օղային գծերի վերականգնում, ինչպես նաև նոր միջհամակարգային օղային գծերի կառուցման հնարավորությունների հետազոտում՝ տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ ինտեգրումն ապահովելու համար,

5. միջազգային էներգամիավորումների հետ զուգահեռ աշխատանքի իրականացում (Անկախ Պետությունների Համագործակցություն, Սևծովյան Տնտեսական Համագործակցություն և այլն),

6. էլեկտրաէներգիայի և հզորության տարածաշրջանային շուկայի կազմակերպում,

7. հաշվի առնելով էներգետիկ բնագավառում ընթացող բարեփոխումների և առևտրայինացման գործընթացները՝ կարելի է վստահորեն հայտարարել, որ Հայաստանի Կառավարության համար առաջնահերթ նշանակություն է ստանում ֆինանսական աջակցությունն այն նախագծերին, որոնք ունեն ազգային նշանակություն, ապահովում են երկրի՝ բավարար մակարդակի էներգետիկ անվտանգությունն ու անկախությունը, երաշխավորում են սոցիալ-տնտեսական զարգացումը:

Վերը նշված նպատակները հասանելի դարձնելու համար Հայաստանի Հանրապետության Կառավարությունը առաջին հերթին ձեռնամուխ է եղել տարածաշրջանում բազիսային էներգիայի արտադրության և մատակարարման ադրյուր հանդիսացող ատոմային նոր էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանքներին: Այդ նպատակով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում կատարվել է փոփոխություն, որը հնարավորություն է ընձեռում պետական մենաշնորհի վերացմամբ ատոմային էներգետիկայի նկատմամբ կիրառելու սեփականության և ֆինանսավորման առավել ճկուն սխեմաներ:

ОСНОВОПОЛОЖЕНИЯ СТРАТЕГИИ ЭНЕРГЕТИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

*А. А. ГАЛСТЯН, заместитель Министра энергетики РА,
член-эксперт Межведомственной комиссии,
кандидат технических наук, доцент*

РЕЗЮМЕ

Обеспечение энергетической безопасности является одним из важнейших направлений «Стратегии национальной безопасности РА», поскольку республика не имеет собственных энергоносителей и находится в энергетической зависимости от иностранных поставщиков. Приоритетными направлениями обеспечения энергетической безопасности РА являются: диверсификация поставок энергоресурсов и региональная интеграция; использование возобновляемых энергоресурсов и экономия энергии; развитие атомной энергетики. Атомная энергетика является наиболее перспективной сферой производства электроэнергии с учетом прогнозов относительно роста цен на различные энергоносители.

THE FUNDAMENTAL PRINCIPLES
OF THE ENERGETIC SECURITY STRATEGY
OF THE REPUBLIC OF ARMENIA

*A. A. GALSTYAN, Deputy Minister of Energy of the Republic of Armenia,
Member Expert of the Interagency Commission,
Candidate of Technical Sciences, Docent*

SUMMARY

Energy security ensuring is one of the most important directions in the «National Security Strategy of the RA» as the republic doesn't have its own energy carriers and is in energy dependency on foreign suppliers. The diversification in deliveries of the energy supply and regional integration; use of renewable energy supplies and energy saving; nuclear energy development are the priority directions for ensuring the energy security of the RA. Nuclear energy is a more perspective sphere of the electrical energy production taking into account the prognoses concerning the cost increase on various energy carriers.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՅԸ՝
ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔ

*Ա. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՀՀ կրթության ու գիտության նախարարի տեղակալ,
Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*



Չթերագնահատելով ազգի ինքնության ձևավորման, ազգապահպանման, ինքնաներկայացման և զարգացման դրսևորումներում մշակույթի մյուս բաղադրիչների դերն ու նշանակությունը, այնուամենայնիվ պետք է ասենք, որ, ինչպես ապացուցում է պատմությունը, մշակույթի երկու առավել կրողունակ և որոշիչ բաղադրիչները կրթությունն ու գիտությունն են:

Պատմական վայրկյալներումները բերեցին նրան, որ Հայաստանում դարեր ի վեր չձևավորվեցին ո՛չ լուրջ կրթական ավանդույթներ, ո՛չ էլ գիտական ամուր դպրոցներ: Քիչ թե շատ նշանակալի կրթական ձեռքբերումների

կամ գիտական արդյունքների մեր Մեծերը հասան իրենց անհատական փնտրտուքի, դեգերումների և իհարկե անհատ բարեգործների աջակցության շնորհիվ:

Իհարկե, կատարվեցին կրթական համակարգ ձևավորելու ամենատարբեր, անգամ հանդուգն փորձեր, բայց դրանք բոլորն էլ կարճ կամ փոքր-ինչ ավելի երկար ժամանակ հետո անհաջողության մատնվեցին ներքին (քաղաքական համակարգի անկատարություն, հասարակության բեռնացում, բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակության անբավարար վիճակ) կամ արտաքին (տարածաշրջանային պատերազմներ, աշխարհաքաղաքական ոչ բարենպաստ դիրք, համաճարակներ և աղետներ) սպառնալիքների և գործոնների ազդեցության հետևանքով: Թերևս այդպիսի փորձերից էր նաև պետական համալսարանի հիմնումը և գործունեության ծավալումը 1919 թվականին Ալեքսանդրապոլում:

Ժամանակին նման ճակատագրի էին արժանացել և նույնպիսի ճանապարհ էին անցել նաև շատ այլ ազգեր ու պետություններ, որոնք, սակայն, այսօր արդեն ունեն գարգացած տնտեսությամբ ուժեղ պետություն:

Հայ ժողովուրդը, չունենալով ուժեղ պետություն, չէր կարող կրթության և գիտության ոլորտներում ևս վարել պետական համակարգված քաղաքականություն: Թեև Հայաստանի վարչական քարտեզից դուրս եղան անհատական հաջողություններ և նույնիսկ փայլատակումներ մշակույթի տարբեր, այդ թվում նաև գիտության ու կրթության բնագավառներում, այնուամենայնիվ հայ ժողովրդի գերագույն հաջողությունը այդ ոլորտներում ձևավորված այն համակարգն էր, որի շնորհիվ հաջողվեց երկրում համատարած անգրագիտությունը վերացնել և տալ համաշխարհային ճանաչման արժանացած գիտնականներ ու արվեստագետներ հենց այս՝ կեղեքված և

շատերի կողմից լքված, Հայաստանում: Թերևս կոմունիստական առաջնորդները հասկացան, որ բոլշևիկյան հեղափոխության հաղթանակն անդառնալի լինելու անհրաժեշտ պայմանն է ժողովրդի կրթումը. նրանք սկսեցին համատարած անգրագիտության վերացումից, ապա դպրոցներ բացեցին բոլոր մեծ ու փոքր բնակավայրերում: Մեծ քաղաքներում սկսեցին գործել տարբեր համալսարաններ և ինստիտուտներ, որոնց դասախոսական կազմը համալրվում էր տեղացի և արտասահմանում կրթություն ստացած մտավորականներով: Երկրի հզորացումը կապելով գիտության զարգացման հետ՝ իշխանությունը արդեն մինչև քսաներորդ դարի կեսերը խորհրդային ամբողջ տարածքում ձևավորեց գիտահետազոտական ու գիտաարտադրական կազմակերպությունների լայն ցանց:

Ազգային ազատագրական զարթոնքի և արցախյան հաղթանակի տարիներին ձևավորվում էին նաև մեր նոր պետության հիմքերը: Անխուսափելի դարձավ պետության սոցիալ-քաղաքական ամբողջ կառուցվածքի փոփոխությունը, որն ընդգրկելու էր տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային, ռազմական, մի խոսքով, բոլոր ոլորտները: Թերևս օբյեկտիվորեն առաջացած ամենակարևոր և ամենախրթին խնդիրը «նոր մարդու»՝ մեր փոքր ազգային պետության նոր քաղաքացու կերտումն էր մեծ, հզոր, անծայրածիր խորհրդային պետության մաս կազմած հանրապետության քաղաքացուց, որը երբեք չէր ունեցել որոշում կայացնելու իրավունք:

Այս անհրաժեշտ և ծավալուն փոփոխությունների լծկանը ակնհայտորեն պետք է դառնար կրթության և ավելի շատ գիտության ոլորտն իր մարդկանցով:

Անվերապահորեն ունենալով վերափոխումների անհրաժեշտություն՝ կրթության և գիտության համակարգը, ի տարբերություն շատ ոլորտներից, որպես արդյունավետ բարեփոխումների դրական ելքային պայման ուներ բավականին լուրջ ներուժ՝ ստեղծված նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկներ, հանրակրթական դպրոցներ և վարժարաններ, ուսումնարաններ և տեխնիկումներ, ինստիտուտներ և համալսարաններ, գիտահետազոտական և գիտաարտադրական կազմակերպություններ, Գիտությունների ազգային ակադեմիա:

***Չհամակարգված և գիտականորեն չհիմնավորված ակտիվությունը՝
որպես չարիք***

Կա մի տեսակի մարդ, որը կիսատ կարդացած գիրքը կամ օտար լեզվին ոչ հիմնավոր տիրապետելու պատճառով սխալ հասկացած նախադասությունը ներկայացնում է որպես նոր տեսություն ու, տեսնելով լսարանի լայն բացված աչքերը, հավատում է ինքն իր հայտնագործությանը: Ամբիոն ստանալով՝ «բարեփոխումների» այս տիպի առաջամարտիկը, շատ դեպքերում անգամ չհասկանալով, շփոթմունքի մեջ է գցում հասարակությանը և շարժումը տանում առնվազն ոչ արդյունավետ ճանապարհով: Այս տիպի ակտիվիստները, որոնցից պաշտպանված չէ ոչ մի հասարակություն, կոչվում են «նախաձեռնող հիմարներ»: Այս տիպի ամեն մի նախաձեռնություն սպառնում է ազգային անվտանգությանը՝

առնվազն մսխելով կամ փոշիացնելով առանց այն էլ սուղ պետական միջոցները, իսկ ընդհանուր առմամբ վտանգվում է ժողովրդի հոգեկան անվտանգությունը, քանի որ սերմանվում են թերահավատություն կատարվելիք գործի անհրաժեշտության ու հնարավոր արդյունավետության և անվստահություն՝ գործի պատասխանատուների նկատմամբ:

Գոյություն ունի նաև մեկ այլ տիպ՝ «բնագետներ»: Այս տիպի մարդիկ խնդրի լուծումն սկսում են խնդրի ձևակերպմամբ՝ խնդրի դրվածքի լրիվությունը ճշտելուց հետո, երբ հավաստիանում են, որ առկա են իրական սկզբնական պայմանները, և իրենք տիրապետում են լուծման մեթոդներին: Այս մոտեցումն, ի տարբերություն նախորդից, հնարավորություն է տալիս ճշգրտումների՝ բոլոր առանձին տեղային գործողություններն ու արդյունքները խնդրի դրվածքի հետ համեմատելու և շտկելու ճանապարհով:

Մի խոսքով՝ կրթության և գիտության ոլորտներում բարեփոխումների իրականացման և զարգացման համար կային արտաքին ու ներքին մարտահրավերներ և խոչընդոտներ, և ոլորտի ծրագրային զարգացումն սկսվեց բավականին ուշացումով ու մի քիչ էլ ծուլությամբ, հաշվի չէր առնվում, որ մնացած հատվածների զարգացման անդառնալիքությունը պայմանավորվում է համապատասխան գաղափարներ, գիտելիքներ և ունակություններ կրող մարդկանց բազմության հզորությամբ, որը կոփվում է կրթության և գիտության դարբնոցում:

Մինչև 1999 թվականին «Կրթության մասին» և քիչ հետո «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքների ընդունումը¹ այս ոլորտներում ընթանում էին ոչ ամբողջովին ծրագրված և հիմնականում չհամակարգված «բարեփոխումներ»: Բավական է հիշել 90-ականների սկզբին հանրակրթության բնագավառում նախաձեռնած «նորարարությունները», երբ մի շարք «գործիչներ», նկատի ունենալով պետության կայացման և հասարակական զարգացման գործում դպրոցի հիմնական գործառնությունները՝ կրթական, դաստիարակչական, սոցիալական, հասարակական, քաղաքական և այլն, առանց հաշվի առնելու պետության տնտեսական հնարավորությունները և «նորարարությունների» կրողների առկայությունն ու պատրաստվածությունը, ամբողջ ոլորտը ներքաշեցին բուռն փոփոխությունների թատերաբեմ: Նաև վատ կատարման հետևանքով ունեցանք վստահության ու միջոցների կորուստ, ինչպես նաև լավ գաղափարների ժամանակավոր մերժում: Նույն ժամանակ գիտության ոլորտում որպես գիտության ֆինանսավորման միակ ձև «հայտնագործվեց» թեմատիկ-պայմանագրային ֆինանսավորումը: Դա արվեց առանց հասկանալու, որ այն ունի հստակ գաղափարախոսություն ու վարույթ և աշխարհում գործող ֆինանսավորման ձևերից միայն մեկն է: Հայաստանում այս համակարգի միակությունը բերեց նրան, որ առաջացավ իր նախադեպը չունեցող մի շղթա. ճանաչված և ոչ միայն ճանաչված գիտնականը ներկայացնում էր թեմա-հայտ, այդ «ճանաչված» գիտնականներից կազմված գիտխորհուրդները այդ հայտերը

¹ Տես «Կրթության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-297, 8.05.1999), նաև՝ «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-119, 26.12. 2000):

երաշխավորում էին փորձաքննության, այդ գիտխորհուրդների կողմից ներկայացվող «ճանաչված» գիտնականներից կազմված փորձագիտական հանձնաժողովները այդ թեմաները երաշխավորում էին ֆինանսավորման: Հանրապետությունում այս միակ «արդյունավետ» ձևը հանգեցրեց գիտական դպրոցների մասնատման, իսկ թեմաների թիվը գերազանցեց հազարը:

Չնայած ուշացումով և բազմաթիվ թերություններով օրենքների ընդունմանը՝ դրանք հնարավորություն տվեցին անցնելու ոլորտի ծրագրային զարգացմանը: Կարևոր ու նշանակալից քայլ էր «2001—2005 թթ. կրթության զարգացման ծրագրի» ընդունումը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից: Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից ներկայացված այս ծրագրում առաջին անգամ համակարգված ձևով սահմանվել էին ոլորտի հիմնախնդիրները, ձևակերպվել դրանցից բխող խնդիրները, ըստ կատարման ժամանակացույցի ներկայացվել էր իրականացվելիք գործողությունների ցանկը²: Ծրագրի անգամ ոչ ամբողջական իրականացումը ոլորտի գործունեությունը դարձրեց որոշակիորեն համակարգված և արդյունավետ: Ցավոք, այն չստացավ իր շարունակությունը նոր ծրագրի ձևով, և ներկայումս տեղի են ունենում կրկնվող շրջապտույտներ անընդհատ փոփոխվող հայեցակարգերի շուրջ:

Նույնքան չծրագրված ընթացք է դիտվում նաև գիտության ոլորտում, որտեղ դանդաղկոտությունը շատ ավելի կործանարար է գիտատար տնտեսություն զարգացնելու կարողություն և հավակնություններ ունեցող Հայաստանի համար: Անընդհատ գրվող, քննարկվող և քննադատվող հայեցակարգերը այդպես էլ ծրագիր չեն դառնում, որովհետև չկա ազգային կամ պետական զարգացման ծրագիր, չկա գիտության ոլորտի պետական կառավարման լիազորություններով օժտված մարմին-հասցեատեր:

Կրթության և գիտության ոլորտի, ինչպես նաև մյուս բնագավառների համար արդեն կարող է ծրագրային զարգացման հենք հանդիսանալ ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը»³: Ռազմավարության հիմնադրույթները կկենսագործվեն ՀՀ Կառավարության կողմից մշակվող ոլորտային զարգացումների հայեցակարգերի և դրանցից բխող նպատակային ծրագրերի հիման վրա:

Նկատի ունենալով կրթության և գիտության ոլորտում ձևավորված մեծ ներուժը՝ պետությունը պետք է կարողանա հստակ կազմակերպման և ֆինանսական ներդրումների շնորհիվ հասնել արդյունավետ ու մրցունակ գիտակրթական համակարգի ստեղծմանը:

Կրթության ոլորտում առանձին հատվածների (հանրակրթական դպրոց, բարձրագույն մասնագիտական կրթություն) առաջանցիկ զարգացումը, երբ այլ հատված-

² Տես «2001—2005 թթ. կրթության զարգացման ծրագիր»:

³ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:

ներ (նախադպրոցական կրթություն ու դաստիարակություն, նախամասնագիտական և միջին մասնագիտական կրթություն) բարեփոխումների գործընթացից ակնհայտորեն հետ են մնում, կրթության ոլորտի ընդհանուր զարգացումը դարձնում է թույլ և ոչ կենսունակ:

Ընդհանուր առաջընթացի համար անվերապահորեն անհրաժեշտ է կրթության ոլորտի բոլոր հատվածների ճիշտ սահմանագծում, արդեն հաստատված կառուցվածքի շրջանակներում բովանդակային ծանրաբեռնվածության հստակ վերաբաշխում և բոլոր հատվածների ընդհանուր համաչափ զարգացում: Գրա շնորհիվ մենք հնարավոր կդարձնենք համապատասխան պատրաստվածությամբ մասնուկների մուտքը դպրոց և դպրոցի ելքում՝ ավագ դպրոցի հոսքային ուսուցման շնորհիվ շրջանավարտների ճիշտ մասնագիտական կողմնորոշումը:

Այստեղ կարևոր խնդիր է փոխել հասարակության նախատրամադրվածությունը դեպի նախնական և միջին մասնագիտական կրթությունը, որը կոչված է ապահովելու աշխատաշուկայում տարբեր ոլորտների ծառայությունների մատուցման գործում ներգրավված աշխատուժի 50—60 %-ը:

Կրթության այս կամ այն հատվածի արագ զարգացումը առանց համաչափ բարեփոխումների հետագայում կկասեցվի մյուս հատվածների բարեփոխումների դանդաղ ընթացքի պատճառով և ընդհանուր առմամբ կենսունակ չի լինի առանց մանկավարժական մասնագիտական կրթության բարեփոխման:

Անհրաժեշտ է զուգորդված կերպով իրականացնել բարձրագույն մասնագիտական կրթության և գիտության բարեփոխումները, քանզի այս երկու հատվածները, լինելով փոխկապված և փոխլրացնող, կարող են զարգանալ միաժամանակ կամ ունենալ միաժամանակյա հետընթաց:

Չնայած օրենսդրական և նորմատիվ-իրավական դաշտի բարելավմանը և գիտական կազմակերպությունների ընդլայնված ինքնուրույնությանը՝ գործող վարչության ղեկավարները սխեմաները ձևավորվում են անհատների ազդեցությամբ, անձնային իմացության և գերատեսչական շահերի հաշվառումով:

Այս ձևի կազմակերպման պայմաններում առանց այդ էլ խիստ անբավարար ֆինանսական հատկացումները հիմնականում փոշիացվում են, փոշիացվում են անգամ գիտության ոլորտում ներդրված պետական ֆինանսավորման բազմաձևության (թեմատիկ, բազային, նպատակային-ծրագրային) պարագայում՝ լիովին չձառայելով գիտության զարգացման խնդրին:

Գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ծրագրերի խիստ անբավարար ծավալները և երիտասարդ գիտնականների արտահոսքը վտանգավոր սահմանագծի են մոտեցրել ինչպես գիտական դպրոցների պահպանումն ու զարգացումը, այնպես էլ բուհերում որակյալ գիտամանկավարժական կազմի ապահովման հարցը:

Գիտության ոլորտի կարևոր խնդիրներից մեկը ինքնավերարտադրությունն է, որը կարող է ապահովվել միայն բարձրագույն մասնագիտական կրթության հատվածում համապատասխան գիտական մակարդակ և հետազոտական հմտություն ունե-

ցող կադրեր պատրաստելու միջոցով: Իսկ բարձրագույն մասնագիտական կրթության հատվածում նման որակավորման կադրեր հնարավոր կլինի պատրաստել միայն բարձր որակավորման պրոֆեսորադասախոսական կազմի առկայության պարագայում: Այստեղ անհրաժեշտ է ապահովել փոխտվության դինամիկ հավասարակշռություն:

Մասնագիտական կադրերի պատրաստումը անմիջականորեն կախված է տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման ու համաշխարհային տնտեսությանն ինտեգրման պահանջներից բխող մասնագիտական ունակություններով և կարողություններով օժտված կադրերի պատվերի ձևակերպումից:

Հայաստանի տնտեսությունը թերևս ի վիճակի չէ ձևակերպելու այդ պատվերը, քանզի դեռ աշխատում է էքստենսիվ զարգացման ճանապարհով (հիարկե, ոչ բոլոր դեպքերում): Այդ իսկ պատճառով աշխատաշուկայի պատվերը, որը ներկայացվում է մասնագիտական կրթությանը, կարող է ձևավորվել միջազգային չափանիշներով թելադրվող մասնագիտական որակավորումների շրջանակին համապատասխան՝ հայաստանյան շուկայի իրողությունների հաշվառմամբ:

Կրթության ոլորտում մյուս կարևորագույն խնդիրը որակի ապահովումն է, որը պահանջում է բավական մեծ ներդրումներ ինչպես պետության, այնպես էլ գործարար աշխարհի կողմից:

Որակյալ կրթություն ապահովելու համար անհրաժեշտ է կազմակերպել համապատասխան պահանջներին բավարարող կրթական տարածքների, լաբորատորիաների, գրադարանների, կրթական չափորոշիչների, ծրագրերի, գիտամանկավարժական կադրերի ամբողջականությունը: Այս ամենին հասնելու համար, այնուամենայնիվ, վճռորոշ մնում է հասարակության և մասնավորապես՝ պետական պաշտոնյաների մտածելակերպի բեկումնային փոփոխությունը: Այս փոփոխության բացակայությամբ են կաշկանդվում նաև գիտության ոլորտի բարեփոխումները: Գիտության ոլորտում փոփոխությունների բացակայությունը բերում է գիտական դպրոցների և գիտական հետազոտական մտքի փոշիացման, և մենք բոլորս ականատես ենք դարձել գիտական կապիտալի հոգեվարքի:

Անհրաժեշտ է արագ կերպով ձևավորել գիտության ոլորտի պետական կառավարման մարմին՝ հստակ տարանջատելով տնտեսություն—գիտություն—տնտեսություն շղթայում գիտության ոլորտի գործունեությունն ապահովող գործառույթները: Գործառույթների հստակ հասցեագրումը հնարավորություն է ընձեռում ունենալու արդյունավետ փորձագիտական համակարգ և հաշվետվողականություն, առանց որի գիտությամբ զբաղվող մարդիկ իրենց գործը կատարում են հիմնականում իրենց մտավոր հսկումները բավարարելու համար:

Ազգային անվտանգության տեսակետից կարևոր խնդիր է ուսուցիչների և պրոֆեսորադասախոսական կազմի սոցիալական պաշտպանվածության հարցը: Մինչ այսօր թերևս միակ իրատեսական ու գործող թեզը տեղ է գտել 1999 թ. ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքում, որում սահմանված է ուսուցիչների և պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձի մասին հետևյալ դրույթը. ուսուցիչ-

ների և պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձը չի կարող ցածր լինել պետական բյուջետային հիմնարկների աշխատողների միջին աշխատավարձից:

Այդ դրույթը պետք է տարածվի նաև գիտահետազոտական կազմակերպություններում աշխատող գիտնականների վրա՝ վերացնելու համար այն հոգեբանական ճեղքվածքը, որն առաջացել է բուհում և գիտական կազմակերպություններում աշխատող գիտնականների միջև:

Ի մի բերելով ասվածը՝ ևս մեկ անգամ շեշտեմ, որ գիտության ու կրթության ոլորտում մինչ այսօր ծավալված հախտուն գործունեությունը ընդհանուր պետական զարգացման ծրագիր չլինելու հետևանք էր: Եվ այսօր, ունենալով «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը», որում ոչ միայն վերհանվում ու գնահատվում են սպառնալիքները, այլև ուրվագծվում են կայուն զարգացման ուղիները, կարելի է ամենայն համոզվածությամբ ասել, որ Հայաստանը կպահպանի ու կզարգացնի իր գիտակրթական համակարգը՝ ապահովելով մեր ազգի մտավոր ներուժի շարունակական հզորացումը:

ПРОГРЕСС ОБРАЗОВАНИЯ И НАУКИ— ОСНОВА БЕЗОПАСНОГО И СТАБИЛЬНОГО РАЗВИТИЯ

*А. С. АВЕТИСЯН, заместитель Министра образования и науки Республики Армения,
член-эксперт Межведомственной комиссии,*

доктор физико-математических наук, член-корреспондент НАН РА

РЕЗЮМЕ

Задачи образования, науки и смежных с ними отраслей для обеспечения устойчивого и безопасного развития страны в общенациональном масштабе рассмотрены в рамках «Стратегии национальной безопасности РА». Развитие наукоемких производств и высоких технологий, намеченное в «Стратегии», невозможно обеспечить без подготовки соответствующих специалистов и проведения научно-исследовательских работ, и в этом деле роль науки и образования первостепенна.

Отмечена необходимость параллельного проведения реформ в сфере науки и образования как взаимосвязанных и взаимодополняющих областей, которые могут развиваться только совместно.

Недостатки исключительно целевого финансирования научных исследований, характерного для науки последних лет, привели к необходимости срочного формирования государственного органа управления наукой, четко разграничивающего функции научных учреждений в цепи «экономика—наука—экономика», для эффективного контроля и отчетности научно-исследовательских работ.

Необходимо также внедрение эффективной системы независимой экспертизы научных работ, по результатам которой будет определяться перспективность и финансирование конкретных исследований.

Важный с точки зрения национальной безопасности норматив о социальной защите учителей и профессоро-преподавательского состава, отраженный в законе «Об образовании» РА, принятом в 1999 г., необходимо рас-

пространить также на ученых НИИ, тем самым обеспечив равные условия для ученых вузовской и академической науки.

Наличие «Стратегии национальной безопасности РА» как основополагающего документа, определяющего основные пути обеспечения стабильного и безопасного развития государства, позволяет осуществить системный подход к реформированию сферы науки и образования.

THE PROGRESS OF EDUCATION AND SCIENCE AS A BASIS FOR A SECURE AND STABLE DEVELOPMENT

*A. S. AVETISYAN, Deputy Minister of Education and Science
of the Republic of Armenia, Member Expert of the Interagency Commission,
Doctor of Mathematics and Physics, Correspondent Member of the NAS of the RA*

SUMMARY

The tasks of education, science and branches adjacent to them for ensuring a stable and secure development of the country in the national scale are examined in the framework of the «National Security Strategy of the RA». The development of science-intensive productions and high technologies, mentioned in the «Strategy», is impossible to be ensured without training the corresponding specialists and carrying out the scientific-research activities. In this aspect the role of science and education is of a paramount significance.

The necessity to parallelly implement reforms in the sphere of science and education as interconnected and mutually complementary branches, that can develop only jointly, is pointed out.

The deficiencies of exceptional purposeful financing of scientific researches, typical of the science of the latest years, led to the necessity of an urgent formation of a science management state organ, which delimits clearly functions of scientific institutions in the chain «economy—science—economy» for the efficient report and control over scientific-research activities.

It is also necessary to inculcate an efficient system of an independent examination of scientific works according to the results of which the availability and financing of concrete researches will be determined.

The issue on the social protection of teachers and professor staff, important from the point of view of the national security, that had been reflected in the law «On the education» of the RA, adopted in 1999, should be spread also on the scientists of the SRI, thus, guaranteeing equal conditions for the scientists of higher educational institution, college and academic science.

The existence of the «National Security Strategy of the RA» as an principal document, determining basic ways of ensuring a stable and secure development of the state allows to realize a systemic approach to the reforming of the sphere of science and education.

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՊԱԳԱՅԻ ՄԵԾ ԵՐԱՇԽԻՔ Է

Գ. Գ. ԳՅՈՒՐՋՅԱՆ, ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի
նախարարի տեղակալ*,

Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ

Երկիր մոլորակի վրա վերջին տարիներին տեղի ունեցող երևույթները՝ հին դերակատարների (ԽՍՀՄ, Վարշավյան պայմանագրի կազմակերպություն) փլուզումը և նորերի (Եվրամիություն, ԱՊՀ, Սևծովյան երկրների համագործակցություն և այլն) ստեղծումը, խառնաշփոթ են առաջ բերել ոչ միայն քաղաքական, այլև մշակութային դաշտում: Ժամանակակից մարդը կանգնած է երկընտրանքի առաջ. մի կողմից՝ համընդհանրացումը, մյուս կողմից՝ անհատականություն ու ազգային դիմագիծ պահպանելու ձգտումը, ելել են դեմ հանդիման և ծանր հարցականներ են առաջադրում քաղաքացուն: Ի՞նչն ընդունել իբրև չափանիշ, ինչի՞ն հետևել, ի՞նչը մերժել, ինչպե՞ս տարբերել իրականը կեղծից: Հարցեր, որոնք սովորական գրույցների ժամանակ, գուցե, միանշանակ պատասխաններ չեն ենթադրում, բայց պետական քաղաքականության մեջ պիտի ունենան իրենց հստակ արտացոլումը:



Պարզ ճշմարտություն է, որ մշակույթը պետականության կայացման և անկախության հաստատման առաջին նախապայմաններից մեկն է, ազգային արժեքների և անհատականության ձևավորման մեծագույն գրավականը: Այն ներառում է ազգի ողջ ներուժը, ստեղծագործական ու ինքնուրույն մտածողության հնարավորությունները, և այս է պատճառը, որ Հայաստանի Հանրապետությունը հասարակության և անհատի անվտանգության ապահովման ու կայուն զարգացման, ինչպես նաև հայ ազգի ինքնության պահպանման համար Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության միջոցով իր պետական մշակութային քաղաքականությունը վարում է ազգային անվտանգության ռազմավարության սկզբունքների համատեքստում¹:

Մշակույթն իր էությանը ագրեսիվ չէ: Սակայն վերջին ժամանակներում ձևավորվել է մի նորագյուտ ագրեսիվ քաղաքականություն՝ այսպես ասած «մշակութային

* Ներկայումս Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը բաժանվել է Մշակույթի նախարարության ու Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության: Հեղինակը մշակույթի նախարարի տեղակալ է:

¹ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական քանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 13, ինչպես նաև՝ «Հայեցակարգային հիմնադրույթներ Հայաստանի Հանրապետությունում մշակույթի պահպանման, տարածման և զարգացման» ՀՀ Կառավարության 2000 թ. հոկտեմբերի 28-ի հմ. 46 արձանագրային որոշումը:

արտահանում», որը կեղծ արժեքների քարոզմամբ գայթակղիչ խայծեր է ներմուծում տարբեր երկրներ՝ նրանց բարոյահոգեբանական նկարագիրը խաթարելու, բնակչությանն իր ազգային արմատներից ու արժեքներից կտրելու նպատակով:

Ապագային արժեքներով ձևավորված սերունդը չի կարող մարտունակ ու հայրենասեր լինել, պայքարել իր երկրի համար, և այդ վտանգներին դիմակայելու համար է ազգային անվտանգության ռազմավարությունն ուղղվում ազգային մշակույթի անվտանգության հիմնախնդիրների լուծմանը, որի համար սահմանում է կայուն երաշխիքներ՝ դրանք պաշտպանելով Սահմանադրությամբ ու օրենքներով: Այդ երաշխիքներից թվարկենք մի քանիսը՝ ՀՀ քաղաքացիների խոսքի ու ստեղծագործելու ազատության և մշակութային կյանքին մասնակցելու իրավունք, ազգային ստեղծագործական ներուժի պահպանման, վերարտադրման և զարգացման ապահովում, մշակութային համահայկական դաշտի ձևավորում՝ Մփյուռքի ներգրավմամբ, մշակութային արժեքների նյութական և ոչ նյութական ժառանգության պահպանություն և անխաթար փոխանցում սերունդներին, մշակութային արժեքների մրցունակության ապահովում, ինտեգրում միջազգային մշակութային դաշտին:

Այստեղ չենք կարող չհիշել Նժդեհի հանճարեղ ձևակերպումը, որով բոլոր ժամանակների համար սահմանվում է մշակույթի և քաղաքակրթության միջև եղած տարբերությունը. «Մրբագրենք այն մեծ մոլորակը, ըստ որի՝ գոյություն ունի մի ընդհանուր, միջազգային, համամարդկային մշակույթ: Միջազգային է քաղաքակրթությունը, նաև ապակրոն, և այդ է պատճառը, որ այն խեղդում է մշակույթը: ...Ճշմարիտ մշակույթը միշտ էլ կրում է րվյալ ժողովրդի անհատականության կնիքը»²:

Նման մոլորակներից խուսափելու, հնի ու նորի միջև ճիշտ կողմնորոշվելու, իրականը կեղծից տարբերելու, ինչպես նաև ժամանակից հետ չմնալու և ստեղծագործական նոր լիցքերով հանդես գալու համար իրականացվում են անվտանգության ապահովման այնպիսի միջոցառումներ, որոնք նպաստում են հայկական ազգային մշակույթի պահպանությանը, պաշտպանությանը, տարածմանը և զարգացմանը այն կենսատարածքում, որտեղ ձևավորվել ու հարատևում է հայ ժողովուրդը: Ազգային անվտանգության հիմնարար արժեքների՝ հայկական հոգեկերտվածքի, մտածելակերպի և կենսակերպի ամբողջականության, ավանդված ժառանգության, ժողովրդական ստեղծագործության ու դրա հիմքի վրա բարձրացող ժամանակակից արվեստի, մշակութային գիտության ու կրթության տեսական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության մշակութային ռազմավարության հիմնական նպատակն է, որի իրականացումը անբաժանելիորեն միահյուսված է երկրի օրենսդրական, քաղաքական, տնտեսական ու սոցիալական հիմնախնդիրներին:

Մշակույթը մեծ ներդրումներ պահանջող ոլորտ է, ներդրումներ, որոնց արդյունավետությունը անմիջապես տեսանելի ու զգալի չի լինում: Անկախության տարիների ընդհանուր տնտեսական անկումը չէր կարող իր բացասական հետքը չթողնել մեր այսօրվա մշակույթի վրա. այն դրսևորվեց և՛ մշակույթի գործիչների արտահոսքով, և՛

² Գ. Նժդեհ, Մեծ գաղափար (նորահայտ մատուցներ): Ե., 2003, էջ 118:

եղած արժեքների թերագնահատմամբ, և՛ կայացած հաստատությունների (երաժրշտական դպրոցներ, արվեստի կենտրոններ, մշակույթի տներ, գրադարաններ, ցուցահանդեսային դահլիճներ և առկա մշակութային ֆունդը) վերացմամբ:

Այս ամենն այժմ լրացվում և վերականգնվում է արդյունավետ, մասնավորապես՝ երիտասարդական, քաղաքականության իրականացմամբ: Այն ներառում է՝ իրավական դաշտի հետագա կարգավորմանն ու միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը միտված օրենսդրական բարեփոխումներ, մշակույթի ոլորտի պետական կառավարման մարմինների գործունեության բարելավմանը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության սերտացմանը և ազգային ու միջազգային նպատակային համագործակցության ծրագրերի մեջ հասարակական կազմակերպությունների (այդ թվում՝ ստեղծագործական միությունների) ներգրավմանը միտված հաստատութենական բարեփոխումներ³:

Կանխատեսի՞ր, որ հաջողես

Հասարակությունը քաղաքականության գնահատական է տալիս համեմատաբար ուշ, երբ սկսում է քաղել պտուղները: Մակայն կանխատեսումային գործընթացը նույնպես և նույնիսկ ավելի կարևոր է, որովհետև ճիշտ վերլուծությունների և կանխատեսումների շնորհիվ հնարավոր է խնայել ժամանակն ու միջոցները և զերծ մնալ հնարավոր սխալներից, հատկապես, երբ պատմությունը ընձեռում է այդ հնարավորությունը:

Ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները, ինչպես առհասարակ, այնպես էլ մշակույթի բնագավառում, կարելի է տարբերակել որպես արտաքին (աղբյուրը պետության սահմաններից դուրս է) և ներքին (աղբյուրը պետության ներսում է): Ի դեպ, հենց ներքին սպառնալիքներն են հնարավորություն տալիս ճշտելու փոքրամասնության համար թույլատրելի պայմանների (ասենք՝ աղանդների տարածման) վտանգավորության աստիճանը մեծամասնության բնականոն կյանքի խաթարման տեսանկյունից:

Արդարքին սպառնալիքներից առավել վտանգավոր են Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված տեղեկատվական ահաբեկչությունը և հակահայկական քարոզչությունը, մշակութային ծրագրերի իրականացման քողի տակ ազգային մշակույթին վնաս պատճառելու նպատակներ հետապնդելը, ազգային մշակույթի համակարգին խորթ այլ համակարգերի նպատակադրված քարոզչությունը, ներդրումը և աջակցությունը դրանց արմատավորմանը: Այդ ամենը կարող է հանգեցնել պատմականորեն ձևավորված ազգային արժեքային համակարգի անցանկալի և ոչ բնական փոփոխության և ազգային ինքնության կորստի, արտերկրում գտնվող ազգային մշակութային ժառանգության պահպանությանն աջակցության նվազմանը, ինչը կարող է դառնալ դրանց վերացման պատճառ, հարևան երկրներում հայկական պատմամշակութային

³ Տես «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2002 թ. նոյեմբերի 20-ին), նաև՝ «ՀՀ մարզերում մշակույթի զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2007 թ. ապրիլի 5-ի հմ. 3 արձանագրային որոշումը:

հուշարձանների ոչնչացմանը, դիվանագիտական և մշակութային կապերի անբավարար մակարդակի: Սպառնալիքների այս շարքը կարող է հատկապես վտանգավոր դառնալ երիտասարդության շրջանում արմատավորվելու դեպքում:

Ներքին սպառնալիքներից պետք է նշել՝ մշակույթի բնագավառի ստեղծագործական աշխատողների ու գործիչների սոցիալական վիճակի վատթարացումը և նրանց արտահոսքը այլ պետություններ, հանրապետությունում համապատասխան լսարանի նվազումը մշակութային ծառայությունների գնաճի հետևանքով, մշակութային բարիքների և մատուցվող ծառայությունների որակի անհամապատասխանությունը շուկայական պահանջներին, ազգային մշակույթի մրցունակության անկումը Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում, իսկ երիտասարդության հարցերից՝ երիտասարդության զբաղվածության, երիտասարդ ընտանիքների սոցիալական ապահովության խնդիրները, ներքին (սահմանամերձ և գյուղական բնակավայրերից) և արտաքին միգրացիան, ծնելիության անկումը, առողջապահական վտանգները (ՄԻԱՎ/ՉԻԱՀ և սեռավարակների աճ, թմրամոլություն, ծխախոտի և ոգելից խմիչքների նկատմամբ հակվածություն), հոգևոր և ֆիզիկական զարգացման ու քաղաքացիական կայացման, ազգային-հայրենասիրական դաստիարակության ոչ բավարար մակարդակը:

Այս ամենի վտանգավորությունը որոշելուց հետո մշակույթի և երիտասարդության ոլորտների զարգացման համար պետությունը պետք է ձեռնամուխ լինի երկրի ընդհանուր սոցիալ-տնտեսական զարգացման, ինչպես նաև առկա նյութատեխնիկական, ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման, ստեղծագործական աշխատողների (կադրերի) ճիշտ ընտրության, տեղաբաշխման և համարժեք ֆինանսավորման քաղաքականության իրականացմանը: Մեծ կորուստներից հետո՝ 2002 թվականից թափ առնող զարգացման փուլում, տնտեսական իրավիճակի բարելավմանը զուգընթաց սկսվել են վերականգնման և նոր մշակութային ծրագրերի իրականացման գործընթացները: Առկա շուկայական հարաբերությունները, նյութատեխնիկական միջոցների համալրումը ենթադրում են մշակութային կազմակերպությունների և ստեղծագործական աշխատողների համար ավելի ազատ գործելու հնարավորություն: Մշակույթի զարգացմանը նպաստում են նաև պետական աջակցությունը թատերահամերգային, ցուցահանդեսային գործունեությանը, մշակութային բարիքների (ծառայություններ և արտադրանք) ստեղծման խթանումը, մշակութային ժառանգության օգտագործումը, տոնավաճառների կազմակերպումը, համապատասխան շուկայի ձևավորումը, մշակութային ծրագրերի ներգրավումը այլ ոլորտների (զբոսաշրջային, քաղաքաշինական, բնապահպանական) ծրագրային միջոցառումների ցանկերում:

Սոցիալ-տնտեսական բարեփոխումների հիմնական նպատակներից է նաև մշակույթի գործիչների սոցիալական վիճակի բարելավումը, ստեղծագործական գործունեության համար այնպիսի բարենպաստ պայմանների ապահովումը, որոնցով կկանխվի մշակույթի գործիչների արտահոսքը արտերկիր, կստեղծվեն պայմաններ ոլորտի կադրերի համալրման և մշակութային բազմազանության կայացման համար:

Երիտասարդական պետական քաղաքականության ոլորտում պետությունը երիտասարդ քաղաքացիների իրավունքների պաշտպանությունն ապահովում է համապատասխան իրավական դաշտի ստեղծմամբ և հետագա զարգացմամբ, նրանց տարիքային առանձնահատկություններով պայմանավորված իրավունքների և ազատությունների ցանկացած սահմանափակումների արգելմամբ, եթե դրանք սահմանված չեն օրենքով⁴:

Պետությունը երիտասարդության հոգևոր և ֆիզիկական զարգացումն ու քաղաքացիական դաստիարակությունը դիտում է որպես ազգի զարգացման կարևոր նախապայման և հասարակական մեծ արժեք, կարևորում է հանրապետական, մարզային, տեղային ծրագրերի գործընթացում երիտասարդությանն ուղղված խնդիրների ներառումը: Այս ուղղությամբ երիտասարդությանը կրթելու և դաստիարակելու, ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակով աջակցություն է ցուցաբերվում հասարակական նախաձեռնություններին և ծրագրերին:

Աշխատանքի և զբաղվածության ոլորտում պետության գլխավոր խնդիրը ձեռնարկատիրական գործունեության խթանման, նոր աշխատատեղերի ստեղծման, զբաղվածության ծառայությունների ձևավորման, երիտասարդական կադրային քաղաքականության իրականացման, մասնագիտական կողմնորոշման, որակավորման բարձրացման և վերամասնագիտացման ճանապարհով երիտասարդների տնտեսական ինքնուրույնության ապահովման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է:

Երիտասարդության գործարար ներուժի օգտագործման, շուկայական հարաբերություններ երիտասարդների մուտք գործելու համար հավասար մեկնարկային պայմաններ ապահովելու նպատակով անհրաժեշտ է համալիր միջոցառումներ իրականացնել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար՝ ամենից առաջ ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման ոլորտում:

Երիտասարդ ընտանիքներին աջակցություն ցուցաբերելիս պետությունը ելնում է այն բանից, որ նոր սերունդների հոգևոր և ֆիզիկական զարգացումը կախված է երիտասարդ ամուսինների առողջական, սոցիալ-տնտեսական և կենցաղային պայմաններից, բնական և հասարակական միջավայրից: Ուստի ենթադրվում է երիտասարդ ընտանիքների համար նախատեսել բազմաբնույթ օժանդակություն՝ բնակչի նարարության, ուսման, առաջին անհրաժեշտության բժշկական օգնության և այլ կարիքների համար: Մոտ հեռանկարում պետության գործունեությունն այս ոլորտում պետք է կենտրոնանա սոցիալական նորմերի և նորմատիվ համակարգի հաստատման վրա, ինչով կապահովվի երիտասարդների ուսման, դաստիարակության, հոգևոր և ֆիզիկական զարգացման, առողջության պահպանման և մասնագիտական պատրաստման համար անհրաժեշտ սոցիալական ծառայությունների մատուցումը:

⁴ Տես «Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ» (հաստատվել է ՀՀ Կառավարության 1998 թ. դեկտեմբերի 14-ի հմ. 798 որոշմամբ), նաև՝ «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2006—2007 թթ. ռազմավարությունը» ՀՀ Կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի հմ. 6 արձանագրային որոշումը:

Երիտասարդության ստեղծագործական գործունեության համար առավել ընդունելի պայմանների ձևավորման հիմնական գործոնը հասարակության ստեղծագործական և մտավոր ներուժի պահպանումն ու զարգացումն է: Այս խնդիրների իրականացման համար ենթադրվում է ստեղծել տնտեսական կարգավորման մի համակարգ, որով խթանվի հաստատությունների, ձեռնարկությունների, հասարակական միավորումների, հիմնադրամների և անհատների գործունեությունը երիտասարդ տաղանդներին աջակցելու գործում, տաղանդավոր երիտասարդների համար սահմանել պարզևատրումներ, թոշակներ և խրախուսման այլ ձևեր: Ստեղծագործական և նորարարական գործունեությունը կազմակերպելու նպատակով հարկ է նաև պայմանագրային ձևով երիտասարդությանը տրամադրել պետական սեփականություն հանդիսացող միջոցներ՝ ներառյալ հրատարակչությունները, զանգվածային լրատվության միջոցները, ցուցահանդեսային և համերգային դահլիճները:

Ներկայումս նյութական և ֆինանսական աջակցություն է ցուցաբերվում այն երիտասարդական կազմակերպություններին, որոնք միջոցառումներ են իրականացնում պետական երիտասարդական քաղաքականության շրջանակներում, և երաշխավորվում է երիտասարդական կազմակերպությունների անկախ գործունեությունը:

Արտաքին մշակութային անվտանգության ռազմավարության խնդիրները

Կարծիք կա, որ ստեղծագործել սիրող ազգերը կազմակերպական հարցերում որոշակիորեն թերանում են, որովհետև «ժամանակ չեն գտնում», որպեսզի զբաղվեն եղածը հավաքագրելու, ի մի բերելու և ներկայացնելու գործով: Սա, ցավոք, շատ հարցերում վերաբերում է նաև մեզ, որովհետև, ինչպես ցույց են տալիս վերլուծությունները, մեր մշակութային արժեքները հաճախ ներկայացվում են այլոց անվան տակ, այլոց գրքերով, իրական գնահատանքի արժանանալու փոխարեն արժանանում են մնացորդային վերաբերմունքի, անտեսվում են ու մատնվում լռության կամ պարզապես ոչնչացվում:

Անցյալի փորձից ելնելով և զարգացման համընդհանուր տեմպերից հետ չմնալու նպատակով՝ Հայաստանի Հանրապետությունը միջմշակութային կապերի հաստատման համար նախատեսում է միջազգային և տարածաշրջանային շրջանակներում համագործակցության զարգացում և աշխարհագրության ընդլայնում, միջազգային համագործակցության նոր ձևերի մշակում, հայ մշակույթի հանրահռչակում, արտերկրում մշակութային ժառանգության պահպանություն:

Պետությունն աջակցություն է ցուցաբերում նաև միջազգային երիտասարդական համագործակցության զարգացմանը, երիտասարդական փոխանակումների վերաբերյալ միջկառավարական համաձայնագրերի կնքմանը և իրագործմանը, տարածաշրջանային մշակութային, կրթական, գիտատեխնիկական երիտասարդական ծրագրերի համակարգում Հայաստանի Հանրապետության երիտասարդության ներգրավմանը:

Հատուկ ուշադրություն է դարձվում Հայաստանի, Արցախի և Սփյուռքի երիտասարդների, երիտասարդական միավորումների միջև հոգևոր-մշակութային, գիտա-

կրթական, սոցիալ-տնտեսական, հասարակական և այլ կապերի հաստատմանն ու զարգացմանը⁵:

Միջազգային համագործակցության ոլորտում պետական գործունեությունը միտված է միջազգային մշակութային քաղաքականության իրականացմանը, մի քաղաքականություն, որն ուղղված է օտարերկրյա պետությունների հետ մշակութային կապերի հաստատմանը, համապատասխան իրավական ակտերի ընդունմանն ու պայմանագրերի կնքմանը: Պետությունը աջակցություն է ցուցաբերում միջազգային երիտասարդական համագործակցության զարգացմանը, երիտասարդական փոխանակումների վերաբերյալ միջկառավարական համաձայնագրերի կնքմանն ու իրագործմանը: Դրանով իսկ ապահովվում է ազգային մշակութային կազմակերպությունների ինտեգրումը միջազգային մշակութային ու երիտասարդական կազմակերպություններին և կառույցներին, մշակութային փոխանակումների կազմակերպումը, ազգային մշակույթի պատշաճ ներկայացումը, ինչը բարձրացնում է Հայաստանի Հանրապետության միջազգային վարկը, պատշաճ հակազդեցություն տալիս Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված քարոզչությանը և ապատեղեկատվությանը:

Միջազգային համագործակցության ուղղությամբ մշակութային ռազմավարության գլխավոր նպատակներն ու բաղադրիչներն են՝ հայ մշակույթի ներկայացումը արտասահմանում և օտար պետությունների մշակույթի ներկայացումը Հայաստանում, տարածաշրջանային համագործակցության զարգացումն ու նոր գործընկերային կապերի հաստատումը, միջազգային կազմակերպությունների և ԱՊՀ անդամ երկրների համապատասխան կառույցների հետ կապերի պահպանումը, զարգացումը և համագործակցության ընդլայնումը, մասնակցությունը եվրոպական և միջազգային կառույցների աշխատանքներին ու ծրագրերի իրականացմանը, համահայկական փառատոների, մրցույթների կազմակերպումը և Հայաստան – Սփյուռք մշակութային համագործակցության զարգացումը:

Ելնելով տարածաշրջանում հայ բնակչության տեղաբնիկության պատմական իրողությունից և նկատի ունենալով, որ պետության սահմանները միշտ չէ, որ ներառում են մշակութային սահմանները, և դրանց գեղարվեստական ու ճարտարապետական արտահայտումները տարածքային առումով բաժանված են իրարից, առանձնահատուկ կարևորություն է ստանում տարածաշրջանային մշակութային համագործակցությունը: Հայաստանը կարևորում է նաև տարածաշրջանային մշակութային, կրթական, գիտատեխնիկական երիտասարդական ծրագրերի համակարգում Հայաստանի Հանրապետության երիտասարդության ներգրավումը:

Ըստ այս համագործակցության՝ գերակա խնդիրներ են դառնում հայկական պատմամշակութային ժառանգության ուսումնասիրումը, հաշվառումը, վերականգնումը և պահպանությունը⁶, հայ բնակչության մշակութային գործունեության խթանումը:

⁵ Տես «Գեղարվեստական կրթության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության 2004 թ. նոյեմբերի 18-ի հմ. 47 արձանագրային որոշումը:

⁶ Տես «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1998 թ. նո-

նումը և աջակցումը, հայրենիքի հետ կապերի ամրապնդումը, որով էլ կրկին ու կրկին պետության ուժեղացման գործում նշանավորվում է մերձավոր Միջուռքի, հայկական ազգային տարրի՝ իբրև Հայրենիքի մեծ աջակից ուժի անուրանալի դերը:

յեմբերի 11-ին), նաև՝ «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության 2006 թ. նոյեմբերի 23-ի հմ. 46 արձանագրային որոշումը:

КУЛЬТУРНАЯ СТРАТЕГИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ—ТВЕРДАЯ ГАРАНТИЯ БУДУЩЕГО

*Г. Г. ГЮРДЖЯН, заместитель Министра по вопросам культуры и молодежи РА,
член-эксперт Межведомственной комиссии*

РЕЗЮМЕ

Культурная безопасность является одной из важнейших составляющих национальной безопасности, поскольку в круг решаемых ею вопросов входят задачи по обеспечению сохранения национальной идентичности, национального уклада и культурных традиций, языка и менталитета, патриотического воспитания молодежи, усвоения общечеловеческих ценностей без ущерба для национальных. Эти вопросы получили особую актуальность в эпоху глобализации, которая, наряду с прогрессивными тенденциями, несет в себе и определенную угрозу национальной идентичности, в особенности, для малых народов. Проблемы культурной безопасности имеют особую значимость для армянского народа, вследствие Геноцида и других исторических событий рассеянного по всему свету.

В сфере обеспечения культурной безопасности Армения через Министерство культуры и вопросов молодежи осуществляет ряд целевых мероприятий как на внутригосударственном, так и региональном и международном уровнях. Они нацелены как на сохранение национальной идентичности армянского народа, проживающего на территории РА и других государств, этнических меньшинств, являющихся гражданами РА, так и на международную интеграцию в целях приобщения к общечеловеческой культуре и усвоения прогрессивных демократических ценностей, патриотического воспитания подрастающих поколений в духе приверженности этим ценностям, а также обеспечения сохранности исторических памятников культуры армянского народа, в настоящее время находящихся на территориях соседних государств.

THE CULTURAL STRATEGY OF THE NATIONAL
SECURITY—A FIRM GUARANTEE OF THE FUTURE

G. G. GYURJYAN, *Deputy Minister of Culture and Youth Affairs of the RA,
Member Expert of the Interagency Commission*

SUMMARY

The cultural security is one of the most important components of the national security as the issues concerning it are tasks on ensuring the preservation of the national identity, the national mode of living and cultural traditions, the language and mentality, patriotic training of the youth, mastering of universal values without harming the national ones. These issues got a special actuality in the epoch of globalization which, alongside with progressive tendencies, carries a certain threat to the national identity by itself, and particularly, for ethnic minorities. The problems of the cultural security have a special significance for the Armenian people, which is spread all over the world as a consequence of the Genocide and other historic events.

Armenia implements a number of target measures in the sphere of ensuring the cultural security both on the interstate and regional and international levels through the Ministry of Culture and Youth Affairs. They are aimed both at the preservation of the national identity of the Armenian people, residing on the territory of the RA and other states, ethnic minorities which are citizens of the RA, and at the international integration with the aim of joining the universal culture and adopting progressive democratic values, patriotic training of rising generations in the spirit of adhering to these values, as well as ensuring the preservation of historical monuments of culture of the Armenian people, located on the territories of neighbouring states at present.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Վ. Բ. ՏԵՐՏԵՐՅԱՆ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ,
Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*



ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգն է¹: Այս առումով ՀՀ տարածքային կառավարման նախարարության գործունեության հիմնական ուղղությունները մշակվել են նախարարության համակարգում ընդգրկված պետական կառավարման մարմինների կողմից ըստ համակարգվող բնագավառների՝ տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում, ջրային տնտեսություն, փրկարար ծառայություն, փախստականներ և միգրացիա, ազգային արխիվ, սեյսմիկ պաշտպանություն²:

1991 թվականի սեպտեմբերի 21-ին՝ անկախության հռչակումից հետո, ժողովրդավարական ու քաղաքացիական հասարակության կառուցման ուղին ընտրած ՀՀ-ում 1995 թվականի հուլիսի 5-ին հանրաքվեով ընդունված Սահմանադրությամբ ներդրվեց տեղական ինքնակառավարման համակարգը, որը իրականացված մի շարք տնտեսական ու քաղաքական բարեփոխումների համատեքստում թերևս կարևորագույն ժողովրդավարական հաստատություններից մեկն է: Այն մեր երկրում քաղաքական ու բովանդակային առումով նախադեպը չունեցող համակարգ է, և այս առումով դժվար է գերազնահատել այն դերակատարումը, որ ունի այդ համակարգը ժողովրդավարական քաղաքացիական հասարակության կայացման և ազատական տնտեսական համակարգի ձևավորման գործում:

Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման սկզբունքներն ամրագրված են ՀՀ հիմնական օրենքում: Համաձայն ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի՝ «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»³:

¹ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 13:

² Տես ՀՀ Կառավարության 2005 թ. մայիսի 19-ի հմ. 633-Ն որոշումը:

³ «ՀՀ Սահմանադրություն», հոդված 2: Ե., 1997:

Հիմնական օրենքը տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ-եր) որոշակիորեն տարանջատել է պետական կառավարման մարմիններից և առանձնացրել որպես ինքնուրույն օղակներ:

Որպես արդյունք, ՀՀ-ում տասը տարվա պատմություն ունեցող տեղական ինքնակառավարման համակարգն արդեն ունի ձևավորված օրենսդրական դաշտ, զարգացման հստակ ուղղվածություն, անհրաժեշտ հաստատությունական կառույցներ, որոնց արդյունավետ գործունեությունը համակարգի ժողովրդավարական զարգացման երաշխիքն է:

Պետական շինարարության, հատկապես՝ կառավարման ապակենտրոնացման և ժողովրդավարման ասպարեզում, կառուցվածքային փուլ եղավ տեղական ինքնակառավարման համակարգի հաստատումը:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ Նախագահի 1997 թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 և «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՆՀ-727 հրամանագրերով:

Տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ղեկավարը (քաղաքապետ, Երևանի քաղաքի համայնքի ղեկավար, գյուղապետ) և ավագանին, ընտրվում են 3 տարի ժամկետով՝ ազատ, գաղտնի, հավասար, ուղղակի և համընդհանուր քվեարկության միջոցով: Համայնքի ղեկավարն ու ավագանին կարող են ունենալ տեղական նշանակության տարբեր խնդիրների լուծմանը կոչված գործադիր կառույցներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի գոյության արդյունքը եղան Հայաստանում տեղական ինքնակառավարման արմատավորումը և քաղաքացիական ինքնագիտակցության զարգացումը, տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության ապահովումը:

Տարբեր եվրոպական երկրներում տեղական իշխանությունների գործունեության հիմնական սկզբունքների միասնականացումը⁴, անշուշտ, դրանց առանձնահատկությունների հաշվառումով, տեղական ինքնակառավարման ընդհանուր մոտեցումների ձևավորման հիմնական նախապայմանն է, և այդ գործընթացում «Տեղական ինքնակառավարման մասին» եվրոպական խարտիայի դերը որոշիչ է, ի դեպ, այն Հայաստանի կողմից ստորագրվել է 2001 թ. մայիսի 11-ին, վավերացվել է 2002 թ. հունվարի 25-ին, ուժի մեջ է մտել մայիսի 1-ին: Այս հարցում ՀՀ Նախագահի, ՀՀ Կառավարության հստակ դիրքորոշումներն են ապակենտրոնացման քաղաքականության իրականացումն ու տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործումը, նրա առավելագույն համապատասխանեցումը «Տեղական ինքնակառավարման մասին» եվրոպական խարտիայում ամրագրված սկզբունքներին⁵:

⁴ Տե՛ս «Регионоведение», отв. ред. Ю. Г. Волков. Ростов-на-Дону, 2002, сс. 301—329:

⁵ Տե՛ս «Ապակենտրոնացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»: «Պետական ծառայություն», գիրք III: Ե., 2001, էջ 21—27:

Վերոնշյալ հիմնահարցը վերջնականապես լուծվեց 2002 թ. մայիսի 7-ին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ. կուտակված փորձի ընդհանրացման հիման վրա և համաձայն գործող համակարգի շարունակականությունն ապահովելու սկզբունքի՝ օրենսդրորեն լուծում տրվեց այն հիմնահարցերին, որոնց իրականացումը արդի փուլում ավելի իրատեսական է, և առկա են դրանց լուծման տնտեսական, կազմակերպական ու տեխնիկական հագեցվածության համապատասխան պայմաններ:

«Տեղական ինքնակառավարման մասին» եվրոպական խարտիայի դրույթներին համապատասխան՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածով, մասնավորապես, սահմանվել է, որ ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն նաև ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող և 18 տարին լրացած անձինք, ու նրանց վրա տարածվում են ՀՀ քաղաքացիների համար սահմանված իրավունքներն ու պարտականությունները⁶:

Նոր լիազորություններ են վերապահվել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ համայնքի ղեկավարին և ավագանուն: Ֆինանսական ապակենտրոնացման ուղղությամբ համայնքներին է վերապահվել գույքահարկի և հողահարկի գանձման վարչարարությունը, քաղաքաշինության ասպարեզում ամբողջացվել են լիազորությունները, լայն ծավալով ընթանում է դեռևս պետական սեփականություն հանդիսացող հողատարածքները համայնքային սեփականության փոխանցման գործընթացը: Տեղական ինքնակառավարման օրենքում փոփոխությունների կատարման, ինչպես նաև տարածքային պետական կառավարման հայեցակարգային դրույթները քննարկվել են Եվրոպայի խորհրդի փորձագետների հետ, կազմվել է նրանց հետ համաձայնեցված ժամանակացույց, որի իրականացումը լուրջ առաջընթաց կապահովի տեղական ինքնակառավարման համակարգի առավել ժողովրդավարացման և իշխանության ապակենտրոնացման բնագավառում:

Հայաստանում սահմանադրական բարեփոխումների համատեքստում ամրապնդվել են տեղական ինքնակառավարման սահմանադրական հիմքերը, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետը ավելացվել է մինչև 4 տարի, վերանայվել է պետական կառավարման մարմինների կողմից ընտրված համայնքապետերին պաշտոնանկության ենթարկելու գործող մեխանիզմը՝ դատական գործառնությունների տիրույթ տեղափոխմամբ, Սահմանադրական դատարանի եզրակացության առկայության պայմանի ներառմամբ:

«Տեղական ինքնակառավարման մասին» եվրոպական խարտիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթի իրականացմանն է ուղղված «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը կապահովի տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների մասնագիտական պատրաստվածությունը, վարձատրման և ծառայողական առաջխաղացման պայմանները:

ՀՀ-ն կարևորում է հանրային կառավարման ոլորտի համար վարքականոնների մշակումն ու արդյունավետ կիրառումը: Այս առումով մեր իշխանություններն անում

⁶ Տես նույն տեղում:

են առավելագույն հնարավորը այս կանոնների ձևավորումն ու կիրառումն ապահովելու համար:

Եվրոպայի խորհրդի հետ համագործակցությամբ է ընթանում նաև տեղական ինքնակառավարման ոլորտում ուսուցման ազգային ռազմավարության մշակումը, որի նպատակներից են տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության նոր ոլորտների ու մեխանիզմների իմաստավորումը և պարզաբանումը, ՏԻՄ-երի անձնակազմերին դրանց ուսուցանումը և դրանով իսկ նպաստումը ՏԻՄ-երի առջև դրված նոր հիմնախնդիրների կարգավորմանը: Ակնկալվում է համայնքային ծառայության հաստատությունական կարգավորմամբ և հիշատակված ռազմավարության իրագործմամբ հասնել համայնքային ծառայության որակի բարձրացմանը, տեղական ինքնակառավարման արդյունավետության մեծացմանը:

Հայաստանը կարևորում է նաև անդրսահմանային համագործակցության մասին Եվրոպայի խորհրդի շրջանակային համաձայնագիրը՝ այն դիտելով որպես հորիզոնական մակարդակներում տարածաշրջանային համագործակցության հաստատման ու խորացման լրացուցիչ հնարավորություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ Հայաստանը արդեն իսկ ստորագրել և 2002 թվականին վավերացրել է անդրսահմանային համագործակցության եվրոպական շրջանակային համաձայնագիրը: ՀՀ Կառավարությունը հաստատական է անդրսահմանային համագործակցության մասին Եվրոպայի խորհրդի շրջանակային համաձայնագրի տիրույթում ակտիվացնելու համագործակցությունը բոլոր անդամների, մասնավորապես՝ հարևան երկրների հետ, և հանդես է եկել Հարավային Կովկասում անդրսահմանային համագործակցության շուրջ խորհրդածողով հրավիրելու առաջարկությամբ:

Եվրոպական կառույցների հետ ինտեգրման գործընթացները դիտվում են որպես համաշխարհային ինտեգրման գործընթացներին մասնակցության օրգանական մաս: Եվրոպական երկրների հետ համագործակցությանը տրվելու է մեծ նշանակություն. այն դիտվելու է որպես համընդհանուր նպատակ, փոխընթացումը՝ որպես գործոն ապացուցելու համար, որ Հայաստանը նույնպես եվրոպական ընտանիքի լիիրավ անդամ է:

Սակայն տեղական ինքնակառավարման համակարգի արմատավորման ընթացքում առաջ է եկել դրա կատարելագործման և բնականոն զարգացման անհրաժեշտություն: Այս առումով հասարակական հարաբերությունների համատեքստում տեղական ինքնակառավարման համակարգի տարածքային, տնտեսական, ֆինանսական և քաղաքական դերի ամրապնդումը ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությանը համահունչ կերպով իրականացնելու, ՀՀ-ում տարածքային և տեղական ինքնակառավարման կայացումն ու զարգացումն ապահովելու համար նախատեսվում է.

— կատարելագործել ՀՀ վարչատարածքային բաժանումը՝ փոփոխություններ և լրացումներ կատարելով «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում,

— սահմանել տարածքային կառավարման հայեցակարգային դրույթները,

— տեղական ինքնակառավարման բնագավառում կատարել բարեփոխումներ՝

սահմանադրական փոփոխություններով սահմանված նորմերի կիրարկման ապահովմամբ,

—մեծացնել տեղական ինքնակառավարման արդյունավետությունը՝ համայնքային ծառայության հաստատութենական կարգավորման և կատարելագործման միջոցով,

—հետամուտ լինել Եվրոպայի խորհրդի ներքո նոր կառույցի՝ Հարավային Կովկասի տեղական ու տարածքային իշխանությունների մշտական համաժողովի՝ որպես անդրսահմանային համագործակցության շարունակականության և երկխոսության մեխանիզմի ձևավորմանը:

Որպես արդյունք, կկանոնակարգվեն և կհստակեցվեն ՏԻՄ-երի ու պետական կառավարման մարմինների փոխհարաբերությունները, վերջիններիս գործունեությունը կդառնա առավել թափանցիկ, հրապարակային և վերահսկելի, ինչպես նաև կամրապնդվի տեղական ժողովրդավարությունը:

ՀՀ-ում կենսապահովման առաջնահերթ խնդիրներից մեկն է բնակչությանը մատչելի, կայուն և սահմանված ստանդարտին համապատասխանող որակի ջրի մատակարարումը: Այս խնդրի իրագործումն ապահովում է ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեն:

Խմելու ջրի համակարգում անվտանգության առումով կարևորագույն օբյեկտներն են ջրաղբյուրները, ջրատարները և օրվա կարգավորող ջրամբարները: Նշված օբյեկտների անվտանգության ապահովումը պայմանավորված է այդ համակարգերի պահպանման, ինչպես նաև շահագործման անթերի կազմակերպման անհրաժեշտությամբ: Անվտանգության կարևորագույն խնդիրներից է նաև սահմանամերձ, լեռնային և սակավաջուր բնակավայրերի ջրամակատարարման ապահովումը:

Ռոռզման համակարգում անվտանգության տեսանկյունից կարևորագույն խնդիրներից են պատվարների անվտանգությունը, գյուղատնտեսության համար պահանջվող անհրաժեշտ քանակով ջրի մատակարարման համակարգի ստեղծումը (հատկապես երաշտային տարիներին), ինչպես նաև խոշոր մեխանիկական ագրեգատների անխափան աշխատանքի ապահովումը:

Հայաստանի Հանրապետությունում կարևորվում են նաև Սևանա լճի պահպանության միջոցառումները, այդ թվում՝ Որոտան—Արփա—Սևան ջրատարի (թունելի) պահպանությունը և դրա անվտանգ շահագործումը, ինչպես նաև հեղեղումների և անդրահամանային ջրերի կառավարումը, գետերի ավապաշտպան կառույցների պահպանությունը:

Հայաստանի Հանրապետությանը բնորոշ են ավելի քան 25 անուն տարերային աղետներ և տեխնածին վտանգներ: Երկրի տարածքի 100 %-ը ենթակա է ուժեղ երկրաշարժների, 3 %-ը՝ սողանքների (ավելի քան 2500 սողանք, որոնցից մոտ 300-ը՝ բնակեցված տարածքներում), 0,5 %-ը՝ փլուզումների (քարվեժներ), 30 %-ը՝ հեղեղումների և ջրհեղեղների, 12 %-ը՝ ցրտահարությունների, 15 %-ը՝ երաշտի, 17 %-ը՝ կարկտահարման, հողատարածքների 20 %-ը՝ գերխոնավության, 50 %-ը՝ էրոզիայի, 11 %-ը՝ ջրակալման վտանգի: Դրանք կապված են մարդու գործունեության հետ՝ հայկական

ատոմակայան, մոտ 27 վտանգավոր քիմիական օբյեկտ, մոտ 100 ջրամբար, 12 պոչ-ամբար, ավելի քան 1500 հրդեհապայթյունավտանգ օբյեկտ, ինտենսիվ շինարարություն, արդյունաբերական նոր հզորությունների ծավալում և այլն: Դրան գումարվում են ռազմաքաղաքական և այլ բնույթի մարտահրավերները, որոնք առկա են մեր երկրի շուրջ: Այս ամենը լրջորեն խաթարում է բնականոն գործունեությունը սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ ոլորտներում՝ տեղական, մարզային, ազգային մակարդակով, երբեմն մի քանի սերունդների կտրվածքով, ինչի դառն ապացույցն է Սպիտակի երկրաշարժը:

Հակազդեցությունն արտակարգ իրավիճակներին, այդ ռիսկերի կառավարումը, լինելով պետական գործառույթ, ապահովում են հասարակության կայուն ու համընթաց զարգացումը և դարձել են զարգացող երկրների ներքին ու արտաքին քաղաքականության անքակտելի մասը: Հարկ է նշել, որ աղետների կանխարգելման համար անհրաժեշտ են լինում մոտ 10 անգամ պակաս միջոցներ, քան հետևանքների նվազեցման և վերացման համար, եթե նույնիսկ հաշվի չառնենք մարդկային կորուստները և տնտեսական բնականոն զարգացման ու աճի խաթարումը կամ լրիվ դադարումը:

Այս նկատառումով արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության գաղափարախոսությունը ՀՀ հռչակման առաջին իսկ օրից եղել է պետական քաղաքականության ու գաղափարախոսության բաղկացուցիչ տարրը, որի իրագործման ու կայացման համար ծավալվել է համապատասխան գործունեություն՝ համապատասխան պետական կառավարման համակարգի ստեղծմամբ: Այդ համակարգում իրականացվող բարեփոխումների շրջանակներում ընդունվել է «Հայաստանի փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքը, որով այդ համակարգում ծառայությունը համապատասխանեցվել է եվրոպական չափանիշներին:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության կառավարման իրավասությունների շրջանակներում է նաև ազգային արխիվի վարման համակարգումը: ՀՀ մշակութային ժառանգության և տեղեկատվական ռեսուրսների բաղկացուցիչ մասն է ՀՀ տարածքում գտնվող, պատմականորեն ձևավորված, մշտական պահպանության ենթակա փաստաթղթերի ամբողջությունը՝ ՀՀ արխիվային հավաքածուն, որն ընդգրկում է փորձաքննությամբ արժեքավորված տարատեսակ փաստաթղթեր, ձեռագրեր, նկարներ, գծագրեր և տեղեկատվության այլ կրողներ:

Ներկա դրությամբ ոլորտը ապահովված է անհրաժեշտ ու գործուն օրենսդրական դաշտով: 2004 թ. հունիսին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքով, դրա հիմնադրություններին ու պահանջներին համապատասխանող նորմատիվ-իրավական ակտերով և չափորոշիչ-մեթոդական փաստաթղթերով կարգավորվում են արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության ու օգտագործման գործընթացները, ինչպես նաև արխիվային ոլորտին առնչվող իրավահարաբերությունները: Սա կնպաստի հանրապետության պետական արխիվային ծառայության գործունեության կատարելագործմանն ու էլ ավել-

լի արդյունավետացմանը, ինչն իր հերթին կհանգեցնի արխիվային հավաքածուի տեղեկատվական անվտանգության մակարդակի բարձրացմանը: Ազգային տեղեկատվական ռեսուրսների օգտագործման բնագավառում առաջնահերթ խնդիր է համարվում քաղաքացիներին իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար անհրաժեշտ արխիվային տեղեկությունների (արխիվային տեղեկանք, փաստաթղթեր, դրանցից քաղվածքներ, պատճեններ) տրամադրումը՝ արխիվային ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին ու պահանջներին համապատասխան:

ՀՀ տեղեկատվական անվտանգությունն ասելով հասկանում ենք տեղեկատվության ոլորտում ազգային շահերի պաշտպանվածությունը, որը բնորոշվում է անհատի, հասարակության և պետության շահերի հավասարակշռված ամբողջությամբ:

Այս առումով էլ կարևոր տեղ է տրվում տեղեկատվական անվտանգության համակարգում արխիվային փաստաթղթերի (տեղեկույթի) ապահովության հիմնախնդրին:

Տեղեկատվական անվտանգությունն այսօր բնութագրվում է տարբեր սպառնալիքների և վտանգների առկայությամբ, որոնք առաջին հերթին կապված են արխիվային փաստաթղթերի ամբողջականության ապահովման ու պահպանության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա (հիմք) չլինելու հետ:

Նախատեսված է նաև տեսադաշտում ունենալ պետության շահերը: Խոսքը վերաբերում է պետական կամ ծառայողական գաղտնիքներ պարունակող փաստաթղթերի մատչելիության սահմանափակումներին և օգտագործման տալու դիմումների մերժման դեպքերին, ինչը ամրագրված է գործող օրենքում ու համապատասխան ենթաօրենսդրական ակտերում:

ՀՀ-ում միգրացիոն պետական քաղաքականություն վարում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալությունը: «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշները» փաստաթղթի 3-րդ բաժնում այլ մարտահրավերների և վտանգների թվում նշված են նաև ժողովրդագրական գործընթացների բացասական միտումները և արտագաղթը, ինչպես նաև կրթական ու գիտական ներուժի արտահոսքը⁷:

Այս տեսակետից միգրացիոն բնագավառում ծավալված գործունեության հիմնական նպատակ անհրաժեշտ է համարել այդ գործընթացների պետական կարգավորումը⁸:

Մեր կողմից նշված նպատակին հասնելու համար որպես գերակա խնդիրներ առաջարկվում են.

—Հայաստանի Հանրապետությունում արտագաղթի և ներգաղթի նկատմամբ վերահսկողության ապահովում,

⁷ Տես «ՀՀ Նախագահին առնթր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ Պաշտպանության նախարար Մերժ Սարգսյանի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշները» զեկուցումը ՀՀ ՋՈՒ-ի հրամանատարական կազմի համար»: Ե., 2005:

⁸ Տես «Регионоведение», отв. ред. Ю. Г. Волков. Ростов-на Дону, 2002, сс. 240—298:

—Հայաստանի Հանրապետության ինտեգրում միջազգային աշխատաշուկային,

—Հայաստանի Հանրապետությունից ծնունդ առնող անօրինական միգրացիայի կանխում,

—Հայաստանի Հանրապետությունից մարդկանց անօրինական փոխադրումների և վաճառքի (թրաֆիկինգ) կանխարգելում,

—օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հումանիտար նկատառումներով Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվող պաշտպանության համակարգի հետագա կատարելագործում,

—հին ու նոր Սփյուռքի գաղթօջախների հետ կառուցողական փոխհարաբերությունների պահպանում և զարգացում,

—Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն իրավիճակի մշտազննման ու վերլուծության համար անհրաժեշտ տվյալներ ապահովող տեղեկատվական բանկի ստեղծում,

—ներքին միգրացիոն գործընթացների կանոնակարգում՝ ըստ ՀՀ ազգային անվտանգության ապահովման և կայուն զարգացման պահանջների:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության համակարգի մաս է կազմում սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը (ՄՊԱԾ):

Հայաստանի համար մարդկային և նյութական կորուստների առումով բնական վտանգներից ամենաաղետալին ուժեղ երկրաշարժն է, որը կարող է հանգեցնել սոցիալական, տնտեսական և բնական միջավայրի լայնածավալ ավերածությունների: Երկրաշարժով հարուցված ու նրա հետ փոխկապված տեխնածին բնության աղետների թվի արագ աճումը և շրջակա միջավայրի վիճակի վատթարացումը լուրջ վտանգ են ներկայացնում ինչպես երկրի կայուն զարգացման, այնպես էլ աղքատության նվազեցմանն ուղղված նախաձեռնությունների համար՝ ավելացնելով վերականգնողական ծախսերն ի հաշիվ զարգացմանը նպատակաուղղված սահմանափակ ռեսուրսների: Օրվա պահանջն ու հրամայականն է դարձել Կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների ռազմավարությունում հնարավոր երկրաշարժի հետևանքների նվազեցման և ռիսկի կառավարման հիմնախնդրի ներառումը:

1991 թ. ՀՀ Կառավարության որոշմամբ ստեղծվեց ՄՊԱԾ-ն: Գործողությունների բավարար ազատության, որոշումների ընդունման ինքնուրույնության և բարձր աստիճանի պատասխանատվության շնորհիվ հաջողվեց հանրապետության համար ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում, համաշխարհային պրակտիկայում աննախադեպ կարճ ժամանակահատվածում ստեղծել սեյսմիկ պաշտպանության այնպիսի ծառայություն, որը լավագույնն է Հարավային Կովկասում և ամբողջ Մերձավոր ու Միջին Արևելքի տարածաշրջանում: Այսօր ՄՊԱԾ-ն ունի միջազգային բարձր վարկանիշ և տարածաշրջանում առաջատարի հեղինակություն:

ՄՊԱԾ-ի գլխավոր նպատակն է հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցումը մինչև արտակարգ վիճակի բացառման մակարդակը: Արդյունավետ

կանխարգելիչ նախաձեռնությունները հնարավորություն են տալիս ոչ միայն տնտեսելու հսկայական միջոցներ, այլև փրկելու հազարավոր մարդկանց կյանքը:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունից բխող, ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից իրականացվող միջոցառումները հույժ կարևոր են երկրի տարածքային և տեղական ինքնակառավարման համակարգի բնականոն ու արդյունավետ գործունեության ապահովման և բնական ու տեխնածին վտանգների հուսալի կանխատեսման, կանխարգելման և չեզոքացման համար⁹:

⁹ Տե՛ս «Экономическая и национальная безопасность». М., 2005, сс. 459—510:

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ
МИНИСТЕРСТВА ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
В РАМКАХ СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

*В. Б. ТЕРТЕРЯН, заместитель Министра территориального управления РА,
член-эксперт Межведомственной комиссии,*

кандидат экономических наук, доцент

РЕЗЮМЕ

«Стратегия национальной безопасности РА» провозгласила осуществление демократических реформ как важнейший принцип обеспечения безопасного и стабильного развития республики. В контексте претворения в жизнь «Стратегии» важная роль отводится Министерству территориального управления, основными задачами которого являются развитие системы местного самоуправления и упорядочение ее взаимоотношений с территориальными органами государственного управления как важнейшие факторы демократизации страны. Подразделения Министерства решают задачи по обеспечению безопасности и стабильного развития в соответствующих функциональных сферах: Государственный комитет водного хозяйства занимается бесперебойным снабжением питьевой водой, что является важным фактором жизнеобеспечения населения; спасательная служба нацелена на профилактическое снижение последствий опасных геологических явлений и процессов; миграционная служба занимается вопросами регламентирования как внутренней, так и внешней миграции; национальный архив обеспечивает информационную безопасность; национальная служба сейсмической защиты осуществляет превентивные мероприятия по снижению последствий землетрясений, что особенно важно для РА, находящейся в зоне высокой сейсмической активности.

THE MAIN DIRECTIONS OF THE ACTIVITY
OF THE MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION
OF THE REPUBLIC OF ARMENIA
IN THE FRAMEWORK OF THE NATIONAL SECURITY STRATEGY

*V. B. TERTERYAN, Deputy Minister of Territorial Administration of the RA,
Member Expert of the Interagency Commission,
Candidate of Economic Sciences, Docent*

SUMMARY

The «National Security Strategy of the RA» announced the implementation of democratic reforms as the most important principle for ensuring a secure and stable development of the republic. A significant role in the context of the realization of the «Strategy» is given to the Ministry of Territorial Administration, the basic tasks of which are the development of the local self-administration system and regulation of its interrelations with territorial organs of state administration as the most important factors of the democratization of the country. Subdivisions of the Ministry solve the tasks on ensuring the security and stable development in corresponding functional spheres: the State Committee of water economy carries out the uninterrupted supply of drinking water, which is an important factor for the population life sustenance; the rescue service is aimed at the preventive decrease of consequences of dangerous geological phenomena and processes; the migration service is engaged in the solution of tasks on the regulation of both the internal and external migration; the National Archive ensures the information security; the national service of seismic protection realizes preventive measures on decreasing earthquake consequences, and that fact is especially important for the RA situated in the zone of high seismic activity.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ՝
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ. Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի
առաջին տեղակալ, Միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ



«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունում», որը հաստատվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի ՀՆ-37-Ն հրամանագրով, Հայաստանի Հանրապետության անկախության ապահովման և ազգային անվտանգության հիմնարար արժեքներին ծառայող գործունեների ու գործողությունների բաղկացուցիչ մաս է համարվել տրանսպորտի և կապի ենթակառուցվածքների հուսալի գործունեության ապահովումն ու պաշտպանությունը և որպես արտաքին սպառնալիք է ճանաչվել սահմանամերձ պետությունների տարանցիկ ուղիների խափանումը, մասնավորապես՝ Թբիլիսի—Սուխումի երկաթգծի և Վրաստանից Ռուսաստան տանող ավտոճանապարհների չգործելը¹:

Որպես ներքին սպառնալիք է ճանաչվել ենթակառուցվածքների ցանցի ոչ բավարար մակարդակը²:

Հայաստանի կայուն տնտեսական առաջընթացի ապահովման գործում կարևորվել են հանրապետության տրանսպորտային համակարգի կայուն զարգացման ապահովումը, տարանցիկ ապրանքափոխադրումների համակարգում Հայաստանի տրանսպորտային ուղիների ներգրավումը և դրանով իսկ՝ տրանսպորտային շրջափակման վերացումը:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ապահովման ուղղությամբ տրանսպորտի և կապի նախարարության գործունեությունը նպատակ ունի լուծել նշված խնդիրները:

Տրանսպորտի՝ որպես Հայաստանի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքի բաղկացուցիչ մասի արդյունավետ և անխափան գործունեությունը կարևոր և անհրաժեշտ պայման է տնտեսության կայունացման, զարգացման և կառուցվածքային բարեփոխման, երկրի ազգային անվտանգության ու պաշտպանունակության աստիճանի բարձրացման և ժողովրդի կենսապայմանների բարելավման համար:

Երկրի ազգային անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է բարձ-

¹ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 18:

² Տես նույն տեղում, էջ 21:

րացնել տրանսպորտի մոբիլիզացիոն պատրաստականության մակարդակը՝ հատուկ պայմաններում հստակ աշխատելու ունակությունը պահպանելու ճանապարհով:

Երկրի պաշտպանունակության մեծացման և արտակարգ իրավիճակների դեպքում տրանսպորտի հստակ աշխատանքի ապահովման համար ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը անհրաժեշտ է համարում.

—տրանսպորտի զարգացման ռազմավարությունը համաձայնեցնել երկրի պետական ռազմական և առևտրատնտեսական ոլորտների ռազմավարությունների հետ,

—անմիջական պաշտպանական նշանակություն ունեցող և արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման ժամանակ օգտագործվող տրանսպորտային օբյեկտների զարգացման նկատմամբ ցուցաբերել առանձնահատուկ վերաբերմունք, անհրաժեշտության դեպքում նրանց ապահովել նյութատեխնիկական միջոցներով,

—ռազմավարական նշանակություն ունեցող տրանսպորտային օբյեկտների համար ապահովել պետական պատվերներ և վերահսկել դրանց կատարումը,

—երկրի պաշտպանության համար տրանսպորտային ընկերությունների կատարած աշխատանքները ֆինանսավորել պետական բյուջեից,

—մշակել տրանսպորտի մոբիլիզացիոն պատրաստականության նորմատիվ փաստաթղթեր,

—նոր տնտեսական պայմաններում հաստատել մոբիլիզացիոն պատրաստականության համակարգը և մոբիլիզացիոն մարմինների կառուցվածքը,

—հատուկ պայմանների առկայության դեպքում ապահովել կապի, լրատվության և կառավարման համակարգերի հստակ գործունեությունը:

Երկրի տնտեսական անկախության ապահովման համար տրանսպորտային համակարգը հարկավոր է պահել զարգացման և գործունեության այնպիսի մակարդակում, որը՝

—ցանկացած պայմաններում բավարարի տրանսպորտային ծառայությունների նկատմամբ այն պահանջարկը, որ կարող են ունենալ տնտեսությունը, Ջինված ուժերն ու բնակչությունը,

—նպաստի երկրի տնտեսական միասնության պահպանմանը, պայմաններ ստեղծի մարզերի միջև տնտեսական-տրանսպորտային կապերի զարգացման համար:

Տնտեսության մեջ կատարվող արմատական փոփոխությունները և Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքը թելադրում են այնպիսի պետական տրանսպորտային քաղաքականության իրականացման անհրաժեշտություն, որը տնտեսության և սոցիալական զարգացման ոլորտում հաշվի առնի տրանսպորտի առանձնահատկությունները և դերը:

Հաշվի առնելով տրանսպորտային օբյեկտների շինարարության և վերակառուցման մեծ կապիտալատարությունը, ինչպես նաև նոր տիպերի տեխնիկական միջոցների ստեղծման երկարատևությունը՝ մենք պետք է տրանսպորտի ոլորտի խնդիրները դիտարկենք ոչ միայն մոտակա, այլև հեռանկարային ժամանակահատվածով:

Նախարարությունը տրանսպորտային պետական քաղաքականության ռազմավարությունը նպատակաուղղում է այնպիսի տրանսպորտային համակարգի ձևավորմանը, որն ապահովի ուղևորների և բեռների երաշխավորված փոխադրումը, պաշտպանական, բնապահպանական և այլ հատուկ պահանջարկի բավարարումը, ինչպես նաև ապրանքների գներում տրանսպորտային բաղադրիչի նվազեցումը:

Տրանսպորտի զարգացումը պետք է ուղղված լինի ուղևորների և բեռների փոխադրման պահանջարկի բավարարմանը, արտադրության այլ ճյուղերի գործունեության խթանմանը, արտաքին առևտրի զարգացմանը: Այն պետք է ունենա սոցիալական ուղղվածություն, կազմի երկրի ընդհանուր սոցիալ-տնտեսական զարգացման բաղկացուցիչ մասը, բավարարի կապիտալ ներդրումների տնտեսական պահանջներին և կանխատեսի տրանսպորտի բոլոր տեսակների տեխնիկական վիճակի զգալի բարելավում, նորացում և կատարելագործում:

Նշված խնդիրների լուծման համար հանրապետությունում իրականացվող տնտեսական ու կառուցվածքային բարեփոխումներին զուգընթաց նախարարությունը լայնածավալ աշխատանքներ է իրականացնում օրենսդրական-իրավական բազան կատարելագործելու և տրանսպորտի կառավարելիության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ:

Տրանսպորտի համակարգի տնտեսական բարեփոխումների հիմնական ուղղություններից մեկը գործունեության արդյունավետության մեծացումն է, որի հիմքում պետք է դրված լինեն սեփականատիրոջ ակտիվությունը, տրանսպորտային ծառայությունների, կապիտալի և աշխատուժի շուկայի զարգացումը:

Տրանսպորտային ծառայությունների շուկայի ձևավորման գործում կարևոր տեղ է տրվում մարկետինգային կառույցներին, փոխադրողների մրցութային ընտրությանը, ինչպես նաև արտոնագրման և սերտիֆիկացման համակարգերին, որոնք պետք է ապահովեն բարձր որակավորում ունեցող ցանկացած փոխադրողի և տեխնիկայես սարքին փոխադրամիջոցի մուտքը այդ շուկա:

Նախարարության գործունեության ընթացքում տրանսպորտային համակարգի հետագա զարգացման և բարեփոխման կարևորագույն ուղղություններից են պետական տրանսպորտային քաղաքականության իրականացումը, արտադրական ու սոցիալական ոլորտում տրանսպորտային կազմակերպությունների գործունեության վերահսկումը, նոր տնտեսական պայմաններին համապատասխանող օրենսդրական-իրավական դաշտի ստեղծումը, տրանսպորտային ընկերությունների իրավական պաշտպանվածությունը, ընդհանուր օգտագործման տրանսպորտի առաջնայնության ապահովումը:

Այս աշխատանքը պետք է իրականացվի տրանսպորտային օրենսդրությամբ համաձայնեցված հայեցակարգի շրջանակներում, նոր օրենքների և նորմատիվ-իրավական ակտերի մշակման կամ արդեն գործողների վերանայման միջոցով, ընդ որում, դրանցով պետք է նախատեսվեն միատեսակ մոտեցումներ տարբեր տեսակի տրանսպորտի համանման գործառնությունների իրականացման դեպքում:

Տրանսպորտի ոլորտին վերաբերող օրենսդրական և նորմատիվ-իրավական ակ-

տերի ընդունման հետ մեկտեղ տրանսպորտի առանձնահատկությունները և շահերը պետք է արտացոլվեն նաև ընդհանուր տնտեսական բնույթի օրենսդրական փաստաթղթերում:

Օրենսդրական-իրավական դաշտը՝ որպես տրանսպորտային գործունեության պետական կարգավորման հիմք, պետք է նպաստի սեփականության տարբեր ձև և կառուցվածք ունեցող տրանսպորտային ընկերությունների ստեղծմանը, ապահովի տրանսպորտային տարբեր համակարգերի արդյունավետ համագործակցություն, տրանսպորտային ծառայություններից օգտվողների շահերի պետական պաշտպանվածություն, տրանսպորտային գործունեության անվտանգություն և շրջակա միջավայրի պաշտպանվածություն:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ապահովման գործում կարևոր տեղ է գրավում տրանսպորտային գործունեությունը կարգավորող օրենսդրական և իրավական ակտերի մշակումը՝ նպատակաուղղված դրանց իրավական բազայի մոտեցմանը միջազգային իրավունքին, ինչպես նաև այն միջազգային կազմակերպությունների իրավական դաշտին, որոնց անդամակցում է Հայաստանը:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ապահովման գործում կարևոր նշանակություն ունի ճանապարհային տնտեսության կայուն զարգացումը, ինչին նախարարությունը մեծ ուշադրություն է դարձնում:

Այդ նպատակով իրականացվող ծրագրերի կատարումն ապահովելու համար անհրաժեշտ է առանձնացնել Հայաստանի Հանրապետության ռազմավարական նշանակություն ունեցող հետևյալ հիմնախնդիրները:

«Աղքատության նվազեցումը» ներկայումս Հայաստանի Հանրապետության կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է: Այդ նպատակով 2006 թվականին Հայաստանի Հանրապետության Կառավարությունը դիմել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարությանը և «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի միջոցով ստացել դրամաշնորհ՝ գյուղատնտեսության ոլորտում տնտեսական զարգացման աճին նպաստելով հաղթահարելու աղքատությունը: Այս դրամաշնորհի մի մասը նախատեսվում է օգտագործել «Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի» իրականացման համար: Այդ ծրագրի ընդհանուր արժեքը շուրջ 67 միլիոն ԱՄՆ-ի դոլար է: Նրա շրջանակներում նախատեսվում է կատարել մոտ 943 կիլոմետր «Կենսական նշանակություն» ունեցող ճանապարհների նորոգում: «Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիրը» կիրականացվի 2007—2011 թթ.: Ներկայումս ծրագիրն արդեն իսկ իրականացվում է. կատարվում են հետազոտման և նախագրծման աշխատանքներ:

2005 թվականին շրջանառության մեջ է դրվել «Կենսական նշանակություն ունեցող» ճանապարհային ցանցի գաղափարը: «Կենսական նշանակություն ունեցող» ճանապարհային ցանցը ներառում է տեղական նշանակության այն ճանապարհները, որոնք գյուղական համայնքները միացնում են հիմնական ճանապարհային ցանցի հետ և ճանապարհ են ապահովում դեպի շուկա և այլ համայնքներ, ինչը շատ կա-

ընդ որ է գյուղական համայնքների տնտեսական աճի համար: Վերջին 10 տարիների ընթացքում ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների մեծ մասը նորոգվել է, սակայն տեղական նշանակության ճանապարհների նորոգմանը լուրջ ուշադրություն չի դարձվել: Ներկայումս այդ ճանապարհները գտնվում են անմխիթար վիճակում, ինչը հանգեցնում է տրանսպորտային ծախսերի աճին և թույլ տնտեսական աճի գլխավոր պատճառներից մեկն է: «Կենսական նշանակություն ունեցող» ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 2740 կմ, որի մեծ մասը, ինչպես նշվեց, գտնվում է անմխիթար վիճակում:

Նկատի ունենալով «Կենսական նշանակություն ունեցող» ճանապարհային ցանցի նորոգման կարևորությունը՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ծրագրել է վարկ ստանալ նաև Ասիական զարգացման բանկից: Վարկի գումարը կկազմի շուրջ 30,7 միլիոն ԱՄՆ-ի դոլար: Վարկի շրջանակներում նախատեսվում է նորոգել շուրջ 230 կմ ճանապարհահատվածներ: Վարկը նախատեսված է իրացնել 2008—2010 թվականների ընթացքում:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ապահովման համար կարևոր նշանակություն ունի նաև յուրաքանչյուր տարի տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող միջոցների առկայությունը: Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծրագրով 2007 թվականին նախատեսվում է հիմնանորոգել 12 կամուրջ:

Ավտոմոբիլային հաղորդակցության ուղիների վիճակի բարելավման և զարգացման նպատակով կարևորվում է նաև ճանապարհաշինարարության ոլորտում նոր տեխնոլոգիաների և ստանդարտների մշակումն ու ներդրումը:

Այդ աշխատանքներն անհրաժեշտ է կապել Հյուսիս—Հարավ և Արևելք—Արևմուտք միջազգային մայրուղիների հետ: Հիմնական խնդիրը շրջափակման վերացումն է: Այդ նպատակով կարևոր տեղ է հատկացվում Մեղրի—Շվանիձոր—Ծավ—Կապան նոր՝ միջազգային չափանիշներին համապատասխանող, 92 կմ երկարությամբ ավտոմոբիլային ճանապարհի կառուցմանը: Այդ աշխատանքները կավարտվեն 2007 թվականի վերջին:

Անհրաժեշտ է նաև հետևողականորեն լուծել Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ուղիղ երկաթգծի նախագծման ու կառուցման հարցը, որն իր արտացոլումն է գտել Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության տնտեսական կապերի համադասման միջկառավարական հանձնաժողովի վեցերորդ համատեղ նիստի Փոխըմբռնման հուշագրի 4-3 կետում:

Ապագայում ավտոմոբիլային հաղորդակցության ուղիների վիճակը բարելավելու և զարգացնելու նպատակով, բացի վերը նշվածներից, կարևորվում են նաև հետևյալ աշխատանքները.

—Մարգարա—Վանաձոր—Տաշիր—Վրաստանի սահման միջպետական նշանակության Մ-3 ավտոմոբիլային ճանապարհի Տաշիր—Վրաստանի սահման ճանապարհահատվածի վերականգնումը,

—Սևանի ավազանի, Կոտայքի և Արագածոտնի մարզերի միջև անմիջական ավտոմոբիլային ճանապարհային կապի ապահովման նպատակով Հ-28 ճանապարհի շարունակության կառուցումը մինչև Մ-3 (Ապարան) միջպետական ճանապարհի հետ միացումը:

Ներկայումս հրատապ հարց է մնում հանրապետությունում մարզկենտրոնների հետ լեռնային և սահմանամերձ բնակավայրերի կայուն կապի, ինչպես նաև արտակարգ իրավիճակների դեպքում դրանց տրանսպորտային սպասարկման ապահովումը:

Կարևոր է նաև սեփականության բաժանումը տրանսպորտի ոլորտում պետական կառավարման մարմնի և մարզպետարանների (համայնքների) միջև, տրանսպորտի տեղական կառավարման մարմինների իրավասությունների սահմանումը, որը պետք է համապատասխանի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններին վերաբերող օրենսդրական փաստաթղթերին:

Տրանսպորտի և կապի նախարարությունը լուրջ աշխատանքներ է կատարում երկրի արտաքին առևտրական կապերի ապահովման, միջազգային տրանսպորտային շուկայում հայրենական ուղևորա- և բեռնափոխադրողների, ինչպես նաև տրանսպորտային ծառայությունների մատուցման ոլորտում գործունեություն ծավալող ձեռնարկատերերի դիրքերի պաշտպանության, մրցունակության ապահովման և զարգացման, համաշխարհային տրանսպորտային համակարգի հետ Հայաստանի Հանրապետության տրանսպորտային համակարգի աստիճանական ինտեգրման ուղղությամբ: Այդ աշխատանքները ներառում են՝

—տրանսպորտային համակարգի միջազգային չափանիշներին համապատասխանող իրավական դաշտի ձևավորում,

—միջպետական երկկողմ ու բազմակողմ նոր համաձայնագրերի մշակում և ստորագրում, անդամակցում միջազգային համաձայնագրերին և պայմանագրերին,

—միջազգային ու տարածաշրջանային տրանսպորտային կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում և խորացում,

—միջազգային տրանսպորտային գործունեություն իրականացնող հայկական և Հայաստանի Հանրապետությունում գործող օտարերկրյա փոխադրողների ու ձեռնարկատերերի նկատմամբ արդյունավետ պետական վերահսկողության իրականացում:

Աշխատանքներ են տարվում նաև միջազգային երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի շրջանակներում երկրի կողմից ստանձնած պարտավորություններին Հայաստանի Հանրապետության տրանսպորտային գործունեության օրենսդրության ներդաշնակեցման, այդ թվում՝ տրանսպորտային միջոցներին և միջազգային տրանսպորտային գործունեությամբ զբաղվող կազմակերպություններին ներկայացվող տեխնիկական պահանջները և գործունեության կարգը սահմանող նոր նորմատիվ-իրավական ակտերի մշակման, ընդունման ու կիրառման ապահովման ուղղությամբ:

Միջազգային տրանսպորտային փոխադրումներում որակական փոփոխություն-

ների հասնելու համար նախարարությունը ակտիվ կերպով մասնակցում է «Եվրոպա—Կովկաս—Ասիա միջանցքի զարգացման միջազգային տրանսպորտի մասին հիմնական բազմակողմ», «Հիմնական տրանսեվրոպական տրանսպորտային առանցքները դեպի հարևան պետություններ և տարածաշրջաններ ընդլայնելու հարցերով բարձրաստիճան խմբի», «Հյուսիս—Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի մասին», ՄԱԿ-ի «Տրանսասիական երկաթուղային ցանցի մասին», «Տրանսեվրոպական մայրուղային ցանցի մասին» համաձայնագրերի շրջանակներում ընդունված հիմնական երթուղիների ակտիվ զարգացման, ենթակառուցվածքների կատարելագործման և բեռնահոսքերի ներգրավման աշխատանքներին:

Եվրամիության, Տրանսպորտի նախարարների եվրոպական հանձնաժողովի և ԱՊՀ անդամ պետությունների հետ համաձայնեցված տրանսպորտային քաղաքականություն վարելու համար Հայաստանի Հանրապետությունը առաջնահերթ նշանակության խնդիրներ է համարում.

—տրանսպորտային օրենսդրության համաձայնեցված մշակումն ու միասնականացումը,

—ընդհանուր տրանսպորտային համակարգերի համաձայնեցված զարգացումը,

—տարանցիկ ներուժի համատեղ օգտագործումը,

—տրանսպորտային գործընթացների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումը,

—համաձայնեցված սակագնային քաղաքականության մշակումը,

—ավտոմոբիլային տրանսպորտի ազատ տեղաշարժման ապահովումը,

—տրանսպորտում կառուցվածքային բարեփոխումների համաձայնեցված իրագործումը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության համար դեպի ԱՊՀ և եվրոպական պետություններ միակ տարանցիկ երկիրը Վրաստանն է, ուստի մեր նախարարության կողմից առաջին հերթին դիտարկվում են վրացական Փոթի և Բաթումի նավահանգիստները, որոնք միակ գործող ելքն են դեպի Սև ծով: Նավահանգիստների միջոցով ԱՊՀ և եվրոպական պետությունների հետ Հայաստանի Հանրապետության կապը առավել հուսալի դարձնելու նպատակով աշխատանքներ են տարվում, որպեսզի հայկական կապիտալը ներթափանցի նշված նավահանգիստների ենթակառուցվածքներ: Հատկապես կարևոր է հայկական թե՛ մասնավոր, թե՛ պետական ներդրումների միջոցով սեփական երկաթուղաավտոմոբիլային համապիտանի լաստանավի ձեռքբերումը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է շարունակել աշխատանքները երկաթուղու աբխազական հատվածի վերաբացման, ինչպես նաև վրաց-ռուսական սահմանի բացման ուղղությամբ:

Նշված միջոցառումները կնպաստեն Հայաստանի Հանրապետության՝ որպես տարանցիկ երկրի ներուժի մեծացմանը, առևտրական կապերի զարգացմանը, հայկական բեռների փոխադրումների ծավալների մեծացմանը և միջազգային շուկայում հայկական փոխադրողների մրցունակության ապահովմանը:

Հայաստանի Հանրապետության համար լինելով տարանցիկ պետություն դեպի Մերձավոր Արևելք, Արաբական երկրներ և Միջին Ասիա՝ իր նշանակալից տեղն ունի Իրանի Իսլամական Հանրապետությունը: Առավել մեծ կարևորություն է տրվում դեպի Պարսից Ծոց անխափան տրանսպորտային հաղորդակցության ապահովմանը, ինչպես նաև Հայաստան—Իրան երկաթուղային հաղորդակցության կազմակերպմանը:

Հարևան Թուրքիայի և Ադրբեջանի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության միակողմանի տրանսպորտային շրջափակման պայմաններում հայ փոխադրողների կողմից այլընտրանքային երթուղիների օգտագործումը և դրա հետևանքով լրացուցիչ մաքսակետերի հատումը հանգեցրել են տրանսպորտային ծառայությունների ինքնարժեքի բարձրացմանը, ինչպես նաև ուղևորների ու բեռների փոխադրման ժամանակի զգալի աճմանը և որոշ դեպքերում նաև նշված փոխադրումների անհնարիմությանը:

Նշված պարագայում առավել նպատակահարմար է աշխատանքներ տանել Հայաստան—Թուրքիա և Հայաստան—Ադրբեջան ավտոմոբիլային ու երկաթուղային ճանապարհների բացման ուղղությամբ: Մասնավորապես, երկու պետություններից անհրաժեշտ է պահանջել այն բազմակողմ համաձայնագրերի դրույթների կատարումը, որոնց անդամ են Հայաստանի Հանրապետությունը, Թուրքիան և Ադրբեջանը:

Այդ համաձայնագրերից են «Եվրոպա—Կովկաս—Ասիա միջանցքի զարգացման միջազգային տրանսպորտի մասին հիմնական բազմակողմ», «Հյուսիս—Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի մասին», ՄԱԿ-ի «Տրանսասիական երկաթուղային ցանցի մասին» և «Տրանսեվրոպական մայրուղային ցանցի մասին» համաձայնագրերը, «Հիմնական տրանսեվրոպական տրանսպորտային առանցքները դեպի հարևան պետություններ և տարածաշրջաններ ընդլայնելու հարցերով բարձրաստիճան խմբի» շրջանակներում ընդունված համաեվրոպական 4-րդ տրանսպորտային միջանցքը, ինչպես նաև Մեծովյան տարածաշրջանային համագործակցության կազմակերպության շրջանակներում ստորագրված մի շարք Փոխըմբռնման հուշագրեր:

Առաջնահերթ խնդիր է հայկական երկաթուղու կառավարման համակարգի կատարելագործումը, այդ թվում՝ կառավարման կառուցվածքի համապատասխանեցումը իրականացվող ուղևորա- և բեռնափոխադրումների առկա ու կանխատեսվող ծավալներին՝ համակարգում այն կառույցների և ոլորտների հստակ առանձնացմամբ, որոնք ենթակա են հետագա մասնավորեցման, ինչպես նաև երկաթուղային համակարգում որպես անցյալից ժառանգություն մնացած այն հիմնական միջոցների հետագա ճակատագրի որոշումը, որոնք և՛ այսօր, և՛ ապագայում պահանջարկ չլինելու պատճառով չեն կարող մասնակցել փոխադրումների ընդհանուր գործընթացին:

Հայկական երկաթուղու կառուցվածքային բարեփոխումների իրականացման ժամանակ մենք պետք է հաշվի առնենք հարցի ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կողմը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի համար երկաթուղին ունի կարևոր ռազմավարական նշանակություն:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման գոր-

ծում առանձնահատուկ նշանակություն ունի կապի, լրատվության և տեղեկատվության ոլորտում իրականացվող ռազմավարությունը:

Այդ կապակցությամբ նշված ոլորտներում տրանսպորտի և կապի նախարարության հիմնական գործունեությունը նպատակաուղղված է՝

—կապի համակարգի զարգացմանը և արդիականացմանը,

—նորագույն տեխնոլոգիաների հիման վրա գործող կապի միջոցների ներդրմանը, համակարգի թվայնացմանը, կառուցման, պահպանման և շահագործման ծախսերի նվազեցմանը, հուսալիության մեծացմանը,

—այլընտրանքային և ռեզերվային ենթակառուցվածքների ստեղծմանը,

—ՀՀ ամբողջ տարածքում կապի համակարգի ծավալմանը՝ գծային, ռադիոռելեային, շարժական և արբանյակային կապի միջոցների կիրառմամբ,

—տեղայնացման խնդիրներին և նպատակահարմարությանը,

—կապի ոլորտի կառավարման իրավական դաշտի ստեղծմանը և կատարելագործմանը,

—արտակարգ և պատերազմական իրավիճակներում ՀՀ կառավարական և համազգային կապի ապահովմանը,

—կապի համակարգերի պահպանությանը և արտաքին միջամտություններից ապահովմանը,

—ՀՀ ամբողջ բնակչության համար կապի ժամանակակից միջոցների մատչելիության ապահովմանը,

—ինչպես պետական մարմինների կարիքների, այնպես էլ բնակչության լայն զանգվածներին տեղեկատվական համակարգերի մատչելիության ապահովման նպատակով տեղեկատվական համակարգերի զարգացմանը՝ ՀՀ ամբողջ տարածքում համակարգչային-տեղեկատվական համակարգերի ու ցանցերի կառուցմամբ և ներդրմամբ,

—ՀՀ ամբողջ տարածքում «Ինտերնետ» ցանցի զարգացմանը և հասարակության լայն շրջանների համար նրա ծառայությունների մատչելիության ապահովմանը,

—«Ինտերնետ» ծառայություններ մատուցող կազմակերպությունների համապատասխան մասնագիտական, տեխնոլոգիական, տեխնիկական, ծրագրային և իրավական խնդիրների լուծմանը,

—հավաստի լրատվության և տեղեկատվության ապահովմանը,

—ոչ բարեկամական երկրների կողմից ապատեղեկատվության, տեղեկությանի սահաբեկչության տարածման և գաղափարախոսական պատերազմ վարելու, ապազգային քարոզչության և ապակողմնորոշման փորձերի կանխմանը,

—արտակարգ և պատերազմական իրավիճակներում համապետական միասնական լրատվության և տեղեկատվության համակարգի անխափան գործունեության ապահովմանը,

—լրատվական և տեղեկատվական դաշտի օրենսդրական բարեփոխմանը:

Կապի, լրատվության և տեղեկատվության բնագավառում ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության տեսանկյունից առանձնակի կարևորություն են

ստանում սահմանամերձ բնակավայրերի ապահովումը կապի արդիական միջոցներով և զանգվածային լրատվության միջոցների լիակատար մատչելիությունը:

ՀՀ բնակչության լրատվության և տեղեկատվության խնդիրների լուծման գործում իրենց ուրույն դերն ունեն զանգվածային լրատվության միջոցները, ներառյալ՝ հեռուստատեսությունը, ռադիոն, մամուլը՝ անկախ դրանց սեփականության ձևից: Կարևոր նշանակություն ունեն «Ինտերնետ» ծառայություններ մատուցող կազմակերպությունները՝ որպես տեղեկության օպերատիվ ժամանակի ռեալ մասշտաբում, ներկրող և արտահանող կազմավորումներ:

Թվարկված խնդիրների լուծումը ենթադրում է կազմակերպական, իրավական, տեխնիկական և ֆինանսական միջոցների կիրառում:

Հայաստանի Հանրապետության տարածքում կապի, լրատվության և տեղեկատվության ոլորտում ազգային անվտանգության ռազմավարությունը պայմանականորեն բաժանվում է երկու մասի՝ ներքին և արտաքին բաղադրիչների:

Ներքին ռազմավարության նպատակներն են՝

1. ՀՀ բնակչությանն ապահովել հավաստի լրատվությամբ և տեղեկատվությամբ՝ զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև «Ինտերնետ» ծառայություններ մատուցող կազմակերպությունների պաշտոնական կայքերի միջոցով:

Այս դրույթի հետ կապված խնդրի լուծումը ենթադրում է վերոհիշյալ կազմակերպությունների գործունեության կանոնակարգում, ինչի համար անհրաժեշտ է ոլորտի իրավական դաշտում կատարել բարեփոխումներ,

2. օրենսդրական բարեփոխումների միջոցով ստեղծել արդի պայմաններին համապատասխանող իրավական դաշտ, որը կսահմանի և կկանոնակարգի քարոզչության, լրատվության, տեղեկատվության տարածման ոլորտը, հնարավորություն կընձեռնի ՀՀ տարածքում գրանցված կապի, լրատվության և տեղեկատվության դաշտում գործունեություն ծավալող կազմակերպությունների և անձանց նկատմամբ այս բնագավառում իրավասու մարմնի կողմից սահմանելու տեխնիկական վերահսկողություն՝ համաձայն վերջիններիս գործող կանոնակարգերի: Նշված կանոնակարգերը սահմանում են բաժանորդների ու մատուցվող ծառայություններից օգտվողների հետ հարաբերությունները և կազմում են հատկացվող լիցենզիաների անքակտելի մասը:

Որպես լիցենզիայի տրամադրման պարտադիր պայման կանոնակարգերը ենթակա են իրավասու մարմնի կողմից հաստատման,

3. արդի տեխնոլոգիական և տեխնիկական առաջընթացին համապատասխան իրականացնել կապի, լրատվության և տեղեկատվայնացման ոլորտներում աստիճանական տեխնիկական վերազինման քաղաքականություն:

Այս դրույթն ապահովելու համար անհրաժեշտ է հատկացվող լիցենզիաներում նախատեսել տեխնիկական վերազինման քաղաքականությանն առնչվող պահանջներ, ինչը ենթադրում է փոփոխություններ լիցենզիաների հատկացման գործող կարգում: Նախկինում հատկացված լիցենզիաները ենթակա են վերահաստատման՝ համաձայն փոփոխված լիցենզիաների հատկացման կարգի:

Տեխնիկական վերազինման ընդհանուր քաղաքականության մշակումը վերապահվում է իրավասու մարմնին,

4. ստեղծել արտակարգ և պատերազմական իրավիճակներում գործող համագ-գային կապի, լրատվության, իրազեկման և տեղեկատվության կայուն համակարգ, որի կիրառման կանոնակարգը ենթադրում է գործող կապի, լրատվության և տեղեկատվության բոլոր միջոցների կենտրոնացում հեռահաղորդակցության բնագավառում իրավասու մարմնի կառավարման ներքո:

Այս դրույթի իրականացման ապահովումը ենթադրում է ՀՀ տարածքում գտնվող և հետագայում ներկրվելիք բոլոր տեսակի կապի, լրատվության և տեղեկատվության, տեխնոլոգիական, տեխնիկական և համապատասխան ծրագրային միջոցների գրանցում, հաշվառում, ինչպես նաև դրանց կիրառման մասին տվյալների հնարավորինս լիարժեք բազայի ստեղծում, ինչի համար անհրաժեշտ է ՀՀ տարածք ներկրվող էլեկտրոնային հաղորդակցային սարքերի, տեխնոլոգիաների և ծրագրային միջոցների սերտիֆիկացման կարգի վերանայում:

Արտակարգ և պատերազմական իրավիճակների դեպքում կապի, ազդարարման, լրատվության և տեղեկատվայնացման համակարգերը՝ անկախ դրանց սեփականության ձևից, անցնում են իրավասու մարմնի տնօրինության և կառավարման տակ: Միջոցառումների ու կառավարման կենտրոնացումը իրավասու մարմնի կողմից իրականացվում է արտակարգ և պատերազմական իրավիճակներում գործելու համար նախանշանակված շտաբի միջոցով:

Տվյալ դրույթի իրականացումը ենթադրում է արտակարգ և պատերազմական իրավիճակներում գործողությունների ծրագրի մշակում շահագրգիռ գերատեսչությունների և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի օպերատորների հետ համատեղ: Առանձնակի դեր է հատկացվում ազգային օպերատորներին և առավել խոշոր մասնավոր մասնագիտացված կազմակերպություններին, որոնց հետ համատեղ մշակված գործողությունների ծրագիրը կրում է օրենքի ուժ և ենթակա է անմիջական կիրառման ՀՀ Կառավարության կողմից համապատասխան որոշման ընդունման պահից սկսած,

5. պայքարել ՀՀ բնակչության ապատեղեկութավորման, տեղեկության ահաբեկչության, գաղափարախոսական պատերազմի յուրաքանչյուր դրսևորման դեմ՝ կիրառելով ինչպես ներքին իրավական ու տեխնիկական հնարավորությունները, այնպես էլ միջազգային աստիճաններում ինքնիշխան պետության ունեցած իրավունքները:

Այս դրույթի իրականացման ապահովումը ենթադրում է ՀՀ տարածքում գործող կապի, լրատվական և տեղեկատվական համակարգերի օպերատորներին հատկացված և հատկացվող լիցենզիաներում տարածվող կամ հեռարձակվող տեղեկատվության համար պատասխանատվության պահանջի նշում, առավել ևս՝ արտակարգ և պատերազմական իրավիճակներում գործելու ժամանակ: Անկախ սեփականության ձևից՝ բոլոր օպերատորները պատասխանատվություն են կրում ՀՀ կառավարական հայտարարությունների առաջնահերթ և ճշգրիտ հեռարձակման և տարածման հա-

մար: Բնակչության ապատեղեկատվայնացումը բացառելու նպատակով անհրաժեշտ է մշակել «Տեղեկատվության, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, որը սահմանի պատասխանատվություն հեռարձակվող և տարածվող տեղեկույթի համար,

6. արտաքին աշխարհի կողմից ապատեղեկատվության դեմ պայքարի համար եղած հնարավորությունների սահմաններում՝ կիրառելով տեխնիկական միջոցներ, այդ թվում՝ եթե հեռարձակող կայանների աշխատանքի խաթարման ճանապարհով, բացառել ոչ բարեկամական գաղափարախոսության ներթափանցումը ՀՀ տարածք:

Այս դրույթը ենթադրում է առաջին հերթին սահմանամերձ գոտում արտասահմանից ռադիո- և հեռուստատեսային հեռարձակումների մշտազննում, անհրաժեշտության դեպքում՝ ՀՀ տարածքում հակահայկական ծրագրերի հասանելիության խաթարում եղած միջոցներով:

Էլեկտրոնային հեռահաղորդակցության բնագավառում իրավասու մարմինը միջազգային ատյաններում կարող է բարձրացնել ՀՀ սահմանամերձ տարածքներում օտարերկրյա հեռարձակումների հասանելիության սահմանափակման հարցը՝ համաձայն միջազգային պայմանագրերի,

7. պաշտպանել տեղեկության բազաները համակարգչային ծրագրահենների (հակերների) և համակարգչային վիրուսների հարձակումներից, բացառել տեղեկույթի նկատմամբ ոտնձգությունները այսպես կոչված «լրտեսող» ծրագրերի միջոցով: Պետական առավել կարևորություն ունեցող էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառությունն իրականացնել համաձայն «Էլեկտրոնային ստորագրության մասին» ՀՀ օրենքի, կիրառել գաղտնագրման սարքավորումներ և հայրենական մշակման ծրագրային փաթեթներ՝ դրանով իսկ բացառելով հնարավոր արտաքին ազդեցությունները, աղավաղումները, տեղեկույթի արտահոսքը և ապատեղեկատվությունը:

Այս դրույթը ենթադրում է վերոհիշյալ տեղեկության բազաների նկատմամբ կենսունակության խիստ տեխնիկական, ծրագրային և իրավական պահանջներ, այդ թվում՝ դրանց պատճենների պարբերական ստեղծման և պահպանման կանոնակարգը, դրանց մատչելիության կանոնակարգը, տեղեկույթի հնարավոր արտահոսքի դեպքում կիրառվող միջոցառումները:

Էլեկտրոնային հեռահաղորդակցության բնագավառում իրավասու մարմնի կողմից մշակվում է «Գերատեսչական ցանցերի կառուցման և շահագործման» կանոնակարգ, որը կրելու է պարտադիր կիրառման բնույթ,

8. Հայաստանի Հանրապետության տարածքում օրենքից դուրս համարել ազգային բնութագրին ոչ հարիր հեռարձակումները և այդպիսի տեղեկույթ պարունակող ինտերնետային կայքերը, որոնք չեն նպաստում երիտասարդ սերնդի բարոյական և հայրենասիրական դաստիարակությանը: ՀՀ տարածքում գտնվող, սակայն սույն դրույթի պահանջները չապահովող կազմակերպությունների հետագա գործունեության հարցը լուծվում է համաձայն գործող օրենսդրության: Հատկացվող լիցենզիաներում ամրագրվում են տեղեկատվության բնույթի և էության վերաբերյալ սահմանա-

փակման պահանջները: Լիցենզիայի տրամադրման պարտադիր պայման է գործունեության կանոնակարգի համապատասխանությունն այս դրույթի պահանջներին,

9. արգելափակել ներքին և արտաքին աղբյուրներից հասանելի այն տեղեկույթի տարածումը, որը հնարավոր վտանգ է ներկայացնում. նման տեղեկույթ է զենք-զինամթերքի, պայթուցիկ նյութերի և սարքերի, թմրանյութերի, թունավոր նյութերի, ահաբեկչական գործողությունների կազմակերպման, համակարգչային վիրուսների պատրաստման նկարագրությունը, ինչպես նաև ազգային բարոյական նորմերի առումով անընդունելի տեղեկույթ պարունակող ինտերնետային կայքերի և զանգվածային լրատվության միջոցների հասանելիությունը ՀՀ բնակչությանը: Տեղեկատվության և լրատվության բնագավառի մշտազննման իրավական դաշտի մշակումը հնարավորություն կտա կանոնակարգելու բնակչությանը հասանելի տեղեկույթի բնույթը, ինչպես նաև բացառելու գաղափարախոսական պատերազմ վարելու փորձերը,

10. ապահովել առաջնահերթ աջակցություն հատուկ ծառայությունների (ՀՀ ՋՈՒ, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ոստիկանություն, ՀՀ մաքսային ծառայություն և այլն) կապի համակարգերի և զերատեսչական համակարգչային ցանցերի կառուցմանը և շահագործմանը, ինչպես նաև դրանց փոխլծորդմանը՝ ընդհանուր օգտագործման կապի, ցանցային սարքավորումների և տեղեկատվական շտեմարանների կիրառմամբ:

Այս դրույթը ենթադրում է վերոհիշյալ կապի համակարգերի և համակարգչային ցանցերի կառուցման, կիրառվող տեխնոլոգիաների, տեխնիկական և ծրագրային միջոցների նկատմամբ պետական վերահսկողություն, որն իրականացվելու է համաձայն նոր մշակվելիք «Էլեկտրոնային հաղորդակցության միջոցների նկատմամբ տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջների,

11. ստեղծել այլընտրանքային և ռեզերվային կապի միջոցների ցանց, որի կիրառումը կարող է արտոնվել միայն արտակարգ և պատերազմական իրավիճակներում ՀՀ Կառավարության համապատասխան որոշման հիման վրա: ՀՀ տարածքում կայուն կապի համակարգը պետք է նախապես պլանավորված լինի խաղաղ, արտակարգ և պատերազմական իրավիճակներում գործելու համար: Նպատակահարմար է, բացի ստացիոնար միջոցներից, շարժական կապի միջոցների հիմքի վրա ստեղծված ցանցի կազմակերպումը ՀՀ ամբողջ տարածքում: Պատերազմական իրավիճակում շարժական կապի համապատասխան տեխնիկական ցուցանիշներ ունեցող միջոցների տեղաբաշխումը ՀՀ տարածքում պետք է պլանավորվի նախապես՝ կենտրոնացված կառավարում ապահովելու նպատակով:

Այս դրույթը ենթադրում է կառավարական կապի համակարգի պլանի մշակում,

12. ռադիոռելեային, ռադիոնոդեմային և արբանյակային կապի հիմքի վրա գործող ոչ պետական կառույցների ալեհավաքների ուղղվածությունը, կիրառվող հաճախականությունները և հեռարձակման հզորությունները պետք է գտնվեն իրավասու մարմնի վերահսկողության տակ, իսկ կիրառվող սարքավորումները՝ զերծ լինեն գաղտնագրման միջոցներից:

Այս դրույթի իրականացման ապահովումը ենթադրում է «Էլեկտրոնային հաղոր-

դակցության միջոցների նկատմամբ տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի մշակում:

Արդարին ռազմավարության նպատակներն են՝

1. ապահովել հավաստի լրատվության մատչելիությունը և տարածումն արտասահմանում՝ միջազգային ատյաններում, զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև «Ինտերնետ» ծառայություններ մատուցող կազմակերպությունների պաշտոնական կայքերի միջոցով:

Այս դրույթի իրականացման ապահովումը ենթադրում է ՀՀ տարածքից ռադիոյի և հեռուստատեսության ծրագրերի հեռարձակում՝ արբանյակային կապի միջոցների կիրառմամբ: Այդ նպատակով առանձնացված հաճախականությունների, ուղեծրի և ծածկույթի չափորոշիչները ենթակա են վերանայման և համաձայնեցման: Արբանյակային կապի և հեռարձակման աշխարհագրության ընդլայնումը ենթադրում է ֆինանսական ներդրումներ և միջազգային ատյանների հետ համաձայնեցում ու համագործակցություն: Անհրաժեշտ է մշակել տվյալ դրույթի իրականացման ռազմավարության ծրագիր,

2. ժամանակին արձագանքել ապատեղեկության լրատվությանը և բացահայտել աղբյուրները, համաշխարհային հանրությանը ներկայացնել նման լրատվության ապատեղեկացնող, սադրիչ և միջազգային համագործակցությանը վնաս պատճառող բնույթը:

Շահագրգիռ մարմինների հետ մշակել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից հնարավոր աջակցություն ցուցաբերելու հարցերը,

3. Սփյուռքի ներուժը ներգրավել արտասահմանում լիարժեք տեղեկույթի տարածման, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգությանը վերաբերող տեղեկությունների ձեռքբերման նպատակով: Ստեղծել լրատվության, տեղեկատվության և «Ինտերնետի» բնագավառում մշտազննում իրականացնող կազմավորում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամերիկայի Միացյալ Նահանգների «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև կնքված «Հազարամյակի մարտահրավեր» համաձայնագիր:

2. ՀՀ Կառավարության 2005 թ. հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Համաշխարհային բանկի միջև աղքատության կրճատմանն աջակցության երկրորդ վարկի առաջընթացն ապահովելու միջոցառումները հաստատելու մասին» հմ. 939-Ն որոշումը:

3. ՀՀ Վարչապետի 2007 թ. փետրվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկերը հաստատելու մասին» հմ. 123-Ա որոշումը:

4. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք:

5. «Եվրոպա—Կովկաս—Ասիա միջանցքի զարգացման միջազգային տրանսպորտի մասին (TRASSECA) հիմնական բազմակողմ համաձայնագիր» (ստորագրված՝ 1998 թ. սեպտեմբերի 8-ին, Բարնո: ՀՀ-ն վավերացրել է 1999 թ. դեկտեմբերի 28-ին):

6. «Հյուսիս—Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի մասին համաձայնագիր» (ստորագրված՝ 2000 թ. սեպտեմբերի 12-ին, Ս-Պետերբուրգ: ՀՀ-ն վավերացրել է 2006 թ. մարտի 8-ին):

7. «Տրանսպորտային երկաթուղային ցանցի մասին համաձայնագիր» (ստորագրվել է 2006 թ. հոկտեմբերի 28-ին):
8. «Ասիական ավտոմոբիլային մայրուղիների ցանցի մասին միջկառավարական համաձայնագիր»: Շանհայ, 2004, ապրիլի 26 (ՀՀ-ն վավերացրել է 2005 թ. մայիսի 7-ին):
9. «Տրանսեվրոպական մայրուղային ցանցի մասին համաձայնագիր»:
10. «Բեռնարկերի մասին» մաքսային համաձայնագիր (ստորագրված՝ 1972 թ. դեկտեմբերի 2-ին, Ժնև: ՀՀ-ն վավերացրել է 2006 թ. մարտի 23-ին):
11. «Երկաթուղով փոխադրվող բեռների սահմանահատման դյուրացման մասին միջազգային համաձայնագիր» (ստորագրված՝ 1952 թ. հունվարի 10-ին, Ժնև: ՀՀ-ն վավերացրել է 2006 թ. մարտի 23-ին):
12. «Բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների պայմանագրի մասին համաձայնագիր» (ստորագրված՝ 1956 թ. մայիսի 19-ին, Ժնև: ՀՀ-ն վավերացրել է 2006 թ. մարտի 23-ին):
13. «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին եվրոպական համաձայնագիր» (ստորագրված՝ 1970 թ. հունիսի 1-ին, Ժնև: ՀՀ-ն վավերացրել է 2006 թ. մարտի 23-ին):
14. «Գլխավոր միջազգային ավտոմայրուղիների մասին եվրոպական համաձայնագիր» (ստորագրված՝ 1975 թ. նոյեմբերի 15-ին, Ժնև: ՀՀ-ն վավերացրել է 2006 թ. մարտի 23-ին):
15. «Միջազգային ավտոմոբիլային փոխադրումների դյուրացման մասին ընդհանրացված բանաձև»:
16. «Սահմանների վրա բեռների հսկողության անցկացման համաձայնեցված պայմանների մասին միջազգային համաձայնագիր»:
17. «Աշխատանքի միջազգային կազմակերպության համաձայնագիր 1530՝ աշխատանքային ժամերի և հանգստի ժամանակահատվածի տևողությունը ճանապարհային տրանսպորտում»:
18. «Միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների բնագավառում ԱՊՀ մասնակից պետությունների փոխգործունեության մասին համաձայնագիր»:
19. «ԱՊՀ անդամ պետությունների տարածքում տրանսպորտային միջոցների միջազգային կշռման հավաստագրի ներդրման մասին համաձայնագիր»:
20. «Միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի, մասնագետների մասնագիտական կոմպետենտության ստանդարտների ներդաշնակեցման վկայականների, հավաստագրերի և այլ փաստաթղթեր ստացողների պրոֆեսիոնալ կոմպետենտության հաստատումը ԱՊՀ շրջանակներում փոխհամաձայնության մասին համաձայնագիր»:

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ
МИНИСТЕРСТВА ТРАНСПОРТА И СВЯЗИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ПО ОБЕСПЕЧЕНИЮ
СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

*Г. Г. БЕГЛАРЯН, первый заместитель Министра транспорта и связи РА,
член-эксперт Межведомственной комиссии*

РЕЗЮМЕ

Для безопасного и стабильного развития РА особое значение имеет обеспечение надежного функционирования транспортных инфраструктур и связи. Деятельность Министерства транспорта и связи РА по обеспечению

национальной безопасности нацелена на: строительство дополнительных автомобильных дорог на территории республики и железной дороги Армения—Иран; интегрирование Армении в систему международных транзитных грузопассажирских перевозок и тем самым преодоление транспортной блокады Армении со стороны Турции и Азербайджана; обеспечение надежной, устойчивой и качественной связи в республике, особенно с населенными пунктами, расположенными в горной местности и приграничной зоне; внедрение в систему связи новейших технологий и техники; развитие и обеспечение всеобщей доступности услуг сети «Интернет»; обеспечение мирового сообщества достоверной информацией об РА и армянском народе, создание эффективной системы противодействия дезинформации. Для достижения этих целей Министерством совместно с другими ведомствами разрабатываются и готовятся к представлению на утверждение соответствующие комплексные программы.

THE MAIN DIRECTIONS OF THE ACTIVITY
OF THE MINISTRY OF TRANSPORT AND COMMUNICATIONS
OF THE REPUBLIC OF ARMENIA
ON ENSURING THE NATIONAL SECURITY STRATEGY

*H. G. BEGLARYAN, First Deputy Minister of Transport and Communications of the RA,
Member Expert of the Interagency Commission*

SUMMARY

The ensurance of safe functioning of transport infrastructures and communications is of a special significance for a secure and stable development of the RA. The activity of the Ministry of Transport and Communications of the RA on ensuring the national security is targeted at: the construction of supplementary automobile routes on the territory of the republic and the railway Armenia—Iran; integration of Armenia with the system of international transit commodities, and thereby the overcoming of Armenia's transport blockade by Turkey and Azerbaijan; ensuring safe, stable and qualitative communications in the republic, especially with villages, situated in mountainous locality and border zone; inculcation of modern technologies and technique into the communications system; development and ensuring of general access to the «Internet» network services; ensuring the world community with true information about the RA and Armenian people, establishing an efficient system to counteract the disinformation. Corresponding complex programs for the achievement of these goals are elaborated and worked at by the Ministry in common with other agencies for the introduction to the confirmation.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝
ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԻ

*Ռ. Ռ. ԱԼՎԵՐԴՅԱՆ, ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ,
Միջգերարեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ*



Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատվել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը, որն ըստ սահմանման՝ «պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգն է: Այն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով»¹: Նշված փաստաթղթի ընդունումն անհրաժեշտաբար պետք է գնահատվի որպես առանցքային իրադարձություն՝ մեր երկրի զարգացման ուղենիշային սկզբունքների ամրագրման առումով:

Որպես ՀՀ քաղաքաշինության նախարարության ներկայացուցիչ մասնակից լինելով «Ազգային անվտանգության ռազմավարության» նախագծի մշակման աշխատանքներին՝ ուզում եմ նախքան քաղաքաշինական անվտանգության խնդիրներն ուրվագծելը հատկապես շեշտել այն հավելյալ նվաճումներն ու դրական փորձը, որոնք ձեռք են բերվել, մասնավորապես, աշխատանքների ընթացքի կազմակերպման առումով: Ասվածը վերաբերում է հանձնաժողովի կազմում ընդգրկված տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչների տեսակետների անկաշկանդ փոխանակմանն ու հիմնավոր քննարկումներին մի խնդրի շուրջ, որը, հավասարապես գերակա լինելով բոլորի համար, մի յուրատեսակ կամերտոնի դեր է ստանձնել՝ միաժամանակ դիտարկված լինելով ամենատարբեր տեսանկյուններից և մեկ անգամ ևս հնարավոր դարձնելով ինչպես յուրաքանչյուր ոլորտում արվածի ու անելիքի, այնպես էլ հավաքական նպատակին հասնելու միասնականացված ուղիների նորովի իմաստավորումը: Նախագծի մշակման գործընթացն, ըստ իս, դարձավ միջճյուղային համագործակցության փայլուն օրինակ՝ ինքնին էապես նպաստելով հորիզոնական կապերի ամրապնդմանն ու կառավարման գործառույթների արդյունավետության մեծացմանը:

¹ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 13:

Մի կարևոր հանգամանք է. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մշակման աշխատանքները ներառում էին երկու միասնական, միմյանց հետ սերտորեն շաղկապված և միմյանց վրա ներազդող բաղադրատարր: Ինչպես հայտնի է, խնդրո առարկա աշխատանքների կատարման շրջանակներում զուգահեռաբար մշակվել են նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանն ուղղված պետական կառավարման լիազոր մարմինների գործունեության հիմնական ուղղությունները՝ օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասությունների մասով: Համակարգային մոտեցմամբ ստացված սիներգիզմի շնորհիվ այսօր առկա է ծրագրային փաստաթղթերի նախագծերի մի ծանրակշիռ փաթեթ, որը կոչված է ոչ միայն նախանշելու համընդհանուր նպատակին հասնելու գերակայություններն ըստ ոլորտների, այլև առաջադրելու դրանց իրագործման մանրամասները:

Քաղաքաշինության բնագավառում ազգային անվտանգության ռազմավարության ապահովման հիմնադրույթների ամրագրման անհրաժեշտությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ յուրաքանչյուր երկրի կենսատարածության ձևավորումը և կենսագործունեության ծավալումը տեղի են ունենում քաղաքաշինությամբ կազմավորված ձեռակերտ շրջակա միջավայրում:

Իր մեջ ներառելով տարածական պլանավորման, ճարտարապետության, շինարարության, բնակարանային-կոմունալ, քաղաքաշինության գիտատեխնիկական բնագավառները և առնչվելով բազմաթիվ այլ ոլորտների հիմնախնդիրներին՝ քաղաքաշինությունը, ըստ էության, նպատակաուղղված է երկրի տարաբնակեցման հավասարակշռման և տարածական համակարգերի ձևավորման, անվտանգ ու մատչելի կացարան ունենալու և կոմունալ ծառայություններ ստանալու հնարավորությունների ընձեռման, վտանգավոր երկրաբանական ու տեխնածին երևույթներից պաշտպանության, կառույցների սեյսմազինվածության ու անվտանգ շահագործման, այդ թվում նաև կապիտալ ներդրումների արդյունավետ, անվտանգ և երաշխավորված իրացման խնդիրների լուծմանը:

Ընդհանրական ձևակերպմամբ՝ քաղաքաշինական հարատև զարգացման գերակա նպատակն է ներկա և գալիք սերունդների կենսագործունեության համար բարենպաստ միջավայրի ձևավորումը, քաղաքաշինական միջոցներով բնակչության կյանքի որակի հետևողական բարելավումը:

Նման համակողմանի ընդգրկումն անմիջականորեն առնչվում է պետության, հասարակության և անհատի՝ կենսական կարևորություն ունեցող շահերին, ուստի այդ շահերին սպառնացող վտանգների կանխարգելման և չեզոքացման ուղիների ամրագրումը անհրաժեշտ է դիտարկել ազգային անվտանգության ապահովման շրջանակներում:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ապահովման նպատակով քաղաքաշինության նախարարության ծավալված գործունեության հիմնական ուղղություններից են՝ տարածական զարգացման և պլանավորման, սոցիալապես անապահով, անօթևան ընտանիքների բնակարանային պայման-

ների բարելավման, բնակության համար վտանգավոր տներում ապրող ընտանիքների անվտանգության ապահովման, բազմաբնակարան շենքերի կառավարման համակարգի զարգացման, կառույցների սեյսմակայունության ապահովման և սեյսմիկ ռիսկի նվազեցման, վտանգավոր արտածին երկրաբանական պրոցեսների ու տեխնածին երևույթների ազդեցության նվազեցման և այլ խնդիրներ:

Կարևորելով թվարկված բնագավառներից յուրաքանչյուրը՝ համառոտակի քննարկենք դրանցից մեկը՝ տարածական զարգացման և պլանավորման ոլորտը, մասնավորապես՝ ուրբանիզացման խնդիրները:

Ցանկացած երկրի համար տարածությունը, ըստ էության, եզակի ռազմավարական ռեսուրս է, որի պատշաճ կազմակերպման և օգտագործման բազմաբնույթ հիմնահարցերը ազգային անվտանգության կարևոր բաղկացուցիչներն են:

Տարածական առումով իմաստավորումը անհրաժեշտ է առավելագույնս հիմնավորված, կոնկրետ պայմանների հետ փոխկապված և առկա նախադրյալներից բխող, հետևաբար նաև պետության զարգացման արդյունավետ ու շարունակական ընթացքն ապահովելու համար:

Քաղաքաշինական համակարգերի անվտանգության, հուսալիության և կայունության երաշխիքների ապահովման կարևորությունն ու արդիականությունը պայմանավորված են նաև ամբողջ աշխարհում քաղաքային բնակչության թվի աննախադեպ և սրընթաց աճմամբ՝ մեծապես ուրբանիզացնելով տարաբնույթ հիմնախնդիրների լուծման ուղղությունները: Կանխատեսվում է, որ յուրատեսակ փուլանիշ է լինելու 2007 թվականը, երբ երկրագնդի բնակչության կեսից ավելին կկազմեն քաղաքաբնակները, ընդ որում, Հայաստանն այդ ջրբաժանն անցել է դեռ 1959 թվականին: Հայաստանի Հանրապետության քաղաքային ցանցը ներկայացված է մայրաքաղաք Երևանով և 48 քաղաքներով, որոնց բնակչությունը 2006 թվականի տվյալներով կազմում էր մեր երկրի բնակչության ընդհանուր թվաքանակի 64,1%-ը:

Հարկ է նշել, որ Հայաստանի քաղաքներում, բացառությամբ՝ Երևանի*, աղքատության մակարդակն ամենաբարձրն է (2005 թվականի տվյալներով աղքատության միջին մակարդակը երկրի կտրվածքով կազմում էր 29,8 %, քաղաքներում՝ 37,8 %, գյուղերում՝ 28,3 %): Հանրապետության շուրջ 29 հազար անօթևան ընտանիքներից 19 հազարից ավելին տարրական բնակարանային պայմաններից զուրկ, ժամանակավոր տնակներում, հանրակացարաններում, հասարակական նշանակության օբյեկտներում ապրող քաղաքաբնակներ են**: Թվարկումը կարելի է շարունակել՝ ներառելով ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների, բնակելի ֆոնդի, արդյունաբերական տարածքների, բնապահպանական և բազմաթիվ այլ հիմնախնդիրներ:

Կայուն քաղաքաշինական զարգացմանն ուղղված մարտահրավերներին համարժեքորեն արձագանքելու, առկա խոչընդոտների ազդեցությունը չեզոքացնելու և

* Աղքատության մակարդակը Երևանում կազմում է 23,9 %:

** ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի բնակարանային քաղաքականության վարչության տվյալներով:

դրանց հաղթահարման հիմնախնդիրների արդյունավետ ու հետևողական լուծումը ամբողջ աշխարհում, թեև տարբեր դրսևորումներով, դարձել է հրամայական պահանջ:

Խորհրդային ժամանակաշրջանում ընդունված տնտեսավարման եղանակը, ինչպես նաև բարդ աշխարհագրական ու կլիմայական պայմանները հանգեցրել են Հայաստանի տարաբնակեցման կառուցվածքի ձևախեղման, և նրան այժմ բնորոշ է զարգացման միակենտրոնությունը: Երևանում կենտրոնացած են հանրապետության քաղաքային բնակչության կեսից ավելին, տնտեսական ներուժի մի զգալի մասը, կենտրոնական գործառույթների, կարևորագույն կազմակերպությունների, գիտության և մշակույթի օբյեկտների ճնշող մեծամասնությունը:

Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ տարածական համակարգերը, ձևավորվելով տասնամյակների ընթացքում, օժտված են բավականաչափ հզոր իներցիոն հատկություններով: Ներկայումս պահպանվում է այն վտանգավոր միտումը, ըստ որի դինամիկ զարգացման գործընթացներում ներգրավված են հիմնականում՝ մայրաքաղաքը, մասամբ՝ մեծ քաղաքները, իսկ փոքր ու միջին քաղաքները և գյուղական բնակավայրերը (որոշ բացառություններով) մեկուսացված են այդ գործընթացներից, ընդ որում, նման իրավիճակը հավասարապես անցանկալի է թե՛ կենտրոնի, թե՛ ծայրամասի համար:

Նկատելի են դառնում նաև քաղաքային միջավայրերի էրոզիայի երևույթները. գնալով խտանում է կենտրոնական թաղամասերի կառուցապատումը, խորանում է շերտավորումը՝ ըստ հարուստ և աղքատ, բարձր և ցածր վարկանիշ ունեցող տարածքների, անհատական բնակելի տների կառուցման համար տրամադրվում են նորանոր տարածքներ՝ մեծաթիվ դեռևս չկառուցապատված նմանատիպ հողամասերի առկայության դեպքում և այլն:

Անկառավարելի ուրբանիզացման հնարավոր սպառնալիքների չեզոքացման, տարածական առումով առավել հավասարակշռված տարաբնակեցման համակարգի ձևավորմանը նպատակաուղղված բազմակենտրոն զարգացման սկզբունքների հետևողական ներդրումը պայմանավորված է ինչպես տարածաշրջանային զարգացման առկա անհամասնությունների հաղթահարման, այնպես էլ սեյսմիկ մեծ վտանգավորության գոտիներում և հատկապես՝ մայրաքաղաքում, բնակչության խտության անցանկալի աճման կանխմանն ուղղված միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտությամբ: Այս առումով անհրաժեշտ է հատուկ ուշադրության առարկա դարձնել Երևանի ագլոմերացիայի տարածական զարգացման հիմնահարցերը:

Այնուհանդերձ, մեր երկիրն ունի բազմակենտրոն զարգացման մոդելին հասնելու զգալի ներուժ՝ տարաբնակեցման կառուցվածքի երկարաժամկետ ամրապնդման, դրա համաչափ ու կայուն զարգացման համար, որում առանձնակի կարևորվում է քաղաքային համակարգերի՝ որպես երկրի քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման կիզակետերի և խթանների դերը: Առողջ, անվտանգ, հարմար ու ներդաշնակ կենսամիջավայրերի ստեղծմանը նպատակաուղղված, միևնույն ժամանակ նաև կապիտալ ներդրումների համար գրավիչ

քաղաքաշինական գործունեության ապահովման հիմնախնդիրների փոխկապված և փոխլրացնող լուծումները քաղաքների հեռանկարային զարգացման անհրաժեշտ նախապայմաններն են:

Հանրապետության հավասարակշռված տարածական կառուցվածքի ձևավորման և ինժեներասեյսմիկ անվտանգության ապահովման պահանջների հաշվառմամբ՝ անհրաժեշտ է վարել գերազանցապես սեյսմիկ տեսանկյունից հուսալի և գյուղատնտեսության համար ոչ պիտանի տարածքների վրա փոքր ու միջին քաղաքների կառուցապատման ինտենսիվացման քաղաքականություն՝ համապատասխան լծակներ ստեղծելով կապիտալ ներդրումները նպատակաուղղելու ի նպաստ հասարակության ընդհանրական շահերի, համախմբելով ու խրախուսելով մասնավոր նախաձեռնությունը հատկապես թույլ զարգացած տարածքներում:

Կարևոր է նաև քաղաքային և քաղաքամերձ տարածքների, գյուղական և քաղաքային բնակավայրերի ներդաշնակ փոխլրացնող զարգացման հիմնախնդիրների հետևողական լուծումը՝ բնական և մշակութային լանդշաֆտների փոփոխության պատճառ հանդիսացող հանգամանքների հաշվառմամբ և պլանավորման պատշաճ գործիքների կիրառմամբ, մասնավորապես՝ քաղաքային մշակութային լանդշաֆտների աստիճանական կազմալուծումը կանխելու նպատակով:

Քաղաքաշինական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը պետք է համարել ճարտարապետական և բնական ժառանգության վերականգնման, պատմական քաղաքների կառավարման և հաստատութենական կարողությունների զարգացման խնդիրները՝ նպաստելով հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը պահպանելուն և այդ արժեքները մարդկանց բարեկեցության մակարդակի բարձրացմանը ծառայեցնելուն:

Քաղաքային կյանքի որակը մեծապես պայմանավորված է քաղաքաշինական միջավայրերի որակական հատկանիշներով: Ներդաշնակ, անվտանգ, գրավիչ և բնակիչների կողմից սիրված կենսամիջավայրն ստեղծվում է հենց տարածական պլանավորման միջոցով՝ հասարակության լայն մասնակցությամբ:

Վերը նշված բոլոր հիմնախնդիրներն ու դրանց համակարգված լուծումներն ամրագրվում են տարածական զարգացման հենքը հանդիսացող ազգային, տարածքային և տեղական մակարդակների պլանավորման փաստաթղթերով: Ուստի տարածական պլանավորման փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորումն այն հիմնական նախադրյալն է, որը պետք է գնահատվի որպես պետության տարածական զարգացման ծրագրերի ու կառավարման գործառնությունների իրականացման հիմք և երաշխավոր:

Անհատի և հասարակության հոգևոր-մշակութային զարգացման համար ներդաշնակ պայմանների ստեղծման տեսանկյունից կարևոր դեր ունեն ճարտարապետությունն ու քաղաքաշինությունը, որոնց միջոցով կազմավորված ծավալատարածական կենսամիջավայրերը, արտացոլելով դարաշրջանի գաղափարախոսությունը, հոգևոր, բարոյական և գեղագիտական հիմնարար արժեքները, մարդու ամբողջ կյանքի ընթացքում ներգործում են նրա աշխարհընկալման ձևավորման ու

զարգացման վրա: Ինչպես ասել է ՌԻԻՆՍՅՈՆ ՉԵՐՅԻՂԸ՝ «Նախ մենք ենք կերտում մեր շենքերը, այնուհետև մեր շենքերն են կերտում մեզ»:

Ազգային ինքնության հիմքերի պահպանումը, համամարդկային արժեքներին ու ժամանակի նվաճումներին համահունչ դրանց նորովի վերահիմաստավորումն ու մարմնավորումը հայ ճարտարապետության ու քաղաքաշինության զարգացման հարատևության երաշխիքն են:

Ամփոփելով ասվածը՝ հարկ ենք համարում նշել, որ երկրի, տարածաշրջանների և համայնքների տարածական զարգացման հեռանկարների պլանավորումը անհրաժեշտաբար պետք է հիմնվի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի վրա, որոնց կոնկրետ իրագործումն իր հերթին անհնար է առանց տարածական զարգացման համալիր խնդիրների հաշվառման և տարաբնույթ առանձնահատկությունների հետ կապակցման: Տարածական զարգացման և պլանավորման գործառույթների համակարգը, հանդես գալով որպես կայուն զարգացման տարածական վեկտոր, էական դեր ու նշանակություն ունի մեր երկրի անվտանգ և հարատև ապագայի կերտման գործում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագիծ» (հաստատվել է ՀՀ Կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի հմ. 610-Ն որոշմամբ):
2. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք—2006»:
3. «Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա» (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2004 թվականի մարտի 9-ին):
4. «United Nations. Department of Economic and Social Affairs. Population Division».
5. «Urban and Rural Areas 2005; World Urbanization Prospects: The 2005 Revision».
6. «Charter of European Cities & Towns Towards Sustainability». Aalborg, 27 May, 1994.
7. «The Lisbon Action Plan: from Charter to Action». Lisbon, October, 1996.
8. «Council of Europe. The European Regional/Spatial Planning Charter» (adopted at the 6th Session of the CEMAT held in Torremolinos 1983 and incorporated into Recommendation (84) 2 of the Committee of Ministers to Member States on the European Regional/Spatial Planning Charter).
9. «Council of Europe. The Guiding Principles for Sustainable Spatial Development of the European Continent» (adopted at the 12th Session of the CEMAT held in Hanover 2000 and incorporated into Recommendation (2002) 1 by the Committee of Ministers to Member States on the Guiding Principles for Sustainable Spatial Development of the European Continent).
10. «European Parliament resolution on the urban dimension in the context of enlargement».
11. «The European Urban Charter» (adopted by the Council of Europe on 18 March, 1992).
12. «The New Charter of Athens» (adopted by the European Council of Town Planners in Lisbon on 20 November, 2003).
13. А. П. Кудрявцев, Ю. П. Гнеговский и др. Национальная доктрина градостроительства России. Концепция градостроительной политики России на начало XXI века. 2002.

14. «10th UNECE Conference on Urban and Regional Research». Conference proceedings. Bratislava, 22—23 May, 2006.

15. «Futures of Cities». 51st World Congress. The International Federation for Housing and Planning.

16. «Perspectives of Spatial Development in Germany». Federal Ministry of Transport, Building and Urban Development. Bonn/Berlin, November, 2006.

ГРАДОСТРОИТЕЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ КАК СТРУКТУРНЫЙ ЭЛЕМЕНТ СИСТЕМЫ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

*Р. Р. АЛАВЕРДЯН, заместитель Министра градостроительства РА,
член-эксперт Межведомственной комиссии*

РЕЗЮМЕ

Градостроительная безопасность является одной из важнейших составляющих национальной безопасности и преследует цели обеспечения градостроительными средствами последовательного улучшения качества жизни населения и формирования благоприятной среды для настоящего и будущих поколений. Основными направлениями деятельности Министерства градостроения РА являются: пространственное развитие и планирование, улучшение жилищных условий для социально необеспеченных семей, обеспечение безопасности семей, проживающих в опасных для проживания зданиях, развитие системы управления многоквартирных домов, обеспечение сейсмостойкости сооружений и снижение сейсмического риска, уменьшение воздействия опасных геологических и техногенных явлений и т. д.

Особо актуальной для Армении является проблема урбанизации, которая связана не только с опасностью высокой концентрации населения в сейсмически активных зонах, но и повышенной централизацией в столице важнейших организаций, объектов науки и культуры, экономического потенциала. В этом аспекте особое внимание уделяется проблемам территориального развития агломерации Еревана и устранения деформированности территориального распределения населения.

THE URBAN DEVELOPMENT SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA AS A STRUCTURAL COMPONENT OF THE NATIONAL SECURITY SYSTEM

*R. R. ALAVERDYAN, Deputy Minister of Urban Development of the RA,
Member Expert of the Interagency Commission*

SUMMARY

The urban development security is one of the most important components of the national security, and it pursues the ensuring of consistent improvement of the population life quality and the formation of favorable environment for present and future generations by urban means. The main directions of activities of the

Ministry of Urban Development are spatial development and planning; improvement of living conditions for socially unsupported families; ensuring the security of families living in life-dangerous buildings; development of multi-apartment houses management system; ensuring of seismic stability of constructions and reduction of seismic risk; decrease of the impact of dangerous natural and man-caused phenomena, etc.

The problem of urbanization connected not only with the danger of population high concentration in seismically active zones, but with the increased centralization of important organizations, objects of science and culture, economic potential, in the capital, is of a particular actuality for Armenia. In this aspect, the problems of territorial development of agglomeration of Yerevan and elimination of population territorial distribution deformity are given special attention.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԿԱՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ազգային անվտանգության ռազմավարության նախագիծը մշակելու նպատակով որոշում են.

1. Ստեղծել ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով:

2. Հաստատել ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն 1-ին հավելվածի:

3. Հաստատել ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության կարգը՝ համաձայն 2-րդ հավելվածի:

4. Ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովին՝ մինչև 2006 թվականի սեպտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացնել ազգային անվտանգության ռազմավարության նախագիծը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ռ. ԲՈՉԱՐՅԱՆ

2005 թ. դեկտեմբերի 15
Երևան

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Սերժ ՍԱՐԳՍՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար (հանձնաժողովի նախագահ)
Մհեր ՇԱՀԳԵԼԳՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ)
Տիգրան ՍԱՐԳՍՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նախագահ
Սամվել ՆԻԿՈՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր (համաձայնությամբ)
Հրայր ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր (համաձայնությամբ)
Գուրգեն ԱՐՄԵՆՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր (համաձայնությամբ)
Հակոբ ՀԱԿՈԲՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր (թիվ 31 ընտրատարածք, համաձայնությամբ)
Գառնիկ ԻՍԱԳՈՒԼՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Նախագահի խորհրդական
Արթուր ԱՂԱԲԵԿՅԱՆ	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ
Արման ԿԻՐԱԿՈՍՅԱՆ	Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ
Պավել ՍԱՖԱՐՅԱՆ	Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Գագիկ ԳԱԳՅԱՆ	Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար—նախարարի տեղակալ
Արծվիկ ՄԻՆԱՍՅԱՆ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

Հայկ ԴԱՐԲԻՆՅԱՆ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ
Գագիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ	Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ
Աշոտ ԱԲՈՎՅԱՆ	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ
Սիմոն ՊԱՊՅԱՆ	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի տեղակալ
Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Արեգ ԳԱԼՍՏՅԱՆ	Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարի տեղակալ
Արա ԱՎԵՏԻՍՅԱՆ	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ
Գագիկ ԳՅՈՒՐՋՅԱՆ	Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ
Վաչե ՏԵՐՏԵՐՅԱՆ	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի տեղակալ
Հրանտ ԲԵԳԼԱՐՅԱՆ	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Ռուզաննա ԱԼԱՎԵՐԳՅԱՆ	Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի տեղակալ
Հրաչյա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ
Արարատ ՄԱՀՏԵՍՅԱՆ	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի առաջին տեղակալ
Էմիլ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտի տեղակալ
Հայկ ԶՈԹԱՆՋՅԱՆ	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի խորհրդական (հանձնաժողովի քարտուղար)

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԵԿԱՎԱՐ

Ա. ԹՈՒՄԱՆՅԱՆ

РАСПОРЯЖЕНИЕ
ПРЕЗИДЕНТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

О СОЗДАНИИ МЕЖВЕДОМСТВЕННОЙ КОМИССИИ
ПО КООРДИНАЦИИ РАЗРАБОТКИ ПРОЕКТА
СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

В целях разработки проекта стратегии национальной безопасности постановляю:

1. Создать межведомственную комиссию по координации разработки проекта стратегии национальной безопасности.

2. Утвердить персональный состав межведомственной комиссии по координации разработки проекта стратегии национальной безопасности согласно Приложению 1.

3. Утвердить порядок деятельности межведомственной комиссии по координации разработки проекта стратегии национальной безопасности согласно Приложению 2.

4. Межведомственной комиссии по координации разработки проекта стратегии национальной безопасности—проект стратегии национальной безопасности представить Президенту Республики Армения до 1 сентября 2006 г.

ПРЕЗИДЕНТ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ

Р. КОЧАРЯН

15 декабря 2005 г.
Ереван

ПЕРСОНАЛЬНЫЙ СОСТАВ
МЕЖВЕДОМСТВЕННОЙ КОМИССИИ
ПО КООРДИНАЦИИ РАЗРАБОТКИ ПРОЕКТА
СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

